

ԱՐԴԻՇ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա.Մ.Ս.Ա.Գ.Ի.Բ

№ 3 1890

Մ Ա Ր Տ

1890 № 3

ԵՐԿՐՈՒԴ ՏԱՐԻ

	կրկին
1 ԱՐԱՄԱՆԱԿԱՆ Ա.Ի.Ե.Տ.	323 Խրիմեանի 70-ամեակը,
2 ՆԱՄԱՆԱԿԱՆ Ա.Լ.Ք.Ս.Ա.Դ.	324 Պատրիկ. Նամ.—Արամեանի մօտ:
3 ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՅ, Ա.	337 Հայ դիզայն ոև օքը:
4 Ա.Բ.ՇԻՒԵԱՆ.	359 Սօնես (բանասանեղծութիւն):
5 ԶՄՇԿԱՆ Գէլրիֆ	360 Թէ ինչպէս ևս խելադարսեցի:
6 ՄԻՒԹԱՐԵԱՆՅ Ա.ԲՇԱ.ՈՅԸ	377 Նւէր Մ. Արաբաջնացին (բանաստ.):
7 " " "	379 Ողջոն հազրենիքին (բանաստ.):
8 ՊՈ-ՕՇԵԱՆՅ Պերձ	381 Բզզէ (շարանակութիւն):
9 Պ.Ա.ԶԱՐԵԱՆՅ ԵՐՈՒԱՆԴ	413 Մանկ. Ծնվեց. Պ. Ա.զաքանց:
10 Ա. Ա., Լ. Ա., Ա. Ա.	423 Գրախօս. Ա.ւազակներու. «Ա.ալօ» և ալն:
11 ԼՈՒՄԻՆԻ.	433 Ա.մաւակ Քրօնիկ. Յօրէլեաններ և ալն:
12 Լ.Յ.Օ	441 Գաւառ. Քրօն. Մեր կեսնքից: Ոջախը:
13 .	448 Ներօխեան Դպրոցի տնտ. զրութիւնը:
14 .	452 Անգլիակի ժողովրդ. զպլոցները:
15 Ա.Ս.Ք.Ա.Ն.Զ.Ա.Ն. Վ.	455 Կարինի զպրոցական զործերը:
16 Z.	462 Բիսմարկի հրաժարականը:
17 ԽՄԲ.	476 Մի բացատրութիւն:


ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ԹԻՖԼԻՍ

Մ. Դ. ՌՈՏԻԿԱՆ ՏՊԱՐԱՆ

Տիգրագիա Մ. Դ. Ռոտիկանց, Խ. Գոլ. պող. ս. 41.

1890



ՄՈՒԾ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍՏՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

ԱՄՍԱԳԻՐ

№ 3 1890

ՄԱՐՏ

1890 № 3

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻՖԼԻՍ
ՏՊԱՐԱՆ Մ. Դ. ՌՕՏՐՈՎԵԱՆՑԻ
1890

Дозволено цензурою. Тифлісь, 2-го Марта 1890 г.

Типографія М. Д. Ротніанца, на Гол. просп. соб д. № 41.

ԽՐԻՍԵԱՆ ՀԱՅՐԻԿԻ 70-ԱՄԵԱԿԸ

(ԱՊՐԻԼԻ 4)

Մի քանի օր ևս՝ և Խրիմեան Հալրիկը կը տօնէ իւր ծննդեան 70-երորդ տարեդարձը։ Այդ օրը նւիրական օր է ամբողջ հայութեան համար և մանաւանդ հայ աղգի այն մասի, որի համար տասնեւակ տարիներից ի վեր նա ներկայացնում է նորագոյն հայկական ոգու ամենազուտ մարմնացումը։ Նա այսօր, որպէս և անցեալում, ամենաշեղբնակաւոր, ամենասպառկասելի, ամենավստահելի ներկայացուցիչն է այն գաղափարի, որը մի պատրիարքի գարձնում է ներսէս, մի վիպասանի՛ Բաֆֆի, անյայտին՝ Գօլոշեան։ «Մուրճ»-ի խմբագրութիւնը չի կամնում առիթը բաց թաղնել, իւր ներկայ համարի ճակատին այն մարդու անունը զբոշմելու, որից նա ստացել է իւր գաղափարի մի մասը։ «Մուրճ»-ի խմբագրութիւնը վստահ է, որ ամեն մարդ, որը զի՞ն է զնում Խրիմեանի անունի հետ կաղւածող ուղղութեան, կը միանայ մեզ հետ՝ մաղթելու հոչակաւոր ծերունուն զիս ևս երկար կեանք, իւր ծրագրի իրագործումը աւելի առաջած տեսնելու համար։

ԱԻԵՏԻՑ ԱՐԱՄՊԱՆԵԱՆՑ

ՊԱՏՐԻԿԵԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ

Ա. ՆԱՄԱԼԵԱՆԻ

ԱՐԱՆԵԱՆԻ ՄՕՏ

ՍԵՐԵԻՑ ՔՇ' ՀԸ

Գրում եմ այս նամակը գաւառական քաղաքում, Արանեանի տանը: Դու գիտես, որ Արանեանը անտառապետ է ալսոտեղ: Եկայ դիտմամբ նորան ացցելելու և ո՞չչափ ես ինձ բաղդաւոր եմ համարում: Նորան գոայ առաջւանից աւելի զւարթ և ուրախ: Եւ այդ է իմ բաղդաւորութեան գլխաւոր պատճառը: Ինձ ձանձրացրեց մեր միւս ծանօթների տխուր և յոգնած տրամադրութիւնը: Արանեանը այս բոպէին հարկաւոր գործով գուրս է եկել տանից մի քանի ժամով, և ես յարմար միջոց եմ համարում քեզ նամակ դրելու: Պատմեմ քեզ իմ այստեղ գալը և նորա հետ տեսնելը:

Երեկ կէսօրից յետ ժամը երեքին հասայ այս քաղաքը: Կառավարը դիտէր մեր անտառապետի տունը և քշեց ուղիղ նորա մօտ: Կառքը կանգնեց դրան առաջին. ես վայր ցատկեցի կառքից — մօտեցայ կիսափակ դրանը և սկսեցի զգուշութիւնով բանալ. բայց ոչ ով չ'երեւաց աչքիս: Հարցրի կառապանիցս. արդեօք չի սխալւել նա՝ բերելով ինձ ուրիշի տունը: Ես զարմացայ, որ անտառապետի տանը չէր երեւում ոչ մի ծառայ, չէր լսում ոչ մի ձայն և աղմուկ: Մէկ էլ տեսայ մի սենեակից դուրս եկաւ մի 17—18 տարեկան աղջիկ՝ զարմանալի անմեղ և խելօք երեսով և արագ քայլերով մօտիկացաւ ինձ:

— Ո՞ւմ էք կամենում, հարցրեց նա հետաքրքրութիւնով:

—Այսուե՞ղ է կենում անտառապետ Արանեանը:

—Այո՛, բայց տանը չէ. այսօր երեկոյեան պէտք է որ յետ դառնայ:

—Մի՞թէ նա քաղաքումը չէ, հարցրի ես անհանգիստ ձայնով:

—Ո՛չ, գնացել է որսի իւր մի ծանօթի և իւր ծառաների հետ:

—Բայց ես պէտք է նորան անպատճառ տեսնեմ. խնդրեմ ցոյց տաք ինձ նորա սենեակը, ես նորան կը սպասեմ:

—Նորա սենեակը փակւած է. բայց... այս բոպէին:

Աղջիկը չը վերջացրած իւր խօսքը, վազեց սենեակ և խսկոյն յետ դարձաւ, իննդրելով իւր հօր բերանից, որ իջնեմ նոցա մօտ—մինչև անտառապետի դալը: Ես սկսել էի տխրել փոքր ինչ անյաջող սկզբի վերայ, բայց յետոյ հետաքրքրւեցի ինձ հիւրասիրողներով, որոնց հետ կարող էի ծանօթանալ և որոնցից կարող էի ժողովել մի քանի տեղեկութիւններ Արանեանի մասին մինչ նորա հետ տեսնելը: Նորհակալութիւնս յայտնեցի աղջկան և հրամացեցի կառապանին տեղափոխել պայուսակս կառքից սենեակ:

Աղջիկը առաջնորդեց ինձ մինչեւ սենեակ, համեցէք արաւ նստելու մի ամուր և բաւականին գեղեցիկ աթոռի վերայ և անհետացաւ ինքը: Ես էլ՝ առանց երկայն մտածելու՝ նստեցի ինձ ցոյց տւած աթոռի վերայ և սկսեցի անորոշ կերպով մտածել: Սենեակը, որի մէջ ես նստած էի, մի զարմանալի տպաւորութիւն էր անում վերաս: Ինձ այնպէս էր թւում, որ ես գտնեում եմ մի թանգարանում: Սենեակը լիքն էր զանազան իրեղիններով և՝ նոր, և՝ հին տեսակի: Օճուքը և պատերի մի մասը բռնւած էին ծառերի և թւոչունների նուրբ նկարներով՝ արեւելեան ճաշակի: Ինձ շառ գրաւեց մի ծառ, որի ճիւղերի վերայ նստած էր մի անյատ թուչուն իւր փոքրիկ ձագիկներով: Պատերից մէկի վերայ բևեռած էր մի մեծ ժամացոյց երկայն ճօճանակով, որ դանդաղ շարժւում էր բարձր ձայն հանելով: Համեմատեցի ժամացոյցս նորա հետ և տեսայ, որ մօտաւորապէս ճիշդ են:

Դուռը բացւեց և մտաւ մի առոյգ ծերունի՝ կիսաքրդական հագուստով, որ մի թեթև զլուխ խոնարհեցնելով ողջունեց ինձ.

—Բարեւ եք եկել. մեր սիրելի հիւրն էք:

Աղջունեցի. ներողութիւն խնդրեցի, որ ստիպւած եմ իջնել նոցա սենեակում: յայտնեցի, որ Արանեանի շատ մօտիկ ծանօթն եմ:

— Նա՛տ ուրախ ենք, ձեր տունը համարեցէ՞ք, բոլորովին հանգիստ եղէ՞ք:

Զը գիտէի ի՞նչ բանից սկսել իսօսակցութիւն:

— Խնդրեմ ասացէ՞ք. այս ձեր տունն է. այո՞ւ:

— Այո՛, իմ սեպհականութիւնն է:

— Բայց դուք կարծեմ ընիկ այսուղացի չեք, ասացի ես՝ տեսնելով նորա օտարոտի հազուստը և ձեւերը:

— Ես գաղթական եմ՝ Սևաստոպոլի կուի ժամանակից եկած: Ճանապարհին հիւանդացան կիսս ու երկու երեխաս և մեռան: Ես մնացի այրի: Եւ երկայն ժամանակ ես սուգ էի պահում, մտաղիր չէի ամենենին պսակւել: Բայց յետոյ, երբ գործերս լաւացան և ես փոքր ինչ հանգստացայ, սկսեցի մտածել ընտանիքի մասին և նորից պսակւեցի: Կիսս հինգ տարուց յետոյ մեռաւ՝ թողնելով ինձ համար միակ միսիթարութիւն Աննացիս, որ այդ ժամանակ չորս տարեկան աղջիկ էր և այժմ իմ ընկերն է ու օգնականը: Աստուած ինձ տւառ և մի լաւ անկեց՝ մեր անտառապետին, որ ինձ համար որդուց էլ թանգ է: Ահա՛ երկու տարի է ինչ մեր տանն է: Եւ ի՞նչ ազնւասիրա մարդ է: Եթէ մի քանի այսալիսի տղերք լինէին մեզանում— էլ ի՞նչ հոգս:

Վերջին խօսքերը ասելով՝ նա մէկ նայեց վերաս և յետոյ՝ գլուխը շարժելով՝ մտածմունքների մէջ ընկաւ: Աննացի և Արանեանի մասին անմիջապէս կից պատմութիւնը ծագեցրեց իմ մէջ մի հասկանալի ենթաղրութիւն, որ սակայն չը գիտեմ ինչո՞ւ ինձ շատ չը զարմացրաւ այն բոսկէին: Ինձ ընդունելու եղանակը, ծերունու մտերիմ նայւածքը, իմ անսովոր տպաւորութիւնները— աննկատելի կերպով ընտելացրին ինձ լսելու Արանեանի և ծերունու մէջ սերտ յարաբերութիւններ: Ես իմ կրզմից՝ իբրև լրումննորա խօսքերի՝ աւելացրի թէ.

— Արանեանը մեր ընկերութեան մէջ շատ սիրւած էր:

— Լա՛ւ մարդ է, բայց մենակ է: Վախսենում եմ սկսի տիսրել և կեանքում բաղդաւոր չը լինի:

— Ինչո՞ւ. նա տիսուր մարդ չէր մեր ընկերութեան մէջ:

— Այժմ էլ տիսուր չէ, մինչև անդամ շատ ուրախ է և զւարթ. բայց հոգս շատ է անուշ: Ժամանակով հողալ կը սկսի նորան ուտել:

Զահիլ օրերումն ես ամեն բան հեշտ էի տանում. իսկ այժմ շուտ եմ յոզնում և թուլանում:

Աղջիկը մուաւ՝ ձեռքին բոնած մատուցարան երկու բաժակ թէյով, որ և առաջարկեց ինձ և իւր հօրը: Աղջիկը ինքն էլ նըստեց փոքր ինչ հեռու՝ մի փոքրիկ պահարանի մօտ:

—Նա՞ո ժամանակ է չէք տեսել անտառապետին, հարցրեց ծերունին:

—Մօտ չորս տարի է: Այն օրից, երբ մենք ուսումներս աւարտեցինք, այլ ևս չէ յաջողւել միմնանց տեսնելու: Նամակագրութիւն ունեցած ենք:

—Իսկ դուք ինչո՞վ էք պարապում:

—Ես արշեստագէտ եմ, տեխնիկ. շուտով դնալու եմ նազու, որտեղ ինձ հրաւիրել են:

—Իսկ մինչև այժմ:

—Զանազան գործարաններում էի պարապում. վերջին կէս տարին էլ անցկացրի արտասահմանում:

—Խաղեմ ասէ՛ք, ի՞նչպէս է ձեր ազգանունը, հարցրեց շտապով աղջիկը դէպի իմ կողմը ձգելով զլուխը:

—Պատրիկեան:

—Պատրիկեան Սամսո՞ն. այս՞:

—Այո՛, օրիո՛րդ:

—Զեզ յաճախ յիշում է Արանեանը: Նա ցոյց է տւել մեզ ձեր նամակները: Ի՞նչ երկայն նամակներ էք դուք գրում:

—Միթէ՞ ձանձրացնող են.

—Ո՛չ, շատ հետաքրքրական են. բայց ես առաջին անգամն էի տեսնում այդ տեսակ նամակագրութիւնն:

Ծերունին տեղից վեր կացաւ, նորից ձեռքս սեղմեց ի նշան մաերմութեան:

—Աննա՛, դու էլ բարեկի՛ր մեր սիրելի հիւրին: Նա՛ո ուրախ եմ: Ինչպէ՛ս զարմանալու է Արանեանը. եթէ նա իմանար թէ դուք գալու էք՝ շտապած կը լինէր յետ դառնալու: Դուք նորան կարծեմ ձեր գալու մասին ոչինչ չէք զբած:

—Ո՛չ, ես ինքս էլ չը գիտէի թէ այսօր այսուեղ կը լինէմ, իմ գալը յանկարծ եղաւ:

Աննան տարաւ բաժակները նորից թէց բերելու։ Ծերունին հազորդեց մի քանի տեղեկութիւններ իւր կեանքից, պատմեց, որ տունը բոլոր կահ կարասիքով գնել է մի հայ մեծատունից, որ աժան կերպով զիջել էր տունը ծերունուն այն պայմանով, որ միջի զարդարանքները սպահպանւեն լսու վաղեմի սովորութեան և որ մեծատունը՝ այդ քաղաքը եկած ժամանակ՝ իրաւունք ունենաց իջնել այդ տանը։ Յոյց տւաւ մի ձեռագիր, որի կազմի վերաց շարւած էին ակնեղիններ գեղեցիկ խաչի եղերքով։

Թէից յետոյ բերին մի փոքրիկ նախաճաշիկ՝ հասկացնելով քաղաքավարի, որ երեկոյեան պէտք է լինի կարգին կերուխում, երբ Արանեանը վերադառնայ:

Յետոյ ինձ թողին հանգիստ—այլպիսով կարողութիւն տալով ինձ փոքր ինչ ազատ շարժումներ անելու, իմ կծկւած մարմնը դրստելու։ Սենեակը այնքան հետաքրքրական էր, որ ես ամեն անկիւնում կանգ էի առնում և նայում այս ու այն առարկացին կամ նկարին։

Իմ բաղդից Արանեանը աւելի շուտ վերադարձաւ, քան սպասում էին տանտէրերը։ Նորա գալլ շաս աղմկալի էր։ Յանկարծ մեծ դռները բաց արին և ձիերով մտան բակը։ Ես նայեցի պատուհանին և սկսեցի տնտղել մեր սիրելի Արանեանի երեսը։ Պաշտօնական գլխարկի տակ նորա գեղեցիկ մեծ աչքերը չէին երեւում։ բայց յանկարծ երեսը շուռ տւաւ դէպի պատուհանս և ես ճանաչեցի առաջւաց մեր Արանեանին... միայն միրուքը, մտածեցի ես իսկոյն, զուր տեղն է այնքան երկարացրել կամ երկայն պահում։ Արանեանը ձիուց վայր իջաւ։

Ծերունին և աղջիկը դուրս թռան և ինչ որ ուզում էին ասել Արանեանին։ բայց նա չէր լսում նոցա ձայնը և միայն ուրախ ժըստում էր՝ հեռուից ողջունելով նոցաւ Ես չը կարողացայ համբերել և դուրս թռայ։

—Արանեա՞ն, բարեւ, Արանեա՞ն, բղաւեցի ես։

—Այս ումն եմ տեսնում։ Պատրիկեա՞ն, դու ե՞ս. աչքիս չեմ հաւատում։

Սենք վազեցինք միմեանց և ջերմաջերմ համբուրւեցինք։

—Պատրիկեա՞ն, սիրելի՛, ի՞նչ խելօք բան ես արել։ Դէ զնա՞նք,

գնա՞նք, բարեկա՛մ, սենեակս. է՛յ, Սիմօն, շուտով ձիերը կապի՛ր և
ինձ մօտ ե՛կ: Պատրիկեան, Պատրիկեան, ի՞նչքան խօսելու բաներ
ունեմ քեզ հետ:

Արանեանը ողջունեց ծերունուն և նորա աղջկան, յետոյ վա-
զեց, իւր սենեակի դուռը բացեց: Մտանք ներս:

— Ի՞ մէկ էլ մի լաւ համբուրւենք, յետոյ խորհենք ուրիշ բա-
ների մասին: Այ այսպէս: Եղբա՛յր, երեք սենեակ ունեմ, բոլորն էլ քոնն
են. ազատ կարող ես օգտւել: Սպասի՛ր. շատ ժամանակ է եկել ես:

— Մի երեք ժամ կայ:

— Լաւ, մի բան տւի՞ն ուտելու, խմելու:

— Այո՛, ինչպէս չէ. թէյ էլ խմեցի, նախաճաշիկ էլ արի:

— Մենք այս երեկոյ մի լաւ քէֆ կ'անենք: Ինձ մօտ երկու հիւր
են զալու. մէկը իմ որսակիցն է, միւսը—այստեղի բժիշկը, որի մա-
սին մի անգամ դրել էի քեզ իմ նամակումը:

Արանեանը դուրս եկաւ, ծառալին կանչեց, պատւէրներ տւառ
և դարձաւ դէպի ինձ:

— Սեղանի վերայ վեց հոգի կը լինենք: Բացի քեզնից ու ինձնից և
ցիշած երկու հիւրերից՝ մեզ հետ կը լինեն և տանտէրս իւր աղջկա-
նով, որոնց հետ յոյս ունեմ արդէն ծանօթացել ես:

— Այո՛, ծանօթացայ... քեզ շատ սիրում են:

— Այո, մենք բարեկամ ենք և եթէ ուզում ես աւելի լաւը
իմանալ, Աննան—հարսնացուս է:

— Ի՞նչ ես ասում. միթէ՞:

— Այս վճռւած է և ոչ միայն մեր մէջն է վճռւած, այլ և
հասարակութիւնը գիտէ. նշանը դրւած է: Ես քեզ բոլորը կը պատ-
մեմ և լաւ բաներ կը պատմեմ: Դեռ առաջ դու մէկ հաղորդի՛ր քո
վերջին ամիսների կեանքից. գիտես որ տեղեկութիւններ չ'ունեմ:
Դեռ հիւրերս շուտ չեն գալ. ժամանակ ունենք:

Ես պատմեցի մանրամասն ամեն բան իմ կեանքից, յետոյ կարծ
կերպով շարեցի նորա առաջ խորհրդածութիւններս, նախագիծներս
և իմ գործնական կեանքից դուրս բերած նկատողութիւններս:
Արանեանը լսում էր ինձ՝ կարգի բերելով սենեակը, դրատելով շո-
րերը. իսկ երբեմն կանգ առնելով և իւր խոշոր աչքերը վերաս
չուելով: Յանկարծ խօսքս կարեց Արանեանը:

— Սպասի՛ր, Պատրիկեա՛ն. ճիշդն ասա՛ ինձ — սիրոյ հետ էլ ծառաօթացել ես թէ ո՛չ:

— Դեռ ո՛չ:

— Ազգպէս էլ կարծում էի:

— Ինչո՞ւ:

— Որովհետեւ կեանքդ բոլորը անց ես կացրել կամ գործարանում կամ փակւած սենեակում. — աւելի կարգագրել ես, հրամայել ես, քան իբրև մի միջին մարդ ընդունել կեանքը իւր լաւ և վատ կողմերով:

— Մի՞թէ իմ գրութեան մէջ ուրիշները չեն սիրահարւում:

— Ինչու չէ. բայց չեմ կարծում թէ նոքա զգան սիրոյ բոլոր ոյժը իւր բնական մէծութիւնով և առողջ հրապոյրով: Ես հաւատում եմ, որ դու էլ մտածել ես սիրոյ մասին. բայց մտածել ես միան:

— Արանեա՛ն, ժպտացի ես, իսկ դու, ինչպէս երևում է, արդէն լաւ ծանօթ ես այդ զգացմունքի հետ:

— Այո՛. և զիտե՞ս ինչը ինձ սովորեցրաւ սէրը գնահատել և ճանաչել. — անտառը: Դու չես հաւատուում. բայց ճիշդ եմ ասում, այո՛, անտառը, լեռները, ջրի խոխոջիւնը: Ո՛հ, չը զիտես ի՞նչպիսի մեծ խորհուրդ կայ նոցա մէջ: Ահա՛ այդ անտառներից դառնում էի ես և իմ տանը գտնում էի մի բնութեան զաւակ՝ տանաիրոջս աղջիկը — Աննացին: Դա շատ հետաքրքրական աղջիկ է քո զիտողութեան համար. հետո մէկ խօսի՛ր, տես թէ ո՛րչափ ներգաշնակ և անարատ բնաւորութիւն է: Ազգպիսի բնաւորութիւնները, կարծում եմ, միշտ թարմ են և առողջ հոգեւով:

— Նա շատ էլ նման չէ մեր զաւառական աղջիկներին. ասում է, խօսում է ազատ և աւելի հասարակ է պահում իրան, քան կարելի էր սպասել. աւելի հասարակ, քան կարելի է հետեցնել քո խօսքերից:

— Ազդուղի իմ մեղն էլ կայ մասամբ: Այդ յետոյ: Դու շարունակի՛ր պատմութիւնդ. ես ուշադրութիւնով լսում եմ:

Ես լրացրի իմ պատմութիւնը: Արանեանը համաձայնեց իմ հայեացքների հետ և հաւանեց իմ առաջիկայ մտադրութիւնները. բայց նա չէ մարտում իմ այն կարծիքը, թէ կարելի է զրամագլխով

և ցանկութիւնով ընկերական մի ձեռնարկութիւն յաջողցնել. նա խիստ է, նա երկարացնում է գործը, պահանջելով, որ մարդիկը հաւատացին նոր գործին այնպէս, ինչպէս նոքա ընդունում են, որ ցերեկը լոյս է, իսկ գիշերը խաւար, և աշխատէին անձնւէր: Արանեանը արդէն չափազանցութեան է հասցնում իւր գործնական լինելը՝ կարծելով թէ դրամով սկսածը իսկոյն կը քայքայւի, եթէ մարդիկը կատարելապէս համերաշխ չեն:

— Ես ընդունում եմ, ձեւակերպեց նա իւր միաքը այսպէս. կամ սպասել մինչեւ մարդիկ իրանք-իրանք կրթւեն, իմաստանան և հասկանան իրանց անելիքը, կամ գործելու փորձ անել—գոհելով անձը և բացառապէս իւր վերաց առնելով գործի բոլոր պատասխանատութիւնը, առանց ուրիշներին հրաւիրելու որ և է մասնակցութեան:

Ես դարձեալ վիճեցի—հասկացնելով, որ Արանեանը չէ հականում իմ առաջարկած նախազիծների կենսականութիւնը... մեր խօսակցութեան վերջ տւին հիւրերը:

— Պարոննեե՛ր, առաջ գնաց ասելով Սրանեանը, այսօր մի որս ինքն իրան է ընկել իմ ձեռքը, իւր կամքով իմ տունը եկել. — Խնդրեմ ծանօթանաք իմ սրտակից ընկեր Պատրիկեանի հետ. իսկ սոքա էլ իմ այստեղի լաւ բարեկամներն են. Սերոբեանը—իմ որսակիցը և Եաղութեան—այստեղի բժիշկը: Զեզ միմեանց հետ աւելի ծանօթացնելու համար՝ թոյլ տւէ՛ք աւելացնեմ մի քանի խօսք էլ. Պատրիկեանը բնիկ կովկասեցի է, արհեստագէտ է, նոր է յետ դառնում պանդստութիւնից և մտադիր է մեր կովկասում կազմակերպել կամաց-կամաց արհեստագործների խմբեր, համայնքներ. Սերոբեանը—հրեշտակապետների ազգիցն է, ինքը նօտար, մեր ուսումբանի հոգաբարձուն և կաքաւ ու աղւէս սպանող. իսկ բժիշկ Եաղութեանը արդէն յայտնի է քեզ, Պատրիկեան, իմ նամակից. սառնասրութեան և անտարբերութեան հազւագիւտ տիսպար է:

— Ինչպէ՞ս թէ անտարբերութեան, մէջ մտաւ ծիծաղելով բժիշկը. այդ դուք ինձ անպատում էք, սիրելի՞ս:

— Այսինքն անդրդւելիութեան, չափազանց լրջութեան, ուղղեց Արանեանը:

— Այդ ուրիշ խնդիր է, թէւ ինչպէս տեսնում եմ, բարեկամ, ինձ դեռ լաւ չեք ուսումնասիրել:

— Դէ լաւ, թողնե՞նք այդ բոլորը. պարոննե՛ր, նստեցէ՛ք և խօսե՞նք:

— Անտառապե՛տ, ասաց բժիշկը, այսօր, ինչպէս երևում է, յաջող որս էք ունեցել. շնորհաւորում եմ. Սերոբեանը պատմեց ինձ մանրամասնութիւնները:

— Բայց ես, ասաց Սերոբեանը, անբաւական եմ իսկապէս մեր այս անգամնայ արշաւանքից, որովհետեւ երեք մեծ երամ բաց թողի, հէնց որ միտքս է գալի—գծւում եմ:

— Այդ քո մշտական խօսքն է, պատասխանեց Արանեանը: Զէ, եղբա՛յր, լաւ որս արինք, շուտով վերջացրինք, շուտով էլ դարձանք և իմ թանկագին հիւրիս չը ստիպեցի երկայն ապասելու: Սերոբեա՛ն, փոքր ինչ առաջ ես մի կողմնակի առիթով գրւատեցի որսորդութեան ազդեցութիւնը. մէկ պատմի՛ր սորան մեր անտառների և լեռների հրապոյրների մասին: Պատրիկեա՛ն, պէտք է անպատճառ որսորդ դառնաս, եթէ չէ կեանքի մեծ վայելքներից և գաղտնիքներից զրկւած կը մնաս: Որսորդութիւնով ես առողջացայ: Տօ՛ յիշում էք, պարոննե՛ր, ինչպէս դիւրազգրիու և ջղային մարդ էի այստեղ եկած առաջին ամիսները—ինչքա՞ն ինձ կնասել էր մեծ քաղաքի կեանքը.— այժմ այս երկու տարւայ մէջ ես դարձաց բնութեան որդի: Սերոբեանը իմ որսորդութեան ուսուցիչն էր. բայց պարոնը չէր էլ կասկածում՝ թէ աշակերտը ուսուցչից կը գերազանցի:

— Դիցո՞ւք. այդ գեռ խնդիր է:

— Ոչ մի խնդիր չէ, այլ իրողութիւն է. բայց գիտես, Պատրիկեա՛ն, ե՛րբ ես զգացի որսորդութեան զլիաւոր ձգողականութիւնը— երբ առաջին անգամ սպանեցի մի վարագ: Մինչև այդ ժամանակը որսորդութիւնը մի յաւելւած էր իմ անտառային պաշտօնական զբոսանքներին, բայց երբ հրացանի հարւածով վայր գձեցի վարազին—ես ամբողջ շաբաթ գարար չ'ունէի—իմ ուրախութեան չափ չը կար. բայց պէտք է այն էլ ասեմ, որ այդ վարազի սպանելը մի պատահմունք էր. այստեղ վարազը հագւագիւտ է և շատ քիչերին է յաջողւած նորան որսալլ:

Այս բոլոր խօսակցութեան ժամանակ ոտքի վերայ էինք, թէև Արանեանը նշան էր անում նստելու: Վերջապէս նստեցինք և սկսեցինք խօսել զանազան նիւթերի մասին: Բժիշկը պատմեց շատ

տիուր դէպքեր քաղաքի մարդիկների կեանքից, նկարագրեց տեղացիների բարքերից մի քանի բարոյական գծեր, որոնցով և համանում է և փշանում իւրաքանչիւր հասարակական խընդիր։ Սերոբեանը պատմեց ուսումնարանի մասին. զանգատւեց ուսուցչի վերայ. բայց առհասարակ ինձ երեաց միջակ մաածողութեան մարդ, գաւառական ազգասեր, ուրախ ամենայն լաւ գործին մասնակցելու և օգնելու հժիշկը սկսեց քննադասոել հոգաբարձուների գործերը և այնպիսի ախուր երեոյթներ ցոյց տւաւ, որ գժւար էր հաւասար. բայց բանից դուրս եկաւ, որ բոլորն էլ ճիշդ է։ Սերոբեանը զիտէ այդ երեոյթները, ինքն ևս զգւում է նոցանից. բայց և անպէս դանում է այդ բոլորը ապասելի, կարծես բնական. նա արդէն չափազանց կեանքի մարդ է։

Նորից թէց խմեցի իմ նոր ծանօթների հետ միասին և աննկատելի կերպով խօսակցեցի մի քանի ժամ։ Ներս եկաւ և ծերունին, որին մեծ յարգանքով ողջունեցին բոլորը։ Ծերունին խառնեց մեր խօսակցութիւններին։ Նորա բոլոր ասածներից ես այն եղբակացրի, որ նա հաւանում է մեր հասարակութեան մէջ մէկ՝ ամենահին սերունդը, որին ինքը հասակակից էր և սորանից էլ աւելի հինը. մէկ էլ՝ ամենասոր սերունդը։ Խոկ միջին սերունդը—այն, որ եղել է 50—60 և 70 թւականներում։ Համարում է մոլորեալ ոչխարներ, սերկու կողմից աւարաց, ինչպէս ասում էր ինքը։ Հնի մէջ գովում է աւանդապահութիւնը, նորերի մէջ անկեղծութիւն և անձնւիրութիւնը։ Բժիշկը վիճեց այդ խնդրի վերաբերմամբ։ Վերջին առաքինութիւնների մասին նա լսեց. բայց աշխատեց համազցնել, որ նոր սերունդը փոքր ինչ աւելի խելօք է, աւելի պահանջներ անող կեանքից և աւելի բարձր հետաքրքրութիւն պառող։ Բժիշկը իսկապէս մի շատ հետաքրքրական անձնաւորութիւն է։ Նա այնքան գործող չէ անմիջապէս, որշափ քննադատ է։

Մինչդեռ մէնք պարապած էինք մեր խօսակցութիւնով—միւս սենեակում պատրաստում էր սեղանը։ Արանեանը մէկ-մէկ դուրս էր վազում կարգադրութիւններ անելու։ Վերջապէս հրաւիրեցին մէզ ընթրիքի։

Սեղանատուն գնալուց փոքր ինչ յետոյ մոաւ և տանտիրոջ աղջիկը՝ Աննան—աւելի զարդարուն հագնւած, քան տեսել էի առաջ։

Հը զիտեմ, Արանեանի խօսակցութիւնն էր ապդել վերաս, թէ բոլոր այդ օրւայ անցքերը, — Աննան երեւաց աշքիս իբրև մի փայռուն ասող, մի չքնաղ աղջիկ՝ խելօք և հեղ նայւածքով: Եւ քանի աւելի էի նայում վերան, այնքան աւելի գրաւիչ էր նա դառնում: Ես գարմանում էի՝ տեսնելով այդ գաւառական աղջկաց մէջ աւելի կրթւած հասարակութեան յատուկ նիստ ու կաց և խօսակցութիւն:

Ամենը ջերմ ողջունեցին օրիորդին. նա ազատ և համարձակ առաջ եկաւ, սեղմեց ամենի ձեռքը և յետոյ զանազան մանր-մունր խօսակցութիւնից յետոյ գառնալով բժշկին կամաց ձայնով հարցրեց:

—Պարոն բժի՛շկ, ի՞նչպէս վերջացաւ գրադարանի ինդիրը:

—Ոչի՞նչ. ինչո՞վ պէտք է վերջանաց. փող չեն տալիս դրքերի համար:

—Իսկ ժողովարարութիւնը ի՞նչ եղաւ. ամենքը սպասում են:

—Դեռ չի սկսել:

Սկսեցինք տեղաւորւել սեղանին շուրջը:

—Այդ ի՞նչ զրադարան է, հարցրի ես բժշկից, որ նասեց իմ ձախ կողմից:

—Այսաեղ մենք ցանկացանք մի գրադարան—ընթերցարան հիմնել, ամենքս խոստացանք օգնել այդ գործին. մենք պատրաստականութիւն յացնեցինք մեր ստացած թերթերը նւիրելու գրադարանին. բայց պէտք կայ և դրքերի, որ կարելի է ձեռք բերել փողով: Մեր քահանան եկեղեցում հրաւեր կարդաց ժողովրդին, որ սա օգնի այդ գործին: Այժմ մեր ազգասիրութեան մենավաճառներից մէկը ցանկանում է անպատճառ ինքը տանել դործը: Մենք էլ նորան դէմ չենք. միայն թէ գործը առաջ տանի խսկապէս: Ահա մի ամիս է՝ ինչ այսօր էզուց ասելով է մեղ միսիթարում:

—Մենք ժողովել ենք մօտ տանչորս րուբլի այդ նպատակով, ասաց Աննան:

—Մի՞թէ. կեցցէք:

—Այո՛, կարելի է յաջողցնենք և մի քանի ըուբլի էլ աւելցնելու:

—Այդ ո՞վքեր են ժողովել, հարցրի ես Արանեանից:

—Պատրիկեանը ուղում է խմանալ՝ այդ ո՞վ է ժողովել: — Աննան ունի իւր լնիերուշիները, որոնք դասակից են եղած երբեմն դպրում և իւր ուրիշ ծանօթները: Դոքա առնենք կազմում են այս

մեր փոքրիկ քաղաքում մի փոքրիկ թագաւորութիւն։ Ամեն բանի մէջ դոքա էլ իրանց վծիւներն են տալիս։ Ահա այս բոպէին լսեցիր, որ դոքա արդէն ժողովել են տաճն և չորս րուբլի փող. մի՛ կարծիւ թէ զա փոքր գումար է. այդ փողը ստացւած է գոնէ մի ցիտուն, վաթուուն մարդուց, որովհետեւ այդ շընանի փող տևողները սովոր չեն 40—50 կոպէկից աւելի փող տալ։

Սեղանի վերայ կենացներ և բարեմաղթութիւններ ասւում էին մեծ ոգեռութիւնով։ Արանեանը, որ անկոչ կառավարիչ էր դարձած, առաջարկեց խմել և քո կենացը. այնպիսի գեղեցիկ գոյներով. քեզ նկարագրեց, որ սեղանակիցները մնացին ապշած. նա քեզ անուանեց և իւր ուսուցիչ, նա պատմեց, որ քո շընանում նա սովորեց սիրել կեանքը և գործել նորա համար իրեւ առողջ մարդ. կեցցե՛ս, քոյրի՛կս, քեզ ցիշում են ամենքը մեծ ուրախութիւնով։

Երբ որ Արանեանը առաջարկեց ծերունու կենացը՝ ցանկացաւ ծերունուն ամեն երջանկութիւն։ բայց խնդիրը ընդհանրացնելով աւելացրաւ, որ միւս անգամ՝ ցանկալի չէ գաղթականութեան կրկնութը։ Ներունին պատասխանեց մերձաւորապէս հետևեալ կերպով։

— Բաւակա՞ն է, ճշմարիտ է՝ բայց մինչև այժմ եղած գաղթականութիւնները աւելորդ չեն եղած։ Բայց ուրիշ ապացոյցներից՝ մէկն էլ այս տեսակ է։ Ես մի չորս տարի սորանից առաջ գնացել էի սուրբ Կարապետ. աջնոտեղ համոզւեցի, որ գաղթականութիւնը ամեն՝ վնասների հետ ունի և իւր լաւութիւնները։ Ես լաւ տեսայ, որ մենք գաղթականներս աւելի ազատ և ազգաշխին մոտածմունքներ ունենք, քան հաստատ նստածները։ Գաղթելուց յետոյ մեր գլխում ամեն բան մտածութեան նիւթ գարձաւ. և՛ լեզուն, և՛ կրօնը, և՛ մանուկների վիճակը, և՛ մարդկութիւն ձեռք բերելը և այլն. մինչդեռ նոքա, ինչպէս կպած մնացել են իրանց հողին, այնպէս էլ անշարժ մնացել են ամեն բանում։ Աստուած տայ, որ նորից ոչ ոք չը գաղթի. բայց և մաղթենք, որ մեր աղջի երիտասարդները տան ժողովրդին աւելի հասկացողութիւն և զարթնեցնեն նոցա գլուխները։

Ըսթրիքից յետոյ հիւրերը դնացին և մենք պատրաստեցինք քնելու։ Զլ նայելով մեր յոդնածութեան և լաւ կերուխումին՝ մենք երկայն խօսում էինք պառկած տեղներս։ Արանեանը պատմեց իւր

գործերի մասին, պատմեց, որ ինչպէս ամբողջ առաջին տարին յետ էր սովորեցնում աեղացիներին կաշառք տալուց, ինչպէս իրան համարում էին քաղաքում այդ պատճառով խելագար, խելակորոյս։ Առաջարկում է ինձ մնալ մի քանի օր և գնալ հարևան գիւղերը, որոնց հետ ինքը գործ ունի, տեսնելու թէ ի՞նչ է մեր գիւղացին և թէ ի՞նչպէս նա կարօտ է ազնիւ գործողների։ Նա համոզւած է, որ լինելով ազնիւ մարդ և լաւ անտառապետ, նա կատարում է օգտաւէտ հասարակական գործ։ Խօսեց մեծ անուշութիւնով իւր Աննացի մասին... Մտաբերեց մեր անցած գնացած օրերը։ Այժմեան կեանքը համարում է նա, թէև ո՛չ բաւականաշափ բաղադրեալ, բայց հաճելի։ Ամիս ու կէսից յետոյ կատարւելու է հարսանիքը։ Քեզ էլ ինձ էլ հրաւիրում է միասին ուրախութեան։ Մտադիր է քեզ նամակ գրելու։

Քեզ սիրող եղբայրդ՝ Ա. Պ.

ՀԱՅ ԳԻՒՂԱՑՈՒ ՍԵՒ ՕՐԸ

Ս. ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՑԻ

Ա.

Աշուն էր. օրը կիւրակի: Զինջ կապուտակի վերայ թագաւորում էր աշնան մեղմահայեաց արեգակը. նա իւր բարի, քաղցր աչքերը գցել էր Անգեղակոթ զիւղին, որի վերայ մեղմիկ խաղում էր հովը:

Կիւրակի օր—ահա' զիւղացոց ամենառուրախ օրը. նոքա բոլոր քեանք՝ ծեր ու տղամարդ, երիտասարդ ու երեխայ, հարսն ու աղջիկ կուրսն էին գտնուում, և զիւղը ներկայացնում էր մի կենդանի պատկեր: Գիւղացիք խումբ խումբ այստեղ-այստեղ, սորա-նորա պատի տակ, որը՝ նստած գտակը մի կողմը դրած տրխ ատանն էր քակում, նորից պինդ կապում, որը տրեխը հանում, նոր հագնում և հետ կիները ամուր կապում, որը կանգնած ձեռափացտին յենած ամբողջ մարմինք՝ խօսում, ասում էին բարձրաճայն միմեանց ժամանակ չը տալով. ինչպէս ասում են՝ հայի շէն էին շինել: Փոխւած էին զիւղացիք. բոլորեքեանք էլ, կարծես, մի բան էին գտած, իւրաքանչիւրը իւր մտքում «վորկոտ զցած» էր երեւում:

Դէպի միւս կողմը նայենք. պատն ի վեր կանգնած էին զիւղացի երիտասարդները. մէկը աննպատակ տաշ էր անում՝ դանակը ձեռին, միւսը ձեռը գօտին էր անցրած, աջ ոտը դէպի առաջ դրած, մի ուրիշը ընկերի ուսին էր կոլթնած, չորրորդը գտակն էր թափ տալիս, մի խօսքով ամեն մէկը մի զիրք ունէր բոնած. դրքա լսում էին իրանց ընկերոջ, որը, ինչպէս երեւում էր, շատ հետաքրքիր բան

էր պատմում։ ամենքն էլ ուրախ էին և, կարծես, ամեն մէկը դոցանից իւր ապագան վճռել էր և մնում էր շուտափոյթ գործադրելը։

Աչքներս վեր բարձրացնենք. տանիքները կանաչ-կարմրին էին տալիս. հարսն ու աղջիկ էին դոքա, որոնք խօսում էին հա խօսում. դոցա նիւթը անսպառելի աղբիւրից էր հոսում. դէմքերի արուայալութիւնը հաստատ ոչինչ չէր ցոց տալիս. յեղեղուկ թոռ-արև սրտերը մէկ ուրախանում, մէկ տրտմում էին։

Վազվզո՞ց, աղաղա՞կ... դոքա երեխաներն էին. ի՞նչպէս նոքա վազվզում են շարան-շարան, շուն ծեծելով, իրար վայր գլորելով. մի ուրիշ տեղ իրեւ. թէ օձ էին պար ածում՝ մի երկար շւան քաշ տալով և մանրիկներին վախեցնում։

Գիւղը կենդանի էր. տէր-Մարկոսն էր պակաս. ահա նա էլ տնից դուրս եկաւ, աչքերը տրորեց, ձեռքը տարաւ միրուքի տակը դէսդէն արաւ, գաւազանը պատն ի վեր զրաւ, փէշերը յետ քաշեց, կուացաւ, ձեռքը տարաւ իւր խոր գրաւանից՝ ինչպէս անտակ հորից՝ քթախոտի տուփը հանեց, մի առանձին բաւականութեամբ կարծիկ ու հաստ մատերով կողքներին և երեսին խփեց, բացարեց և մի լաւ քաշ վերցրեց ախորժակով, քաշեց՝ կէսը միրուքի վերայ թափելով, կէսը քթի ծայրին թողնելով. Փարաջի տուտերը իրար քաշեց, առաւ դաւազանը և դէպի եկեղեցու բակը գնաց։

Տէր հօրը աեւան գիւղի ծերերը և քթախոտի հոտի վերայ ցածից դէպի նա շտապեցին. նոքա օօրհնեա՛ տէր ասելով մի մի քաշ քթախոտ վերցրին և նատեցին ալեսոր ալեսոր զրոյց էին անում։

Ահա այսպէս անգեղակոթցիք բոլորեքեանք էլ դուրսն էին գտնուում, երբ փողոցներով անցան նագուից նոր եկած անդեղակոթցի մշակներից մի քանիսը, որոնց մէջն էր և նէզլարի տղայ Ստեփանը, որ երեսունին մօտ ամուսնացած տղամարդ էր։ Ստեփանը երկու օր էր, որ հացից-ջրից կորւած, տնից-տեղից հեռացած, մշակների յետելիցն էր քաշ քաշ լինում, որ ինչ է նագուայ մասին նրանց պատմածները լսի։ Նա այնպէս էր յափշտակւել, վերացել, վառւել նագու քաղաքով, որ ման գալիս շատ անգամ ինքն իրան նագու. էր կարծում, իսկ երբեմն էլ նագուից եկած գիւղը նոր-նոր հագուստներով և արծաթի գոտիով. բայց հէնց որ այդ խաբուսիկ պատկերը հեռանում էր նրանից և իրան տեսնում էր կոշտ բրդի.

չուխան հագին, տրեխը ուսներին՝ նա սաստիկ ամաչում էր, ուզում էր փախչել, հեռանալ նրանցից, նրանց մէջ չ'երեալ, բայց հետաքրքրութիւնը թողլ չէր տալիս, ականջները սրած էր պահում, որ նրանց պատմածներից մի ամենափոքր կէտն անգամ տափը չը զցի:

Մշակներից ամեն մէկը ուզում էր այդ օրը, քանի որ զիւղացիները դուրս էին գտնւում, մի լաւ ման գալ, իրանց ցոյց տալ, հայրենակիցների աչքերը լացնել: Մշակները լւացւած, գլուխները սանրած էին, հագած ունէին բաճկրնակներ արխալուզի վրալով, մէջքները արծաթի գոտիներ ածած, գլխներին քաղաքացու գդակ էր, ոսներին ճիթկաւոր պսպղուն կօշիկներ: Ոտից ցգլուխնոր էին հագնւել. նոր էր դոցա երիտասարդական հագուստը, առաջի անդամն էին ծալը բացել: Դրանց վերայ անծանօթ նայողը զարմանալով կ'ասէր. «Մի՞թէ անգեղակոթցի ծերերը սովորութիւն ունին երիտասարդի պէս զարդարւել, պմնւել: Նոցա նիշար և իորշոմներով ծածկւած երեսկահատն ու կորացած մէջքը այդ միայն իրաւունք էին տալիս ասելու:

Վեց հոգի էին ման եկողները. երկուսը երկարահասակ էին և սասպառաւոր ուղուերի էին նմանում, իսկ չորսը կարճահասակ, վտիտ մարմիններով, որոնք նմանում էին երկար ու ձիգ տարիներ գետնափոր բանտերում բանտարկւածներին, ուր զրկւած են եղել արեւի կենսատու ճառագայթներից:

Մշակների աչքներով ընկան կոռուրների վերայ կանաչ-կարմրին տւող հարսն ու աղջիկները և ուռած ուռած քայլերը դէպի այդ տեղ ուղղեցին: Բաբախում էին դոցա սրտերը, չը զիտէին իրանց ի՞նչ տեսակ ձև տան, որ նոցա զարմացնեն ու ապշեցնեն. մէկ իրանց հագուստին էին նայում, մէկ ճիթկաւոր կօշիկներին՝ արդե՞օք փոշի չի նստել և փայլը կորցրել, մէկ ընչացքներն էին ոլորում, սղալում, մէկ բաճկրնակների փեշերը յետ տանելով ձեռքերը արծաթի գոտիներն էին անցնում, կարծես ուզում լինէին ասել. «Արծաթի գոտի ունինք ածած, լա՛ւ նայեցէք»: Նոքա նայում էին հարսն ու աղջկերանց, իրար հետ խօսում, ծիծաղում և ամեն մէկը իրան մի բէդ էր կարծում:

Ստեփանը այդ ժամանակ աչքերը գետնին զցած, քիթ ու մոռութը կախ տւած՝ ուզում էր մի կերպ ծլկւի, տակովնեանցնի, որ կանաչք իրան չը տեսնեն և երբ այդ զրութեան մէջ

յանկարծակի իւր կնոջը տեսաւ կանանց խմբի մէջ՝ աւելի և աւելի սրտնեղւեց ասելով. «Նշանածս հիմա երանի է տալիս սրանց, իսկ ես ինչո՞վ եմ պակաս սրանցից. միթէ ես էլ չեմ կարող այդ-պէս հագնւել գալ, որ իմ նշանածը պտածակից չը նայի: Միամիտ կա'ց, Թագուկի', մի քիչ էլ համբերի՛ր, այսօր բրդի չուխով եմ ման գալիս, վաղը դու տես ինչո՞վ ման կը գամ և քեզ ի՞նչպէս կը զարդարեմ: Բագո՞ւն սաղ լինի...»: Հարսները զանդրուկները գցեցին և զանդրուկների տակից էին նայում: աղջկերքը կողքի կանգնեցին, աչքերի անկիւնով էին նայում, իսկ միջահասակ կանայք ուղղակի կանգնած երես առ երես: Հարսների արտայայտութիւնը պարզորոշ ասում էր. «Ի՞նչ կը լինէր իմ ամուսինն էլ նագու լինէր և այսպէս զարդարւած գար»: Հասած աղջկերանց ամօթխածութեան թանձր քօղով ծածկւած արտայայտութիւնը երեւան հանեց իրանց սրտի եօթը կապով կապած գաղտնիքը. «Տեսնես դոքա եկել են պսակւելո՞ւ. իսկ միջահասակ կանանց սրտերը նախանձով լցւեց. մէկը մտքումը ասում էր. «Ինչո՞ւ ես էլ մեծ տղայ չ'ունենամ, չ'ուզարկեմ Բագու և այսպիսի օրը պտածակից չը նայեմ ուրիշների տղաներին: իսկ ունեցողները ասում էին. «Ոմ տղաս էլ կ'ուզարկեմն, և շտապում էր, որ ձեռքովը գար՝ հէնց այդ րոպէին իսկոյն և եթ կ'ուզարկեր, որ վաղը անպատճառ մօտը լինի փող աշխատած և լաւ հագուստում:»

Մշակները յետ յետ նայելով անցան: Կանայք խումբ խումբ հաւաքւեցան և քիթ քթի տւած խօսում էին.

—Աղջի՛, տեսնո՞ւմ ես, խօսքը բաց արաւ Շողերը, երեկւայ գիւղացի տղաներն են է՛, գնացին Բագու, եկան մարդ դարձած. զու նրանց մի ծաղիկ-ծաղիկ շորերին նայի՛ր, ասես նոր են ասղի տակից դուրս եկած. արծաթի գօտիներին մտիկ տո՛ւր, մի դրւանքայ արծաթից կարծես լինի շինւած. պսպղուն կօշիկնե՛րը, պսպղուն կօշիկնե՛րը, մարդու խելք է գնում: Մեր կոշտ բառն էլ են փոխել, քաղաքավարի են խօսում: Երանի՛ ձեր մօր աչքերին, էլ ի՞նչ ցաւ ու հոգս պիտի ունենան... Այ, այն ձիդ ձիդ տղան տեսնո՞ւմ էք Մակունց Գեալուն տղայ Դանին է, որ ձեռքով մի բան չէր գալիս...»

—Վի՛, աղջի՛, նա՛ է, խօսքը կտրեցին մի քանիսը, ի՛նչպէս փոխւել, ի՛նչպէս զարդարւել է:

—Հա՛, այն էի ասում, շարունակեց Շողերը, որ դորա ձեռքով մի բան չեր գալիս. հայրը ամենայն օր էլ անէծք-պղէծք չեր մնում թափում էր գլխին. դէ ե՛կ հիմա հարցրո՛ւ, — գնաց Բագու, չնորհքին, մաքուր, քաղաքավարի մարդ է դարձել:

—Աղջի՛, խօսքդ էլ կարում եմ, վրայ բերաւ Մարիամ աքէրը, բա զիւղումը մնալով կարծում ես մեր տղայքը մարդ պիտի դառնա՞ն. մեզ նման լիմար չեն, որ սուս անեն, տղաները պահեն տաւարած, վար անող շինեն. ա՛յնանց հայրերն են խելօք է՛, ուղարկեցին Բագու իրանց տղաները, այժմ եկել են՝ ջիբները տրաքում, սնդուկները խլթխլթում. էլ ի՛նչ ասես չեն բերել: Երեկ գնացել էի քրոջս տունը, նրանց հարեանն է այն մէջ տեղի կապոյտ շորերով տղան...

—Խաչունց Մկրտումին տղայ Սաքա՞նը, հարցրին այս և այն կողմից:

—Հա՛, հիմա Սէրգի են ասում. Բագու են փոխել անունը. ով որ Սաքան է կանչում, ասում են, նեղանում է: Հա՛, այն էի ասում, ինչե՛ր էին պատում, ի՛նչ, ի՛նչ շորեր է բերել մօրը ու քւերտանց համար, ի՛նչ լնծաներ բարեկամների համար. ասում են՝ նշան պիտի դնի, նշանի պատրաստութիւնն էլ է բերել. փո՛ղ՝ հօ էլ խօսք չը կայ:

—Դէ՛ էլ նորա մօր առաջ կը կարողանանք խօսել, խօսքի տուտը բաց արաւ նարգիզը, էլ մեզ մարդի տեղ կը դնի՛. մինչեւ տղի գալը մեծ մեծ խօսելով էր ման գալիս քիթը ցցած, այժմ աստղերի տեղովը պիտի թռչոտի: Մեր մարդին ի՛նչ ասեմ, ինչ դառնայ, դարձաւ մի կողմը, ասացի՝ ա՛յ մարդ, թող մեր երեխային էլ դոցա հետ ուղարկենք. չէ՛ որ չէ, չէ, ասաց ու սոեց կանգնեց. հիմա եկած կը լինէր, մեր աչքն էլ կը տեսնէր կ'ուրախանար:

—Էլ ասում ես ի՛նչ դառնայ, վրայ բերաւ Շողերը, բաղզաւորութեան մէջ են ընկել, աղքատութեան քարը գլորեցին դէնը: Փողը՝ փող, մարդավարութիւնը՝ մարդավարութիւն. էլ ի՛նչ ես ուզում: Հա՛, մոռացայ ասել, Սաքանը խանութ պիտի բանայ այս տեղ, ապրանք էլ է բերել:

—Դէ ա՛յ տափի, պատուի՛ մանեմ ներս էլի, նախանձով կուրա-

ցած ասաց Ներիքնազը, բա չորս տղայ ունենամ, այսպիսի օրը ձեռքերս ծոցումն մնամ պոշկած նացելիս, ախր սկի իմ Դանու եղունզը կարմեն նրանք, որ նա մնայ տանը, տաւար պահի, վար անի ձեռքը կոշտացած, նրանք զնան մարդ դառնան, մեր տղերանց հետ էլ չ'ուզենան թէ խօսեն:

—Ել մ՛ ասի, Աստուած մեր խելքը առել է, ախր մի խելքը ամառ ձմեռ ի՞նչ անի. է՛ աշխարհս տրաքւած էլ Ուզունից, Շաղաթից, Փռնակոթից չես ասում հէնց է որ գնում են հա գնում դարսակ ջիբով, դառնում լիքը ջիբով. գնում են գիւղացի, դառնում են քաղաքացի. մենք միայն հէնց գիւղացի', գիւղացի' պիտի մնանք հա մնանք:

Աղջկերքը ոչինչ չէին խօսում, միայն նորահարսերի կողքը կորած ամենայն ուշադրութեամբ լսում էին նրանց ասածն ու խօսածը: Նրանք էլ ոգեհորւած էին Բագու քաղաքով, նրանց մտքովն էլ շատ բաներ էր անցնում. մէկը մտածում էր. «Եղբացս գնացած լինէր, բերած կը լինէր ինձ համար լսու լսու բողչամիջի շորեր»: Միւսը. «Երանի՛ ես էլ եղբաց ունենայի»:

Կանանց մեծամասնութիւնը, որոնք տղաներ ունեին, ուրախ էին. մտածում էին. «Կ'ուղարկենք, մենք էլ երջանիկ կը լինինք ինչպէս նրանք». իսկ նրանք որոնք այդ բաղդաւորութիւնից զրկւած էին, ոչինչ չէին կարողանում խօսել, մի բան կորցրածի պէս դէսդէն էին տատանւում:

Մշակները հեռացան կանանց աշքերից. նոքա միւս փողոցում տեսնելով խմբւած երիտասարդներին՝ դէպի այդ կողմը ծռւեցան, նոցա էլ զարմացնելու:

—Մրանց՝ մուժիկներին նայէ՛ք, ասաց Սաքանը, ասես տաւար լինին, տանես Բագու կը խրտնեն՝ ծովը կը թափւեն հա՛. մի օր չեն կարող մնալ:

—Տօ՛, սկի փողոցներով կա՛րող են գնալ, Փայտօնների տակ կը մնան, պատասխանեց Դանին:

Այսպէս խօսելով, ընչացքները ոլորելով և արհամարհական հայեացքով մօտեցան խմբւած երիտասարդներին:

—Դալիս են Բագուից եկածները, գնանք մօտները մի խօսացնենք, ասացին մի քանիսը խմբւած երիտասարդներից և ուղղեցան դէպի մշակները:

— Բարեւ ձեզ, այդ ե՞րբ էք եկել, հարցրեց Մինասը, որ
ամենից համարձակն էր:

— Երէկ ենք եկել, շատ սառը պատասխանեց Սաքանը:

Գիւղացի տղաները դոցա չորս կողմը պատեցին և ապշած, բերան բաց նայում էին հագուստներին, մանաւանդ կօշիկներին ու արծաթի գոտիներին: Նոքա էլ աւելի հպարտացած, փքւած, հընդկահաւի նման բարձրից էին նայում և ուզում էին ասել. «Ձեզ պէս գիւղացիներ չենք, մենք քաղաքից ենք գալիս, լաւ նայեցէ՞ք՝ թէ ովքեր են ձեր առաջը կանգնած»:

Բոլորեքեանք էլ ուզում էին նրանց խօսացնել, բայց չը գիտէին՝ ի՞նչպէս սկսէին և ի՞նչ հարցնէին. ճշմարիտ է, շատ ժամանակ չէ ինչ իրանցից բաժանել Բագու մշակութեան էին գնացել և պէտք է որ ինչպէս առաջ էին եղել իրար մօտ, այնպէս էլ լինէին՝ ինչպէս մի գիւղի աղաներ. բայց դոցա վարմունքը և մանաւանդ արտաքին փոփոխութիւնը ամօթիսած երիտասարդներին կապել, կաշկանդել էր: Մշակները անձնասիրական զգացման տակ այլտեղից չէին ուզում հեռանալ, նոցա աւելի էին ուզում զարմացնել մտածելով. «Մենք շատ ենք վզներս ծռած, համետները մէջքներիս հարուստ պարոններին պղած նայել, այժմ էլ դուք մեզ նայեցէ՞ք և երանի տւէք. մենք ձեզնից հարուստ, քաղաքավարի և խելօք մարդիկ ենք և ոչ մշակներ, ինչպէս Բագու էինք»:

— Սաքի՛, հարցրեց կրկին Մինասը, Բագու այստեղից շա՞տ է հեռու:

— Ի՞նչ ես ասում, չը լսելու դնելով:

Հարցնողը մի և նոյնը կրկնեց կարմրելով:

— Հա, հեռու է, շա՞տ հեռու է:

— Քանի՞ օրումն էք գնում այստեղից:

— Տասը, տասն և հինգ օրում:

— Բագու քանի՞ տուն է:

— Ո՞վ է իմանում, սկի կարելի բան է, որ համարւի, մի ծայրից միւսը չի երևում, ի՞նչպէս կարող ես համարել:

— Մեր գիւղի երեք չափ կը լինի՞:

— Ի՞նչ ես ասում, հազար չափ էլ չի լինի, ասում եմ ծայրը չի երևում, գիւղես, որ երկու օր մի լաւ ձիով ման գաս՝ էլի չես կարող ամեն սեղը տեսնել:

Տղաները ապշած նայում էին Սաքանին ու մտածում. «Ի՞նչ
մեծ տեղ է եղել Բագուն և սոքա տեսել են, երա՞նի ձեզ»:

—Հապա այդպէս մեծ տեղ կը լինի, միջի մարդիկ բոլորն էլ
հայե՞ր են, հարցրեց մի ուրիշը սիրտ առած:

—Զէ՛, ամեն ազգից էլ կայ. էլ ոռու ու նեմենց չես ասում,
ֆրանկ ու ինգլիզ չես ասում՝ ամենը այնտեղ են:

—Ա, Սաքա՞ն, դարձաւ Ստեփանը, նեղանում ես խօսալուց,
դրանց մօտ էլ պատմի՛ր այն բաները, որ ինձ մօտ պատմեցիր, է՛հ,
որ լսէք կը մնաք ձեռք-ոտներդ տափից կտրած: —Միւաներն էլ նոյնը
ինդրեցին: Դանին տեսաւ որ Սաքանը համով չի նկարագրում իրանց
տեսած հրաշալիքներով լիքը Բագուն, ինքը սկսեց.

—Բագու, մի խօսքով ասում էք՝ պրծաւ գնաց. Բագուն՝ գիտէք՝
մեծ, շատ մեծ տեղ է, ծովի մօտն է. ծով՝ է՛, որ նայում ես ոչ
ջունդ ունի ոչ պուճախ, երկնքի հետ խառնած է. վրան ինչե՞ր
կայ, ինչե՞ր. —մեծ մեծ տներ շինած, ջրի երեսը զցած. ի՞նչ են
անում այդ մեծ մեծ տները. —Ջրի երեսին լողում, ուր ուզում,
գնում են. մէկ էլ տեսար շուին փչեց, ճանապարհ ընկաւ. ի՞նչպէս է
գնում, Տէ՛ր Աստուած, է՛, փը՛ռռ հա փը՛ռռ, վզզալի, ջուրը ճղելով,
հրացանի գնդակը ի՞նչ կարող է նրա ցետեից հասնել, թռչում է
ջրի երեսին, աչքդ էլ ցետեիցն գնում, մէկ էլ տեսար կորաւ, էլ չի
երեւում. աչքդ էլ չի ջոկում, մի ճանձի պէս է երեւում: Բա չէք
ասում թէ ի՞նչպէս է գնում, որ ոչ ձի կայ լժած և ոչ էլ պարա-
նով քաշում են:

—Ի՞նչպէս է գնում, հետաքրքրւած հարցրին այս ու այն կողմից:

—Ի՞նչպէս է գնում, կրկնեց նոցա հարցը ծիծաղելով, գնում
է, շատ արագ է գնում, ֆրանկներն ու ինգլիզներն են հնարել, ջրի
երեսը զցել. մէկ էլ տեսնում ես՝ մէկը դուրս եկաւ այդ տան բարձր
տեղը կանգնեց և այդտեղից հրամաններ տւաւ. դորա ձեռքումն է
գտնուում նորա թլիսմը, որ կողմը բանալին շըջում է, այնպէս էլ
պրախօդը հնազանդ գնում է:

—Բա տակ չի անո՞ւմ, ջրի վերայ ի՞նչպէս է մնում, հարցրեց
Մինասը:

Ծիծաղեց Դանին, ընկերներին նայելով ուզում էր ասել. «Այդ
տեսակ ցիմար հարցեր միայն երեխաները կը տանա:

—Զէ՛, տակ չի անում, թէև շատ և շատ մեծ է, մեր եկեղեցին չը կայ, նորա տասը, տասն և հինգ չափ կը լինի. վրան գերաններ կան, որ նայում ես ցածից վեր՝ զլիսարկդ ընկնում է, բոլորը ինչ որ կայ նորա ծայրումն է, նա չի թողնում որ այդ աժդահայ պրախօդը ջրի տակը գնայ: Այս ծովը. պրախօդները մէկը չէ, տասը չէ, հազար, երկու հազար, ինչ եմ ասում՝ սկի կարելի՛ է համարել, ծովի երեսը լիքն է լինում:

—Բագուայ տներից ասեմ: Է՛ որ կանգնում ես մի փողոցում, նայում՝ խելքդ գնում է. մեր տների նման ձախ ու ծուռ չեն, մի յարկանի չեն, շարքին, երկու, երեք յարկանի, ապակիներով ծածկած առաջները, որ մանում ես մէջը, ափսոսում ես ոտղ գնես, կոխ տաս, վրավում է հայելու նման:

—Հասկա խանութները չես ասո՞ւմ, խօսքը խլեց Ստեփանը, մեծ մէծ խանութներ՝ դռները ողջ ապակուց...

—Հա՛, խօսքը կարելով շարունակեց Դանին, մեծ մէծ են խանութները, դռները ողջ ապակուց, մէջները ով է իմանում ինչե՛ր են ծախում, աշխարհքիս ամեն ծայրիցն էլ բան են բերում այնտեղ. այն նաւերը չը կա՞ն, որ ասացի, նրանցով են բերում...

—Մէկը չի ծախում մի խանութում, կրկին խօսքը խլեց Ստեփանը, որը թէև Բագու չէր եղել օրումը, բայց այնքան մօռը պատմել էին, որ անզիր էր արել ամբողջ կտորներ, տասը, տասն և հինգ, քսան հոգի են ոտի վերայ կանգնած՝ առնողները այնքան շատ են, մէկը արշինով չափում է, միւսը կտրում է, մի ուրիշը ծալում է, չորրորդը թղթի մէջ է ամրացնում, տալիս գնողին, հինգերորդը փողն է առնում...

—Հա՛, հինգերորդը փողն է առնում, շարունակեց Դանին: Ի՞նչ փող, սէլի պէս է գալիս, թիով են դիզում, սկի կարողանում են օրւայ աշխատածը համարել. տօ՛, հարստութիւն, հարստութիւն այնտե՛ղ է. դո՞ւք էլ էք ասլրում, մե՞նք էլ. կեանքը ուրախ, քաղաքը լաւ, լուսաւոր, փողը շատ, է՛, էլ ի՞նչ ասեմ, մարդ պիտի իւր աչքով տեսնէ, որ իմանայ, թէ չէ պատմելով ի՞նչ կը լինի, մէկը ասում ես, միւսը մնուանում:

—Տե՛ղ, տե՛ղ այն է և ոչ թէ մեր գիւղը, առանձին խօսում էին երեք հոգի, մենք էլ ենք ասլրում, նրանք էլ. երևի այնտեղ

չի կարելի մեր հագուստով մնալ, նորա համար են սրանք փոխել:
— Բա ի՞նչպէս կարելի է, սպատասխանեց միւսը, մի օր չեն
թողնի որ մնանք, դուրս կ'անեն:

Մշակները թէ մի օր իրանց կեանքում երջանիկ օր պիտի
տեսնէին՝ այդ օրն էր. նոքա էլ չէին ցիշում իրանց այնքան տար-
ւայ չարքաշ կեանքը. նրանց մէջքին համետ չը կար, բեռնեւոր-
ւած ծանր հակով, ոտերում՝ տրեխ, մատերը դուրս դառած, կրունկ-
ները վեր ընկած. մարմինները ցնցուիներ չէին ծածկում, հազար
տեղից կպկպորած. փորները քաղցից չէին զրդրում, մէջքներին
կպած, այլ լաւ հագւած, կուշտ կերած, քանի տարի է մածունի,
հաւի մսի, կաթով ճաշի համ չէին տեսել, բերանների ջուրը գնա-
լով կերել էին, թէև իրանց տներում ասել էին. «Այս ի՞նչ կերակուր
է, կերակուր, կերակուր Բագու են պատրաստում»: Այսպէս օրւայ
հերոսներ դարձած, ամենքն էլ նրանց մասին էին խօսում, նրանց
էին մատով ցոյց տալիս և իրանց համար իրարից ծածուկ փեսա-
ցու ընարում; Ցնծում էր նոցա սիրտը, ուրախ էր նոցա դէմքը, չէին
ուզում որ մթնի, նոցա սրտի փափագն էր ման դալ, ուրիշներին
իրանց ցոյց տալ, զարմացնել:

Մշակները հեռացան. փողոցի միւս ծայրում պատահեցան խա-
ղացող երեխաններին. փոքրները յետ փախան՝ կարծելով հայեր չեն,
իսկ մի քիչ մեծերը կտուրների վերայ բարձրացան և սկսեցին
զգրաստի, զգրաստի անել, ինչպէս սովոր են քաղաքացուն ոսե-
րէն բարեւել, կարծելով առւ են: Մշակները հեռացան ուշք չը դարձ-
նելով, իսկ երեխանները մի և նոյն էին կրկնում և աւելացնում՝
զգուրակ սաբակ, դուրակ սաբակ, չիտրի պիտրի, չիտրի պիտրի»,
իրանք էլ չը հասկանալով թէ ինչ են ասում:

Մշակները իբր թէ չ'իմանալով՝ ծուեցան դէպի մարդկանց
խումբը:

— Բարով էք եկել, դալուստներդ բարի, ձայն տւաւ Խաչի ա-
պէրը, որ գիւղում մեծ յարդ ու պատիւ ունէր. եկէ՛ք նստէք, տես-
նենք ի՞նչ կայ, ինչ չը կայ: — Նրանք մօտեցան և բոլորին էլ բա-
րեւեցին:

— Ի՞նչպէս էք, հարցրեց Խաչի ապէրը, լա՞ւ աշխատեցիք
այս քանի տարում։

— Ի՞նչու չէ, փա՛ռք Աստուծոյ, պատասխանեց Սաքանը, Բագու
գնացողը չ'աշխատի՛, հենց դարտակ տեղիցն էլ որ ման գաս փողը
հող է։

Այս պատասխանի վերայ գիւղացիները, կարծես, քնած տեղերից
ցնցւած զարթեցան, աշքները շորս արած, ձեռները դէպի փողի
կուտակները մեկնեցին՝ հաւաքելու այդ կենսասու արծաթը։ Ամեն մէկը
մտածում էր. «Այ գնամ անպատճառ, կ'ուղարկեմ անպատճառ տղիս,
եղբօրս»։ բայց ի՞նչպէս ափսոսում էին և իսկոյն տխրում, որ առաջ
չեն ուղարկել, առաջ չեն գնացել։

— Ի՞նչպէս է, լա՞ւ տեղ է Բագուն։

— Նա՛տ, շատ լաւ։

— Նաւթը, ասում են, ջրի պէս է այնտեղ. ճշմարի՞ւ է։

— Ի՞նչ նաւթ, է՛, այնքան հորեր կան քանզած, որ տափի
երեսին սազ տեղ չը կայ. նաւթը ցածից խփում է վեր՝ շատ վեր
և այնտեղից թափում է լձակները, ծով դառնում. փութը ի՞նչո՞վ
են ծախում. — մի կոպէկ, շատ շատ որ թանկանայ՝ կէս կոպէկ, ջրից
էլ էժան։

— Փութը մի քառորդ կոպէկ, ամենքն էլ կրկնում էին և զար-
մանալով միմեանց նայում։

— Տեսէք ո՛րքան շատ է, որ այդպէս էժան է, ասաց Ստեփանը
նայելով իւր համագիւղացիներին։

— Նա՛տ, ի՞նչ շատ, եթէ բոլոր հորերը բաց թողնելու լինեն,
աշխարհիս ամենամեծ գետիցն էլ մեծ կը լինի։

— Հարուստ մարդիկ շա՞տ կան, հարցրեց Խաչի ապէրը։

— Հենց բոլոր բեանքն էլ հարուստ չ'են, պատասխանեց Դանին,
աղքատի տեղ չէ. լաւ հաշով ապրողի փողին փող չի հասնի,
փող շատ ես աշխատում, բայց ի՞նչ կ'անես, շատ էլ մսիում ես.
այստեղի նման չէ, որ մի օր ցամաք հացով մարդ կառավարւի, մի
օր մածնով, մի օր հաւկիթով. չէ՛, չի լինում, անպատճառ պիտի
կերակուր ուտես և ի՞նչ տեսակ կերակուր, մարդու մատներն էլ
հետն են գնում ուտելիս։

Դիւղացիները դարձեալ միմեանց զարմացական հայեացքով էին

նայում և նոցա ասածները հալած իւղի տեղ ընդունելով՝ իրար հետ վիճում էին հեռու կանգնածները. մեկն ասում է. — «Խնչո՞ւ կ'ուտեմ, ինչպէս այսուեղ եմ ապրում, այնտեղ էլ այսպէս կ'ապրեմ»: — ԶԵ՛, Սանթի՛, պատասխանում է հարեւանը, չես տեսնում Դանին ի՞նչ է ասում, — ասում է չի լինում:

— Տօ՛ նա երիտասարդ է, այդպէս կը լինի, նրանք իրանց բերանից չեն կարող կտրել, ինչպէս մենք կարող ենք անել:

Սոքա իրանց խօսակցութիւնը կտրեցին, երբ Խաչի ապէրը կրկին հարց տւառ. այս անգամ իրանց մասին էր թէ ինչո՞վ են սպարապել Բագու: Նոքա չը յայտնեցին որ մշակ են եղել. ացդ բանը շատ կը ստորացնէր իրանց զիրքը համարիւղացիների աշքում, ուստի Սաքանը, որ սուտ ասելում շատ վարժ էր՝ ասաց.

— Գործարաններումն ենք եղել, մշակների վերակացու: — Այդ լսելով մնացած մշակները՝ թև առան թէ թռչեն, կարծես իրանք էլ կասկածեցին, որ մշակ չեն եղել:

— Ամսական ո՞րքան էիք ստանում:

— Ո՛վ է իմանում. այնպիսի ամիս էր լինում 35 մանէթ, այնպիսի՝ 30, 25, մի խօսքով 25-ից պակաս չէ եղել. գործը լաւ կատարելուցն է. մեկ էլ տեսնում ես գործարանատէրը եկաւ, տեսաւ ամեն բան կարգին, սարքին, հանեց ծոցից մի կարմիր, խշիշան տասանոց տուառ, շնորհակալութիւն արաւ, գուրս գնաց. փող է, ստանում ես, զնում գրպանդ, էլ ո՛վ ժամանակ ունի նստի համարի, տեսնի ամիսը որքան է ստանում:

Սորան էին սպասում զիւղացիները. «35 մանէթ գեռ աւելորդ պարգև էլ, որ շատ անգամ կարող է 40-ին էլ հասած լինի», ասում էին միմեանց, ձեռքերը իրար քում և բացականչում. «Այ, ա'յ, ա'յ, տես մենք իմացե՞լ ենք, մենք մեր զիւղում քնածի պէս ենք, աշխարհս տանող տանողի վերայ է, աշխատող՝ աշխատողի, իսկ մենք մաճից ձեռք չենք քաշում, մեր տաւարի գոմից չենք զգում»:

Խորամանկները ոչինչ չէին ասում, նոքա ծրագիրներ էին կազմում սուս ու փուս և զարմանում մշակների պարզամտութեան վերայ, որ այդպէս ճշդութեամբ ասում էին իրանց ստացած փողի քանակութիւնը, մտքներով անգամ չ'անցնելով, որ նոքա անձնասիրական զգացման տակ մոռացել էին այդ պարզ հաշիւը:

Այսուհետև գիւղացիները շատ երկար հարց ու փորձ արին բաղուաց մասին. մշակները աշխատում էին, որքան կարելի է, չափազանցօրէն նկարագրել իրանց տեսած քաղաքը և գերբնական երևնել նոցա աչքերին:

Արևը մայր մտաւ. հնչեցին եկեղեցու զանգերը. գիւղացիները խաչ հանեցին երեսներին, «օրհնեալ է Աստուած յամենայն ժամ» ասելով ոմանք գնացին իրանց տները, իսկ ոմանք եկեղեցի:

Բ.

Մութը գետինն էր առել, խէր ու շառը բաժանւել, ոտը խաղաղւել, կորւել. ամեն մարդ շտապում էր տուն իւր սրտինը, իւր բարի ցանկութիւնը իւր օջաղի մօտ, կոճերի տակ ասել, խօսել ուրախ ուրախ: Որքա՞ն քաղցր, սիրելի էր այդ բոպէին չափահաս որդին ծնողի համար, ամուսինը՝ կողակցի, եղբացը՝ քրոջ, որովհետև առաջներին օտարութիւն՝ հեռու երկիր կար գնալու:

Արդէն ամեն մէկը հաստատ որոշել էր Բագու գնալու խընդիրը: Ստեփանը, որ մենք տեսանք նորեկ մշակների հետ, բոլորովին անձնատուր էր եղած այդ հարցին. նա վառւել, ոգեսորւել էր և հաստատ վճռել էր այլ ևս չը մնալ գիւղումը. գիւղի օղը, գիւղի նիստը ու կացը նրան անտանելի էր թւում. նա շտապում էր որքան կարելի է շուտով տրեխների փոշին թափ տալ և սպանդըստի ցուպը ձեռքը առնելով՝ հեռանալ գիւղից:

Ստեփանը մշակների հետ զրոյց անելով ճանապարհ էր գցել նրանց, այժմ յետ էր դառնում տուն. նա թռչկոտում, ցատկոտում էր գիւղի ծուռ ու մուռ ճանապարհներով անդադար քարերով ընկնելով. նա մոռացել էր ամեն ինչ, նորա մոտածողութիւնը միայն կենդրոնացել էր Բագուայ վերաց. ոչ մի բան չէր տեսնում, ոչ մի բան չէր կարողանում մտածել, միայն աշխատում էր շուտով տունընկնել, աչքալոյս տալ, որ այնուհետև աղքատութեան քարը գլորած է համարում իրանց ընտանիքի համար. որչա՞փ քաղցր էր տեսնել իւր ընտանիքը աղատ այդ աղքատութեան ծանր քարի ճնշումից, բոլորովին աղատ... Կարո՞ղ էր չը թռչկոտալ Ստեփանը, կոտուրների վրայով չը ցատկուել. մի՞թէ նա միայն դրանով էր բաւական. — ոչ, այդ

շատ քիչ բան համարեց, երս մշակների բոլոր ասածները մտաբերեց. «Աղքատութեան քարը զլորելը կայ ու կայ, մտածեց նա, դու ուրիշ բան առա՞... չէ մին սրանից յետո՞յ էլ պիտի վիզներս փոկ անենք, փողի առաջ դողդողանք. էլ սրծաւ, հէ՞նց ապրեմ, հէ՞նց տունս պահեմ, որ սաղ աշխարհքը զարմանաց. Սաքուն, Դանուն նման կ'ապրեմ, նրանք չեն իմանում. ե'ս, ե'ս կը տեսնեն ինչե՛ր կ'անեմ մի երկու տարուց յետոյ...»

Ստեփանը հասաւ տուն. կնիկը, որդիքը շատ ուրախացան իրանց տէր-տիրականին սովորականից դուրս ուրախներես տեսնելով. որդիքը—երկու աղջիկները՝ Զառին ու Մանուշակը, որոնցից առաջինը վեց տարեկան էր, իսկ երկրորդը՝ չորս, հեռուից հեռու չէին ման տալիս իրանց հօր շուրջը, մօտեցան, մինչև անդամ ուզեցին նորա գոգում նատել. իսկ փոքրիկ տղան, որ նոր-նոր սկսել էր չորեքթաժ տալ, աչքերը գյած հօր մեծ մեծ, ուրախութեամբ լիքը աչքերին, մի կերպ փորսող տալով մօտեցաւ՝ ոտերին, ձեռներին անելով, փափլիկ թաթիկը զրաւ կոշտ ծնկան, սպասելով որ ուրախ հայրը վերցնի, ձեռքերի վերաց առնի: Թագուհին—Ստեփանի կողակիցը, աչքի անկիւնով նայելով մարդու լայն, սպիտակ, պարզ ճակատին, չափից դուրս ուրախ ու զւարժ դէմքին և սրած լնչացքին՝ ժպտաց, մի քնքշական զգացմունքով համակւեցաւ, իւր աչքերն էլ փայլառակեցին, իւր յօնքերն էլ յետ զնացին. որքա՞ն ուրախ կը լինէր միշտ այդպէս տեսնէր, միշտ այդպէս զգար...

—Խէ՛ր լինի, տեսնես ի՞նչ կայ, որ ուրախ է, մտածում էր ուրախ ուրախ Թագուհին. հիմա լաւ ժամանակն է՝ ասեմ, որ մի քանի պակասորդ ունիմ առնի. վա՞յ թէ էլի բարկացաւ... չէ՛, ասեմ, նա ուրախ է, չի բարկանաց. այսօր էն ի՞նչ էր իմ դրութիւնը մեր հարեանների մօտ,—քօշերիս կապը կտրած, զլիխ լաչակը ծրորած, արխալուզ ափոխւմ ափոխւմ դառած. չէ՛, պիտի ասեմ ինչ էլ որ լինի:

—Այ տղայ, դարձաւ ամուսնուն, բա ե՞րբ ես առնելու քօշերս, լաչակս... և հազիւ հազ կարողացաւ այդ բոլորը ասել:

—Դու մեծ բաներ ուզի, դրանք լինչե՛ր են, դու զեռ մի քիչ համբերի, յետոյ կը տեսնես ինչ կը լինի, տես քեզ իսաս ու զումաշում չեմ պահում,—էլ սաղբի քօշերս որն է, զառ չարղաթս, աբ-

րիւշում, զարբար արխալուղս, բոլորը բոլորը աւել աւել կը լինի, սկի մի բանի նեղութիւն չես քաշիւ:

Թագուհին սկզբում կարծեց մարդը իրան ձեռն է առել, ծաղը է անում, բայց յետոց տեսնելով որ անկեղծ խօսքեր են, որ դուրս են դալիս յորդառատ կերպով Ստեփանի բերանից, ոոը աւելի առաջ դրաւ:

—Ել ե՞րբ, ասաց աւելի համարձակ, քանի՛ մէկ սպասեմ, թողնեմ, որ բանը բանից անցնի, միսս երեւայ, յետոց առնես. երեխ քաղաքը ցորեն ես տանելու ծախելու, կ'առնես չը:

—Աղջի՛, ի՞նչ քաղաք, ի՞նչ ցորեն, զիժ է, զլսին ձի է քացի տւել, ես ինչ եմ ասում, սա ինչ. բա ականջներդ բամբակով լքցրել ես, այսքան հարայ ենք տալիս հարայ՝ գեռ դու նոր ես Վարդան վա՛յ անում. հա՛, հա՛, հա՛, լաւ ինիկ ես, լաւ իմ աշխատածը կը պահես այդ անխելք զլսո՛վդ... Բագու եմ գնալու, Բագո՛ւ, դու հիմիկւանից պատրաստութիւնը տես, ճղած, ճոթուածը կարի՛ր, կարկատի՛ր, որ մի բանի էլ ասես պակասութիւն չը քաշեմ. դու տես անստեղից ինչե՛ր եմ բերելու է. դու տունը լաւ պահի՛ր, երկու տարի չի անցնիլ և մենք կ'ապրենք այնպէս ինչպէս մի քաղաքցի, էլ չես ասի՝ ա՛յս բեր, ա՛յն բեր, այն ժամանակը առանց բերանիդ նեղութիւն տալու իւր ոոովը կը գայ առաջդ կը կանգնի. լա՛ւ է, բաւակա՞ն ես ինձնից, որանից էլ աւել ի՞նչ ես ուզում. բայց պէտք է մի քիչ հուփ տւած ապրել, շատ կը տեսնես, շատ էլ շաղ կը տաս:

—Բագո՞ւ. ա՛յ մարդ, էդ ի՞նչ ես ասում, բա ասա մենք էլ մարդամէջի կ'երեւանք էլի. խալսի կնանիքը այսօր քիմները աստղերի տեղերովն էին ման ածում, չէին էլ ուզում մեզ հետ խօսել, ինչ է մինի տղան, միւսի մարդը Բագու է. լա՛ւ, հիմա էլ թող չը խօսեն, ա՛յ ես նրանց զլուխը թաղեմ, ցա՛ւս քաղեննրանք էլ, նրանց մարդիկն էլ, հէնց են իմանում թէ մենակ իրանք են աշխարհում, մին կենամ, մին հագնեւեմ, որ բերանները մնայ բաց. խէ դու ո՞ւմնից ես պակաս,—Դանուց, Սաքո՞ւց, որ սաղ Բագուն հաւաքել են, վեր առել եկել:

—Աղջի՛, մարդի անուն տո՛ւր, ինչ ես խօսում. թող քո այդ քիմները ցից կնանիք սպասեն մի երկու տարի էլ, այն ժամանակն

թող քիթները տանեն աստղերին կպցնեն. ը՛հ, էլի խելքները պակաս կնանիք են է՛, հէնց են իմանում թէ մենակ իրանց տղաներն են աշխարհումն, բա մենք ոչինչ, լա՛ւ:

Թագուհին էլ ամուսնու նման վառեցաւ. սիրունատեսիլ կերպարանքը մի բոպէում փոխեցաւ—զւարթացաւ. սե-սե, խոշոր աչքերը ծիծաղկոտ կոպերի մէջ փայլեցան, ձեռքը ու ոտքը ուրախութիւնից դող ընկաւ, շտապում էր ամեն ինչ, ինչ որ ամուսնու բերանից դուրս էր գալիս, մի ակնթարթում կատարել, վերջացնել. բայց ուրախութիւնից մի տեղ հանգիստ չէր նստում, կամ մնդուկն էր բանում, շորերը հանում կամ մի ուրիշ տեղից կապոց էր բերում, շորերը միմեանցով տալիս: Այսպէս անվերջ մինչև լոյսը կը խառնէր, միմեանցով կը տար եղած չեղածը, եթէ Ստեփանը չը նկատէր նրան, որ հանդարտութեամբ մի տեղ նստի, իւր բանին կենայ:

Երջանիկ էր Ստեփանը. առաջի անդամն էր, որ նա այնպէս ջերմ սիրով տղային կրծքին սեղմեց համբուրեց, առաջի անդամն էր, որ այնպէս քաղցր քաղցր, առանց բարկանալու, հայրոյելու իւր կողակցի հետ մի երեկոյ անցկացրեց: Նորա ոգևորութիւնը դեռ չէր նստել, ներսը, կարծես, քանի գնում այնքան աւելի էր եռում, եփում. նստած տեղը քրանել էր, կարծես, վագելուց էր տուն ընկել. գդակը զրած գետնին, ձեռքը կողքին՝ երեւակայում էր իրան Բագու: Բագուն նորա աչքին պատկերացաւ մի այնպիսի քաղաք, որ «ոչ ճունդ ունի ոչ պուճախ»: այժմ ինքը ընկած է այդ քաղաքը, փողը սէլի պէս է, հաւաքում է հա հաւաքում, չի կշտանում, չի ուզում շուտով տուն դառնալ, ուզում է աւելի փող աշխատել, բոլորովին ապահով-ւել և ապա թէ առօք-փառօք յետ դառնալ: Յետ դարձաւ. զրպանները տրաքում է, ապրում է ինչպէս մի բէդ. նա թիք տւաւ՝ իրան բէդի զիրք տալով:

Թագուհին բանի տակ նստած՝ ասեղը ձեռքին կարկառան էր անում, մի և նոյն ժամանակ վառւած երևակայութեամբ Բագուայ մասին մտածում. — ամուսինը յետ է դարձել հագուստը փոխած, բերել է շատ փող և հագուստներ, աղջիկները քաղաքացու հագուստում են, իսկ ինքը արծաթի գօտի ունի ածած: Անցաւ մի երկու ամիս, ձիանները կանգնեցին բակում, պատրաստուում են գիւղը թողնելու. քաղաքում են և ի՞նչպիսի տներում են ապրում, ի՞նչպէս են

հագնւած, ո՞րքան երջանիկ և ուրախ են.... Թագուհին այնքան էր յափշտակւել, որ փոխանակ ծրորած տեղերը կարկատելու, սաղ տեղերին էր գցում կարկատանը և կրկին քանդում:

Երեխանները քնած են. ձայն-ծուն չը կայ: Ստեփանի ականջը ձայնի էր, նրան շատ վատ էր թւում, որ աքաղաղները շուտով չեն յայտնում իրանց ձայնով բարի լոյսը. նորա համար ժամանակը կանգնած էր, առաջ չեր գնում, կարծես, մութը անվերջ պիտի տեէր, իսկ քունը, հենց գիտենաս, նորա աչքերը չը գիտէին. երեւակայութիւնը հեռուները չեր գնում, բարձր թռիչքները վողի կոյտերն էին, որ ուրախ ուրախ աչքերը մեծ բացած հաւաքում հահաւաքում էր: Ստեփանը չեր դաղարում այդ մի և նոյնը զանազան ձևերով երեւակայել:

Թագուհին դադրեց կարկատաններից, կարի վերայ ննջեց՝ քաղցր երազներ տեսնելով ապագայի համար: Ստեփանն էլ ոսկու կոյտերի վերայ ննջեց և այդ ոսկու կոյտերը քնած տեղն էլ հանդիստ չը տւին:

Պ.

Սուրբի լուսին քաղցր հնչում էին եկեղեցու զանգերը և ժամանէրներին հրաւիրում Աստուծոյ առունը: Ոտի վերայ էին գիւղացիները. ծերերը կուչ ու ձիգ անելով եկեղեցի էին գնում, հարս ու աղջիկ անլւայ կուժերը ուսերին իրանց աղբիւրն էին շտապում: Աղբիւրը կենդանացաւ լուսաբացի հետ, սպիտակ ու կարմիր լաշակներ էր, որ փոփում էին նորա վերայ. նոքա ալտորթակով չոմի-չոմի երեններով տւին պաղ ու վճիռ ջուրը, զւարթացան և թշերի վերայ թարմ վարդեր բացւեցան. լցրին իրանց սիրելի կուժերը աղբիւրի ակից և ուսերին դրած կաքաւի պէս շորորալով ու ցատկտալով տուն եկան, կժերը վայր դրին, աւելը ձեռներն առան, տուն ու դուռը սկսեցին աւլել, որբոտել:

Ստեփանի կինը վաղ զարթել, անթեղած կրակը իրար էր զրել, ջուրը բերել, սրբունել. իսկ Ստեփանը գիշերւայ մեծ մասը անքուն անցնելով, անդադար նաղուայ մասին մտածելով, այն մի մտան էլ քաղցր քաղցր երազներ տեսնելով՝ դարձեալ նագուայ մասին՝ վեր էր կացել առաւօտ-առաւօտ Մկրտումնեց տուն գնացել Սաքանին Բագուայ մասին հարց ու փորձ անելու:

Ժամանելով գուրս եկան, ողորմի Աստուած»
ասելով քթախոս համեցէք արին իրար և ոտերը կախ տւին Տէր-
Մարկոսն էլ դուրս եկաւ և խօսակցութիւնը աւելի կենդանացաւ:
Ծերերի մէջն էր և Մկրտում ապէրը՝ Սաքանի հայրը. նա կուչ եկած,
աչքերը կուլ գնացած, երեսը խորշոներով ու կնճիռներով ծածկ-
ւած, ճերմակ կոշա միրուքը խճճւած՝ երեսին կպած, ծնօտն ու ըն-
չացքը քթախոտից դեղնած մի ծերունի էր: Նորա սովորականից
դուրս արույացտութիւնը ու ուրախ աչքերը անխօս ատում էին.
«Տղաս եկել է, էլ առաջւաց Մկրտումը չեմ, որ պտածակից նայեմ.
քթախոտս էլ կաշւի մէջ չեմ պահում, տղաս նազուից տուփի է բե-
րելու: Մկրտում ապէրը ցանկանում էր անպատճառ տուփը հանել,
թէեւ կարիք չէր զգում քթախոտի. ուստի փոքրիկ, Ջըջոստ աչքե-
րի անվիւնով դէս դէս նայեց, դողալով տուփը հանեց, մի քանի ան-
դամ վախվիսելով կողքերին խփեց և որովհետև դեռ չը գիտէր տուփ
բանացնելլ՝ երեսը փոխանակ դէպի վեր պահելու ցած պահեց,
բացւեցաւ և քթախոտից բաւականին թափւեցաւ. նա առաւ մի քաշ՝
մտքումը ինքն իրանից նեղանալով թէ ինչու այդ պահին հանեց,
որ չար աչք կոչի և այդ օրին հասնի իւր սիրելի տուփը:

— Ենորհաւո՞ր լինի, շնորհաւո՞ր, Մկրտում, ի՞նչ լաւ տուփի է,
տղադ է բերել հա՞, այս ու այն կողմից ձայն տալով մի-մի քաշ
վերցրին և խեղճի քթախոտը վերջացրին:

— Մկրտում եղբա՛յր, ե՞րբ ե՞նք աչքալուսանք գալու, ասաց
տէր հայրը:

— Զերն է տունը, ի՞նչ էք հարցնում, համեցէ՛ք գնանք, — ասաց
և առաջ ընկաւ տըմբտըմբալով: Հինգ, վեց ծերունի և տէրտէրը
հետևեցին Մկրտում ապօրը:

— Բարո՞վ, հազար բարի, գալուստդ բարի, Սաքա՞ն, ասաց տէր-
տէրը տուն մոնելուն պէս:

Սաքանը թախտից իջաւ, տէր հօր աջն առաւ: Բոլորեքեանք
տեղաւորւեցան թախտի վերայ: Օղիի սրւակը թերախորով
ձւաների հետ բազուից բերած մասուցարանում մէջ տեղ եկաւ: Սա-
քանը օղին ածեց և տէր հօրը համեցէք արաւ:

— Աստուած կեանքդ երկար ան՚, բաժակը ձեռին օրհնեց տէր-Մարկոսը, բարով ամեն անգամ՝ օտարութիւնից այդպէս անվտանգ տուն գաս. Աստուած էլ աւել խելք, շնորհք, իմաստութիւն տաց: Մկրտո՛ւմ, բարով տղիդ պսակենք. պատրաստւի՛ր, քեզ պիտի պարեցնեմ, ասաց ու խմեց լնչացքը ծծելով:

Բաժակը պտուտ եկաւ չորս բոլորը, ամեն մէկը իւր բաժին օրհնանքը տալով Սաքանին:

— Սաքա՞ն, Բագուից սկի չես պատմում: ախր գնացիր օտարութիւն չորս, հինգ տարի մնացիր, աշխարհք տեսար, մեզ նման ամեն բանից զուրկ չես, մի պատմի՛ր գոնէ լսելով իմանանք, թերախորով խմելով հարցրեց տէր-Մարկոսը:

— Տէրտէ՛ր, այնքան բան եմ տեսել, որ եօթը օր, եօթը գիշեր նստեմ պատմեմ չի վերջանայ:

— Ելի դէսից դէսից պատմի՛ր, բոլորը չեմ ասում խօ:

— Տե՛ղ, տե՛ղ նա է ոչ թէ մեր գիւղը, մենք մեր գիւղում կարծում ենք թէ էլ ուրիշ տեղ չը կայ, ասաց Մկրտում ապէրը:

— Տէրտէ՛ր, սկսեց Սաքանը, որ աշխարհքս պտտես՝ այնպէս մեծ, փողը շատ քաղաք չես գտնի. է՛, որ շատ անգամ կանգնում ես ծովի մօտ, մնում ես հէնց զարմացած. ապրանքը ապրանքի ետևից չի կտրում, գալիս է հա գալիս. որքան ներս է մտնում, այնքան էլ դուրս են հանում. ծո՛վ է ծո՛վ, ինչ քաղաք:

— Ի՞նչ տեսակ ապրանք են բերում, հարցրեց տէր-հացը:

— Ինչ տեսակ որ ասես. աշխարհիս ամեն ծայրից էլ այնտեղ ապրանք են բերում և այնտեղից էլ նաւթ առնում, տանում իրանց երկիրը: Ո՞րքան նա՛վժ են տանում և ո՞րքան են աշխատում՝ սկի կարելի է հաշով ասել: Մի տեղ որ ծխից երկինքը միշտ թխպած լինի, տես ո՞րքան գործարաններ կը լինի. տես որքան են իրանք աշխատում, որ բանւորներին այնքան առատ են վարձատրում: նրանց համար փող՝ մի և նոյն է հող:

— Այդ բոլոր գործարանները հայերի՞ է:

— Ոչ, հայի էլ կայ, ոսի էլ, թուրքի էլ:

— Իսկ բանւորները հայե՞ր են:

— Հայ, ոռւս, թուրք լիքն են և լաւ փող են վերցնում:

— Հապա որ այդպէս է՝ մեր տղայքը էլ ինչո՞ւ են տաւար պա-

հում, հողը վարում, էշ կենում, էշ մեծանում, հէնց գնան այնուեղ էլի. թէ լաւ փող կը սոտանան, ինչպէս դու ես ասում և թէ աշ-խարհք կը տեսնեն, մարդավարութիւն կը սովորեն. տեսնելով կը լինի, գիւղում մնալով ի՞նչ կը լինի. գիւղացին ինչ է իմանում ժամը ի՞նչ է, քահանան ի՞նչ է. կը գնան, կը տեսնեն՝ թէ ինչպէս նրանք ժամասէր, քահանայասէր են, կը վերադառնան և նոյնը իրանք կ'անեն, գեռուրիշներին էլ կը խրատեն։ Այ Սաքանը, ես իմ Աստուածը, նա, ես գիտեմ, այժմ աւելի ժամասէր, աւելի քահանայասէր է, քան թէ առաջ էր՝ երբ տաւար էր պահում ու վար անում։

—Տէրտէ՛ր, բոլորը դէն, քահանան ի՞նչ է, որ տեսնես՝ եպիս-կոպոսի է հաւասար նրանց մէջ, ի՞նչ տեսակ տներում են կինում, ի՞նչ նստել վեր կենալ ունին, ոտով չեն մանգալիս՝ կառքով, ծառա-ները յետեները զցած։ Բագուցիք ի՞նչպէս են վարձատրում քահա-նային, —առանց համարելու փողը ջէրներից հանում, քահանայի սուրբ աջը առնում և այսպէս ծածուկ են տալիս, որ իրանց ձախ ձեռքը անդամ չի իմանում։ Քահանան մի նշան է օրհնում, հա-րիւր մանէթ է վերցնում. սորա նման էլ ուրիշ բաները։

—Բա՛ որ ես ասում եմ. մինչեւ մարդ մարդավարութիւն չը սո-վորէ, ի՞նչ կ'իմանայ ժամի նշանակութիւնը, քահանայի դինը. մի նշան է օրհնում մի քանի բոպէում, հարիւր մանէթ է ջէրը գնում, իսկ մենք, որ ամբողջ տարին քանի քանի մլրտութիւն, նշան, պատակ ենք անում։ Հարիւր մանէթ վերցնում ենք։ Դէ ե՛կ համ ասլրի՛ր, համ էլ քահանայութիւն արա՛։ Այ, քահանայ լինես Բագու-և ոչ թէ գիւղում։ Զէ՛, մեր գիւղացիները շատ յիմարութիւն են անում, չեն թողնում իրանց որդիկերանց տանից դուրս գան, գնան փող բերեն, մարդավարութիւն սովորեն, որ գիւղն էլ մի քիչ շնորհք ընկնի, թէ չէ այսպէս ապրուստ չի լինի. ի՞նչ ենք մենք, ի՞նչ, ինչի՞ ենք նմանում, մեզ էլ է Աստուած ստեղծել, քաղաքացուն էլ, մենք կարո՞ղ ենք մարդ անունը համարձակ տալ մեզ. չէ, հէնց այսօրւանից ես կը քարոզեմ բոլոր ծնողաց, որ իրանց որդիկերանց ուղարկեն Բագու. բաւական է որքան քնած մնացինք։

Երկրորդեցին օդին։ Տէր-Մարկոսը Բագուայ քահանաների մա-սին էր մտածում և երանի տալիս նրանց. ի՞նչպէս նա ևս կը ցան-կանար մշակների հետ գնալ այնտեղ քահանայ լինել կամ թէ չէ

հէնց ոռը մի գցել այնտեղ. նա մոտածում էր. «Ես ծերացել եմ, չեմ կարող էլ այսուհետեւ օտարութիւն գնալ, թող գիւղացի աղաները գնան և հարուստ վերադառնալով մենք էլ այնպէս կը վարձաալրւենք, ինչպէս մեր եղբայր քահանաները Բագւում»:

—Այսքան էլ անխելքութիւն կը լինի, որ մենք ունինք, ասաց ուրախ ուրախ Ստեփանը. մեր գիւղում քնած ենք, իսկ ուրիշները աշխատում հա աշխատում են:

Ուրախ էր Ստեփանը, որովհետեւ գաղափարակիցներին գտել էր. իւր մատղրութիւնը կատարել անհրաժեշտ էր համարում, որովհետեւ տեսնում էր աչքի առաջ՝ թէ ի՞նչպէս ժողովրդի արթուն հովիւը քարոզում էր տաւարն ու գութանը թողնել, շտապել քաղաքները, բերել փող և մարդավարութիւն, փոխել գիւղացու կեանքը և լինել քաղաքացի: Տէր-հայրը թւում էր նորա աչքերին ինչպէս ժողովրդի բարեացակամը, նորա շահերին պաշտոպանը և լուսաւորութեան առաջնորդը: Նա տեսնում էր տէր-Մարկոսի ձեռին մի բոցավառ լապտեր, որ լուսաւորում էր ամբողջ գիւղը, և գիւղացիները այնպէս էին լոյսի վերայ զալիս, ինչպէս ոչխարները աղի վերայ:

—Թրհնեալ լինիս, Ստեփան, լաւ ասացիր. Սաքանն է ասում թէ այնտեղ մարդիկ ոչ քուն ունեն և ոչ դադար, միշտ գործում, աշխատում են, թէ իրանք շահւում և թէ իրանց քահանաները. որ նրանք մի նշան օրհնելով հարիւր մանէթ չ'առնեն բա ե'ս պիտի առնեմ մեր գիւղ տեղը, որ բացի տաւար պահելուց ու վար անելուց ոչինչ չը գիտեք: Մի մարդ, որ տարին տասներկու ամիս տաւարի հետ լինի, ախր նրանից էլ ի՞նչ կարելի է պահանջել, նորա մարդավարութիւնը էլ ի՞նչ կը լինի. առակը անխոտելի՝ «էշը ի՞նչ գիտէ նուշը ի՞նչ է». կամ թէ չէ ուր մեզ չեն յարգում, մեզ ինչպէս քահանաց չեն ընդունում, ախր ի՞նչպէս կարող ենք մենք աւելի պահանջ ունենալ, ասած է՝ «էշի քացուց բեղամաղ մի՛ լինիր»: Սիրելի՛ք, ինչպէս մեր հայրերն են եղել, այնպէս էլ ուզում ենք մենք լինել, մի աչքներս հեռու չենք դարձնում, տեսնենք եօթը սարի, եօթը ձորի յետեւ ի՞նչ են անում, որ մենք էլ սովորենք և ըստ այնմ մեր կեանքը բարեփոխենք. բաւական է, այսքան էլ համբերութիւն կը լինի. դուրս եկ՛ք ձեր կոճերի տակից, առէ՛ք ճանապարհորդի պարկը, Ասունծոյ անունը տւէ՛ք, զնացէ՛ք այնտեղ՝ ուր կայ շատ

փող, ուր կան մարդիկ, որնք ժամասէր, քահանայասէր են, սովորեցէք նրանցից քրիստոնէութիւնը, դարձէք ձեր տգէտ ու թշւառ ծնողաց մօս, որ ծերութեան ժամանակ հասկացնէք նրանց այն ճանապարհը, որ տանում է հանդերձեալ երանաւէտ կեանքը: Ես այս մենակ այսուեղ չեմ ասի, աներում, եկեղեցում կը քարոզեմ, թող ականջները լաւ բանան, բարին չարից զանազաննեն, անեն այն ինչ որ դէպի Աստուծոյ ճանապարհն է տանում: Ես ինձ համար մեծ մեղք կը համարեմ, որ, երբ տեմում եմ զիւղացին փիսանակ աջ գնալու ձախ է զնում, ճանապարհին շատ տեղ ասվթաքելով՝ եթէ ըլզգուշացնեմ նրանց ասելով. «Եիրելի՛ ժողովուրդ, գնացէ՛ք աջ, աջնող կան ոսկու կոյտեր, այնտեղ կայ քրիստոնեայ բնակիչ, ձախ մի՛ շեղւեք, կ'ընկնէք մութ խորխորաստ ուր կեղտոտ տաւարին պիտի ծառայէք, ուր ցեխոտ գութանի ցետեւից պիտի քաշքաշ լինէք»:

Մկրտումի տունը կենդանացել էր. հարևանները թափել, լցւել էին. քահանան օղին խմած ոգեւորել էր, և զիւղացիներին օգուտ էր ուղում տալ՝ աչքի առաջ ունենալով իւր սեպհական օգուտը, այն է մօտ ապագայում իւր առաս վարձատրութիւնը: Գիւղացիների պէս նա էլ մտքումը կորկոտ էր զցել, բագու ու զարկած երիտասարդներին համարում էր առկոսով տւած փող:

Ոգեւորել էին զիւղացիները, ուրախական բացականչութիւններ էին հանում. այս ու այնտեղից լւում էր՝ քերանի՛դ, այդ սուրբ բերանի՛դ մատաղ, որ մեզ համար հոգս ես անում, զու այդ քո բարութեամբ արքայութիւնը ժառանգեցիրայ էլ ուրախութիւնից ոչ բուժէր կարողանում խօսել: Նւրաքանչիւրը իւր առանձին մտածողութիւնը այժմ ընդհանուրի մտածողութեան հետ ներլաշնակ և նման տեսնելով աւելի և աւելի ոգեւորեցաւ. մէկը եթէ որոշել էր մէկ տղացին ուղարկել, այժմ երկուսին, երեքին էլ միանդամից է ուզում ուղարկել. նոքա լաւ տեսնում էին թէ Սաքանը ի՞նչպէս մաքուր, ի՞նչպէս լաւ հագւած մի քաղաքացու տղայ է դարձել. նորա բերած մատուցարանը, որ սիւնի ճակատից էին կախել օղին խմելուց ցետոց, կանաչ-կարմիր փաքրիկ մնջուկները, որ պատի տակովն էին շար զցել և վերջապէս հօր քթախոտի տուփը, որ հանգիւ զիւղացին շէր գտնում Մկրտում ապօր ձեռին, — այս բոլորը տեսնելուց գիստ չէր գտնում ապօր ձեռին, — այս բոլորը տեսնելուց և տէր հօր ասածները լսելուց ցետոց՝ նրանց հայեացքը անիօս սում էր. «Ել ի՞նչ ենք կանգնել, այսուհետեւ էլ սպասելը չի բռնի, դէպի առա՛ջ, դէպի սակու կոյտե՛րը, դէպի աւետեաց երկի՛րը»:

(Ալ շարաւհակւի)

ՍՕՆԵՏ

ԱՐԾԻՒՆԱԿ

Թող քեզ ճոխ կեանքի հպարտ զաւակներ
Ծաղբեն կուրօրէն, նազելի՛ ընկեր,
Որ դու այդ շքեզ քո փարթամ կեանքում
Միայն իմ անզարդ երգն ես դու սիրում:

Թող սէրն անարգող մարդիկ անզգայ
Քեզ կոչեն՝ անփորձ, անմիտ երեխայ՝
Եւ մատաղ սրտիդ թախիծն ու հրճւանք
Հոմարեն հիւանդ հոգու զառանցանք:

Անվերջ չէ փայլը շըլացնող ոսկու,
Վաղ-ուշ սև ժանգն է նորան պատելու.
Բայց անշահ սէրը, որպէս վառ արև,
Պայծառ կը շողայ անվերջ, յարատեւ:

Եւ քո անունը, մանուկ աննման,
Իմ պարզ երգերում կ'ապըէ յաւիտեան:

ԹԵ ԻՆՉՊԵՍ ԵՍ ԽԵԼԱԳԱՐԻԵՑԻ

Գ. ԶՄՇԿԵԱՆԻ

1867/68 թւականի հայ թատրոնական սեզօնին, մեր դերասանական ընկերութիւնը, որի գլխաւոր ուժերից մէկն էր Հանգուցեալ Ամերիկեանը, տւեց քսան և չորս հայերէն ներկայացումներ, որոնցից վեց ներկայացումը տեղի ունեցան զատկից յետոյ, Հանգուցեալ քաղաքային թատրոնում:

Մեր ունեցած թէպէրտուարի ամենանշանաւորը և եկամուտ տւողը՝ նոր գրւած պ. Սունդուկեանցի «Խաթաբալա» պիեսն էր:

Մինչեւ այդ պիեսի ներկայացնելը, ընկերութիւնը բաժանում էր զուտ եկամուտը իւր մէջ որոշած տոկոսով ամեն մէկ անձի:

«Խաթաբալա»-ի առաջին իսկ խաղը տալուց յետոյ, որի նման եկամուտ մենք երեք չէինք ունեցել, հանգուցեալ Ամերիկեանը, տեսնելով այդ յաջողութիւնը և վստահ լինելով, որ նրան փոխարինող ոչ ոք չի կարող լինել Գարասիմ Եակուլիչի դերում և որի դերակատարութեան մէջ նա մեծ ֆուրօր էր հանել, իսկոյն առաջարկեց ուլտիմատում, այն է՝ որ նա կը խաղաց միայն երեք անգամ այն պայմանով, որ երրորդը լինի դարձեալ «Խաթաբալա»-ն նորա նպաստին: Ընկերութիւնը ատիպւած էր ընդունելու այդ առաջարկութիւնը, որոշելով, եթէ այդ խաղը վերջացնելուց յետոյ՝ միւս խաղերից այնքան եկամուտ չը լինի, որ թատրոնական ծախսը ծածկվի, նոքա՝ ընկերութեան անդամները՝ չեն մասնակցում վնասին: իսկ ծախսը ծածկելուց յետոյ գոյանալի եկամուտից կը բաւականանան, ինչպէս և առաջ, իրանց հասանելի տոկոսիքով: Հետևապէս՝ միակ պատասխանատու անձը, թէ թատրոնի վարչութեան և թէ հասարակութեան առաջ, մսում էի ես, իբրև խմբի կառավարիչ և բէժիօր:

Ինչպէս և պէտք էր սպասել, Ամերիկեանը ստացաւ զուտ եկամուտ մօտ 900 բուբլի, արծաթեայ և ոսկէ լնծաներ՝ մօտ 500 բուբլու չափ և խսկոյն գնաց ամարանոց Բօրժօմ կոչւած հանքաջրերը:

Այնուհետև սկսեցին մեր ներկայացումները կաղել և, վերջին աֆիշը հրատարակելուց յետոյ, ներկայացման օրը կասսայում կարմիացն 400 բուբլու չափ: Ո՞րտեղից կարող էի ես վճարել:

Ամառը մօտենում էր, իսկ ես մեռում էի առանց որ և իցէ պարապմունքի, ամբողջ մի ընտանիք՝ մայր, քոյր և այլն դլիսիս փաթաթւած:

Ընկերոջս խարդախ վարմունքը մի կողմից, հասարակութեան դէպի ինձ ցոյց տւած սառնասրառութիւնը միւս կողմից, ինձ գցեցին սաստիկ մոռատանջութեան մէջ:

Քունը կորաւ աչքերիցս. ախորժակս փակւեց բոլորովին. ես սաստիկ յուզւած, ջղերս լարած, սկսեցի այս և այն կողմն ընկնել մի որ և իցէ պարապմունք գտնելու, և չէի նկատում իմ տարօրինակ վարմունքս, որ թւելի էր լինում ուրիշներին:

Օրինակ՝ մէկ օր, մի բարձրաստիճան չինովնիկ, ծանօթներիցս, ինձ հրաւիրել էր իւր մօտ՝ առաջարկելու խմբի մի անընդունակ անձի համար բէնէֆիս տալ: Այդ հրաւիրի պատճառը ինձ անշայտ լինելով, և միւնոցն ժամանակ յարդելով այդ պարոնին, ներկայաց նրան՝ երեկոյեան թէյի ժամանակ: Նորա շքեղ գահլիճում ես գտայ ժողովւած նորա բոլոր ընտանիքը և մի քանի ինձ անծանօթ մարդիկ:

Մի քանի խօսք արտասանելուց յետոյ, ես նկատեցի, որ բոլորը սկսեցին ինձ դիտել հետաքրքրութեամբ: Ես չը գիտեմ թէ ի՞նչ տարօրինակ բան կար իմ շարժւածքիս մէջ, միայն երբ լսեցի պարոնի առաջարկութիւնը, սաստիկ հոգոց քաշեցի և յացնեցի իմ զարմանքս, որ պարոնը, թատրոնական միւս շահերը զանց առնելով, բարերարութիւն է ուղում անել խմբի ամենաանընդունակ անդամներից մէկին, երբ թատրոնը պարագի մէջ խեղդում է:

Բարձրաստիճան չինովնիկը վրդովւեց. իսկ ես մի սաստիկ ցաւ զգացի սրտիս մէջ, մասածելով որ այդ մարդիկը, որոնք բարերարութիւն անելու միջոց ունին իրանց գրապանից, չը հասկանալով իմ ճարահատեալ դրութիւնը, փոխանակ ինձ ձեռք մեկնելու, յանուն

գործի, պահանջում են ինձնից, նրանց «խաթրը» չը կոարելու համար, նոր պարտքերի տակ ընկնել:

Խնչ անցաւ յետոյ՝ չը զիտեմ։ բայց երբ ես ուզեցի հեռանալ, պարոնը դառաւ դէպի ինձ իւր ցաւակցութիւնը յացանելով, որ ես մի այլպիսի «անվայել» զրութեան մէջ վստահացաց ներկայանալ նորին դերազանցութեան։

Այդ ժամանակ ես չը հասկացաց թէ նա ինչի՞ն եր ուզում ակնարկել «անվայել» զրութեան մէջ գտնելով ինձ, բայց յետոյ ես իմացայ, որ նա ինձ հարբած է կարծել, այն ինչ ես համարեա մի ամբողջ շաբաթ, զուրկ ախորժակից, մի բաժակ գինի կամ ուրիշ խմիչքեղէն բերանս առած չէի։

Հարուսալ հիւանդ աղքատիս հարբածի տեղ եր ընդունել։

* * *

Այդ տարին մեծ պահանջ կար երկրաչափների, վրաց ազնւականների ճորտերին ազատութիւն տալուց յետոյ, նրանց հողային կալւածքները սեպհականեցնելու համար։

Ես զիմեցի մի քանի ինձ ծանօթ վրաց իշխաններին, որոնք և յաջողեցրին ինձ Սղնախու նահանգի հաշտարար միջնորդի (միքայիլ ուժութեան պահպան) մէկի մօտ ուղարկել երկրաչափի պաշտօնով։

Ինչպէս լաւ լիշում եմ, շատ տաք օր էր։

Փամի տասն էր առաւօտեան, երբ ես ուզեցի Սաղ առած թիֆլիսի թաղերից մէկը, ուր պիտի նստէի Փուրգօն և նրանով ճանապարհ ընկնէի Սղնախու։

Այլուեղ ես սպասեցի մինչեւ ժամը տասներկուսը, որովհետեւ բացի ինձ կառապանը ունէր և ուրիշ ճանապարհորդներ, որոնք հազիւ այդ ժամին հաւաքւեցան։ Կառքի մէջ զետեղւած էին զանազան դասակարգի մարդիկ, նրանց մէջ և երկու լէզգի, մէկը ծեր միւսը՝ երիտասարդ—երկուսն էլ զինաւորւած ահագին խանջարներով և ատրճանակներով։

Այս հասարակութեան մէջ մանելուն պէս, ինձ թւաց թէ բորը կասկածով են նայում ինձ վերայ, և եթէ մէկը միւսին ծածուկ

բան էր յայտնում, ես սկսում էի հետզհետէ համողւել, որ դրանք անպատճառ ինձ վերայ են խօսում, նաև այն երկու լեզվիքը, որոնց խօսակցութիւնը անհասկանալի լինելով ինձ համար, կարծում էի, որ անշուշտ նոքա էլ ինձնով են դարձւած, ապա թէ ոչ ինչու նոքա խօսելիս երբեմն դառնում էին դէպի ինձ, խորհրդաւոր հայեացքով, ձեռքերը դնելով իրանց երկար ու սուր խանջարների վերայ:

— Ձէ՛, այսուեղ մի բան կայ, անշուշտ մի դաւադրութիւն է կազմւած իմ դէմ... Ես սկսեցի զգալ մի տեսակ վախ. սիրտս սկսեց բարբախել և այդ բովեից, լնկնելով մտածմունքիս հետ, ես կամենում էի գտնել մի պատճառ, որի շնորհիւ այդ տեսակ մի զարհուրելի դաւադրութիւն է կազմւած իմ դէմ: Վերջապէս դտայ այդ զրդող պատճառը:

Զէ՞ որ ես գնում էի վրաց իշխանների հողերը բաժանելու նրանց ճորտերի մէջ և չէ՞ որ այդ իշխանների ցեղերից ամենազօրեղներն են իշխան Ա....ներ և Վ....ներ և այս վերջինից ցեղից է նշանակւած այն հաշտարար միջնորդը, որի մօտ ես պիտի ծառայէի:

Եւրիկա՛, գտայ. Հէնց այդ է պատճառը, որ երկու լեզվիները ուղեկցում են ինձ իրանց զարհուրելի խանջարներով: Երկեի գոքապիտի ինձ սպանեն ճանապարհին, որ խանգարեն ճորտերի հողերի բաժանումը: Ուրեմն գոքա վարձւած մարդասալմներ են... Բացց ինչո՞ւ. ի՞նչ օգուք ինձ սպանելուց. չէ՞ որ երկրաչափներ շատ կան, ինձ կը սպանեն՝ մէկ ուրիշին կը բերեն և վերջապէս այդ անդուժ մարդիկը մի՞թէ չը գիտեն, որ հացի ասպրուատ հայթհայթելու համար եմ այդ ծանր աշխատանքը յանձն առել. չէ՞ որ ես միայն իմ զլիսիս համար չեմ հոգում, այլ ամբողջ մի ընտանիքի համար: Խե՛ղճ իմ մայր, խե՛ղճ իմ քոյր և նորա երկու մատաղահաս որբիկներ. չէ՞ որ նրանք առանց իմ աշխատանքի սովից կը մեռնեն... Աստուա՛ծ իմ, Աստուա՛ծ, խղճա՛ ինձ... և արտասուքները սկսեցին հեղեղի պէս թափւել աչքերիցս:

Երիտասարդ լեզվին, լսելով իմ հեկեկանքս, դառաւ դէպի ինձ լսող երեւոյթին համակրանքով, բայց ինձ թւաց թէ նա ծաղրում է և մուծում է, որ ոչինչ արտասուք չի կարող նրան խղճահարել և որ վիճակս վճռւած է արդէն:

Ես սկսեցի աղերսական · դէմքով նայել շուրջս, ցանկանալով կարեկցութիւն գտնել ուղեկիցներիս մէջ. բայց ընդհակառակը, ինձ երևաց, որ նոքա քչփշում են իրարու հետ, հաղորդելով մէկը միւսին իմ անել դրութեան մասին:

Նոքը սաստիկ սկսեց նեղացնել. կառապանը յայսնեց, որ մենք իսկոյն կ'իջնենք մէկ զով տեղ, անտառի մէջ, որտեղ գտնուում է լաւ սառը աղբիւր և որ աջնուեղ թէ մենք կը հանգստանանք և թէ մեր ձիաները:

— ԷՇԱՌ՝, մտածեցի ես, սրանք նպատակով չեն ուզում շարունակել ճանապարհը մինչև մութն ընկնիլը, որ յետոյ առաւել հեշտ լինի իրագործել իրանց գժոխացին մոտադրութիւնը:

Ճշմարիտ, որ մենք իջանք մի զեղեցիկ ծառուղիի մէջ, ուր և բղխում էր արտաւանման մաքուր և սառը աղբիւրի ջուր:

Կառքից զուրս գալուն պէս՝ ամենքը սկսեցին ծառի սուերների տակը նստել. իսկ ես, ընդհակառակը, կամենալով ինձ հեռու պահել դէպի ինձ թշնամութեամբ վերաբերող հասարակութիւնից, հեռացաց արեւի ճառագայթներից այրուղ դաշտը և աջնուեղ յենելով մէկ քարի վերաց, ընկաց սաստիկ մտատանջութեան մէջ:

— Զէ՛, պէտք է խոյս տալ սրանցից, վճռեցի ես... բայց ի՞նչպէս, չէ՞ որ նրանք կը նկատեն, կ'ընկնեն ետեիցս և առաւել մէծ տանջանքների կ'ենթարկեն ինձ:

Սիւնոյն ժամանակ իմ մէջ ծագեց մի ուրիշ տեսակ զգացմունք, այն է՝ քաջահոգութիւն:

— Ի՞նչպէս ես խոյս տամ իմ թշնամիներից, ցոյց տամ որ ես վախենում եմ մահից. երբէ՛ք... վճռեցի և մօտեցայ ուղեկիցներիս, որոնք արդէն խմբւել էին աղբիւրի շուրջը և նախաճաշում էին:

Սօտենալուն պէս նրանք հրաւիրեցին ինձ մասնակցել նրանց նախաճաշիկին: Ինձ թւեց, որ նրանք ծաղրում են, ուզում են ծածկել իրանց խարգախ մտադրութիւնը:

Ես վճռեցի իմ մէջ ձևանալ այնպէս, որ իբր թէ ոչինչ չեմ կասկածում, և գնացի նախ գէպի կառքը, հանեցի ինձ հետ ունեցած ուտելիքիս պաշարը և միացայ նրանց հետ: Ոչինչ ախորժակի պահանջ չէի զգում, բայց այնու ամենայնիւ, ցոյց տալու համար որ ես ոչինչից չեմ վախենում, սկսեցի անդիտակցաբար ուտել,

անգամ մի բաժակ զինի, որ առաջարկեց կառապանը, ես խմեցի՝ իբր թէ մեծ ախորժակով։ Այն անիծեալ լէզգիները դարձեալ կողքիս կին նստած, և որովհետև նրանք այսոք է Սղնախից ոչ հեռու բաժանւէին մեղանից և այնուհետև ճանապարհորդէին երկուսով, զիշեր ժամանակ, բնականապէս նրանք սկսեցին կարդի բերել իրանց զէնքերը։ Այդ տեղ ինձ թողեց իմ քաջութիւնը։

—Հ՞ը, մտածեցի ես, սրանք անգամ չեն ուզում սպասել, որ գիշերը հասնի և մթնով գործ գնեն իրանց զարհուրելի ոճրագործութիւնը։ —Օգնեցէ՛ք, աղաղակեցի ես, կարծելով որ խկոյն պիտի կողքը խրեն իրանց երկար և լայն խանջարները, և վեր թռչելով տեղից՝ փախաց գէպի դաշտը, աշխատելով մի այնպիսի տեղ պահ մտնել, որ նրանք չը կարողանացին ինձ նկատել։ Մտայ ճանապարհի մօտ գտնւող մէկ արտի մէջ և աշխատեցի թագ կենալ։ Այն ինչ կառապանը համոզւելով վերջապէս, որ ես երեխ հիւանդ եմ և խղճալով, որ չը լինի՞ թէ մի վտանգ պատահի ինձ, եկաւ ետեւիցս և դուաւ ինձ։

—Ի՞նչ է պատահել քեզ, դիմեց նա ինձ վրացերէն լեզուով, չը լինի՞ թէ դու հիւանդ ես։

—Անաստուածնե՛ր, պատասխանեցի նրան լալով։ Ի՞նչ էք ուզում ինձանից, ի՞նչ եմ արել ես ձեզ, որ դուք ուզում էք սպանել ինձ։

Մնաց խեղճ մարդը շւարած.....

—Ոչ ոք մտադրութիւն չ'ունի ոչ թէ քեզ սպանելու, անգամ մէկ անբաւականութիւն պատճառելու։ Հանգստացի՛ր, ե՛կ գնանք, խկոյն կառքը կը լծեմ և մէկ-երկու ժամից մէնք արդէն Սղնախում կը լինինք. տեսնում ես՝ արդէն սկսում է մթնանալ։

Ճշմարիտ, որ ես քիչ հանգստացայ և հետեւեցի կառապանին։ Կէս ժամից յետոյ մենք ճանապարհ ընկաննք։

* * *

Սութը վրայ հասնելուն պէս կասկածներս կրկնապատկւեցին. ամեն բուգէ ես սպասում էի, որ խկոյն ինձ կը մորթեն ոչխարի նման և մէկը չի գտնւի, որ ինձ պաշտպան դուրս գայ. որովհետև, մտածում էի ես, այս մարդիկը ոչ թէ ճշմարիտ ճանապարհորդներ են,

այլ դա մի կազմակերպւած խումբ է, որ վարձւած է ինձ սպանելու համար և եթէ կը գտնաի նրանց մէջ մէկը, որի գութը շարժւէր և ուզենար ինձ պաշտպանել, անկարող կը լինէր, որովհետեւ ինքն ևս ինձ հետ զոհ կ'երթար:

Կեանքումն երբէք ես ոչ մի հիւանդութեան ժամանակ այդպիսի տանջանքներ չեմ կրել, ինչքան այդ երեկոյ և յետոյ մինչև առողջանալս:

Մէկ րոպէ ես չէի կարողանում հեռացնել ինձանից այդ անտանելի չարագուշակ կասկածները: Մի կասկած առաջացնում էր մի ուրիշ նոր, առաւել հրէշաւոր կասկած, որը զարդանալով հետզհետէ իսկոյն ստեղծում էր այնպիսի մի պատկեր, մի զարհուրելի տեսարան, որի առաջ ոչինչ էին նուկիզիցիացի ամենասարսափելի տանջանքները:

Ինչպէս յացնի է, նուկրիան անուանւած կայարանից պիտի իջնել Սղնախ, որտեղից ամբողջ քաղաքը իւր շրջակայ գիւղերով և Ալաղան գետի սքանչելի հովիտով, Կովկասեան լեռների շղթայի ձիւնապատ գագաթներով բացւում է ճանապարհորդի առաջ, իրբև մի յափշտակիչ պատկեր, որի առաջ դիտողը զմայլելով հետզհետէ սլանում է երեակացութիւնով մի այլ գերբնական աշխարհ, որի մասին համարձակ կարելի է բացականչել Դանտէի հետ միասին՝ թէ այդ տեսարանը երկնքի մի կտորն է, որ անակնկալ կերպով ընկել է և մի զիրք է բւնել մեր երկրագնդի վերաց:

Այդպիսի տպաւորութիւն էր արած ինձ վերայ այդ տեսարանը, երբ ես մի քանի տարի սրանից առաջ ացցելեցի Սղնախու և Թեւաւի նահանգները:

Իսկ այդ երեկոյ, երբ բացւեց այդ տեսարանը և մեր տակը երեւաց Սղնախի լուսաւորւած տները և այգիները, ինձ թւեց, որ մի տեսակ զարհուրելի աղմկալից պատրաստութիւններ է տեսնուում այնտեղ գալստեանս պատճառով: Ես պարզ և որոշ լսեցի թէ ի՞նչպէս ամբոխը աղմկակում է. սկսւեց հետզհետէ պարզւել իմ հիւանդ երեակացութեանս համար, որ բոլոր Սղնախի բնակիչները բաժանւել են երկու անհաշտ թշնամական կուսակցութիւնների, որոնցից մէկի պարագլուխներն են իշխան Ա...ներ, իսկ միւսինը՝ Վ...ներ: Եւ ես որովհետեւ գնում եմ այս վերջինների աւագ տոհմի ներկայացուցչի:

մօտ, որի ազգեցութեան տակ կարող էի վնասել առաջինների շահերը, ուրեմն պարզ էր, իբրև ցերեկ, իմ խեղճ երևակայութեանս համար, որ ահա՝ դրանք, հաւաքւելով հրապարակի վերայ, սպասում են, որ ես իջնեմ, և եթէ ինձ չը կարողացան սպաշտականել Վ...ները, այն ժամանակ ինձ կը մահացնեն սաստիկ ձեռվ Ա...ն իշխանների կուսակիցները: Քանի մօտենում էինք քաղաքին, այնքան սաստիկանում էր աղմուկը և անգամ ինձ որոշ լսելի եղաւ եկեղեցիների զանգահարութիւնը:

Ես սկսեցի դողալ ամբողջ մարմնով և չէի վստահանում կառքից դուրս նայել, որ չը լինի թէ ճանաչեն ինձ և իսկոյն դուրս քաշեն կառքից: Փողոցներից մէկի մէջ երբ կառքը կանգ առաւ, ես վստահացայ դուրս նայել և տեսնելով, որ այդ փողոցում ամբով չը կայ, մէկ րոպէում դուրս թռայ կառքից և սկսեցի վազել, ինքս չը հասկանալով թէ ո՞ւր եմ գնում: Յանկարծ նկատեցի առաջս մի եկեղեցու գաւիթ և ներս պրծայ այնտեղ:

—Այսուեղ, մտածեցի, ես ապահով կը լինիմ, երևի նրանք չեն համարձակւի յարձակւել ինձ վերայ եկեղեցու գաւթում:

Մի փոքր ժամանակ կանգ առնելուց յետոյ, ի՞նչքան մեծ եղաւ իմ ուրախութիւնը, երբ ես դրսի շէնքից ճանաչեցի, որ դա հայոց եկեղեցի էր:

Եկեղեցու զիմացը կար մէկ շինութիւն, որի մի քանի պատուհանները լուսաւորւած էին: Ես մեքենայաբար մօտեցայ այդ շինութեան, վեր ելայ սանդուղքներով պատշգամբը, ուր տեսայ կանգնած դրան առաջ մի երիտասարդ շէկ մօրուքով... նոյնադէս մեքենաբար մօտեցայ այդ նրիտասարդին և դողլողուն ձանով հարցրի:

—Պարո՞ն, —սասացի և չը կարողացայ շարունակել, վախենալով մի՛ գուցէ այդ երիտասարդը ինձ իսկոյն մասնէ:

Երիտասարդը նկատելով իմ տարօրինակ դիրքս, մօտեցաւ ինձ և —Պարոն Զմշկեա՞ն—բացականչելով՝ իսկոյն գրկախառնեց ինձ:

Ինձ ևս ծանօթ թւեց երիտասարդի գէմքը, բայց չը ցիշելով նորա ազգանունը, շուրջս նայելով, դիմեցի նրան շատ խորհրդաւոր ձեռվ:

—Ի սէ՛ր Աստուծոյ, պարո՞ն, պաշտպանեցէ՛ք ինձ....

Երիտասարդը զարմացած հարցրեց.

—Ի՞նչ է պատահել, ո՞ւմ դէմ պէտք է ձեզ պաշտպանել:

—Այդ անաստուած իշխանների դէմ... նոքա ինձ կամենում
են սպանել:

Ես նկատեցի, որ երիտասարդը ևս վախեցաւ:

—Խնչու համար, ի՞նչ իշխաններ, ո՞վ կը համարձակւի:

—Դուք ըլ զիտէք, պարո՞ն, ինձ հրաւիրել են իշխան Վ...էն և
հաշտարար միջնորդը. ես պէտք է ստրուկների հողերը բաժանեմ,
բայց ըլ զիտեմ թէ ինչի՛, իշխան Ա...ները ըլ համակրելով Վ...էին,
կամենում են ինձ սպանել... Օգնեցէ՛ք, ի սէ՛ր Աստուծոյ... Ահա՛
երկու անիրաւ լէզգիներ Թիֆլիսից մինչև այստեղ ուղեկցում էին
ինձ և կամենում էին ճանապարհին սպանել, բայց ես խոյս տւի:
Հիմա, կարծեմ, նրանք ինձ փնտուում են... Յ', պաշտպանեցէ՛ք,
արտասւելով մրմնջացի ես:

Խեղճ երիտասարդը շւարեց: Նա չէր կարող երևակայել, որ
այդպիսի մի զաւարդութիւն լինէր իմ դէմ, նաև որ զիտէր թէ մի
քանի ժամանակ առաջ ինչ յաջողութիւններ եմ ունեցել իմ խաղերովս
Թիֆլիսի հայոց բեմի վերայ և ըլ զիտէր անգամ, որ ես երկրաչափ եմ:

—Հանգստացէ՛ք, պ. Զմշկեա՞ն, հանգստացէ՛ք: Մտնենք սե-
նեակս, դուք այստեղ ապահով էք, ոչ ոք չի համարձակվի ձեզ
մազի չափ վիրաւորանք պատճառել: Ես այս ուսումնարանի տեսուչն
եմ, դուք ինձ ճանաչո՞ւմ էք, ես Եղգարեանցն եմ... Նա բռնեց
ձեռքիցս և ներս տարաւ սենեակը, որտեղ դարսած էին նստարան-
ներ և սեղաններ երեխանց համար: —Նա դասատուն է ուրեմն, մոա-
ծեցի ես, փոքր ինչ հանգստանալով: Այդ տեղից մտանք մի ուրիշ
սենեակ, որը, ինչպէս երեւում էր, պարոնի թէ ննջարանն էր և թէ
կաբինէտը:

—Նստեցէ՛ք, ասաց նա ինձ մեղմ ձայնով, իսկոյն կը բերեն
սամովարը, երեխ դուք յոդնած էք, թէյ խմեցէ՛ք և փոքր ինչ
քնեցէ՛ք, յետոյ մենք կ'լնիթենք միասին:

Ես նստեցի դոդալով ամբողջ մարմնովս: Ահա՛ այստեղ ազնիւ
երիտասարդը նկատեց, որ ես առողջ չեմ:

Նա մօտեցաւ դրանը և ինչ որ հրամայեց վրացերէն լեզուով և
իսկոյն մոաւ մի ծառայ և սպատասխանեց.

—Այս ըոպէիս, նմանապէս վրացերէն: —Զարհուրելի կասկածանք-
ները նորից զարթնեցին գլխիս մէջ:

—Ա', ա՛, երեխ անիծեալները գտել են տեղս և ուղարկել են իրանց ծառացին որ հսկէ ինձ վերայ՝ չը լինի թէ ես փախչեմ... մանաւանդ համոզւեցի այդ կասկածիս մէջ, երբ ծառան ներս մտնելով մի խորը հայեացք ձգեց ինձ վերայ:

Ծառան դուրս գնալուն պէս, ես տեղիցս վեր թռայ և մօսինալով Եղգարեանցին, հարցրի.

—Արդեօք այդ ի՞նչ մարդ էր, դա նրանց ուղարկածը չէ՞...

—Ո՞ւմ ուղարկածը, ինչե՞ր էք երեակալում... դա իմ ծառան է: Ես ցոյց տեի, իբր թէ համոզւեցի, բայց իմ մէջ հաստատ կարծում էի, որ ուղիղ չէ նորա ասածը:

Մի քանի րոպէ անցնելուց յետոյ, Եղգարեանցը ինձ առաջարկեց, որ եթէ ես կը ցանկանացի, նա կ'ուղարկէ իմ քեռուս ետևից, որ արհեստաւորի մէկն էր և ապրում էր Սղնախում իւր ընտանիքով:

Ես յայտնեցի իմ համաձայնութիւնը, սրտանց փոքր ինչ ուրախանալով, որ գոնէ մի սրտակից ազգական կ'ունենամ մօտա:

Ներս բերին սամօվարը: Ես քաշւեցի մի անկիւն, և այնտեղից լարւած զնոտւմ էի ծառացի ամեն մի շարժւածքը և եթէ մի կասկածաւոր բան նկատէի՝ իսկոյն պատրաստ էի անգամ պատուհանից դուրս փախչել:

Չ'անցաւ կէս ժամ, եկաւ և քեռիս, որին քսան տարի համարեաւ տեսած չէի, բայց որի մասին շատ յիշողութիւններ էին մնացել իմ երեխայութեան հասակիցս:

Քեռիս մի բարձրահասակ, յաղթանդամ արհեստաւորի մէկն էր, այն տիպարներից, որոնց բնաւորութիւնը և ամեն մի քայլը ուսումնասիրած լինելով, ապագայում ես առեղծեցի Պէտօի զերը բեմի վերայ: Նա ծիծաղով մօտեցաւ, զրկեց ինձ, բայց տեսնելով իմ վրդովւած դրութիւնը, կասկածանքով նայեց Եղգարեանցին:

—Ոչի՞նչ, պատասխանեց այս վերջինս, պ. Զմշկեանը փոքր ինչ յոդնել է ճանապարհին, հարկաւոր է որ փոքր ինչ հանգստանաց այս գիշեր, վաղը լաւ կը լինի:

—Գնանք ինձ մօտ, առաջարկեց քեռիս: Բայց Եղգարեանցը, զիստենալով նորա ընտանեկան դրութիւնը և բնակարանը, որը, յետոյ ինչպէս տեսայ, մի հին խոնաւ սենեակից էր բաղկացած, մի

ամենակեղտուս թաղի մէջ, պատասխանեց, որ լաւ կը լինէր, եթէ
ես մնայի իւր մօտ այդ գիշերը:

— Ուրեմն սրան էլ կաշառել են, մտածեցի ես, սա չէ ուզում
ինձ ձեռից թողնել:

— Զէ՛, չէ, ես կ'երթամ, յայտնեցի ես: Բայց մտածելով, որ չը
լինի թէ ես վիրաւորեմ Եղբարեանցին իմ հաւատ չ'ընծայելովս
նրան, աւելացրի.

— Լա՛ւ, ես կը մնամ այստեղ, միայն թէ թո՛ղ և բիճա Խէջօն
էլ մնայ (այդպէս էի անուանում ես նրան):

Վերջապէս այդ գիշերը անցկացրի ես Եղբարեանցի մօտ. բայց
թէ ի՞նչքան տանջւել եմ, ի՞նչ նոր նոր գժոխային մտքեր են
ծագել զլիսիս մէջ, այդ թողնում եմ առանց նկարագրելու. այսքանը
միայն կ'ասեմ, որ մինչև լոյս իմ աչքերս չեն կպել:

* * *

Այդ երեկոյ Եղբարեանցը, տեղեկութիւններ հաւաքելուց յե-
տոյ, թէ ո՞ւմ մօտ և ի՞նչու համար եմ եկել, տեսել էլ էր
վրացի իշխան Մ...օվին, որին յանձնարարած է եղել ինձ հրաւիրող
հաշտարար միջնորդ Վ...ից՝ ուղարկել ինձ Քօղալօ անուանած
գիւղը, ուր գտնւելիս է եղել ինքը և որտեղից պիտի սկսէր իմ
գործունէութիւնս:

Առաւօտեան Եղբարեանցը՝ յանձնելով ինձ հօրեղբօրս և մի ու-
րիշ հայ երիտասարդի՝ ուղարկեց իշխան Մ...օվի տունը:

Ճանապարհին ես աշխատում էի երեսս ծածկել, որ չը լինի թէ,
ինձ ճանաչեն... Ինձ թւում էր դարձեալ, որ ժողովրդի մէջ մեծ
յուզմունք կայ, որ ինձ խաբելով տանում են յանձնելու իմ թշնամի-
ներին, և երբ մօտեցանք այդ իշխանի տանը, լսելի եղաւ ինձ հա-
մար դարձեալ զանգահարութեան հնչումը...

— Ուրեմն, մտածեցի ես, այս զանգահարութիւնը յայտնում է
Սղնակի բնակիչներին, որ ինձ արդէն գտել են և շուտով կը հա-
ւաքւեն ամենքը և ինձ, խեղճիս, կը դատապարտեն մահւան:

Մտանք մի մեծ շինութիւն, լայն և լնդարձակ դաւիթով: Ինձ
տարան վերին յարկը՝ մի մեծ դահլիճ, ուր կար դրած մի սեղան,
որի մօտ նստած էր մի դրադիր և դահլիճում ճեմում էր մի բարի

կերպարանքով յաղթանդամ մարդ և ինչ որ թելադրում էր վրացերէն լեզուով գրագրին:

— Օ՛, ուստա՞ Խէջօ, բացականչեց իշխան Մ...օվլը, ճեմող մարդը. ի՞նչ նորութիւն:

Ուստա Խէջօի փոխանակ մօտեցաւ ինձ հետեւող երիտասարդը, որը, ինչպէս երկում էր, իշխանի լաւ ծանօթներից մէկն էր, և բացատրեց նրան իմ ինչ լինելս, աւելացնելով որ ես փոքր ինչ տկար եմ:

— Ոչի՞նչ, ոչի՞նչ, դիմեց ինձ իշխանը, հանգիստ եղէ՛ք, կ'անցնի, երեխ դուք ճանապարհին յոդնել էք: Ես ձեզ վաղը կ'ուղարկեմ իշխան Վ...էի մօտ. նա իմ բարեկամն է և շատ լաւ մարդ է: Առ այժմ նստեցէ՛ք, հանգստացէ՛ք, ես քիչ պատւէրներ ունիմ տալու, որը վերջացնելուց յետոց, կը անօրինեմ ձեր մասին:

Ես քաշւեցի մէկ անկիւն և նստեցի վառարանի մօտ մէկ աթոռի վերաց: Հօրեղբայրս նստեց ինձ մօտ:

— Դուք դիմէ՞ք, դիմեց դարձեալ իշխանին ինձ հետեւող երիտասարդը. այս պարոնը երեւելի դերասան է...

— Ա՛, բացականչեց իշխանը, խե՛զմ տղայ:

Այդ միջոցին ներս մտաւ մի ուրիշ իշխան, ծագումով հայ, ինչպէս իմացայ յետոց: Իշխան Մ...օվլը հաղորդեց նրան բանի հութիւնը: Նա մի անորոշ հայեացք ձգեց վերաս և շարունակեց խօսել հայ երիտասարդի հետ, որից երբ տեղեկացաւ թէ ես դերասան եմ, դարձեալ մի չար հայեացք ձգելով ինձ՝ վերայ, յայտնեց իշխան Մ...օվլն, որ ես, իբրև գերասան, երևի նպատակով եմ ձեւանում խելագարւած, որ նրանցից դրամական օգնութիւն գուրս գջլեմ:

Այդ առաջին մարդն էր, որ իմ այդ տխուր հիւանդ զրութեան մէջ առանց համակրանքի վերաբերւեց դէպի ինձ և այդ էր, կարծեմ, պատճառը, որ իմ երեւակայութիւնս առաւել զբգուեց, և ես լնդունեցի նրան իմ կարծած հակառակորդ իշխաններից մէկի տեղ և, տարաբաղդաբար, հէնց այդ խօսքերը արտասանելուց յետոց՝ մտան երկու խանջարակիր գիւղացիք:

— Ուրեմն այս մարդը, այս հրէշը, վճռել է այստեղ և թ' սենեակում սպանել ինձ և դորա համար բերել է այդ բո՞ի գիւղացիներին, որոնք պիտի դաշնի պաշատօն կատարեն:

Թէև իսկոցն սկսեցի ամբողջ մարմնովս գողալ, բայց միւնքն

Ժամանակ վճռեցի իմ մէջ ոչինչ վախ չը ցոյց տալ և մեռնել առանց մի տրտունջ յայտնելու:

Վերջապէս իշխան Մ...օվը, մի քանի կարգադրութիւններ անելուց յետոց, իշխան Թ...օվի հետ (այդպէս էր այդ հայ վրացիացած իշխանի ազգը) դուրս գնաց, տանելով իւր հետ և խանջարակիր գիւղացիներին:

Նուտով հեռացան գրազիրը և ինձ ուղեկցող երիտասարդը, որը, դուրս գնալուց առաջ, յայտնեց թէ իշխանը խնդրեց մնալ այդաեղ ճաշելու:

Սենեակի մէջ մնացինք ես և իմ հօրեղբայրս:

—Այդ ի՞նչ մարդիկ էին, ինչո՞ւ համար էին եկել իրանց ահազին խանջարներով, հարցը ի ես:

Հօրեղբայրս, որ մի շատ միամիտ և երկար ու բարակ չը մտածող մարդկերանցից մէկն էր, պարզ յայտնեց, որ դոքա գիւղացի սայլապաններ էին և եկել էին հաշիւ ստանալու իրանց աշխատանքի համար:

—Հըմ, հըմ, դառը ժպիտով արտասանեցի ես... Քե՞զ ևս կաշառեցին այդ անիրաւները...

Հօրեղբայրս բարձր ծիծաղեց:

—Ուրեմն այլ ևս կարծիք չը կայ, մտածեցի ես, սա ևս իմ թշնամիների կողմն է անցել... և մկնեցի շտապ-շտապ ման գալ սենեակի մէջ: Յանկարծ աչքիս լնկաւ վառարանը:

—Ա՛, փա՛ռք Աստուծոյ, մտածեցի ես և մօտեցայ վառարանին, որի մէջ, յայտնի բան է, տարւայ այդ ժամանակը կրակ չէր վառւում: Ես շատ զգոյշ կը լինիմ, շարունակեցի մտածմունքս. Հէնց որ կը նկատեմ թէ իմ սպանիչները սիտի ներս մտնեն, ես կը մըտնեմ վառարանի մէջ և կը պահւեմ, գուցէ և նորա խողովակի միջով ես կը բարձրանամ և արդպիսով կը խարեմ իմ դահիճներիս:

Յափշտակւած բոլորովին իմ մտատանջութիւններով, ես չը նկատեցի թէ ինչպէս ծառան տուն բերեց մի խօնչայի վերայդարսած կերակուրներ և մէկ ամանով զինի, որը տեսնելուն պէս՝ ես ուրիշ եղբակացութեան եկայ:

—Զէ՛, սրանք փոխեցին իրանց դիտառորութիւնը, շարունակեցի դատել ես իմ մէջ, սրանք չեն ուզում արիւն թափել, այլ ուզում են թունաւորել ինձ:

—Արի՛ հաց ուտենք, դիմեց ինձ գրգռւած ախորժակով բիձա Խէջօն:

—Ո՛չ, ո՛չ, ես ախորժակ չունիմ և քեզ էլ խորհուրդ չեմ տալ ճաշելու...

—Խոչի՛, անվրդով հարցրեց նա ինձ:

—Որովհեաւ... որովհեաւ... այլ ևս չուղեցայ շարունակել:

—Սարսա՛զ, բացականչեց բիձա Խէջօն և լաւ փռփռալի ծիծաղելուց յետոյ, երեսը խաչակնքեց և սկսեց ոչնչացնել մէկ կերակուրը միւսի ետևից, ամեն մէկ կտորից յետոյ գինու ամանը ուղղակի բերանը քաշելով:

—Ի՞նչ համեղ կերակուրներ են, արի՛, եթէ ոչ բան չեմ թողնիլ քեզ համար...

—Չեմ ուղում, և ես վախենում եմ, որ դու չը փոշմանես այդ համեղ կերակուրներն ուտելուց:

Դարձեալ նա բարձր ծիծաղեց և վերջին անգամ գինու ամանը բերնին զնելուց յետոյ, ինքնագոհ բացականչեց.

—Ոխա՛կ...

Խակ ես շարունակում էի միշտ արագութեամբ ման դալ, կանգ առնելով երեմն վառարանի մօտ և երկար ու բարակ զննում էի նրան:

Մտատանջութիւնս հասել էր իւր գագաթնակէտին: Ամեն մի ըոսէ ես սպասում էի, որ ահա կը մտնեն դահիճներս և վերջ կը զնեն իմ չարչարանքիս:

—Գոնէ շուտով ործնէի ես այս տանջանքից, մտածում էի, երբ տուն մտաւ իշխանի կինը իւր երկու աղջիկների հետ, մէկը հասակն առած, միւսը երեխաց:

Վերջինը փոքրիկ, սիրուն մի հրեշտականման արարած էր:

Այդ այցելութիւնը ինձ շատ ուրախացրեց... Կանայք միշտ զթառատ են, նրանք փափուկ սիրտ ունին, կը խղճան ինձ... Ես մօտեցայ փոքրիկ երեխային և աչքերս լի արտասու քով գառաց նորա մօրը, որը թէւ տարիքով էր, բայց նմանապէս մի գեղեցիկ և բարի դէմքով կին էր:

—Ի սէ՛ր Ասոուծոյ, իշխանուհի՛, ի սէր այս ձեր փոքրիկ հրեշտականման զաւակի, խղճացէ՛ք, սլաշտավանեցէ՛ք, մի՛ թոյլ տաք, որ սպանեն ինձ այդ անգութները:

Խեղճ կինը նայեց ինձ համակրանքով և սկսեց հաւատացնել, որ ոչինչ վտանգ չէ սպառնում ինձ:

Տուն մտաւ իշխանը, որը նմանապէս ինձ մխիթարելուց յետոյ, յահճնարարեց հօրեղբօրս, որ տանի ինձ իւր մօտ հանգատացնի և վաղը ճաշից յետոյ բերի որ ես ճանապարհ ընկնեմ դէպի Քօդալօ գիւղը, ուր սպառնում է ինձ հաշտարար միջնորդը:

Այնուհետեւ երբ ես հօրեղբօրս հետ դուրս եկանք իշխանի տանից և զանազան ծուռ ու մուռ փողոցներով անց էինք կենում, գնալով դէպի նորա տունը, ինձ թւում էր դարձեալ, որ բոլոր անց ու դարձ անողները ինձանով են զբաղւած: Ամեն մի վրացի ազնւականի պատահելիս՝ ես կարծում էի, որ անշուշտ կամ մէկ կամ միւս իշխանների, այսինքն Վ...Ների կամ Ա...Ների կուսակցութեան են նրանք պատկանում և որ ամեն մէկը նրանցից պատրաստ էր ինձ վերայ յարձակւելու և սպանելու:

Հօրեղբօրս տանը ես առաւել սկսեցի անհանգստանալ, ուստի ինորեցի դարձեալ Եղգարեանցի մօտ տանել ինձ:

* * *

Երբ մտանք Եղգարեանցի մօտ, այնուեղ հաւաքւած գտանք մի քանի հայ երիտասարդներ, նրանց մէջ և այն երիտասարդին, որ ուղեկցել էր ինձ իշխան Մ...օվի տունը գնալիս և մի անձանօթ հաստ մարդ, որը յետոյ ինչպէս երևաց, սափրիչ էր:

—Այդ ի՞նչ մարդ է, հարցրի ես Եղգարեանցին, չը լինի՞ թէ դա էլ նրանցից է: Ասացէք, ինորեմ, ի՞նչ են ուզում ինձանից:

—Սա վտանգաւոր մարդ չէ, ընդհակառակը՝ դա մի հասարակ և բարի արհեստաւոր է, որը յացնում է իւր պատրաստութիւնը ձեզ բժշկելու:

—Ինչպէս, ինչո՞վ... Մի՞թէ ես հիւանդ եմ:

—Այո՛, բարեկամն, հիւանդ էք: Հարկաւոր է փոքր ի՞նչ արիւն առնել ձեզանից:

Ես զարհուրեցի և սկսեցի դողալ ամբողջ մարմնովս:

—Մի՞թէ դուք ես նրանց համախոհներիցն էք և ձեզ են յանձնել անարդ դահճի պաշտօնը կատարելու:

— Հանգստացէ՛ք և համոզւեցէ՛ք, որ դուք հիւանդ էք, այլապէս ի՞նչպէս կարող էք ձեզ թոյլ տալ մտածելու, թէ ձեր բարեկամներն, անգամ ձեր հօրեղբայրը, ձեզ թշնամի են:

Մոռեցաւ և սափրիչը, որը մի շատ բարի կերպարանք ունէր և նա ևս սկսեց ինձ համոզել, որ ես համաձայնեմ թողնել տղրուկեներ կպցնելու ականջներիս ետևից:

Դարձեալ ես կասկածով նայեցի շուրջս և այս անգամ ինձ թւաց, որ ինձ շրջապատողները կարեկցում են դրութեանս և յետոյ մտածեցի.

— Դիցուք թէ այս մարդիկը ճշմարիտ ուզում են ինձ սպանել, լաւ չէ՞ մեկ անգամից վերջ դնել իմ տանջանքիս, քան թէ մնալ այս զարհուրելի դրութեան մեջ: — Լա՛ւ, վճռեցի ես, զառնալով Եղբարեանցին. ահա՛ ես պատրաստ եմ: Եւ այս ասելով, առայ աժոռով և նստեցի պատուհանի դէմ, դարձնելով քամակս դէպի ներկայ եղողները:

— Ինչ ուզում էք արէ՛ք, արտասանեցի ես վշտալի ձայնով, պինդ փակելով աչքերս: — Ինչպէս և ինչով արիւն հանեցին ականջներիս ետելից՝ ես այսօր էլ չեմ յիշում: միայն այսքանը լաւ միտս է, որ մեկ քառորդ ժամից յետոյ ես ինձ բոլորովին ուրիշ մարդ զգացի և երբ ինձ ասեցին, որ ամեն բան պատրաստ է, ես ուրախ վեր թռայ տեղիցս և արտասւալից աչքերով յայտնեցի իմ խորին շնորհակալութիւնս:

* * *

Դիշերը հանգիստ քնելուց յետոյ, միւս օրը ես ինձ բոլորովին առողջ զգացի, միայն թէ շատ թոյլ էի... Երեակացութեանս մեջ ստեղծւած թշնամիներս, լէզգի և այն անհետացան և ես խաղաղ ճանապարհ ընկայ Փօղալո անուանւած զիւղը, ուր գտայ սիրալիր ընդունելութիւն հաշոարար միջնորդ Վ...ից և նրան շրջապատող վրացի աղնաւականներից: Ինչպէս երեւում էր, այստեղ լսել էին իմ հիւանդութեանս մասին և այդ պատճառով ամենքը շատ զգոյշ էին վարւում:

Մէկ քանի օր այդուղ պարապ մնացած միջոցս, ես ձեռնանամուկս եղայ Վիկոր Հիւգօի «Անջելօ» դրամայի թարգմանութեան

որը և վերջացրած բերի աշունքը Թիֆլիս, մեծ ուրախութիւն պատճառելով թէ ընտանիքիս և թէ իմ ընկերներիս:

Բայց հետաքրքիր է մի բան. երբեմն դաշտում աշխատութեանս ժամանակ, եթէ պատահում էր յօդնել կամ մէկ անիրաւացի գործի վկայ գտնել, երևակայութիւնս դարձեալ առժամանակ խառնուում էր, բայց իսկոյն փոքր ինչ հանգստանալուց յետոյ՝ ուշ քի էի զալիս:

Այդպէս, օրինակ, մէկ անգամ, երբ ես մի քանի իշխանների հետ ձիով բարձրանում էի անսուափ միջով մէկ լուան գագաթ՝ չափելու այնտեղի հողերը, մեզ պատահեց ճանապարհին մի հայ միկիտան, ուսին գցած մէկ նոր եափունջի, որը, ինչպէս երեւաց, ծանօթ էր բոլոր այդ իշխանների հետ: Դրանց միջոց մէկը, որ աւելի հասակով ու գեղեցիկ, պինդ կազմածքի տէր երիտասարդ էր, զարձրեց հային, որ նմանապէս մի սիրուն երիտասարդ էր, իւր ճանապարհից և խօսակցելով նորա հետ, քայլ առ քայլ մօտենալով նրան, յանկարծ խլեց նրանից նորա եափունջին և սպառնացաւ նրան իւր երկար խսնչարով, եթէ նա համարձակէ փորձ փորձել յետ առնելու այն:

Երիտասարդ հայը սկզբում ուզեց յարձակւել և մարտնչել այդ իշխանի հետ, բայց տեսնելով իւր միայնութիւնը այդքան զինաւորւած իշխանների մէջ, նա կրծացրեց ատամները, «լաւ» բացականչելով շուռ տւեց իւր ձիու զլուխը և շարունակեց ճանապարհը:

Ահա' այդ զլուխի արկածքին վկայ լինելով, ես ինձ վատ զգացի և երևակայութիւնս մէկ քանի ժամ սաստիկ վրդովեց:

Երկրորդ անգամ, աշխատութեանս իսկ ժամանակ, մէկ սաստիկ տաք օր, բաց դաշտում, երբ ես բաժանում էի զիւզացիների մէջ (նրանք շատ էին) նրանց հողերը, ես տեսաց թէ ինչպէս մի իշխան աշխատում էր միշտ խարեւացնութեամբ քիչ մաս հասցնել մի քանի զիւզացիների, և այդ բանը այնքան ինձ վերայ ներգործեց, որ ես գետին զցելով իմ երկրաչափական գործիներս, թողի և փախայ, երևակայելով, որ ուզում են ինձ սպանել:

Դարձեալ պատահեցին մի քանի դէպքեր, բայց ոչ մի անցք երկար հետեւանք չ'ունեցաւ:

Հետագայ տարիներում, եթէ ինձ պատահում էր որ և իցէ կասկածառը հասարակութեան մէջ գտնել, դարձեալ ես շփոթում էի, բայց առանց որ և իցէ տխուր հետեւանքի:

ՆԻԷՐ ՎԱՐԺԱՊԵՏ Մ. Ա.-ԻՆ

ԱՐԴԱԼՈՅՍ ՄԽԻԹԱՐԵԱՆՑԻ

ՔԵզ եմ նւիրում, անգոյդ բարերած՝
ՔԵզ, որ քառասուն տարի շարունակ
Հայրենի երկրիդ կը թութեան համտը
Զը խընալեցիր ոչինչ աշխատանք.
Դեռ երիտասարդ եռանդով վառւած՝
Դու տւիր նորան քո խանդ և արիւն,
Անձնական վայելք ոտքի տակ առած՝
Ընտրեցիր տանջանք և աղքատութիւն.
Ուսուցչի խաչը դըրած ուսերիդ՝
Անցար անտըրտունջ փուշ ու տատասկից,
Երբէք չընկճեցաւ քո հըպարտ հոգիդ,
Երբէք չը լըսւեց գանգատ քեզանից.
Խորին խաւարում մենակ, հալածւած՝
Դու յառաջ տարար լուսոյ դըրօշակ,
Քո յոլսդ էր միայն երկընքում Աստուած
Եւ երկրիս վերայ բարւոյ յաղթանակ:

Փառք քեզ—յաղթեցիր. աղքատիկ տան մէջ
Քո հայրենական սիրած քաղաքում
Բորբոքւած ճըրագ կը մընալ անշէջ,
Թէպէտ և լինիս դու գերեզմանում:
Ես քանի՛ անգամ վըկալ եմ եղել,
Երբ հիւսն ու դարբին չերմ արտասուքով

Անմոռանալի անունդ են օրհնել
Արդար վաստակի հացը կըտքելով.
Քանի որբ, անտուն՝ իրանց սեպհական
Համեստ յարկի տակ հիմա բոլորւած,
Ցիշել են խընամքդ ու սէրդ հայրական՝
Կարօտեալներին առատ պարգևած:
Եւ քանի դեռ կայ այդ փոքրիկ քաղաք,
Քանի կը լըսւի այնտեղ հայ լեզուն,
Չի ջընջւիլ երբէք քո քաղցր իիշատակ,
Չի մոռացւիլ քո պաշտելի անուն:

Ընդունիր և այս սակաւիկ տողեր
Հոգովըդ ծընած, գըգւած որբուկից,
Որ օրօրոցից մինչև այս օրեր
Վայելել է սէր անվերջ քեզանից.
Որ հեռու, օտար, կորած, մոռացւած,
Ուսանողական աղքատ սենեակում
Տեսել է վերան ձեռքըդ տարածւած,
Երբ մահն էր կեանքի հետ պատերազմում:
Ես դիտեմ քո վիշտ.—ուսուցիչն իւր հետ
Զօհում է նոյնպէս անմեղ ընտանիք...
Սիրտ առ—քո բարիք չեն անցնիլ անհետ,
Այդչափ քարասիրտ չեն լինիլ մարդիկ.
Գուցէ կը խընդայ դեռ քո ծերութիւն,
Թէւ ուշ՝ ժըպիտ կը պարզէ հոգիդ,
Գուցէ մօ՛տ է շատ հիմա օգնութիւն—
Այդ պարտքն անվըճար հայրենի երկրիդ:

* * *

ԱՐՆԱԼՈՅՍ ՄԽԻԹԱՐԵԱՆՑԻ

Ողջնին ձեզ, ողջնին, հայրենի լեռներ,
Շատ տարի առաջ, ինչպէս և այսօր,
Ձեր հըսկայական ձիւնոտ կատարներ
Փայլում են պայծառ. թէև ալևոր
Դուք նոյնպէս հըպարտ, անշարժ, անսասան
Նայում էք հիմա բարձր հօրիզոնից,
Որպէս և այնօր, երբ լուռ և անձայն
Գընում էի ես սիրած աշխարհից:

Ողջնին ձեզ, կանաչ արտ ու արօտներ,
Կապոյտ ու կարմիր հանդերձով կոկւած
Ժըպտում են ձեր մէջ գարնան ծաղիկներ,
Նոյնպէս գեղեցիկ, որպէս և առաջ.
Նոյն ականակիտ հոսում է գետակ,
Նոյն փըրփըրալից ալիքն են վազում,
Եւ քաղցր է նոյնպէս նոցա եղանակ,
Որպէս և վաղուց անցած օրերում:

Ահա նաև դուք... Ողջնին ձեզ, ողջնին,
Փոքրիկ, փոշելից տուն ու փողոցներ.
Ձեր մէջ անցկացրած ուրախ մանկութիւն
Զարթնում է կըրկին. ձեր կոպիտ քարեր,
Ձեր հողն ու փոշին ես գեռ չեմ փոխել
Աշխարհիս բոլոր հարըստութեան հետ,

Երազներիս մէջ ես ձեզ եմ տեսել,
Ես ձեզ եմ սիրել հայրենիքիցս յետ:

Դուք նոյնն էք կըրկին. նոյնակս ոլորւած
Կորչում է փողոց զառիվալի մէջ,
Նոյնպէս կանգնած են և յետ ու առաջ
Տըների շարքերն երկար ու անվերջ.
Որքան քաղցր օրեր, խաղեր մանկական
Կապւած են ձեզ հետ հոգուս խորքերում.
Ողջոյն ձեզ կըրկին.—առաջւալ նըման
Ես ձեզ հիւրընկալ, ուրախ եմ տեսնում:

Բայց ուր ես արդեօք, հայրենի տընակ.
Միթէ կուրացան յանկարծ իմ աչեր,
Միթէ երազում ես քո փոխանակ
Տեսնում եմ միայն ցիրուցան քարեր.
Եւ ուր է ծերուկս... ուր են մեղմաձայն
Մի հատիկ որդու հսմար մըրմունջներ...
Ա՛խ, ողջոյն, ողջոյն, մոռացւած տապան,
Ողջոյն ձեզ, քանդւած, աւերւած պատեր:

Բ Ա Գ Ի Ե

ՊԵՐՃ ՊՈՅԵԱՆՑԻ

Եռուէր մեծ, բժշկապետ Յովհաննէս Գասպարեանցին,

(Շաբունակութիւն 1)

ԺԵ.

Շ Ո Ղ Ի Կ Բ

Վազում էր Բղդէն գնդակահար էրէի նման դէսի սուրբ Յովհաննիսի աղքարակը, բայց մի քանի անգամ ոտքը ծանրացրեց: Նա տատանում էր թողնելու կիղի-մատուռը և իշամեղուներին. բրիչ ու կռան այնտեղ ընկած են, զանդակատան լուսամուտը քանդուած է, բռուերն այնտեղից չեն հեռացել, մէկը ներս կը մտնի, ամեն բան կը պարզուի և ինքը կը զրկուի ոսկիներից:

—Ե՛հ, թէկուզ մտնեն, ի՞նչ կարող են անել, հաստատապէս վճռեց Բղդէն, ամենաշատը՝ լինքն ու զուրզը (Էթիչ և Համա) պէտք է տանեն, բռուերը հօ' թեւաւո՞ր են, թլիսմի թուղթը հօ' մօտս ունիմ, ել ումնից եմ վախենում:

Նա ապահովացաւ և շտապեց տեղ հասնել, մինչ աչքերի ուռոցը չի փակել իւր տեսութիւնը. արևի կիղիչ սաստկութիւնն իւր զօրութիւնը գործ էր դնում, աչքերը կարող էին բոլորովին ծածկուիլ և նա ամեհի քարաժայուի գլխից խոր անդունդը կը գահավիժուէր:

1) Տե՛ս «Մուլութ» 1889 թ. № 12 և 1890 թ. № 1, 2

Ենթադրութիւնն իրողութեան փոխուեց. մօտ էր ձորի հունն իջնելու, որ Բղդէն էլ ոչինչ չը տեսաւ և ոչինչ չը հասկացաւ, մի օվա՛ց միայն լսուեց և ոտքերը գետնից կտրուեցին:

Անդունդը կուլ տուեց մեր հերոսին:

Էլ Բղդէ չը կայ աշխարհի երեսին, ձեռքներս լուանանք:

Ոչ, չը յուսահատուինք, մենք՝ այդպէս շուտ չենք զրկուիլ մեր սիրելուց. նա կորաւ, բայց կրկին լոյս աշխարհ եկաւ:

Զորի յատակումը՝ ձորաթմբի ստորոտով վազում է գոչգոչալով Քասախի վտակը. դա մի արհեստական ճիւղք է գետակից հանած. Կարբու ջրաղացների հաստակոլոր աղօրիքը պտաեցնող ջուրն է դա, ջրաղացի առուն է: Նա շատ խոր չէր, բայց սրբնթաց էր և լայն:

Բղդէի գահավիժուած ուղղութիւնից փոքր ինչ ներքեւ՝ Ջրաղացի առուն վերայ՝ մի անհեթեթ օտարոտի մարմին վեր բարձրացաւ Ջրի տակից, աշխատեց ամրացնել իւր ոտքը և դիմաղրել արագավազ Ջրի հոսանքին, բայց կրկին ծնկներն ընկրկեցան և նա սայթաքեց ու երեսն ի վայր փուռեց Ջրի մակերեսութի վերայ:

Մի քանի զլորումն և կանգնումն՝ և խեղդուողին օգնութիւն հասաւ առունի թմբանը տնկած սաղարթաշատ ուռենու դէպի ջուրը հովանաւորող ոստը:

Տարօրինակ մարգանման երկոտանին գրկեց ուռենու բունը և դուրս սողաց առունի միջից:

Դա Բղդէն էր, որ վերոցիշած քարափից վայր էր դլորուել ուղղակի առունի մէջ:

Նա այժմ կանգնած է առունի ափին և մեքենաբար զլուխը շարժում է:

Նա թրջուած է ամբողջ մարմնով, ջուրը ծլծլալով հոսում է նորա վրայից, իսկ Բղդէն ամենելին ուշադրութիւն չը դարձնելով իւր անբնական դրութեան վերայ՝ փառաւորապէս տեղն ու տեղը պառկեց թաց խոտերի մէջ:

— Օխա՛յ, էս ի՞նչ լաւ էր, երկար ծորելով արտացայտեց նա իւր ինքնաբաւականութիւնը, բոռերի կծած տեղերի կակիծն ու մրմուռը կորաւ, հովայաց ու հանդառացայ, ի՞նչ ցաւ, թէ թրջուեցի, արևն էնքան թէժ է, որ ձուն կը խորովի՛, շատ չի քաշիլ էլ յետ կը չորանայ:

Բղդէն իրաւունք ունէր. ջուրն իւր փրկարար ոյժը ի գործ էր դրել. իշամեղուների խայթիւնի սաստկութիւնը մեղմացել էր:

Վայրկենական էր ցաւի համագույթիւնը, արևի տաքութիւնից կակիծը նորից խստացաւ:

Այս անգամ Բղդէն հաստատապէս իւր դեղը գտաւ. պառկած տեղից ձեռքով ջուրը սկսեց վերցնել առուից և զլխին ածել:

Նա զգում էր զովութիւն:

Հետզհետէ Բղդէի աչքերի կոպերը յետ բացուեցին, հազուստի ջուրը քամուեց և սկսեց փաշաշել (ֆռք ի՞նչ ցանուել). նա վերկացաւ շտապելու դէպի սառն աղբիւրը:

Յանկարծական կատաղութիւնը Բղդէին ընդգրկեց: Նա ձեռքը դրպանը տարաւ, երկու հատ ոսկիներն էին միացն. կախարդական եռանկիւնի փաթեթը չը կար, թլիսմը գրապանից վայր էր ընկել, ջուրը տարել էր:

Ամեն ցաւ ու կոկիծ մոռացութեան տրուեցին. Բղդէն այս անգամ ինքը մոռաւ առուն և ջրի ափերի խոտերը նշմարելով ու սնտղելով՝ ներքեւ էր գնում:

Թուղթը չը կայ, որ չը կայ, արագահոս ջուրը վաղուց ջրաղցի նաւի շեշտակի հոսանքի մէջ քայլայել է թղթի շաղախը, թլիսմի թուղթն անշուշտ ոչնչացել է:

Բղդէն սակաւ մնաց իրան կորցնէր. նա մի տեսակ դուրս եկաւ առուից և սրտակոտր վայր ընկաւ կրկին առուի թմբանը:

Նա լալիս և հեկեկում էր:

Յուսահատութիւնը շատ կարճատեւ էր: Յակարծական ոստիւնով վեր ցատկեց Բղդէն պառկած տեղից և քիթը քամի մտած, ճակատը ծաղիկ, կոմքօլ (հառարար) գոմշի հայեացքով աչքերը լարեց դէպի իւր եղած տեղից բաւականին հեռու գետափին գտնուած կարբու ջրաղցի դռւուը, ուր կանգնած էր մի դեռահաս երիտասարդ և ձորն ի վեր դէպի արևելք սպասողական դրութեան մէջ նայում էր:

—Այ, իմ աչքի փշերից մէկը, մըթմըթաց ինքն իրան Բղդէն. երկու տարի է ջհուտ Աղաջանը բերանիս իւրոտ պատառը խլել, սրան է ուտեցնում: իմ չարչու ապրանքս բոլորից աւել Աշտարակումն էր փող գառնում, հիմի Աղաջանն այնտեղ խանութ է բաց արել ու սրան մէջը նստացրել, ի՞նչ է թէ իրան փեսայ պէտք է

շինի: Տե՛ս, տե՛ս, ինչպէս սիրտը հանգիստ կանդնած՝ մտիլ է տառը լիս երկնքին, երևում է՝ էս աշունք պսակուելու է, իւր հարասնիքի ալիւրն է եկել ազալու. ինչի՞ չի աղալ, ի՞նչ կ'ասի, որ չի ուրախանալ, ինձ պէս չարչութիւն անելով՝ բօշէքանց նման գեղերը չի քարշ գալիս, անքրտինք, անվաստակ հացի վերաց է տուն գալու:

Բղդէն սպառնալից կառաղութեամբ գլուխը թափահարեց ղէպի իւր համագիւղացի Բատինենց Կարապետի որդի Սհօն—Աղաջանի ապագայ փեսացուն:

—Մին, թէ որ սատանէն կո անս կը կենաց, էս իրիկուն Կիզիմատուոխ բոռերը քսակս կը մանեն ու կուչ կը գան, ես զիտեմ, թէ ի՞նչ հացի կը հասցնեմ ջիուտ Աղաջանին ու քեզ, Սհօ՛ ջան, խրոխտաց Բղդէն երիտասարդի վերաց, անուշաղիր թողնելով այն կէտը, թէ Սահակը ոչ տեսել է իրան և ոչ մտածում է, թէ աշխարհքի երեսին մի աներեւոյթ թշնամի է ստեղծել իւր համար:

—Ի՞նչ եմ ասում, նորից կակծալի մորմոքով լաց եղաւ Բղդէն, մեղաւորին ո՞վ է տուել արքայութիւն, ընչո՞վ եմ պարծենում, մոռացել եմ, որ թլիսմի թուղթը չը կայ:

Սի խոր հոգւոց վհասեցրեց Բղդէն. մի քանի ակնթարթ լուռ էր նա և անզգայօրէն նացում էր դէպի Սահակը:

—Ի՞նչ եմ յիմարացել, յական թօթափիկ ոգեւորուեց նա, շատ լաւ եղաւ, որ թլիսմի կորաւ. ոսկիքը հիմի թեւաւորուել են, բոռեն գառել, ուր որ զնան, իրիկունը յետ են դառնալու Կիզիմատուոք. թէ որ զանգակատան լուսամտումը թուղթը դրած մնար, բոլոր բոռերը կը թուշէին, Սպահան կ'երթացին, իրանց առաջուան տիրոջ մնդուկը կը մոնէին. հիմի նրանք իմա են ու իմա. ցորեկով մատուռին բոռերի ահից մարդ չի մօտենալ, էս գիշեր նրանք իմ ծոցումս բուն կը դնեն:

—Սպասի՛ր ուրեմն, ջհո՛ւտ Աղաջան, բռունցք արեց Բղդէն և կուռը քաջ կոփամարտի նման օգումը ճօնեց. մի քիչ ժամանակ էլ քաղցր երազներ տես ու գիշերները թաքուն նշանածիդ հետ պատի քամակից քչփչա՛, Բատինի թոռը Սհօ՛, շատ չի քաշիւ դուք կը ճանաչէք Բղդէնին: Դեռ ամենից առաջ բոռերի կծածները լաւացնեմ, երեսիս ուռուցքները նատացնեմ, էս իրիկուն էլ ոսկիքն իմը շինեմ, յետոյ ձեզ հետ կը խօսեմ, ձեր աչքին կ'երւամ:

Անիւի նման մի ոտքի վերաց պտոյտ արեց Բղդէն, երեսը դէպի արևելք դարձեց և շտապով ճանապարհ ընկաւ դէպի սուրբ Յովհաննիսի աղբիւրը, երբեմնապէս տեղ տեղ կզուելով առուի վերաց և գլուխը մէջը խորասուզելով:

Ահա՛ մօտ է Բղդէն աղբբին. ահա առուի թմբան նեղ շաւիդն արգելող մի քարափ, որի ստորոտով պէտք է պտոյտ անի նա և տասը քայլից փափագին հանի: Նթէ Քասախ գետի բարձրածայն խողխոջիւնը մի խուլ արձադանզով բռնած չը լինէր ամբողջ ձորը, աղբբակի կարկաչիւնն այս քարի ետևից լսելի կը լինէր:

Առուի թմբանն անսահման ժամանակից ընկած այս մեծ ժայռը բնական սահմանն է դարձել սուրբ Յովհաննիսի աղբբի առաջը փռուած փոքրիկ սիզաւէտ տափարակին, որի արևելեան կողմում կանգնած է մի հատիկ դժնիկի մեծ և ոստաշատ թուփ:

Ժողովրդի հասկացողութեամբ, սուրբ Յովհաննիսն ինքն է անկել և աճեցրել այս փշի ծառը, որպէս զի ջերմ ու տենդով հիւանդաները երբ գան բժշկուելու իւր աղբբի ջրով, նրանք կարող լինին ազատ համարձակ մերկանալ թփի միւս կողմը և աղբբակի ջրով լուացուել, լցնելով իրանց վերաց եօթը գաւաթ ջուր. իսկ ցաւը հետները յետ չը տանելու համար՝ հիւանդաները պարտական են կտրել իրանց հագուստի քղանցից մի կտոր և կապել փշոտ թփի ճղնիկներից մէկին:

Այս իսկ պատճառաւ է, որ փշի մեծ թուփն իւր վերաց կապկալոտած հազարաւոր գոյնզգոյն ծուէնքների չնորհիւ նմանում է մի մեծ ծաղկի փնջի:

Մի վերջին անգամ սահմանաքարի արևմտեան երեսին Բղդէն գլուխը թաղեց առուի մէջ և կամեցաւ քարը բոլորուել:

Երկու քայլ՝ և նա տափարակի վերաց էր: Բայց կօլու չարչին փոխանակ յառաջ գնալու՝ գնդակի արագութեամբ յետ ընկրկեց և տեղն ու տեղը քարի տակին կուչ եկաւ ու շունչն իրան քաշեց:

Խորիւներն ու խոտերը նրան ծածկեցին:

Բղդէն մնաց բերանաբաց, աչքերի բիբերը լայնացան, յօնքերը ճակատը թռան, ջղերի չափազանց ձգողականութիւնից երեսի ուռուցն էլ տեղի տուեց: Այս զրութեան մէջ նա ահռելի էր, կատարեալ սֆինքս էր դարձել. լա՛ւ, որ իրան չէր տեսնում, ապա թէ ոչ, երկիւղիցը սրտածաք կը լինէր:

Ի՞նչն էր Բղդէին այլակերպողը, ի՞նչ երևեցաւ աչքին: Ճիշդ աղբբակի ական մօտ լնկած էր մի պղնձեայ գաւաթ: Փոքր ինչ հեռու՝ գետնի վերաց թափած էին մի երկու կանացի հազուստ, իսկ արևի տակին կանգնած էր մի չքնաղահրաշ նորատի գեղեցկուհի: Մի ուրիշ, միջին տարիներով կին մայրական դգուանքով հազգնում էր գեղանի աղջկանը: Կարմիր կերպասի շալիկն արդէն ծածկել էր դեռահաս պատանի աղջկաց մարմինը:

— Ասկի կոճակդ ինքդ կախի՛ր, մինչև ես արխալուզդ բերեմ, նողի՛կ ջան. մի քիչ յառաջ դնա՛ դէպի արևի տակը, քարափի շուաքը վրէդ լնկաւ, կը մրսես:

Խօսողը հասակաւոր կինն էր:

— Զեմ մրսիլ, աղէ՛ (հայէ՛), ասաց սիրունիկը և սկսեց ժողովել շապկի օճիքը, որ յետ էր բացուած և տակից երեսում էր լուսափայլ լանջը, որի վերաց բարձրացել էին օրիորդական թարմ ստինքը:

Դեռ չէր ծածկել աղջկին իւր փոխսկրեաց, թզաչափ բարձր, հոլանի, սպիտակ կարապային պարանոցը:

Մենք չենք կարող գուշակել, թէ ի՞նչ էր անցնում այն բոպէին աննման գեղեցկուհու մոքից, բայց նա խոնարհեցրեց իւր գլուխը, բոլորակ, սևաթոյը և խոշոր աչքերը մի բոպէ սևեռեց իւր մարմարոնեայ լանջին և մի հեղահամբոցը կարճատու ժպիտ խաղաց նուրբ շրթունքների վերաց. նա երկու ձեռքով յետ տարաւ կրծկալը և կանացի հպարտութեամբ նայում էր խանդաշատ աչքով բնութեան թանգագին պարգևներին:

Աննման էր աղջկիկը. յունական ծովային փրփրազգեստ յաւէրս ժահարսն էր նա, որ յնդեցնելով Յոյների գոռ պատերազմասէր աստուածներին, թեածել էր հայ աշխարհը՝ Արագած լերան ստինքից բղիսած Քասախի անմահական կաթնով լուացուելու և հայ ամպամած լեռնածոցերի անհամար քարայր-պալատների մէջ պար առնող ողջամիտ եթերականներին իւր ոտքի տակ ծունկ չոքեցնելու համար:

Բայց հողեղէն դիւղացին իւր համանման մահկանացուի վերաց միայն կախարդական ոյժ ունի. մինը գտնուեցաւ, որ ականատես եղաւ այս տեսարանին և, ինչպէս ասացինք, ոտքերը դողացին:

Մայր ու աղջիկ, անկարծիք, կը լսէին նորա ոտնաձայնը, եթէ

Նրանցից մինն իրանով զմայլուած չը լինէր, իսկ միւսը դստերը հազցնելու հոգսով չը լինէր զբաղուած:

—Ծուտ կուրծքդ կապի՛ր, Շողի՛կս, քաղցր յանդիմանութիւն կարդաց մայրը, մեռնի՛մ կոկոմ վարդերիդ, շատ չի քաշի՛ կը փթթին, կը բացուին ու խելքամաղ կ'անեն նշանածիդ: Ախչի՛, սատանէն հակառակ է, հիմի որ էս խոտերի միջից, կամ քարափի ետևից Սհօն քեզ մոտիկ տար, հօ՛ կը գժուէր:

Աղջկաց երեսը շառագունեց. նա շտապեց փակել կուրծքը և հագնուել:

—Ախար դու չը գիտես, յառաջուց ես նրան ասացի, որ քեզ բերելու եմ վրէդ ջուր ածելու. ինձ խնդրեց, որ իրաւունք տամ հետներս գալ. ես նրան ասացի, որ կարող է հեռու հեռու ման գալով մտնել ջրաղացն ու սպասել. ինչքան էլ լինի, ձոր է, լաւ չի առանց տղամարդի երկու հոգւով գիւղիցն էսպէս հեռանալ. Հիմի մենք ջրաղացի առաջովը կանց կենանք, խեղճը մարադ մտած կատուի նման քամակներիցս պէտք է քաշ գայ:

Շողիկը ոչ մի խօսք չ'արտասանեց:

—Հիմի, ասում եմ, էդ քո սատանաց Սհօի սիրտը համբերած չը լինի ջրաղացումը, էս խոտերի միջին, կամ քարափների տակին բուսուն (բարան) մտած լինի՛ ի՞նչ կ'անես. ախար տղամարդիկը բոլորը յետ եկածներ են:

—Լա՛ւ չես արել, աղէ՛, որ թողել ես նրան մեր ետևիցը գալ. լսողն ի՞նչ կ'ասի. հայրս կ'իմանաց, կը բարկանայ:

—Ոչով էլ չի լսիլ, հէրդ էլ չի նեղանալ, գողնովի ի՞նչ ունիմ, իմ փեսացուն է, իմ տղէն է, երկու երեք ամսից դու նրանն ես, նա քոնը, երկուսդ էլ մերը: Մեռնի՛մ Սհօիս սև սև բեղերին, ի՞նչ բաղդաւոր աստղի տակ է ծնել, քեզ պէս մարալն ու ջէցրանն իրան բաժին է ընկել, քո հատը կինդ ու ձնդսուանումը չը կայ: Փառքի՛ դմատաղ, Աստուած, ո՞վ իմ պէս խորոտիկ աղջիկ կ'ունենայ. էս երկու շաբթուան դող ու երոցքը քեզ մի քիչ հալեց ու մաշեց, սպասիր, սուրբ Յովհաննէսի զօրութիւնով էլ լին լցուիս ու գիրանաս, տեսնեմ՝ թէ քեզ ո՞վ կը հանի:

—Ես պատրաստ եմ, աղէ՛, գնանք, քանի օր կայ, կ'երևի, մօր խօսքերն ընդհատելու համար՝ ասաց վերջապէս Շողիկը:

— Որ էլապէս է, հին անթարուցդ մի ծլանք կտրի՛ր, տա՛ր քո
ձեռքովը կապիր սև չալուի (բժնի՛) փշի ծառին. ասա՝ «էս էլ քեզ՝
իմ ցաւ ու շոռն էլ»:

Դժնիկին կապած հազարաւոր ծուէների մօտ մինն ևս աւելացաւ:

Մայր ու աղջիկ մի համբոյր ևս տուին սուրբ Յովհաննիսի
աղբրական քարին, մի մի գաւաթ էլ պարզորակ ջրիցը խմեցին և ճանապարհ ընկան դէպի տուն, չը նկատելով խոտերի միջով դէպի
գետափը սողացող շնչաւորին՝ մեր քարաթոթոշ (յողէսկ պէստի՛ն է)
բղդէին:

Ժ Զ.

Ո Ւ Խ Տ

Թաէ որքա՛ն նայեց, ինչքա՞ն ժամանակ տեղը մխուած մնաց,
ի՞նչ մոմուռքի մէջ էր այս րոպէիս Բղդէն, — ինքն էլ չը գիտէր:
Նորա ուշքը տանող առարկայքը վաղուց ծառերի ետևն անյայտացել,
հեռացել էին, իսկ նա գեռ ցցուած մնացել էր. նա այդ րոպէին մի խելքից պակաս ապուշ էր, որ ժամերավ անշարժ մի կետում մնում էր կանդնած ու աչքերը հեռու հորիզոնին անգիտակցաբար սևեռած:

Այս դրութիւնից խելացնորին սթափեցնողը լինում են միշտ դիւղական չար երեխայքը. իսկ մեր Բղդէի յուշարարն իւր հետ էր, իշամեղուների կծածների կսկիծը նորից աւելացաւ:

Բղդէն լիշեց իւր գալոտեան նպատակը. նա մեքենաբար ձեռքով աչքերը շփեց և խոտերի միջից յառաջեց, հետն էլ հառաչեց ու մօտեցաւ աղբրական քարին թիկնեց:

Նա սկսեց կծած տեղերը սառը ջրով լուանալ. գործողութիւնը խիստ դիւրալի էր և նա մի քանի անգամ կրկնեց:

Յաւը զգալի կերպով մեղմացաւ:

Բղդէն դարձեալ կանգնեց տեղիցը և շարժուեց դէպի ճանապարհն արգելող մեծ քարը. նա եղունգներով ճանդուելով վեր մազլցեց քարի կատարը և շարունակ նայում էր ներքեւ:

— Գնացի՛ն, հեռացա՞ն, փնթփնթաց նա և ցած իջաւ:

—Ասոծու բաները մարդ չի հասկանալ, փա՛ռքիդ մեռնեմ, երկնային Թագաւոր՝ բա ի՞նչ եմ մտածում, ի՞նչ է դալիս դէմս. ընչի՞ համար եմ գալիս, ի՞նչ է պատահում. եթէ Աստուածանից չը լինէր՝ առաջին անգամն է՞, որ ես Նողիկին տեսնում եմ. ամեն առաւու գեղիցը գնալիս մեր բակի դրանը կուժն ուսին հանդիպում է, ո՞ր օրն է մաքովս մի բան անցկացել. հէնց էսօ՞ր պէտք է նորա մէրը մտածէր աղջկանն աղբրումը լողացնել, էսօ՞ր պէտք է բոռերն ինձ այստեղ քշէին: Աստուածանից էր, որ կար:

Բղդէն գնաց, կանգնեց Նողիկի կանզնած տեղը:

—Այ նորա ոորը դրած տեղը. էս խոտերը Նողիկի արորածն են, ա՞յ, հէնց էս սիրի-սիրի ծաղիկն էր նորա ոտի տակին:

—Հը՛, հը՛, հը՛... ատամները բաց արած՝ լիմարական ժպետով երկար ժամանակ հրհուում էր նա՝ աչքը անկած գետնի վերաց բուսած խոտին:

Կիսացնոր Բղդէն յանկարծ կուացաւ ու սիրի-սիրի խոտի հետ մի բուռն ուրիշ խոտեր միանդամեց պոկեց ու սկսեց քսել աչքերը, երեսը, մօտեցնել շրթունքներին, տրորել բռան մէջ, նայել վրէն, էլ յետ համբուրել, էլ յետ ժապտալ, կրկին բարձրաքրքիչ ծիծաղել:

Սի խօսքով կատարեալ դիժ էր նա:

—Ես էլ զարմացայ, թէ Բատինեց թիլիկ-միլիկ Ահօն ո՛վ, ալիւր աղալն ո՛վ, դու մի' ասիլ, կիւրակի է եղել, խանութ չի ունեցել բաց անելու, յաջող ժամանակ է ճանդել. բաց մի հարցնես՝ թէ այ ծոծապակաս (ուշապահան), ի՞նչ ես ջրաղացի զրանը քիթդ քամուն բռնել, մնացել, ընչի՞ էս թուփ ու մացառներումը վէր ընկած՝ հայիլ մայիլ չես լինում, զոքանչիդ խօսքն ի՞նչ ես պարանի գնում (լոռած). քո ապրանքն է, գողութիւն հօ չե՞ս անում: Ե՞հ, գորա նմանների համար է ասած. «Աստուած փլաւն ո՛ւմ է տալիս, ախորժակն ո՛ւմ»: Ահօյի բաղդին ե՛ս պէտք է տիրացած լինէի՝ տեսնէիր:

Դարձեալ սկսեց ծիծաղել Բղդէն:

—Հրեշտա՞կ էր, թէ աստանայ. աչքեր էի՞ն, թէ առաւոտագէմին դուս եկող, պէծածին տուող աստղեր, ադամորդու վիզէ՞ր, թէ Արայի սարի զլիսի Աքլորաքարի վերաց մի մին ժամանակ կանգնող, հսկարտ հսկարտ աչքերը չորս կողմը գցող ջէցրանի շինք. մանաւանդ կրծքին ամբումբացող ջուխուակ նուները, որոնց վերայ Նողիկն ինքն

էր գժուածի պէս հիացել: Ա'իս, ես կը ցնորուիմ, ես ինձ կը սպանեմ, թէ որ Նողիկն իմը չը դառնայ:

— Ի՞նչ եմ ասում, զլուխը շարժելով վերադարձաւ. Բղդէն և նըստեց աղբիւրի մօտ. ո՞վ իմը դառնայ, Նողիկը, իմ ոխերիմ թշնամու սերս՝ լնդը, ջնուտ Աղաջանի աղջիկը, ես գնամ Աղաջանին վինք թեքե՞մ, կրկին նորա առաջին գլուխս ծուե՞մ, կծու-կծու յանդիմանութիւնները տանե՞մ, մտքումս դրածից յետ կանգնե՞մ, չը հարաստանա՞մ, կեանքս չարչութիւնով անցկացնե՞մ:

— Ո՛չ, էդ զլուխ դարու բան չի, Բղդէն պսակուող, տուն ու աեղ դնողը չի. աչքիս տակն ունիմ փող, հարստութիւն, բոլորի զլիկն ընկոյզ կոտրե՛լ, խոջա՛ Բաղդասար դառնալ, ջնուտ Աղաջանին հացից քցել, մի կտոր ցամաք հացով նորա ինձ արած լաւութիւնը վճարել, յետոյ Նողիկներն իրանք ոտիդ տակը զլուխ կը դնեն. թէ չէ էս օր Աղաջանն ինձ շեմքը չի թողալ, քարհալած կ'անի: Կրաւունք էլ ունի. Պօղոս-աղայենց ամալի տղային, իւր ողորմութիւնով յառաջ եկած չարչուն նա ի՞նչպէս աղջիկ տայ. Բատիննենց կարապետի տղին մա՛րդ է, մարդի որդի է, իսկ ես մի կօլոս չարչի, հողի հետ հաւասարուած մի մարդ, ծառի որդը, աշխարհի ծաղրատեղը, ինձ ոչ թէ Աղաջանի պէս երեւելի խօջէն, աշխարհքին լաւութիւն անողը՝ վերջին նախրչին է՛լ չի ուզիլ փեսաց շինել: Ախար ո՞նց շինեն, ո՞վ է գժուել իւր աղջկայ սիրտը խոռի (ոբանեէ անել). ո՞ր աղջիկն ինձ կը սիրի, և ընչի՞ս համար պէտք է սիրեն, — սիրուն աչքերի՞ս, նախշուն պատկերի՞ս, սուր-սուր բեկսերի՞ս, շիշակ հասակի՞ս. երկրիս երեսին էլ խայտառակ անուն չի մնացել, որ ինձ չը կանչեն, — կօլոտ, ծառի որդ, արջի քոթոթ, նառ ուղար: Մարդիկ ուզիլ են ասում, մի մին ժամանակ իմ ծախած մանր հայելիքի մէջ որ թաքուն մտիկ եմ տալիս, զզուանքս դալիս է իմ երեսից, ուրիշներն ի՞նչ մեղաւոր են:

— Բայց ընչի՞ համար, ես ո՞ւմնից եմ պակաս, տղամարդի սիրունութիւնը քանի՛ կոպէկ կ'ամենայ, ուրիշների պէս մի տղամարդ էլ ես եմ, ա՛յ, հէնց էս աղբրի լճակի մէջ մտիկ տամ, կ'երեւամ:

Բղդէն քսուելով մօտեցաւ լճակին և մէջը հետաքրքրութեամք նայեց, կամեցաւ կեանքու մն առաջին անգամ համեմատութիւն անել իւր և ուրիշների գծագրութեան մէջ:

—Վա՛հ, դուրս թռաւ բերանից և նա մէջքի վերայ փռուեց խոսերի մէջ։

Բղդէն անշարժ ընկած էր. նա այս ըոպէին մի ծառի կոճղ էր, կարծես, մի գետաբերուկ էր։ Այս անունը տալիս են գետերի ափին ընկած այն ծառի հաստ բնին, որ ով գիտէ, քանի՞ հարիւր ասպարիզից, ո՞ր տարին, գարնանազար յորդացած գետն ահազին քարափների հետ իւր յորձանքների և լեռնանման կոհալիների վերայ փոքրիկ գետուրի թեթևութեամբ խաղացրել է իւր երեսին և երբ իջել, չուրը նուազել ու իւր բնական դիրքի մէջ է մտել, ափումը մի տեղում թողել է անշարժ ընկած։

Այսարմար համեմատութիւն չէ. Բղդէն երկար ժամանակ ձեռքերով երեսը ծածկած՝ մեռելի նման ընկած էր։ Նրան սարսափահար յետ զարկողն իւր այլանդակ և հրէշային կերպարանքն էր, որ երևցաւ պարզորակ լճակի խորութեան մէջ։

Արդարեւ, մի ևս առաւել անմոռնի և դժնդակ դէմք փոխարինել էր այսօր նորա բնական տգեղ տեսքին. իշամեղուները նորա երեսն այլակերպել էին. մի տեղ ուռուցքը ընկուզաչափ բարձրացել էր, մի այլ տեղ՝ խորշոմներ ու ակօսներ էր ձգել, շրթունքներից՝ վերինն ուռել, գալարուել ու քթին էր առել, իսկ ներքինը կզակին էր կպել, լնտերքը մատնաչափ հաստացել, սեպածե ատամներն էին ծածկել. ամեն մի ոտի վերայ չորս հինգ բլրանման բարձրութիւններ միմեանց հանդէպը կտրած՝ մի մի ձորահովիտներ էլ միջանցքներումն էին յառաջ բերել։ Ես միանգամայն անդիտանում եմ որ և է շնչաւոր և անշունչ արարածի նմանացնել Բղդէի երեսը. միթէ բնութեան արարիչը չէր խնայիլ իւր ձեռակերտին այսպիսի անձոռնի կերպարանք տալ։

Հատ կարելի է երկար ժամանակ ուշքի չը գար Բղդէն, եթէ արեգակի ջերմութիւնն իւր ներգործութիւնը չ'անէր։

Փոքրիկ միջատների նետերի թոյնը շատ ազդու էր։

Սիրալ կոտրած, յուսահատ վերկացաւ շարաբաստիկ արարածը և իւր չորս կողմն աչքերը ման ածեց։

Զորամիջումն ամեն ինչ իւր տեղն էր. միայն օդի մէջ բղզացող թեւաւոր մժեղներն ու երբեմնապէս մի քարից մի թփի վերայ թեւող թռչնիկները՝ այն ջրի ծիա կոչուած սի-

րունիկ թեաւորները, որոնք ջրային չեն, բայց ջրի սիրահար են, գետերի ափերից չեն հեռանում:

Զորի խաղաղութիւնը վրավողը միայն գետակի հոռանքի խող-լողիւնն է:

Մի քանի րոպէ նզդէն սիրտ չէր անում տեղիցը շարժուել, առաւել լաւը՝ չը գիտէր ուր գնար և ի՞նչպէս գնար:

Վերջապէս, յայտնի չէ, թէ ի՞նչը նզդէն ոգեսրեց, նա կրկին մօտեցաւ աղբրականը և աներկիւդ նստեց լճակի մօտ ու մէջը նայեց:

—Այ յիմար մարդ, բացականչեց նզդէն, ես իմ շուաքից խրտնել եմ, ես կարծեցի, թէ ջրի միջից ինձ նայում է մի եօթն-գլխեան վիշապ. դու մի՛ ասիլ, վիշապը ես ինքս եմ եղել, ես ի՞նչ օրն եմ ընկել:

Մի խոր թառանչք դուրս ծորաց նզդէի ներսից:

—Ի՞նչ կ'ասեն ուրիշները, ի՞նչ պատասխան տամ՝ ես հարց-նողին:

Յուսահատ թշուառականի խօսքեր եին նոքա:

—Հասկանում եմ, վհատած ասաց նա, Կիզի-մատուռն ինձ պատճեց, դոթացրեց, որ ես իրա սկատուհանի քարը տեղահան արի:

Նզդէն սկսեց լալ և հեծկլտալ:

—Անիծա՛ծ վեց հազարեակի զօրութիւն, անպատճառ թլիսմը խիստ է եղել, կայ՝ չը կայ՝ գրբացն անէծք է գրել բոռերի վերայ և բոռերին ձեռք տուողի վերաց: Ախար ընչի՞ յանձն առայ թուղթն Արևանից բերել, կամ թէ բերի, դրի պատուհանի վերաց, ընչի՞ էի կանգնում, ընչի՞ էի բոռերին սպանում, որ ոսկի դառնան ու իմ սիրտս քաշեն իրանց:

—Ե՛հ, էս է՛լ չ'ուզեցի, թող կրկին թեւ առնեն, թռչեն, ի-րանց աիրոջն արժանանան, ասաց նզդէն և ձեռքը դրականը տարաւ, հանեց երկու հատ ոսկին ու շպրտեց:

—Յիմա՛ր, յիմա՛ր, շարունակեց չարչին, թլիսմն ի՞նչ է, որ մարդի այլակերպացնի. Կիզի-մատուռն է բարկացել ու ինձ էս օրը քցել: Տե՛զն է ինձ, ես մեղաւոր, անարժան սևերես եմ, հայ-քրիստոնեան իւր ձեռքով իւր եկեղեցին քանզի՞:

—Ով եօթն անուան տէր սուրբ Կարապետ, իմ ձեռքն է քո
փէշը (Քէզ և աղասինել), չոքեց, տեղն ու տեղն աղօթեց Բղդէն,
քո դուռն եմ եկել, քո աղբրի ջրովն աշխարհքն է ցաւ ու չոռից
փարատուում, դու բարեխօս կա՛ց սուրբ Կիզի-մատուոի առաջին, խօսք
եմ տալիս՝ իմ ձեռովքը քարը տեղը դնել, նորա դռանը մի որձ ոչխար
մատաղ անել: Ամա՛ն, ո՛վ սուրբ Յովհաննէս, էս օր ես քո աղբրի ջրովն եմ
լուացուում: ուխտս ուխտ լինի, որ եթէ իմ առաջին կերպարանքն
ստանամ, մի օր քո Յորդանանն ուխտ գամ, Յորդանանի ջրովն ել
լուացուեմ:

Այս ուխտն արեց Բղդէն և գլուխը թաղեց լճակի մէջ:

Այս գործողութիւնը կէս ժամաշափ կրկնում էր նա:

ԺԷ.

ԶՈՒԱԶԵՂԻ ԽԱԹՐՈՒ ԹԱՄԻ ԿՈԹԸ ԿԲ ՊԱԶԵՆ

— Սուրն երեսիս խաղացրո՛ւ, ջհուտ Աղաջա՛ն, ես քո դռնիցը
հեռացողը չեմ, ես նոյն Բղդէն եմ, որ էի, որին դու խղճացիր,
հացի տէր շինեցիր, գալիս եմ կրկին ոտքերդ լնինելու, գալիս եմ
ասելու, որ Նողիկը Բառինի թոռից հանի, ինձ տո՛ւր, ինձ քո դրանը
կապած շունը շինի՛ր:

Այս խօսքերը դուքս թուան Բղդէի բերանից, երբ մի ժամաշափ
անդադար լուացուում էր սուրբ Յովհաննէսի աղբրի մօտ և ջրի ա-
փին՝ քարափի սոսուերի տակ՝ պառկում:

Թեղծի քունը տարել է:

Մէկ էլ յանկարծնա զարթնեց և ո՛վ Աստուած, ջուրը հրաշա-
գործութիւն էր արել, սուրբ Յովհաննէսը Սելովմայ աւաղանն էր
դարձել իշամեղուների շնորհիւ բորոտացածի համար:

Բղդէն իւր բնական կերպարանքն էր ստացել:

— Բայց մի՞թէ արածս յիմարութիւն չէր, մոտածելով և խո-
հական գէմք բունելով ասաց և աշքերը դարձրեց գէպի մերձակայց
սիզաւէտ տեղը. այս ի՞նչ արի ես, ոսկիքն ընչի՛ կորցրի, հէնց իմա-
նանք իմ ունավարձն էր. թլիսմի թուղթն նրեանից բերել եմ,
տեղ եմ հացըել, ի՞նչ մեղք էր, եթէ փոխարէնն երկուսն իմը լինէին,
Նողիկի վզնոցի միջին շատ կը յարմարէր:

Բղդէն տեղիցը կանգնեց և երկար ժամանակ խոսերը յետ քաշելով որոնում էր: Փշերը ծակոտում էին նորա մասները, բայց զիւզականի կոշտացած կաշուին այդպիսի ասեղները ախորժ խոտղանք են միայն յառաջացնում և այլ ոչինչ:

Կարելի է շատ պէտք է որոնէր Բղդէն, եթէ իւր ոտի տակից երկու նոյնանման իշամեղուներ գուրս չը թռչէին դէպի գետը:

— Ե՛հ, Աստուածանից որ կտրուած է, քաշքշելով ոչինչ չես շինիլ, արդար վաստակ էին, գնացին իրանց տիրոջ քսակը մտնելու:

Երկար ժամանակ սրտաբեկ այս խօսքերի հետ Բղդէի աչքերը պլշած՝ մնացել էին դէպի բոռերի անյացտացած կողմը:

— Անիծածներն ի՞նչպէս փայլուն էին, ժպտաց նա. ճի՛շդ այս թփի տակին են եղել կուչ եկած, այստեղից թռան:

Բղդէն աչքը ձգեց վայրի կանգառի փշուկի թփին և երկար նայում էր:

Յանկարծ թափահարուեց նա և յետս ընդ կրունդն մի ոստիւն արեց:

— Եթէ թռան գնացին, ճշաց նա, հապա էն ընչե՞ր են կանգառի արմատի մօտ: Խմ ոսկիքս են՝ որ կան:

Նա յարձակուեց և հողախառն կորզեց գետնից իւր ձգած ոսկիքը:

— Երազում հօ չե՞մ:

Բղդէն, արդարեւ, իրան կորցրել էր. նայում էր իւր շուրջը, աղբրին, գետին, քարածայռերին, ոսկիներին, շօշափում էր իւր անձը և դլուխը շարժում:

Նա սկսեց մի առ մի մտաբերել այս աւուր դէպքերը և թռուել:

— Աեր կացաց տեղիցս, թլիսմը տարաց մատուռը, ոսկիքը բռոգառան, թռան, երկուսն սպանեցի, քարը տեղահան արի, պատիժս առայ, ուռուցւորեցի, եկայ սուրբ Յովհաննէս, Նողիկն այնտեղ էր կանգնած, էս էլ իմ շպրտած ոսկիքը, որ կրկին բռումս են:

— Ի՞նչ երազ, ա'յ ձեզ մատաղ, դէ երկու հատ չէ՞ր:

— Բայց որ հիմի թռան ու գնացին՝ նրանք էլ երկու հատ չէին:

— Ե՛հ, յիմա՞ր իմ գլուխ, աշխարհքումն հազարաւոր բոռեր կան, նրանք էլ հազարիցն երկուսը:

—ԶԵ՞, չէ՞, ես ձեզ զուր եմ շպրտել, համբոցներ էր տալիս իւր երկու հատ ոսկիներին. էլ ձեզանից ես չեմ բաժանուիլ, դուք զեռ ինձ շատ էք պէտք. միայն դուք չէք, թլիսմի թուղթն էլ չը կայ, կիսից աւել Կիզի-մատուռի մէջ դեռ զժվժում էք, բոլորդ իմը կը լինիք՝ ձեր զօրութիւնովն էլ ջհուտ Աղաջանի աղջիկը:

Արեգակն սկսեց արդէն իւր կարճ ստուերը կրկնապատիկ երկարացնել դէպի արևելք. ձիւնանման ամպերի կոյտերը հրափայլ շողշողիւն էին ստանում, երբ վերջին անգամ Բղդէն լուացուեց աղբրակի վերայ, համբուրեց աղբրի քարը և քայլերը փոխեց:

—Ահա՛, գալիս եմ դէպի քեզ, ո՛վ սուրբ Կիզի-մատուռ:

Նա շտապ շտապ յառաջ էր գնում:

—Էսպէս բան էք տեսե՞լ, զլուխը շարժեց Բղդէն և ժայտաց. ո՞ւր էի գնում, ո՞ւր եկայ. տան ճանապարհը դէպի աջ է, ես ձախ եմ ծռուել, եկել փշի թփի տակը:

—Կը գամ էլ, հոգիս էլ դուրս կը գայ, շարունակեց նա, շատ ու շատ անգամ զեռ մօտդ կը գամ, ա՛յ սև չալուի փշի թուփ. դու ինքդ չալու ես, անպէտք փշի թուփ ես, բայց ծաղկել ես, փթթել ես, հազար տեսակ ծաղիկներ ես տուել. բայց զրանց բոլորի հոտը կորցրեց քո վերայ հսօր աւելացած կօրմ վարդը. ա՛յ, հէնց էս, որ ձեռիս եմ բռնել, հոտ եմ քաշում, համբուրում եմ ու չեմ կշտանում:

Բղդէն ձեռքում շփում էր Շողիկի կապած ծուէնքը:

—Ասում են՝ քո վրայ կապուած փալասներին ոչ ով իրաւունք չ'ունի ձեռք տալու, թէ չէ դող ու երոցքը վիզը կը փաթաթուի, բայց ես հօ հետս չեմ տանում, ի՞նչ վնաս, եթէ ես օրը մի անգամ դամ էս կարմիր փալասի կտորին ուխա, մինչեւ մի օր իմ սրտիս փափազը գլուխ գայ:

Այս խօսքերով մի անգամ ևս համբուրեց Բղդէն Շողիկի անթարու ծուէնքը և ճանապարհ ընկաւ: Զուաձեղի խաթրու թափ կոթը կը պաչեն:

ԺԼ.

ՄԿՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆԸ

Արևել մի ձողաչափ ճանապարհ հազիւ ունէր սարերի միւս կողմն անցնելու, երբ Բղդէն թողեց սուրբ Յովհաննէսն ու շոտապեց դէպի Կարբի:

—Այս քարքարուաներից լուսով գուրս գամ, յետոյ ե'ս դիտեմ, վճռեց նա և անհարժ ձորաժմբի գարաւանդներով ոլորմոլոր վեր բարձրացաւ:

Ամառն էր. երեկոյեան զովարար հողմիկը սփուել էր ամնն տեղ ձոխ բուսականութեան բուրմունքը. ամենայարմար ճանապարհ գնալու և զառիվեր բարձրութիւններ կորելու չափած ու ձեւած ժամանակն է. ճանապարհորդի ոտքերն ինքնաբերաբար թեթեանում են, խոսորմասոր ելեւջներն անզգալի են լինում, ուղեւոր մի դիւրալի թեթեութիւն է զգում:

Այս դիւրութիւնները չեն, որ Բղդէն շնուել էին քարափների ուսերին սորորող, վազ առնող կարմրակուց կաքաւ. միայն այս օրուան բազմադէպ եղելութիւնները չեն նրան յառաջ վարողը:

—Մինչեւ ես ձորը գուրս կը գամ, մեր գիւղը ու պատանի մէջ կոլողուած մեռել կը գառնայ, մոածեց նա, բոլորը քնոսած կը լինին. գործի տէր մարդիկ են, հիմի կալւորը եզներն է թողել, թեղի կողքին պառկել հանգստանում է, մշակը հանդիցն է եկել և ոսներին ու ձեռներին դնջութիւն տալիս. էլ ումնից եմ քաշուելու, շուալեմ՝ քանի ժամանակն է:

Մութը գետինն արգէն առել էր, երբ Բղդէն մոտաւ իրանց տունը, մօրը քնած տեսաւ, տւելորդ համարեց զարթնացնելը, շօշափելով գտաւ. հրահանի պարկը, հանեց չարչիական խուրջինից մի երկու զոյդ մեղրամոմ և իրան ձգեց Կեղիւմատուոի մէջ ու ճրազը վառեց:

Ամեն ինչ իւր թողած զրութեան մէջ էր. բրիչ ու մուրճն ընկած էին, պատուհանի քարը շրջուած մնացել էր, իսկ նորա մօտ՝ մի խորշում՝ մեղրի բնիճների վերայ եռում էին հազարաւոր իշամեղուներ:

Այս բնիճները մեղուների կազմածը չեն, նոյնանման բնիճներ

կերտում են իշամեղուների երկու տեսակները, որոնցից մէկը մեզ ծանօթ բոռերն են, միւսները նոյանից աւելի փոքրամարմին կրէտները։ Վերջիններիս շնչքը շատ անշան է, իսկ բոռերինը կատարեալ մեղուաբճիճների են նման։ այն զանազանութեամբ միայն, որ բճիճների մէջ լեցուն մեղրը նոյն քաղցրութիւնը չ'ունի, ուտելու համար էլ միանգամացն անպէտք է։

Իշամեղուներն այս անդամ առաւտուեան հերոսութիւնը չը գործ դրին, բղզոց վզզոցը շատ նուազ էր. իրանք էլ մեղրահացերի վրայից չը թռան. ճրագի լոյսը խոտղեցրել էր միջաների աչքերը։

Բղդէն շուարել էր. նա մօտենալ չէր վստահանում, հեռուից միայն զարմացած նայում էր. «որքա՞ն շատ են եղել երեւակացեալ ոսկիքը. այնքանը թռչելուց յետոյ գեռ մնացածներին թիւ ու քանակ չը կաց։ Մի՞թէ ցորեկուան թռչողները ոսկիք չէին, բայց ի՞նչ են իւր զրպանի երկու հատը։

Բղդէն հանեց և ձեռքին բռնեց։

Երեւակացութիւն չէ, ազնիւ մետաղի փայլը ճրագի լուսովն էլ իւր զօրութիւնը չի կորցնում։

— Բայց կարելի է սրանք հէնց իսկական բոռեր են ու թլիսմի տէրը հարիւրաւոր տարիներով յառաջ իւր ոսկիքն էս տեղ թագցրել է և ուղեցել թլիսմի ձեռով տանել, սակայն չի յաջողացրել։

— Տեսնենք, ասաց Բղդէն և զգուշութեամբ զլսարկով ճմեց բճիճից հեռու կանգնած միակ իշամեղուին։

Ոչինչ կերպարանափոխութիւն, — մի սատկած բռու է ընկած գետնին։

Նա չը հաւասաց աչքերին, բրիշի ծայրով յետ քաշեց սպանած միջան և վերցրեց։

Իշամեղուի փափուկ մարմինն է և ուրիշ ոչինչ. նա տրորեց սլողունցի մէջ, մի տեսակ մածուցիկ հիւթ քսուեց իւր ձեռքին. բռուի սպիտակ արիւնն էր։

— Ի՞նչ կը նշանակէ ուրեմն, մի՞թէ սորա տէրը միայն երկու հատ ոսկի էր պահել, կամ ընչի՞ պէտք է դուրսն ընկած լինէին։

Բղդէն սկսեց մանրախոյզ հայեացքներ ձգել իւր շուրջը և քարի տակը։

Առաւոտն ամեն բան կը պարզուէր, եթէ նա շփոթուած չը լինէր։

Պատի տակին, քարերի մէջ, պատաշարի ճեղքուածքից դուրս է մաղուած երկու երեք բռնաչափ կրախառն աւազ: Ամեն դիւղական մանուկ կարող է ասել, թէ գետնափոր միների արարքն է այդ. այդպիսի հողակոյտերը հարիւրներով կան դաշտերումը՝ մկան ծակերի մօտ:

Դեռ հողի կոյտը չը խառնած՝ բղդէն դիտեց հետաքննին՝ աչքով և վճռեց, որ հողը թափուած է տեղահան արած քարի յետ բացուած ճեղքից:

Բղդէն սկսեց հողը խառնել:

Հրա՛շք...

Հողակոյտի մէջ լիքն է Բղդէի մօտ եղած ոսկիներով: Նա մոռացաւ բոռերին:

Հողախառն բուռն արեց և զրպանը լցրեց:

—Ուրեմն զնացող բոռերը ոսկիք չեն, վճռեց բղդէն հողը քրքրելուց և վերջին ոսկին վերցնելուց յետոյ. ահա՛ առաւօտեան սպանած բոռերս:

Այդպէս իսկ էր. նորա սպանած երկու միջատները, որոնց ոսկի դառնալու վերայ աներկմիտ էր, այժմ ընկած էին քարերի մէջ փոշոտուած: Ինքնամոռացութիւնը հեռացաւ Բղդէից:

Նա ապահովուեց, որ միջատները կապ չ'ունին իւր գտած թանգաղին մետաղի հետ:

Այժմ նա սկսեց գաղտնիքը քննել և գտաւ:

Իւր տեղահան արած քարի անկիւնում, մի արհեստական խորշում, զլիսի վերայ շրջուած, ընկած էր մի փոքրիկ կաւէ բղիկ:

Նրանից քիչ հեռու ընկած էր իւր կափարիչը:

Խուփը միջից երկու կէս էր եղած:

Անշուշտ միներին էր պարտական Բղդէն:

Մկներն են փորել բղիկի տակը, շուռ տուել և ոսկիքը հողի հետ դուրս թափել:

Առաջինը չէր այսպիսի դէպք պատահելը. շատ մօտիկ անցեալում մի հոգևորական նոյն ձեռվ վացելեց կրծանների աշխատութեան արդիւնքը. մենակեացն իւր հովանաւորութեան յանձնուած վանքի պատի ասկին միների դուրս թափած հողի կոյտի մէջ գտաւ ոսկիներ:

Որքանութիւնը սուրբ հօրն է միայն յայտնի, նոցանից միայն երկուսն իրբեւ հնութիւն զրուած են Մայր-Աթոռի թանգարանումը։ —Հիմի, ջհուտ Աղաջա՞ն, թէ ճակատ ունիս՝ դիմացի՛ր, երկու զօշի զլուխ մի պղնձում չեն եփուիլու այսուհետեւ կամ չարչի Բղդէն, կամ ջհուտ Աղաջանը. օրն էգուց մենք իրար կը հանդիպենք, այս գիշեր գնամ մի հանգիստ քնեմ։

Այս խօսքերով բրիչն ու կռանն առած՝ առանց իւր խոստումը կատարելու, առանց քանդած քարը տեղը դնելու՝ զուրս եկաւ շուապով Բղդէն Կիզի-մասուռից և դէպի իրանց տունն ուղղեց քայլերը։

Թէ որքա՞ն գիշեր էր անցել, ի՞նչպիսի երազներ նրան յուսալից կամ յուսալիք էին արել, հաշիւ չը կարաց տալ իրան Բղդէն, բայց մէկ էլ իւր անունը լսեց, տեղիցը վեր թռաւ, ցից կանգնեց, շփոթուեց, մժութեան մէջ նայում էր իւր առաջին կանգնող ստուերներին և իւր չորս կողմը։

Նա քնահարամի շարժումներ էր անում, աջ բազուկով աչքերն էր տրորում, ծործորակն էր քորում, յօրանջում էր և իրան առաջարկած հարցմունքներին միայն անկատ և անհասկանալի հնչիւններով էր պատասխան տալիս։

—Այ տղայ, Բղդէ՛, ի՞նչ ես շմել, քեզ չե՞մ հարցնում, էս ժամանակ էստեղ ի՞նչ գործ ունիս, կրկնեց ձիու սանձը ձեռքին բռնած մի մարդ։

—Աբա... Աբա... Աբարանիցն եմ գալիս, քրթմաջեց վերջառպէս ուշքի գալով Բղդէն, շատ յոգնած էի, նստեցի ձեր դրան առաջին, որ քիչ հանգստանամ, քունս տարել է՝ մնացել եմ էստեղ, Աղաջան ամի՛։

—Իսկ էս լինգն ու գուրզն ի՞նչ բաներ են։

—Աբնագիւղի տէրտէրինն է, մի փոքր շինութիւն պէտք է անենք, մի քանի օրով ինդրեցի. բայց դո՞ւ որտեղից էսպէս ուշ։ Էս ի՞նչ ձիաւորներ են։

—Տօղա՛, զես քնա՞ծ ես, չե՞ս տեսնում ապրանք է, Երևանիցն եմ բերում։ Էս էն բանն է, որ քո բերանդ իւղոտեց, որ հիմի ինքդ ես բերում։ Վնաս չունի, ես շատ ուրախ եմ, Աստուած տայ աւելի հարստանաս, ձեռքդ երկարի. բայց ասել եմ, կրկնին ասում եմ, Բղդէ՛, աշխարհքը քեզանից գանգատաւոր է։ թանգ ես տալիս։

հերիք չէ, ապառիկդ էլ աւելի ես նշանակում, մէկին մէկ շահ ես առնում, քերթում ես, կողոպում ես ձեռը կարձ գեղացնցը: Եդ լաւ չի, որդի՛, վերևիցն Աստուած մտիկ է տալիս:

Դիշերն արգելք եղաւ ջհուտ Աղաջանին նկատել Բղդէի կերպարանքը, ապա թէ ոչ՝ նա իրան կը պաշտպանէր, կամ յետ կը փախչէր, երբ տեսնէր, թէ ի՞նչ գազանային կատաղութեամբ կռացաւ և գետնիցը վերցրեց մուրճը:

— Դէ վե՛ր կալ լինդդ ու գուրզդ և գնա՛ հանգստացի՛ր: բարի գիշեր, ասաց Աղաջանը և հրամայեց իւր հետի մարդկանցը բեռներն իջեցնել:

Աղաջանի քաղցր խօսքերն էին, որ մի ակնթարթում իջեցրին Բղդէի բարկութիւնը: Նա ատամները կրմտեց, առաւ իւր գործիքներն ու հեռացաւ՝ իւր մէջ փնթինթալով հետեւեալը.

— Ես ի՞նչ է պատահել ինձ, չէ՞ որ ես մեր տունն էի գնում քնելու, ապա ջհուտ Աղաջանի դրանն ի՞նչ բան ունէի:

— Հա՛, հա՛, հիմի յիշեցի, երկար ժամանակ մտածմունքների մէջ խորասուզուելուց յետոյ արտասանեց Բղդէն, գնացի որ կռանամ համբաւրեմ էն շեմքը, որտեղից օրն երկու անդամ՝ առաւոտը շատ վաղ և իրիկունը շատ ուշ՝ կուժն ուսին՝ անց ու դարձէ անում էս օրուայ հուրի փարին. հիմա եմ յիշում, չոքեցի, շեմքի փայտն երեք անգամ համբուրեցի, ինչպէս երեսում է, գլուխս դրել եմ շեմքին՝ անուշ երազների մէջ մտել:

— Բացց գնա՛ որ գնա՛, ջհուտ Աղաջա՞ն, լաւ պրծար, գու անպատճառ էսօր մի լաւութիւն արել էիր, որ քո առաջդ եկաւ, քեզ մահից պրծացրեց, կամ թէ չէ քո մի կոոր հացը գուրզը ձեռքիցս լսեց, թէ չէ դու հիմի արենշաղախ, անշունչ ընկած կը լինէիր քո շեմքի առաջին:

— Ոչ է՞ս, ոչ է՞ն, դու էիր, Շողիկ ջա՞ն, որ քո լսաթաթախ ձեռներովդ ուժեղ փահլեվանի նման (ընէիշ) կռներս ծալեցիր, ձեռներս թուլացրիր ու հօրդ արել սև անող գործիքը իւլեցիր. շա՛տ էլ լաւ արիր, դու հօ՛ չէիր կարող հօրդ արիւնով լուացած ձեռքը համբուրել:

— Ի՞նչ... ի՞նչ եմ ասում... յանկարծ ցնցուեց ամբողջ մարմնով Բղդէն և վերմակը վրայից յետ բացուեցաւ:

Արդէն Բղդէն տուն էր հասել, հանել էր իւր շորերը և մտել մօր պատրաստած անկողինը: Առաջինը չէր, որ մայրն ացդ նախապատրաստութիւններն անում էր որդու համար: Պատահում էր, որ Բղդէն երբեմն շատ ուշ էր վերագաւնում գիւղերից. մօրն անհանգիստ չ'անելու համար՝ նա կարգադրել էր, որ իւր անկողինը պատրաստէր և ընթրիքը մօտը դնէր:

Գալիս էր Բղդէն, ուտում և տեղը մտնում:

Այս գիշեր նա իւր անկողին մտնելն էլ չէր հասկացել. նա գեռ իրան փողոցումն էր կարծում:

—Երբէ՛ք և երբէ՛ք, ձեռքը շարժեց նա, չարչի Բղդէն տղամարդ չի, որ մի աղջկայ առաջին կուչ գայ ու նորա հօր շպրտած արձճից ծանր խօսքերը մարսի... Հը՛... դառն ժպիտով խնդաց նա...—ուրախ եմ, ասում է, Աստուած տայ աւելի հարստանաս, բայց մուշտարիքանցդ հետ լա՛ւ վարուի՛ս... Ձէ՛, ջհուտ Աղաջա՛ն, չէ, ձեռներդ լուա՛. Բղդէն էլ քո տեսած երեխէն չէ. Պօղոս աղայէնց ամալէն քո իրաւունքի տակից գուրս պրծաւ, խրառներդ նորա ականջը չեն մտնիլ, այսուհետեւ հօ դո՛ւ, հօ մի բուռը փոշին,—քամուն տուիր՝ էլ չը կայ, սրա՛նք ողջ կենան, սրա՛նք:

Բղդէն վերցրեց մօտն ընկած արխալուղն և շարժեց, ոսկիքը գրապանումը զօղանջեցին:

—Բաս Շողի՞կը... Ձէ՞ որ նա ջհուտ Աղաջանի աղջիկն է. չէ՞ որ իմ թշնամին Շողիկիս հէրն է, չէ՞ որ Շողիկս իմ գուշմանի միս ու արիւնն է. ո՞նց կտրես միսը, որ արիւնը չը թափուի, ինչպէ՞ս թափիս արիւնը, որ միսը չը կտրուի...

—Ախ... ես կը խելռե՛մ... Աղէ՛, աղէ՛, աղէ՛, մէրի՛կ, ձայն արձակեց մի քանի անգամ Բղդէն, ճակատին զարկեց, անկողնի մէջ կործ եղաւ, գլուխը կոխեց բարձի տակը ու հեկեկալով լաց եղաւ բարձրաձայն:

ԺԹ.

ԶՐԻ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

Լուսարէմ է. բնութիւնը խաղաղ է և անուշաբոց. մի թերթւասիւք զեփիւռ մեղմօրէն խաղում է ամառուան գիշերացին մթնոլորտի մէջ, մթնաժեռ երկնքի երեսը զարդարող փայլուն գո-

Հարները—բիւրաւոր մեծ ու մանր աստղերը—միմեանց ետևից ծորելով՝ անյայտանում են, կամ տեղն ու տեղը չքանում են. անահետման տարածութեան թանձր ու աթոյր վարագորը հետզհետէ նօսրանում և կապտագոյն անխուռվ ովկիանոսի մակերևութիւն նմանում։ Արևելեան կողմից մի բարակ շառաւիթ՝ թափանցիկ ոսկեգոյն շղարշի նրբութեամբ՝ ձգուում էր երինից երեսին, սփռելով և ցրիւ տալով իւր ասեղանման սուր-սուր ծայրերը դէպի հեռի արևեմուտ, դէպի խոր հիւսիս։ Այդ նօսրացած գոհարների խմբերում զեռ հպարտութեամբ խաղում են պայծառ փայլերով մէկ-մէկից բաւականին հեռու ընկած առաւօտն աւետող տասն երկու խոշոր աստղերը։ Բայց և նրանց երջանկութիւնը կարճաաւ է. լոյսը մօտ է, լուսոց երկիւղը նրանց էլ սարսափեցրել է, նրանք էլ հետզհետէ դունաստուեցին և մէկ-մէկ զլուխ առան, կորան։ Մինը կայ, սակայն, որ չի ուզում ընկնուիլ, —դա արուսեակն է՝ լուսադէմի աստղերի թագուհին, գիշերացին լուսաւորներից ամենագեղեցիկը՝ լուսնեակից յետոյ։ Նա երեսը դէմ է տուել, ուզում է հակառակել Արայի լերան քամակից դէպի ինքը շեշտուած լուսաւորների թագաւորի ոլաքներին։ Բայց և նա՝ յաղթահարուած ու գալիացած՝ զլուխ առաւ, չքացաւ։ Այդ բոլորից յետոյ արշալոյն աւետում է մի գեղեցիկ առաւօտ և փութացնում է գեղջուկին դէպի իւր սիրելի պարապմունքը, իւր հանդը, իւր դաշար, իւր ազգին, իւր կալ ու կուտար։

Մի այլպիսի առաւօտ բացուեց միւս օրը Կարբում։

Չարարաստիկ Բղդէն, սովոր շուտ զարթնելու և իւր չարչութեանը փութալու, այդ գիշերը ոչ քուն էր մտել, ոչ զարթներ, հազարաւոր խառն ու շփոթ մտածողութիւնների և դիտաւորութիւնների ծրագիր կազմելով՝ ինչպէս պառկել էր, այնպէս էլ տեղիցը վեր թռաւ։ Նա ոչ մօրը զարթնացրեց, ոչ չարչու պայտապին մօտեցաւ. մի աներևոյթ մղումից, կարծես, ձգուեց դէպի այն նեղ փողոցը, որ տեղից անցնելու էին՝ կծերն ուսերին՝ ջրի դնացող աղջկիները։

Այս գործողութիւնը սկսուում էր սովորաբար լուսաբացից շատ յառաջ, երբ ազգն ու ծայդը չէին առւել միմւանց հրաժեշտի ողջոյնը։ Պառաւ կանանց երկնդի ձայներն էին լինում առ հասարակ ջահէլներին քնահարամ անողութ

—Աղջիկնե՛ր, հարսնե՛ր, ելէ՛ք, ձայն էին տալիս մէկ էլ անուշ քնի մէջ մտած ժամանակն անքուն պառւուկները. քանի՞ մրափիք, կը նմանիք քրոդի մեռել, աքաղաղն երեք անգամ բարի լոյսն աւետել է, վերի կողմը (արեւելց) կապոացել է, ելէ՛ք դուռն ու տուն սրբոտեցէ՛ք, մինչև տաւարի ոտքը չի պղտորել առուները, դնացէ՛ք պարզ ջուր բերէ՛ք, բան ու գործի ժամանակ է:

Պառաւների այս պատուէրը շարժումն ու կենդանութիւն էր մոցնում գիւղական ողջ բնակութեան մէջ:

Մեծ պատրաստութիւն պէտք չէր գիւղի հարս ու աղջիկներին՝ իրանց արդ ու զարդն աւարտելու, իրանց պաճուճանքը վերջացնելու:

Հանեց պսոիկ հարսը գլխատակից պատառուուն, կարմիր, խամ կտաւի անթարին, հազար իւր դեղին շապկի վերացից և ահա նա միանգաման պատրաստ է գործի կանգնելու:

Ամուսնացած մատաղահաս կանանց գլխի ծածկոցները, որ նոյն պէս կոպիտ փաթաթաններից են ձեւած՝ գիշեր ցերեկ զլխներից չեն բաժանուիլ, այլ միայն տօն օրերին կը բացուին: Միակ աժանազին մետաքսեաց փուշի կոչուած թաշկինակն է, որ վերնազգեստի հետ՝ երեկոցեան տեղը մտնելուս՝ կը ծալուի և բարձի տակը կը մտնի, մուշտաքի տեղ պէտք կը լինի:

Հասած աղջկանց գլուխն աւելի սակաւ պատրաստութեան կարիք ունի, սանտրել, հայելու տակ կոկուել չը կայ, մի-մի չթեայ ծաղկաւոր թաշկինակ է, որ եռանկիւնի ծալում են, ծնոտի տակովը պատ տալի և սուր ծայրը թիկունքին փուռմ, որպէս զի յարմարին նորա հետ ամբողջ մէջքը բռնող տասն երկու երկայն ծամերը և իբրև ծովեր ծառայեն գլխի ծածկոցին:

Սակաւապէտ է գիւղական կանացի սեռը, հրապուրիչ պճնազարդութիւններ նրան չեն զբաղեցնում, նա միայն իւր տնային տնտեսութեանն է անձնատուր եղած:

Խօսք չունիմ, նորահարսները խնամքով ծալած և պահած ունին իրանց բաժինքում բերած հարսնութեան հազուստները, բայց նրանք գեռ շատ տարիներ պէտք է բողչամիջում մնան. այդ հարսներն իբրև օժիտ բերած ունին նոյնպէս մի փոքրիկ անագեայ հայելի՝ ձեւնամիջի տրամադծի մէծութեան տփի վերայ յարմարեցրած,

ունին և մի ոսկրէ զիւրագին սանոր. բայց այդ ամենը սովորական օրերի համար չեն, նրանք պէտք են գալիս զատկին, տօն օրերին, հերանց գնալուս, ուխտատեղերում և այն:

Աստուծոյ տուածից՝ ոտնաման հագնելու համար ևս կանացի սեռը ժամանսակ չի կորցնում. զիւղացի կինն ու աղջիկը ի մանկութենէ վարժ են փուշ ու տատասկ կոխուելու. նրանց ոտքի տակի մորթը գոմշի կաշուց հաստացել է, փշերի ասեղանման սուր ծայրերը փշուում են նրանց ոտքերի տակ:

Երգում չեմ ուտիլ, կարելի է զարդարուելու ոտքերը լուացած օրը՝ այդ փշէ ասեղների ծակոցը փոքր ինչ զգալի լինի մեր քնքուշիկ սեռի ոտքերի համար, բայց այն էլ՝ ոտքի երեսից, ապաթէ ոչ, ժամերով, թէկուզ, չեւաքարը¹⁾ մաշեցնեն ոտքերին քսելով, ներբանի խոռոշներում ամրացած և մարմնի հետ միաւորուած խճերը մաքրել չեն կարող:

Տանն երես ու ձեռք լուանալու կարևորութիւն նոցնալէս չ'ունին զիւղի ջահէլ կանացը, այդ նրանք անում են ջրլցքի վերայ առուի փրփրալից պղպահները փշելով:

Մինչեւ առան տղամարդն իւր ոտնամանների առասանները կ'ամրացնէր, նորա քնքուշիկ կէսը, կամ հարսնացու քոյը, երկու կուժ ջուր է բերում:

Եւ արգարև, զիւղացի տղամարդը՝ շէն թէ աղքատ՝ երբէք ոտաբորիկ չի ման գալ, նոր թէ կարկատած՝ մի զոյտ իւր ձեռագործ կաշուէ տրեխ պէտք է ծածկեն նորա ոտքերը:

Ահա՛ մի գաւաթ սառը, նոր բերած ջուր ձեռքին առաւ տանու աղջիկը, համեստօրէն ձեռքի մէկը սրտին դրած՝ կանոնեց եղբօր կամ հօր առջեւը, խոնարհութեամբ սպասաւորեց նրան, երեսը լուալ տուեց և կրկին, կուժն ուսին, վազեց ջրի:

Երես-սրբիչի կարևորութիւն նմանալէս չը կաց, բանկոնի քղանցը, կամ լայն թեաբերանը փօխարինում են նրան:

Ինչ ասել կ'ուզի, որ ջհուտ Աղաջանի աղջիկ նողիկը բացառութիւն չէր, նա էլ զարթնել էր, նա էլ ջրի էր գնացել:

¹⁾ Մի փոքր բոլորակ չեչոս քար է այդ՝ կանանց զարդելի անբաժան ընկերը. նրանով են իջեցնում լուանալուս ոտքերի աղտոտութիւնը:

Բղդէն շատ առաւօտ էր անցել դէպի առուակը տանող ճանապարհով միայնակ, խուրջինն ուսին, կամ իւր ու իշուկի հետ գիւղերը գնալուս, բայց ոչ մի ջրաբեր կնոջ կամ աղջկայ չէր հետաքրքրել, իսկ այսօր աղջիկներից շատերը միմեանց աչքով արին և իրար մէջ քչփչացին:

—Աղջի՛, հո՛զ զրա կօլոտ գլխին, ի՞նչ է քուչէն շավիում, մեր քամակից հոտոտելով՝ վերև ներքեւ անում. չը լինի՞ իւր միջումը սիրահարուած է, էն ո՞ր անշնորհը զրան կ'երթայ, հարցմունքներ էին տալիս ու ծիծաղում սիրունները, երբ Բղդէն իրանցից հեռանում էր:

Զը գիտեմ, լսե՞ց Սալբու տղէն իւր դէմ արտայալտած Կարբու գեղեցկուհիների կշտամբանքը, թէ մի ուրիշ դրդիչ հանգամանք մղեց նրան դէպի զիւղի հարաւարեւմտեան կողմը:

Նա այս արեց մի յանկարծական հայեացքից յետոյ:

Բղդէն ուղիղ ճանապարհով չը գնաց. մի քանի ցածր պատերով պարտէզներ շատ ժամանակ չէր, որ տնկուած էին այդ կողմերը. նա իրան ձգեց առաջին պարտէզը, այնտեղից էլ երկրորդը, երրորդը, մինչեւ որ վերջին պարտիզի պատի տակին կուչ եկաւ:

Բղդէն նստած տեղը դողդողում էր: Ժամանակ առ ժամանակ նա գլուխը բարձրացնում էր, աչքերը մեեռում էր դէպի պարտիզից դուրս գտնուած հինաւուրց աւերակը և նորից կռանում: Նորա այլայլուած դէմքից կարելի էր գուշակել, որ նա մի դէպքի ականատես է լինում, կամ մի խօսակցութեան ականջ է դնում: Երեսը մի տեսակ ծռուել էր, բերանը բաց էր մնացել, շուտ շուտ էլ ականջն էր պատաժակին դէմ անում:

Յանկարծ Բղդէն թափահարուեց և սարսափահար եղաւ. Նորա պատկերի վերայ կատաղութեան նշաններ արտափայլուեցին, նա կորքեց մօտն ընկած քարը, ձեռքբարձրացրեց, որ շպրտի դէպի աւերակը, բայց կրկին ցած դրեց ու վեր ելաւ տեղիցը, պատի գլխովը թռաւ և սլաքի նման իրան ձգեց աւերակի մէջ:

—Ա՛խ...

Այս մի ձայն էր, որ հետեւեց Բղդէի ներկայութեանը և դադարեց:

—Աղջի՛, էստեղ ի՞նչ ես շինում էսքան վաղ, նողի՛կ, հարցրեց ձիչ արձակողին քաղցրութեամբ Բղդէն:

ԶՀՈՒԹ Ազաջանի աղջիկը ոչինչ չը պատասխանեց, նա սիրութ բարախելով՝ կուացաւ ուսելու քարին դէմ տուած լիքը կուժը:

—Աղչի՛, այստեղ ո՛ւր, ջրի ճանապարհն ո՛ւր. ընչի՞ համար ես եկել այստեղ, դեռ լոյն ու մութը նոր է բաժանուում, կրկնեց Բղդէն իւր հարցը:

—Ոչի՞նչ, հազիւ լսելի եղաւ մի մրմունջ:

—Կա՛ց, կուժդ ուսդ տամ, ժպտալով մօտեցաւ Բղդէն:

Նողիկն արդէն ուսել էր կուժը. նա քայլերն ուղղեց դէպի աւերակից դուրս տանող գոնակը:

—Մի քի՛ համբերի՛, Նողի՛կ, ձեռքը կժին ձգեց Բղդէն, աղջկայ առաջը կտրեց և չը թողաց դուրս գալ աւերակից:

—Թո՛ղ, ի՞նչ ես ուզում ինձանից, տրտնջաց շրթունքն ուսոցնելով Նողիկը:

—Աստուա՛ծ վկայ, սուրբ Գէորգի գերեզմանո՛վն եմ երդում ուտում, ինձանից քեզ վնաս չի գալ. երկու խօսք ունիմ ասելու, կամ լսի՛ր, կամ ես ինձ անմահ, անգրող կը սպանեմ:

—Գո՞ւ ով, ե՞ս ով:

—Հապա՛ դու ո՞վ, էն Աշտարակի ճանապարհը բռնած ներքեւ գնացող բաղդաւո՞րն ով, որ թշերիդ ծէրերը կարմրացրեց:

Նողիկը միանգամայն կարմրատակեց, դարձաւ բազուկի (Ճակատէն) եփած տակ. նա չ'արգելեց Բղդէն կուժն ուսիցը վայր առնել. նա լուել ու գլուխը խոնարհեցրել էր:

—Ես համբոցի ձայն լսեցի:

Նողիկը պապանձուած էր, աչքերն արնոտել էին:

—Քեզ եմ ասում, ես ձեզ տեսայ համբուրուելիս:

—Ես թագուն ոչինչ չ'ունիմ, իմ նշանածն էր, քեզ պէս օտար աղջկայ առաջը կտրող հօ չէ՛ր, մրմրթաց Նողիկը:

—Եթէ հայրդ իմանա՞յ:

—Այսօր չէ՛ մի քանի շաբաթից հայրս ինքը պէտք է կոնիցս բռնի, նրան տայ:

—Ես տեղ լընչի՞ էիք եկել:

—Ո՞ւմ ի՞նչ բանն է:

—Եթէ դու շիտակ խօսող ես՝ ասա՛, ի՞նչ դործ ունեիք զիւղիցը դուրս՝ ճանապարհից ծռանց՝ էս աւերակի մէջ:

— Իմ նշանածն է, իմ զլիսի տէրն է, հրամայեց գալ, իրան
ճանապարհ գնել, ես էլ եկաց:

— Նա սիրում է քեզ:

— Մեղք է, որ չը սիրի:

— Դու է՞լ սիրում ես:

Շողիկը չը պատախանեց, ձեռքը ձգեց կժի կանթին և
ուզում էր վերցնել, բայց նղդէն դրկեց կուժն ու չը թողեց:

— Ի՞նչ ես ուզում ինձանից, հիմի կը գոռամ, աշխարհքը
զլիսիդ կը ժողովեմ, սպառնաց Շողիկը:

— Մի խօսք եմ ասում, լսի՛ր ու գնա՛, — Աստուած քեզ հետ:

— Մի ժամ է բռնել ես ու ոչինչ չես ասում, քեզ համար
մեծ ամօթ է, լոյսը բացուեց, երթևեկը հիմի կը շատանաց, ընչի՞
ես կամենում ինձ խայտառակել:

— Թո՛ղ Աստուած ինձ պատժի, եթէ ես քո մի մազին դիպչեմ,
Շողիկ, միայն լսի՛ր՝ ինչ որ ասում եմ և մի՛ բարկանար, աղաչում եմ:

— Ասա՛, լսում եմ:

— Զի կարելի՞ս, որ նստինենց Սհօյին չ'առնես:

— Դու իմ հէրն ես, իմ զլիսի տէրն ես, դու ո՞վ ես, որ ինձ
էղակս հրամանք ես անում:

— Հրաման տալու իրաւունք չ'ունիմ, միայն խնդրում եմ:

— Է՛... է՛... է՛հ, բարկացաւ Շողիկը և կրկին ձեռքը ձգեց
դէպի կուժը:

— Աղաչում եմ, Շողիկ, ոտքերդ եմ ընկնում, ես գժուած եմ
քո սիրով, կամ էս րոպէս յետ արա՛ կողքիցս կախած դանակը,
վիզս կտրի՛ր, կամ թէ չէ; Սհօյին մի՛ գնալ, իմ նշանածը դարձի՛ր:

— Ծո՞ւռ ես, ի՞նչ ես, երկու տարի է ես Սհօյի նշանածն եմ:

— Հիմի էլ իմը դարձի՛ր:

— Վա՛յ, հո՛ղը զլիսիս, ես անտէ՞ր եմ, ո՞րք եմ, ձեռս ծոցումն
անձարի մէ՛կն եմ, որ գնամ, կին դառնայ՝ էն էլ ո՞ւմ՝ չարչի
նղդէին:

— Հիմի ես այլ ես չարչի չեմ, Շողիկ, ես հիմի փողատէր եմ,
քո հօրիցդ շատ հարուստ եմ, օրն էգուց Աշտարակումը մի մեծ
խանութ եմ բացանելու, դեռ տասն էլ ուրիշ զիւղերում պէտք է
բանամ, քո Սհօյի հացը պէտք է կտրեմ:

—Մի մարդի հաց Աստուած չը կտրի, թէ չէ աղամորդին ի՞նչ կարող է անել:

—Քո Սհօյի աչքը հօրդ գուանը պէտք է մահկ տայ միշտ, հէրդ պէտք է մի կտոր ցամաք հաց շպրտի, որ նա քեզ էլ պահի, իրան էլ. հինգ գաղ խամ չիթ առնելու, վիզդ քցելու կարողութիւն չունի Բատինի թոռը, բաց ես քեզ ոսկու մէջ կը թաղեմ:

—Կերածը կորած է՛, քիչ մարդիկ կա՞ն, որ էս օր իմ հօր հացն են ուտում ու հիմի նրա ոտք կուծում են. չիմացողի աչքերը թող բռնի հօրս երախտիքը:

—Նողի'կ, ես չեմ ուրանում, որ քո հայրն ինձ բարութիւն է արել, բաց այսօր նա իմ դանկի չափ կարողութիւն չ'ունի. երէկ նա էր, էս օր ես եմ. աշխարհքս սանդուղք է՛ մինը վեր է ելում; մինը ցած է իջնում. էս օր ես քեզ ոտիցդ գլուխ ոսկով ու մարդարտով կը զարդարեմ:

Մի արհամարհական ծաղր արտայալուց Նողիկը և ձեռքը կժին ձգեց:

—Սուտ չեմ ասում, Նողի'կ, եթէ չես հաւատում՝ տես ի՞նչ եմ փոռում ոտքիդ տակին, էս բոլորը քո ցաւը տանեն:

Բղդէն հանեց զրպանից մի կարմիր թաշկինակ, քակեց կապը և սփոռեց գետնի վերայ:

Մեզ յայտնի ոսկիքն էին հուրհրատում և իրանց փայլի պահատորդը լրացնում առաւտեան արևի ցոլացրած ճառագայթներից:

—Տասը, քսան էղքան էլ տանն ունիմ, Նողի'կ, բոլորը քեզ մատաղ, ստախօսեց Բղդէն:

Աչ մի ոսկի պակաս չէր, բոլորն այսքանն էր, բաց այս էլ քիչ չէր, հինգ վեց հարիւրից աւելի էին:

—Մենք մի կտոր հաց՝ Աստծու տուածից՝ ունինք, սոված չենք մեռնիլ, տա՛ր, ուրիշներին զարմացրու, շեշտեց բարկացած Նողիկը և այս անգամ վճռաբար բռնեց կժի ունկը:

—Չեմ թողնիլ՝ ոտքդ փոխես, մինչև չ'ասես, որ էլ Սհօյին չես սիրում, ի՞նձ ես առնելու:

—Ինչ եմ անելո՞ւ. իմ հօր մի խօսքը քո պարկերով ոսկիքանց ու ակն ու մարդարտի հետ չեմ փոխիլ. Սհօյի կոխած սև հողը քո զլիսից ինձ համար առաւել է, կօլոս Բղդէ՛. գողնովի ոս-

կիքո՞վդ ես ուզում ուրիշի նշանածը ձեռքեցը իւլել. ո՞ր աչքը կոցը, ուզքը կաղ, հաց ու ջրի կարօս աղջիկը արժան կը համարէ քեզ պէս այլանդակ մարդագլիլի ճանփն լնկնել:

Նողիկն այս անգամ ասատիկ էր բարկացել. նորա վերայ մի անբնական ոյժ եկաւ, աչքերն արիւնակոլս եղան: Վերջին բացականչական խօսքի հետ զոյգ ձեռքերով յետ զարկեց նա Բղդէին, կուժը թոցրեց ու շուապաւ դուրս եկաւ աւերակից:

Աւերակի պատը յենարան եղաւ Բղդէին և նա ազատուեց մեծ փորձանքից, նա գլուխը, կամ մէջքը կը կոտրէր, անշուշտ, աւերակի մէջ թափուած քարերին զարկուելով՝ եթէ պատը նրան չը փրկէր:

—Նատ լա՛ւ, ջհուտ Աղաջանի աղջի՛կ, դու ինձ վա՛յ տաս, սպասի՛ր, հօրդ հողի հաւասարացնեմ, քեզ չո՛քէ չոք դուռս բերեմ, ո՞տս համբուրել տամ: Եթէ խօսքս չը կատարեցի, գնա՛ ու պարծեցիր: բոլոր ոսկիքս լորա վերայ կը փշացնեմ, սպանալով մատը թափ տուեց Բղդէն արագ քայլերով կուժն ուսին հեռացող Նողիկի քամակից:

—Ոսկիքդ տա՛ր մածնի տո՛ւր, գլուխդ քսի՛, կորական պատասխանն եղաւ Նողիկի:

Աղաջանի դուստրն էլ չէր երևում: Նա ծռուել էր դէպի ձախ և մտել ջրի տանող փողոցն ու խառնուել ջրբեր աղջիկներին, որոնցից և ոչ մէկը չէր նկատել Նողիկի բացակացութիւնն և վերադարձր:

Բաւական ժամանակ էր անցել Նողիկի հեռանալու րոպէից և Բղդէն աւերակի պատին յենուած՝ դեռ նայում էր ակնապիշ դէպի ջրի փողոցը:

Վերջապէս նա նկատեց ճանապարհովն անցնող Կարբեցի չարչիներից մէկին, որ խուրջինն ուսած՝ գնում էր գիւղերը շրջագայելու և տեղն ու տեղը նստեց, մինչև որ չարչին հեռացաւ:

—Կամ ե՛ս, կամ ջհուտ Աղաջա՞նը, երկուսիցս մէկը պէտք է կարբու գաւառումը յիշուի, յիշատակուի, կամ ե՛ս, կամ Բստինենց Ահօ՞ն, —երկուսիցս մէկը պէտք է Նողիկին տիրանայ, դեռ տեսնենք ի՞նչ կ'ասի ուստայ Սիմօնը:

Այս խօսքերով նո կապեց կրկին իւր թաշկինակը, գրպանը դրեց և շուապով բռնեց Աշտարակու ճանապարհը:

Ի.

Բ Ս Տ Ի Ն Ե Ն Ց Ս Հ Օ Ն

Երկու տարի էր՝ խանութ էր բացել Բստինենց Սհօն Աշտարակումը. նա առաջին խանութ պանն էր այնուեղ:

Մի գեղեցկադէմ երիտասարդ էր Սհօն, բարձր հասակով, թուխ և խոշոր աչքերով, կարմիր երեսով ու նօսր նորաբոյս ընչացքով, միշտ ծիծաղադէմ, միշտ հաճոյախօս, յաճախորդների ամեն խօսքին ջանով պատասխանող, այն ջահէլներից մէկը՝ որի համար ամեն տեսնող ասում է. ի՞նչ տղայ է, ափսո՞ս, որ մայրը մէկն է ծնել. իսկ համեստ բնաւորութեան և գրաւիչ պատկերի համար՝ բոլորեքեան նրան նմանեցնում էին մօր աղիզ պահած, աբուռով մեծացրած ազափ աղջկայ: Այդ համեմատութիւնը միանգամայն յարմարում էր Սհօյի բնաւորութեանը. նա չ'ունէր կարքեցու խորամանկ ճարպիկութիւնը. մի մազաչափ օխալմունք իւր կողմից, կամ սառը խօսք օտարից՝ նորա երեսը շինում էր երեկոյեան բոսորային երկինք, ականջները կէժանում էին, կարմրութիւնը ափուռում՝ էր բոլորակ դէմքի վերայ և քափ ու քրտինքը կոխում էր. այդ ժամանակ նորա ձայնն էլ նուազում էր, որ խոստովանած՝ առանց նրան էլ ամօժխած օրիորդի մելոդիական և քաջոլոր ձայնից աւելի չէր:

Մի հատիկ հօր զաւակ էր Սհօն, կարքեցի Բստինենց կարապեաի որդին էր:

Կարապետը, իբրև իւր նախկին կարողութիւնը կորցրած մարդ, ձեռնհաս չէր լինիլ երբէք իւր որդուն խանութպան շինել՝ մինչև անգամ կարբու մէջ, թող թէ Աշտարակու նման տեղումը, եթէ ուրիշը նրան չ'օգնէր: Ուստի և նա մեծ ուրախութեամբ պատրաստակամութիւն ցոյց տուեց, երբ մի օր ջհոււ Աղաջանն առաջարկեց նրան իւր խնամութիւնը, աւելացնելով թէ Սհօյին մի մշտական կտոր հաց տալու համար՝ ինքը մտադիր է Աշտարակումը խանութ բանալ նորա համար:

Ասել, անել՝ շատ չը տեսեց: Մի կիւրակէ երեկոյ կարբու իշխանների ներկայութեամբ տէր Յակովբը «Պահպանիչն» ասաց, տէր Յովակն էլ «Սուրբ Խաչիւը» և նշանի մատանին օրհնուեցաւ, Աղաջանի տանը մեծ հացկերոյթ եղաւ, Սհօն Աղաջանի փեսայ հրատարակուեցաւ:

Ամեն ինչ նախատեսած էր, խաչեղբայր պառելու կարիք չը կար, նախ՝ որովհետեւ տեղական սովորութեան համաձայն՝ մի երկու տարի նշանածներին պատկը պատ էր, և երկրորդ՝ որ Աղաջանի սրտէ ի սիրտ բարեկամ Արամենց Յարութիւնը և՝ խաչեղբայրութիւն պիտի անէր և իւր փողոցի կողմի սենեակի դրաւելի պատը պէտք է ծակէր, դուռը կախէր, դարակներ շինէր և իւր կողմից մի մասնաւոր դրամագլուխ զնելով՝ պիտի ընկերութեամբ խանութ պահէր Սհօյի հետ:

Բարդ չէին այն ժամանակուայ կենսական պահանջները, ուարզութիւն և նահապետականութիւնն էր թագաւորում հայ աշխարհումը և Սհօյի խանութը միանգամայն լրացնում էր Աշտարակու և մօտագայ գիւղերի կարօտութիւնը:

Սհօն միաժամանակ ժողովրդի մերկութիւնը ծածկող կոռաւավաճառ էր և տնտեսական պիտոյքը հայթհայթող մանրավաճառ:

Առաջին պաշտօնով զգալի վնասը հասաւ թափառաշրջիկ հրէայ կոռաւավաճառներին, երկրորդ առուտուրը զրգուեց Բղդէի և միւս չարչիների նախանձը, որ ասել է, թէ Աղաջանը մէկ ձեռքով շինածը միւսով քանդում էր:

Այսպէս չէր հասկանում ինքը ջհուտ Աղաջանը. նա իւր յաճախորդ չարչիներին խորհուրդ էր տալիս փոքր առ փոքր տեղի տալ մեծամեծ գիւղերից և իրանց գործունէութեան շրջանն ընդլայնել այնպիսի աեղերում, ուր դեռ շուայութեան ոոռքը տուն չի մտել:

Աղաջանի գուշակութիւնը սխալ չէր, տարէց տարի ժողովրդի տնաւեր զեղխութեան և աւելորդասիրութեան հետ բուսնում էին գիւղերումը խանութներն և աւելանում էին:

Բոլոր չարչիքը խոնարհելով իրանց ճակատագրին՝ բարձրացան լեռնոտ և քաղաքներից հեռու ընկած գիւղերը. իսկ յամառ Բղդէն էր, որ ոչ միայն հակառակեց Աղաջանին, այլ և կոյց բաղդի յաջող բերմունքով այսօր նրանից շատ վեր է նիւթական ուժով, նորա ոխերիմ թշնամին ու խաղաղութիւնը վրդովողն է:

Բղդէի վերաց չը կարաց աղդել Աղաջանը, ընդհակառակն՝ նա մեծ ներշնչութիւն ունեցաւ իւր փեսացուի բնաւորութեան վերայ

Սեղ յայտնի է, որ Աղաջանը սակաւապէտ էր, տկարներին օդնող և անգործներին դործ տուող էր. նա ինքը հասնում էր միշտ թագաւորական անյետաձելի հարկադահանջութեանց ժամանակ

ձեռքը պակաս զիւղականներին՝ ամենաօրինաւոր տոկոս միայն ստանալու պայմանաւ, ինքն էր, որ ամենատեսակ աղէտների միջոցին սրբում էր թշուառի աչքի արտասուքը:

Այդ միևնույն սիրելի յատկութիւնները պատուաստեց նաև իւր փեսացի մէջ. շատ չը քաշեց, Սհօն մի բարի վաճառականի անուն և համբաւ ժառանգեց Աշտարակումն և մերձակայքումը:

Նորա յաճախորդներն ըստ առաջնոյն մի քանի գաղ կտաւեղէնի համար սովորուած չէին լինում Երեան գնալ, կամ հրէտների տօմարի մէջ մշտապարտապան գրուել:

Սհօն ինքն էր ամեն կարիք հայթհայթողը և Երեանու վաճառականաց վստահութիւնն ու վարկը ձեռք բերողը:

Կրինենք, որ Բատինենց Սհօն էր Աշտարակի առաջին խանութպանը. երկու տարի իւր դէմ մրցումն չեղաւ, բայց մի քանի օր է, որ զիւղի միւս ծայրումը մի երկրորդ առաւել լիքը խանութ էլ բացուել է: Ո՞ւմն էր և ի՞նչպէս:

(Ալ շաբունակւի)

ՄԱՆԿԱԿԱՆ ԸՆԹԵՐԳԱՆՈՒԹԻՒՆ

ԵՐՈՒԱՆԴ ՂԱԶԱՐԵԱՆՑԻ

I

Ընթերցանութիւնը մանուկների դաստիարակութեան դլիմաւոր տարբերից մէկն է, Երբ մանկական խելքը, հետզհետէ կապցուրւելով ու զարգանալով, սկսում է ընդհանուր ճշմարտութիւններ որոնել կեանքի և բնութեան մէջ, երբ զիտելու, քննելու, հետաղոտելու և իմանալու ներքին փափառ սկսում է զրաւել երեխալի հոգեկան աշխարհը, — այս դրութեան մէջ, ուսումը և ընթերցանութիւնը միակ միջոցն են, որոնցով կարելի է յագեցնել երեխալի հոգեկան ծարաւը, որոնցով կարելի է ուղղել մանուկների միտքը և զդացմունքները՝ դէպի ճշմարիտը, աղնիւը, զեղեցիկը... Այս պարզ դասողութիւնով խոկապէս որոշում է թէ ուսման և թէ մանկական ընթերցանութեան դրքերի ճշմարիտ նշանակութիւնը, Երեխալի հոգեկան կատկածների և տարակուսանքների ժամանակ, երբ նորա խելքը և զգացմունքները դեռ չեն ամրացել և որոշ ուղղութիւն ստացել, երբ նորա զգացմունքները դեռ չեն ամրացել և որոշ ուղղութիւն ստացել, երբ նորա թէ մատաւոր և թէ բարուական հասկացողութիւնները երերում, տատանում են նորա մէջ, — ուսումը և ընթերցանութիւնը, որպէս մի հաստատ և ամենաճիշտ՝ դաստիարակչական միջոց՝ պէտք է փարատեն երեխալի մոտականական կասկածները՝ բաց անելով նորա առաջ դիտութեան և սոր-բարուական կասկածները՝ բաց անելով նորա առաջ դիտութեան և ճշմարտութեան ասպարեզն, տալով նորա մաքին առողջ և խոկական մոնունդ, զարթեցնելով նորա մէջ բուն մարդկավին աղնիւ ցանկութիւններ...

Այս հիմնական տեսակիտը երբէք չը պէտք է մոռանալ ուսման, դաստիարակութեան զործում. սրանով պէտք է չափել այն բոլոր միջոցները, թէ ուսումնարանական դասերի և թէ մանկական ընթերցանութեան վերաբերութեամբ, որոնք առաջարկում, գործադրում են կրթութեան նպատակների համար. Մեր արդի զրականութիւնը չափաղանց աղքատ է ինքնուրուն մանկական ընթերցանութեան դրքերով: Ընդհակառակ՝ թարգմանութիւնները, մանուկների կարդալու փոքրիկ և էժանազին հրատարակութիւնները, օր աւոր աւելանում են մեղանում: Սական չը նայելով

մեր ուսուցիչների և, շատ աճգամ էլ, կողմանակի անձանց՝ տիկինների, օրիորդների ազդ գովելի աշխատասիրութեանը, որով նրանք ցանկանում են հարստացնել զանազան թարգմանութիւններով մեր ժողովրդական և մանկական գրականութիւնը, —միւս կողմից բոլորովին ներելի չէ մեր մամուլի չափաղանց անտարերութիւնը դէպի ազդ հարստարակող նորանոր թարգմանական գրքովները։ Մեր պարբերական հրատարակութիւնները, որոնք աւելի շատ և աւելի լաճախ միջոց ունին խօսելու ազդ գրքովների մասին, սովորաբար մի երկու նախադասութիւններով՝ տպագրական և թարգմանական «ձևերի» մասին թեթև նկատողութիւններով՝ վերջացնում են ամենն բան։ Հրատարակւած գրքովի ներքին միտքը, նորա արտաքայտած գաղափարը, նորա բարուական—դաստիարակչական ընդհանուր արժանաւորութիւնը՝ բոլորովին անուշաղիր են մնում լրագիրների մէջ, կարծես ազդ մի երկրորդական խնդիր է. կարծես մանկական և ժողովրդական գրքովների (թէկուղ թարգմանական) գլխաւոր արժանաւորութիւնը արտաքին շքեղութեան, լեզուի և տպագրական չրիֆտի մէջ է կազմանում... Այն ինչ մեղանում օր ըստ օրէ աւելանում են զանազան թարգմանութիւնները, օր ըստ օրէ հարստանում, ճոխանում է մեր ուսումնարանների և ընտանիքների «մանկական գրաղարանը», որի մէջ անխտիր կերպով դրւած են շատ ծայրագեղ լատկութիւնների և արժանաւորութեան գրքովներ։ Եւ ազդ գրքովները աւելապակաս հետաքրքրութեամբ կարդացում են մեր ուսումնարաններում, ընտանիքներում։ Նոր առաջացող սերունդը, մեր ապագայ հասարակութեան անդամները, թէ տղակը և թէ աղջիկներ, ազդ գրքերի վերայ են դաստիարակւում, ազդ գրքերից են ստանում այն պաշարը, որ պիտի սերմանէ նրանց մատաղ հոգու մէջ՝ զիտութեան, ճշմարտութեան, բարու և ազնւութեան սերմերը... Արդեօք բոլոր ազդ գրքերը համապատասխանում են իրանց կոչմանը, արդեօք «լոկ ընթերցանութիւն» տարածելուց զատ՝ ազդ գրքերը համեմում են և զաստիարակչական բարձր նպատակների, —աչս մասին ոչ ոք չի մտածում։

Աչքի առաջ ունենալով ապ ցաւալի և կորսատեր հանդամանքը, երբ ծնողները և, շատ աճգամ, դաստիարակուսուցիչները «չը գիտեն» ինչպէս ընտրել երեխալոց ընթերցանութեան գրքեր, և, առանց խտրութեան, ամեն հրատարակւած թարգմանական գրքով առնում և ցցում են երեխալոց ձեռքը. աչքի առաջ ունենալով, որ մեր ուսումնարաններում սովորող թէ փոքր և թէ չափահաս երեխաները լաճախ ստիպւած են Անում կարդալ բոլորովին վեասակար և ազանդակութեան գրքեր, —մենք համարձակւում ենք հետեւալ առաջարկութիւնը անել այն մարդոց, որոնք հասկանում և գնահատում են ընթերցանութեան գրքերի կրթիչ նշանակութիւնը, որոնց համար թանգ է մեր արդի ընդհանուր ուսումնարանական գործը, որոնք հաւատառում են՝ ապագայ սերնդի երջանկութեան, բաղդաւորութեան գաղափարին։

Հարկաւոր է մեր պարբերական մամուլի մէջ ստեղծել մի նոր ուղղութիւն, մի նոր և խիստ հետեղական կրիտիկան՝ մանկական գրքերի վերաբերութեամբ։ Հարկաւոր է մի որոշ, խելացի և աղնիւ կազմակերպութիւն, հասարակութեան բարուական չահերին նախանձախնդիր մարդոց մի լուրջ և գործին տեղեակ ընկերութիւն, որի միակ նպատակը լինի ընդհանուր և ներդաշնակ համաձայնութեամբ՝ քննել բոլոր ան գրքերը, որոնք հրատարակում են մանկական ընթերցանութեան համար։

Այս գործը շատ ծանր և շատ վիճ գործ է, որ պահանջում է մեր երիտասարդ ուժերի ընտրեալ միաւորութիւնը, որ պահանջում է շատ աշխատանք և անկեղծ սէր դէպի մանուկները, դէպի նրանց հոգեկան զարգացման վանմ շահերը...

Մեր պարբերական մամուլը, անշուշտ, մեծ ուրախութեամբ տեղ կը տառաջդիմի կազմակերպութեան մշակած փոքրիկ և խելացի քննութիւններին, որոնց գլխաւոր նպատակը պիտի լինի քննել և որոշել մանկական գրքերի ընդհանուր արժանաւորութիւնը, ընդհանուր դաստիարակչական մաքերը կամ գաղափարները, որ պարունակում են այդ գրքովների մէջ։

Անշուշտ մեր ուսումնարանական և մամուլի գործերին մօտիկ անձերը տեսած և կարդացած կը լինին Խարկօվի վարժուհիների հրատարակած երկու մեծահամար գրքերը։ Վետ չետած արօդ? վերնապրով ի՞նչ հրանալի աշխատութիւն է այդ, ինչքան աշխատանք, ինչքան սէր և անձնւիրութիւն է երեսում այդ երկու հատոր պատկառելի գրքերի մէջ։ Եւ, որ ամենից զարմանալին է, ինչպէս հետաքրքրութեամբ և սիրով կարդացում են այդ երկու անապին գրքերը, որոնք, ըստ երեսութիւն, շատ անհետաքրքիր և չորշամաք պիտի լինէին։ Որուսաց մամուլը գրկաբաց ընդունեց լարգելի վարժուհիների այդ գեղեցիկ և լուրջ հրատարակութիւնները և ընթերցող հասարակութիւնը մի քանի հազար օրինակներով գնեց այդ գրքերը։ Խարկօվի վարժուհիների կաստած այդ հոկաչական գործը թող օրինակ լինի և մեզ համար, մեր գարժուհիների և վարժապետների համար։ Մանկական և ժողովրդական գրքերի խիստ և անաշառ քննութիւնը, նրանց համար ընդհանուր գնահատութիւն և բարողական—դաստիարակչական արժէք որոշելը՝ մի մեծ և էական օգուտ կը լինի մեր ընդհանուր լուսաւորութեան գործին, մի անպիսի օգուտ, որի հետ կարող է մրցել միայն ուսումնարանը... Ի հարկէ մեղանում այդ գործը անհամեմատ հեշտ է, քան թէ ուսուաց մէջ։ մենք խկապէս գեռ նոր ենք սկսել մանկական և, երբեմն էլ, ժողովրդական գրքեր հրատարակել։ մեր թարգմանիները և, մանաւանդ, ինքնուրուն հեղինակները շատ և շատ քիչ են՝ համեմատաբար ուսուաց գրականական լէգէօններին, որոնց գրած և թարգմանած գրքերը հեղեղի պէս տարածում են ամբողջ լանատարած Ռուսաստանում։ Մէկ կողմից գործի վում և անսահման օգտակար լինելը, միւս կողմից նորա համեմատական հեշտութիւնը՝ Խարկօվի վարժուհիների

հրատարակութեան հետ՝ թուլ է տալիս կարծել, որ ալո միտքը կ'արժանանալ մեր չարգելի վարժուհների և ուսուցչաց լուրջ ուշադրութեանը և մօս ապագանում կ'իրագործէ մի մէջ, ուրիշների խելացի օրինակին հետեւը՝ մի տեսակ առաքինութիւն է, որ պատիւ է բերում մարդոց, Վերտիչնեալ պատկառելի հրատարակութիւնը այս գէպքում կարող է շատ զգալի թեթեռութիւն մացնել գործի մէջ, կարող է որպէս մի ուղեցոյց ծառաւել շատ կնճռոտ և անորաշ հարցերում, իսկ առակմ, իբրև առաջին փորձ, մենք հէնց ալս չօղածում կ'աշխատենք մի քանի խօսք ասել պ. Աղաջեանցի մանկական զրութիւնների մասին, որոնք պարբերապէս հրատարակում են «Աղբիւր» մանկական ամսագրում:

II

Նախ անհրաժեշտ է ընդհանուր կերպով բացատրել «Աղբիւրի» նշանակութիւնը և նորա կատարած զերը մեր արդի ուսումնարանական, կամ դաստիարակչական ասպարեզում: «Աղբիւր»-ի ունեցած անսովոր չափողութիւնը ամենալաւ գրաւականն է, որ նորա երեսովը անհրաժեշտ էր մեր մէջ, որ նա կարողացաւ բաւականութիւն տալ մեզանում եղած անհրաժեշտ պահանջներին: Եւ ճշմարիտ, մինչև «Աղբիւր»-ի հրատարակւելը, զեռոչ ոչ չէր մտածում երեխալոց ընթերցանութեան մասին, ոչ ոք չէր աշխատում ուսումնարանից դուրս՝ երեխալոց ուշադրութիւնը զրաւել անձնիսի հասարակ, մատչելի և պարզ գրւածքներով, ինչպէս որ արեց «Աղբիւր»-ը, թէ իւր արտաքին, գեղարւեստական չքեղութիւնով և թէ ներքին՝ թեթև, հետաքրքիր և մատչելի ոճով, մանկական հասկացողութեանը և զգացմունքներին չարմար փոքրիկ պատմութիւններով, այդ ամսագիրը առաջին տարիներից արժանացաւ մանուկների համակրութեանը: Մանուկները օր ըստ օրէ սկսեցին սիրել նրան, սկսեցին ֆնքով կասկերով միանալ այդ նոր և անկեղծ բարեկամի հետ... Այս ուրախալի երեսովը պէտք է խոստվանել իրեն փաստ, որ ամեն մարդ տեսնում և դիտում է ներկայումս: Իբրև ընթերցանութեան՝ գիրք, իրեն գեղարւեստական մի գրաւիչ և համենաս հրատարակութիւն, «Աղբիւր»-ը այժմ տարածւած է մեր գաւառների բոլոր ուսումնարաններում, և փոքրիկ մանուկները մի առանձին ուրախութեամբ, մի առանձին հաւատարմութեամբ կարդում են նրան: Եւ նոյն իսկ ազդ հանդամանքը, որ մանուկները սիրում և հաւատում են «Աղբիւր»-ին, որ նորա համարները ամենից շատ և ամենից լածախ տարածում են մեր հասարակութեան մէջ, կրկնում են, նոյն իսկ այդ հանգամանքը մեղ պարտաւորացնում է աւելի մեծ ուշադրութիւն դարձնել «Աղբիւր»-ի վերակ, աւելի խիստ և մանրաղնին կերպով քննել նորա մէջ դուրս եկած իւրաքանչիւր մանկական գրւածքը: Բաւական չէ՝ որ մի գիրք, կամ պարբերական հրատարակութիւն տարածւում, կարդացւում է հասա-

բակութեան մէջ, բաւական չէ, որ հասարակութիւնը սիրում է ալս ինչ, կամ ան ինչ զիրքը, լրագիրը և ալն... Ընդհակառակ, որքան մի զիրք, կամ պարերական հրատարակութիւն աւելի շատ տարածւած, հոչակւած է հասարակութեան մէջ, անքան էլ շատ ու շաղրութիւն պէտք է դարձնել նորա բովանդակութեան վերակ, անքան էլ խոր և մանրամասն պէտք է քննել ազդ զրքի, կամ լրագրի ներքին, «Պաղափարական» բատկութիւնը, նորա բարուական ընդհանուր և ամենաղլիաւոր արժանաւորութիւնը: «Աղբիւր»-ը շատ մեծ և զնահատելի ծառակութիւն արեց մեր հասարակութեանը, տարածելով մանուկների և չափահանների մէջ ընթերցանութեան, գիրք կարտալու ոէրը. ակս առաջին և գլխաւոր քայլն է, որ կատարեց «Աղբիւր»-ը մեծ աջողութեամբ և զարմանալի տակտով... Բայց միթէ ընթերցանութիւնը միան ընթերցանութեան համար է. միթէ ակաքան զրքեր, լրագրներ և ամսագիրներ հրատարակում ենք նորա համար, որ մեր ժողովուրդը միան «ընթերցանութիւն» սովորի.—ի հարկէ ոչ: Թէ ընթերցանութիւն տարածելու ժամանակ և թէ մանաւանդ այդ գործը կատարելուց չետու, երբէք չը պէտք է մոռանալ, որ ընթերցանութիւնը միան մի արեւստ է, մի միջոց է հասարակութեան մէջ գիտութիւն, առողջ մոռքեր և զաղափարներ տարածելու համար, հասարակութեան միաքը և հոգին զատափարակնու, զարգացնելու, կատարելազործելու համար: Ո՞րքան համապատասխանում է «Աղբիւր»-ը ան ներքին, զաղափարական կոչմանը, որպիսի մոռքեր, զաղափարներ և զատափարակչական իդէալներ է քարոզում մեր մանուկ սերնդն՝ այդ միրւած ու տարածւած ամսադիրը: Այս հարցին աւելի հիմնովին և «օչափելի» պատասխան տալու համար՝ կարգանք հնց ալս տարւայ «Աղբիւր»-ի մէջ պ. Աղակեանցի զրած հեքիաթները, ևս դիտամբը վերցնում եմ պ. Աղակեանցի դրածները, որովհետեւ ներկալում «Աղբիւր»-ը լիովին մշակուում և կառավարւում է պ. Աղակեանցով, և մեր չարգելի մանկավարժը մնեց դեր է կատարում ամսադիրը ընդհանուր ուղղութեան և ընաւորութեան մէջ:

Այս տարւաչ լունւարի տետրակում պ. Աղակեանցը հրատարակեց մի հեքիաթ՝ «Եղեղնուհի» անունով:—Մի թագաւոր կամնել է իւր որդուն ամուսնացնել: Որդին ասել է՝ թէ ևս կ'ամուսնամ ան աղջկակ հետ, որ հօրից-մօրից չէ եղած: Թագաւորը մի պառաւ «Ճադուի» խորհրդով գնում է զետի ափը, կարում է «չը բանեցրած» դանակով մի եղէդ, զցում է չուրը և իսկովն... կատարւում է մի անկարելի երեսվթ—եղէդը աղջիկ է զառնում, որի անունը զնում են Եղեղնուհի: Եղեղնուհին մերկ մարմնով մնում է ջրի մէջ, իսկ թագաւորը զնում է տուն՝ իւր հարսին զգեստ բերելու: Այդ ժամանակ երիւմ է մի սևամորթ բօշա աղջիկ, խեղզում է ջրի մէջ Եղեղնուհուն և ինքը դառնում է թագաւորի որդու կինը: Թագաւորի որդին առում նրան: Մի օր զետից թագաւորակնը մի ոսկեղին և արծաթեղին ձուլ է բոնում, զցում է իւր աւաղանի մէջ և միշտ նստած աւաղա-

նի մօտ, սիրահարւածի պէս նաևում է ալդ ձկանը... Նորա կինը որ տեսնում է ալդ, իսկոն ցանկութիւն է լավանում որ ձուկը մուրթեն, իրան ուստեցնեն, որ ինքն էլ գեղեցկանալ. արդպէս էլ անում են, բայց նա չի գեղեցկանում: Զկան մի փուշ ընկնում է պարտէղը, փուշից մի գեղեցիկ ծառ է բուսնում, որի վերակ սիրահարւում է թագաւորազնը: Բօշակի աղջիկը կտրել և ալրել է տալիս ծառը. ալս ծառից մի տաշեղ ընկնում է հարեան պառաւի կտուրից ներս: Պառաւը տաշեղից մի խուփ է շնում, խուփը «դաւնում» մի սիրուն աղջիկ, ծառալում է պառաւին, զարմանալի կար ու ձեւ է անում և իւր համբաւը հասցնում է թագաւորազնի ականջը: Ալդ աղջիկը Եղեգնուհին է: Թագաւորի որդին գալիս է նորա մօտ և Եղեգնուհին «մորթած կաքալի» բարձրածան կենդանի վկալութեամբ ամեն բան պատմում է նրան: Եղեգնուհուն տարան պալատ, իսկ բօշակի աղջկան կապեցին ձիու պոչից և քարէքար տւին: «Չարը այնտեղ՝ բարին այստեղ...» վերջանում է պ. Աղայեանցի հէքիաթը:

Ի հարկէ ալս բոլոր պատմածին խօ չի հաւատում ինքը պ. Աղայեանցը: «Նա շատ լաւ գիտէ, որ երեխաներն էլ դժւար թէ հաւատան, որ եղեգնից աղջիկ դուրս եկաւ, ձկան փուշից՝ գեղեցիկ ծառ, ծառի տաշեղից՝ սիրուն օրիորդ... իսկ որ հում կաքաւը չի կարող անկրամկ խորովւել, և չոր վազան ճիւղը չանկարծ կանաչել մի աղջկակ հրամանովն—ալս խօ ամեն վիմար երեխակ գիտէ: Խնչպէս կարող է երեխան հաւատալ ալդ «սուտերին», քանի որ կեանքում նա երբէք չի տեսել աղդպիսի բաներ, և չի էլ կարող տեսնել, քանի որ ուսումնարանում ամենայն օր նա լսում և ստորոտմ է՝ թէ բնութեան մէջ առմին մի առարկաց, կամ երեսովթ ունի իւր առաջանալու խելացի մշտական պատճառները, ընդհանուր և անփոփոխ օրէնքները, որոնք չեն կախւած մարդոց կամքից, մարդոց զանազան հրամաններից: Ուսումնարանում մենք աշխատում ենք սովորեցնել երեխաներին բնութեան մէջ կատարող իսկական երեսովթների ներքին պատճառները, աշխատում ենք պարզել, ամրացնել և կազդուրել երեխացց միտքը և երեակացութիւնը իրական աշխարհի անմահ ճշմարտութիւններով. իսկ պ. Աղայեանցը, հակառակ աշխարհի անմահ ճշմարտութիւններին, աշխատում է հաւատացնել մանուկներին՝ թէ եղեգնից կարող է աղջիկ դուրս գալ, ձկան փուշից ծառ բուսնել և էլ չը գիտես թէ ինչ տեսակ անբնական, հրէշաւոր բաներ... Եւ զարմանալին ալն է, որ ալս մոլորութիւնների համար մեր ժողովրդական բանաստեղծը աշխատում է զործ դնել իւր տաղանդի բոլոր ոչժը, աշխատում է այնպէս զրաւիչ և կախարդական միջոցներ հնարել, որ հետառւթեամբ կարողանալ կաշառել մանուկների զիւրաթեք երեակացութիւնը: Եւ ինչ օգուտ՝ եթէ պ. Աղայեանցը կարողացաւ թէկուզ հաւատացնել մանուկներին ալդ ամենը. չէ որ վաղ թէ ուշ նրանք դարձեալ մոռանալու ևն ալդ խարէութիւնը, չէ որ գիտութեան, ճշմարտութեան լոյսը շուտով դարձեալ ոչըն-

չացնելու է՝ տգիտութեան ստեղծած ալշանդակ երևակադական պատկերները:

Նթէ հին կուապաշտական հայերը երդում և գովարանում էին Վահագնի ծնունդը հետևեալ կերպով՝

Ընդ եղեգան փող՝ ծուխ ելանէր,

Ընդ եղեգան փող՝ բոց ելանէր.

Եւ ի բոցով՝ պատաճեկիկ վաղէր... և ալն,

ալս բոլորը հասկանալի էր ալն ժամանակի համար, երբ դեռ մարդիկ անկեղծօրէն հաւատում էին դրան, երբ զիտութեան և հետազօտութեան ողին զեռ չէր մտել մարդոց դարձոր նախապաշտարմունքների մէջ։ Ալդ նախապաշտարմունքները իւր ժամանակին ունէին ճշմարիտ, րէալական նշանակութիւն, որովհետև մարդիկ իսկ ալ էս հաւատում էին, որ ադր բոլորը կարող է կատարել բնութեան մէջ, որ Վահագնի նման կարիճ և գեղեցիկ տղամարդը «կարող էր» մարդուց չը ծնւել՝ ալ բոցավառ եղեգնից գուրս գալ... Խնչ անենք, որ կուապաշտական հայերը աղագէս էին կարծում. նրանք, բացի դրանից, էլի շատ բաներ էին կարծում, որոնց մենք աղմտ չենք հաւատում, որոնք կորցրել են մեր աշխում իրանց բոլոր նշանակութիւնը։ Պատմական ժամանակներից մնացած թէ գրաւոր և թէ բանաւոր աւանդութիւնները, հեքիաթները և առասպելները՝ աւելի ուսումնական, հնագիտական նշանակութիւնն ունին մեզ համար, քան թէ մանկալարժական, դաստիարակչական արժէք։ Մենք կարող ենք, աւելի մեծ հասակում, ուսումնասիրել մեր և օտար աղդերի հին պատմական անցեալը, պատմական կեանքի բոլոր գանազանակերպ երեւութները։ Ակստեղ մեղ անհրաժեշտ են աղդ հեքիաթները, առասպեկները, հեթանոսական տղէտ և բարբարոս ժամանակների ստեղծագործութիւնները։ Մենք ուսումնասիրում ենք ալդ բոլոր պատմական նիւթերը, որպէս զի կարողանանք հատկանալ հին ժամանակների մարդոց կեանքը, նրանց մտաւոր—բարուպական զարգացումը, նրանց կատարած թէ մեծ և թէ փոքր պատմական գործերն... Եւ այս բոլորը օգտակար է, խրատական է, հետաքըրքիր է մեղ՝ հասակաւորներիս համար, որովհետև մենք կարող ենք քննել, կրիտիկակի ենթարկել պատմական մարդոց ամեն մոլորութիւնները, սխալները, թերութիւնները, հիմնելով մեր գիտութեան և կեանքից առացած փորձերի վերադարձ։ Իսկ երեխան, որ ամեննեին զուրկ է լուրջ քննութեան, կրիտիկակի ընդունակութիւնից, որի հոգենեան ովենական դեռ նոր են սկսում բացւել, զարգանալ նորա մէջ, որ աւելի կարօտ է ուրիշի օգնութեանը՝ իւր կասկածները, իւր տարակուուանքները փարատելու, վճռելու համար,— նա, կարդալով հեքիաթների անբնական, հրէշաւոր երեսովները և գործերը, միանգաման կարող է շփոթել իւր մողերի և զգացմունքների մէջ, կարող է թերահաւատաւութեամբ վերաբերել դէպի ամեն ճշմարիտ և օգտակար բան, խառնելով իրականը՝ երեխականական ցնորքների հետ, ճշմարիտ,

մարդկավին գործերը՝ առասպելական հերոսների մտացածին, անձիշդ պատմութիւնների, արկածների հիմունական գործերը չեն հաւատում հեքիաթների չափաղանց ալլարանական, տարօրինակ պատմութիւններին. — այս, չեն հաւատում, ալնալէս ինչպէս որ պատմած է հեքիաթների մէջ. Բայց, մի և նորն ժամանակ, չը հաւատալով որ ազգիկը կարող է ձուկ դառնալ, մորթած կաքաւը խօսել, և չորացած խաղողի վաղը՝ խկոն կանալ, մորթած անկարելի սուսերին չը հաւատալով, երեխան դարձեալ նաչել—այս բալոր անկարելի սուսերին չը հաւատալով, երեխան դարձեալ ակամակ ենթարկում է այդ միՓօլօգիավի ազգեցութեանը, դարձեալ նորա երեխականութեան մէջ մտնում են անբնական և հիւանդուս պատկերներ, որոնց մասին չի կարող հաշիւ տալ երեխան, որոնք դարձեալ անորոշ կատկածներ են բարուցանում նորա թով և չը կազմակերպւած հոկտեմբերի աշխարհում: Եւ մանաւանդ երբ այդ հեքիաթը, իւր տարօրինակ և անբնական ձևով, չի պարունակում իւր մէջ մի մեծ և օգտակար զուտ բարուական գաղափար, երբ արտաքին հրէշաւոր անցքերի ու դէպքերի տակ չի պահւած մի բարձր իդէալական տեսնդենցիա, Պատահում են, ծշմարիտ, այնպիսի հեքիաթներ, որունզ մարդկի՝ դիւցադնական բոլոր անհասանելի պժերով ֆանտաստիկական վառ պատկերներով և շացնող, ապչեցնող հականական քաջութեամբ՝ կատարում են վասն, իդէալական գործեր, մարդասիրական, կամ հավենասիրական աղնիս և աղոթութիւններ... Այսպիսի հեքիաթավին հերոսներ են լունաց միՓօլօգիավի մէջ՝ հերկուէսը, թէպէսը, Պրօմեթէսը և ազն, Պրօմեթէսը մարդկավին ազգը փրկելու համար՝ երկնքից խլում է աստուածալին հուրը և տալիս է մարդոց... Իսկ ինքը, այդ զարհուրելի բանդոնութեան և մեծ «չարսպործութեան» համար, արժանանում է աստուածների ամենախիստ պատճին. Զեսի հրամանով՝ նրան շղթայակապ զամում են Կովկասի բարձր լեռան վերաց որսոնզ զիշակեր անդղը պէտք է բաւիտեանս տանջէ նրան՝ անդադար կոցահարելով նորս սիրտը... Սա էլ է մի հեքիաթ: Բայց աւտուզ հեքիաթի տարօրինակ ֆանտաստիկական ձեւը այն է անում, որ ներքին բարձր գաղափարը, այդ ձեփ մէջ արտաւաչտելով, ամենալորեզ և խոր տպաւորութիւն է անում մարզու վերաց և երեխան՝ այդ գաղափարի ուժութեղ տպաւորութիւն տակ՝ ամեննեին չէ էլ նկատում արտաքին ձեփ տարօրինական մինելը: Այսպիսի հեքիաթը, ուղիղ որ, կարող է կրթել երեխավին, կարող է զարթեցնել նորա մէջ բարձր, աստուածալին զգացմանքներ: Պրօմեթէսը անքան սիրում էր մարդկութիւնը, որ նա, այդ սիրուց զրոյւած՝ ապստամբեց աստուածների գէմ, խլեց երկնքից փըրկար կրակը, սւեց մարդոց որ ապրեն, տաքանան, սքանչանան այդ կրակով. իսկ ինքը գատապարուեց չաւիտենական տանջանքների... Բայց ինչ է անում պ. Ազագեանցի պատմած Նզեգնուհին: Եղիպտական մեռած հաղիների նման՝ այդ հեքիաթի երեակառական հերոսուհին աստիճանաբար

անցնում է մի քանի չնչաւոր և անշունչ մարմինների միջից, որպէս դի՛ «ձակատագրի» որոշմամբ՝ ապացուցվի թէ չարութիւնը պատժւում է, իսկ բարին չաղթանակ է տանում... Եւ նոյն խոկ ալդ հանգամանքը, որ բարին և չարը զանազանւում են միմեանցից ձակատագրի վերացական անօրինութեամբ, որ ալս տեղ մարդու անձնաւորութիւնը ոչչի է հպւասարւում՝ կեանքի չարութիւն դէմ կռւելիս, որ մարդու հոգեկան բոլոր ընդունակութիւնները և ոչմերը չեն դուրս դալիս իրանց բարձր, իդէալական վսեմութեամբ—ինչպէս ալդ մենք տեսնում ենք լուսական հէքիաթների և դիւցաբանութիւննաց մէջ,—նոյն խոկ ալդ հանդամանքը կորցնում է հէքիաթի բոչոր նշանակութիւնը և բարոյական արժեքը: Այս է պատճառը, որ «Աղեգնուհին» ոչ մի տպաւորութիւն չի անում ընթերցողի վերակ, ոչ մի բարձր դպացմունք և դրդու չի չարուցանում մարդու հոգեկան աշխարհում, ոչ մի զաղափարական տպնիւ ոգևորութիւն չի ներշնչում մեր մէջ: Այսաեղ ամեն բան կատարւում է մարդոց կեանքից և ցանկութիւններից դուրս, հակառակ նրանց բնական—հողեբանական պահանջներին, վերացական, աներևութ ձակատագրի որոշմամբ: Միան ընթերցողի երեակալութիւնը լցւում է զանալան «Հրաշների» և աչքակապութեանց պատկերներով, որոնց ալանդակ և անմիտ բավանդակութիւնը վախեցնում, զարմացնում և մոլորեցնում է նրան: Եւ ալս բոլորը առաջարկւում է երեխաւոց ընթերցանութեան համար...

Անհամեմատ աւելի սարսափեցնող ու վախեցնող տպաւորութիւն է անում պ. Աղակեանցի երկրորդ հէքիաթը՝ «Ձանգի-Ջրանդի» անունով, որ տպւեցաւ «Աղբիւրի» երկրորդ համարում: Այսաեղ արդէն մարդկապին երեակալութիւնը անցնում է իւր ամենալազն սահմաններից և մանում է դժոխալին քաջքերի, սատանաների, մարդակալերի և հրէշաւոր գազունների, չների աշխարհու ի՞նչ տեսուկ սարսափեր ասես՝ որ չի պատճում այսաեղ պ. Աղակեանցը: Ամբողջ տաշտերով խոյոր կուլ տւող ծծկեր երեխաւու սաղ-սաղ կլանող, խուրջնը մի անդամից որկորը տանող, ատամիներով հասա ծառերի բուները կարող մի հրէշ-աղջիկ (Ես ամաչում եմ ալս խօսքերից...), սատանաների հարսանիք, հսկալական ուտիւններ անող, կենդանի աղջկան մի անդամից կուլ տւող երկու զարմանալի չներ՝ Զանգի-Ջրանդի, մարդկակին լեզուով խօսող զարման, ծառերի անունները մարդուն լիչեցնող արիւնի կաթիլ... և ալճ, և ալճ: Աշմարիա, ալս բոլորը մասրերելիս, մարդ կարող է ուշաթափւել, հալիւցինացիա ստանալ... Ալճ ինչ ցնորփներ են, ալս ինչ հոգեբանական քաօս է, որ պ. Աղակեանցը, որպէս մոռաւոր սնանգ, առաջարկում է մեր խեղճ երեխաններին: Մենք բազոքում ենք ալդ հէքիաթների դէմ, բոլորում ենք չանուն ճշմարտութեան, չանուն զաստիալակչական տուրը և նորական գործի, չանուն մաստագանաս փոքրիկ երեխանների, որոնք ալպէս չարաչար մոլորում են ոլ. Աղակեանցի հէքիաթներով, Գուցէ պ. Աղակեանցը մեղ ասէ,

որ այդ հեքիաթները ինքը չի հնարում իրանից, որ մեր ժողովուրդը գեռ աչմմ էլ պատմում և ողիորւում է այդ հեքիաթներով, որ այդ հեքիաթները միտեսակ պատմական աւանդութիւններ են, որ դեռ երկար մնալու են մեր ժողովրդի ստորին շերտերում:

Այս, մենք շատ լաւ գիտենք, որ հեքիաթները պատմական աւանդութիւններ են, բայց չեն որ մեր ժողովրդի ընդհանուր տգիտութիւնը, անբարոյական և հակամարդկային կրքերը և ինստինկտները նոյնպէս պատմական աւանդութիւններ են, որոնց դէմ կուռւմ են աչմման մեր լուսաւոր ժամանակը, ուսումնարանները, մասնութեան ու նորա եռանդուն գործողները, որոնց թւում և ինքը պ. Աղակեանցը... Փոխանակ նպաստելու ժողովրդին՝ հետազնեաւ աղատւել իւր պատմական տգէտ մոլորութիւններից, փոխանակ ոչնչացնելու, փարատելու հին կռապաշտական բարբարու հասկացողութիւնները,—դժբաղգաբար, պ. Աղակեանցը, իւր հեքիաթներով, աւելի ամբացնում է ժողովրդի հաւատը դէպի գերբնական անմիտ և սարսափեցնող, վախսեցնող երևոյթները, աւելի խոր մտաւոր բարուսական անդունդի մէջէ կործանում անմեղ երեխաների քնքուշ խելքը և երեսակալութիւնը: Եւ այս բոլորը անում է պ. Աղակեանցը բոլորովին անկեղծօրէն, միանգաման համուկած, որ «Աղբիւրու»-ի մէջ ասպւած հեքիաթները մնեն հետաքրքրութեամբ կարդացուում են մելանում: Այս, կարդացուում են... Բայց ինչ հետեւանքի են համնում այդ կարդացողները, ինչ մտաւոր բարուսական օգուտ են ստանում այդ հեքիաթների ընթերցումից, Նրեխաներին կրթելու, դասախիարակելու և աղնւացնելու համար՝ պէտք է տալ նրանց հասկանալի, իրական, ճշմարխու կենսական պատմութիւններ ու դէպքեր, և ոչ թէ երեսակական թագաւորների հիւանդուս, մնասակար, անբարուսականցնող պատմութիւններ, որոնց մէջ չը կառ ոչ մի բարձր և աղնիւ զգացմունք, ոչ մի խելացի, մարդկային զաղափար՝ բացի սարսափից, դողից և վախենալուց: Նրեխաներին ծանօթացրէք ներկալ և մնցեալ մարդոց «կեանքի» հետ, նրանց իսկական գործերի հետ, նրանց բարուսական ընդհանուր մարդկային արժանաւորութեանց հետ: Գեղեցիկ պատմութիւններ և դէպքեր նկարագրելով՝ ցուց տուք երեխաներին բնութիւն և կեանքի ճշմարտութիւնը, ողեորեցէք նորա սիրտը բուն մարդկային աղնիւ ու վսեմ զործերով, զգացմունքներով: Եւ այս ամենը հիանալի կերպով աջողւում է պ. Աղակեանցին. նա ինքն էլ այդ գիտէ: Ունենալ այդքան սէր դէպի երեխաները, ունենալ աջդպիսի դիւթական լնուու, զրաւիչ և կախարդող զիպասանական տաղանդ, և չը ծառապել՝ ամեն մի բավակիսում՝ իւր ժամանակի էական շահներին,—այդ ներելի չէ պ. Աղակեանցին: «Աղբիւրու»-ը պահում է պ. Աղակեանցով և թնդ պահել աղատւեանաւեն. իսկ պ. Աղակեանցը թող տապ իւր «Աղբիւրու»-ին կենսական, ճշմարիտ ողի, թող ներշնչէ նորա մէջ թարմ, եռացող և կենդանի հոսանքներ...

ԳՐԱԽՈՍՈՒԹԻՒՆ

ԵԽԱԿԵՐ, ՖՐԻԴՐԻԽ, թարգմանութեամբ ՓԻԼԻՊՈՌ ՎԱՐԴԱՆԵԱՆՅԻ. — «ԱԽԱԶԱԿՆԵՐ» ողբերգութիւն: Թիֆլիս, տպարան Մարտիրոսեանցի, 1890 թ., փոքր քառածալ, 194 էրես, տառ. № 12, գինն է 50 կ.:

Այս արդէն երրորդ անգամն է, որ պ. Փիլապոս Վարդանեանցը մեղ առիթ է տալիս նորա թարգմանութիւններով զբաղելու: Առաջին առիթը տուեց Սմալլի «Բնաւորութեան» թարգմանութիւնը. և մենք գտանք, որ, չը նախած հեղինակի մեծ համբաւին և գրքի կլասիկականութեանը, այնու ամենայնիւ զիրքը չի թողնում մի ամփոփ տպաւորութիւն և չի կարող ընթերցողի ողուն որոշ ուղղութիւն տալ:

Պ. Վարդանեանցը մի երկրորդ առիթ տուեց Ամիչիսի «Սիրո» գրքի թարգմանութիւնով: Բայց աչտ անսակաւ գրքերիցն է, որոնց մասին «Մուրձ»-ը ժամանակ չ'ունեցաւ գրախօսութիւն տալու իւր ժամանակին: Օգտում ենք զէպքից գէթ ակտուղ լայտնելու, որ աչտ զիրքը վերին աստիճանի բարուակրթիչ զիրք է և որ նա, չը նախած ընդհանրապէս տարածւած կարծիքին, ամբողջապէս չի նշանակւած երեխաների ընթերցանութեան համար, այլ նա աւելի մի

զիրք է ծնողների և դաստիարակիչների համար: Այսպէս է գոնէ իմ կարծիքը:

Պ. Վարդանեանցի թարգմանութիւններով «Մուրձ»-ը զբաղեց, վերջապէս, անցեալ շրջ համարում, նորա «Արևելեան վիստաշխարհ» փոքրիկ գրքովիլ առիթով: Եթէ ընթերցողը վիշում է, մենք գտանք, որ աչտ թարգմանութեան գերմանական բնագիրը բաւականին լաջող փոխադրութիւն է Ֆիրդուսիի «Շահ-Նամէ» ուտանաւոր գրած մեծ պօէմի մի էպիգօզի և որ հայերէն թարգմանութեան լեզուն թէն բարձր, բայց լաջող ոճ ունի: Բայց և աչտ առիթով մենք նկատեցինք պ. Վարդանեանցի հակումը՝ խօսքեր և դարձւածներ բանեցնել, որոնք սիրուն կը լինէին, եթէ միայն գործածական լինէին, բայց որոնք ոչնչով աւելի լաւ չեն, քան մեր ալժմեան խօսակցական և գրական լեզուի մէջ դործածւող խօսքերը:

Պ. Վարդանեանցի աչտ հակումը, սական, նշանաւոր պակասութիւն

չի երևում արձակ և մանաւանդ աշղատ փոխաղբութիւնների մէջ: Բայց նա շատ և շատ վտանգաւոր է, երբ խօսքը ոչ թէ ազատ փոխաղբութիւնների մասին է, այլ մի կլասիկական գրւածքի թարգմանութեան մասին: Պէտք է ասած, որ պ. Վարդաննեանցը, բանաստեղծական զրականութիւնից, թարգմանել է միմիանն փոխաղբութիւններ: Նա թարգմանել է Խլականը և Ողիսէականը ոչ թէ Հոմերոսի, այլ գերմանացի Շմիգտի: Նա թարգմանել է Խուսաէմ և Զռնրաբը ոչ թէ Ֆիրդասիւթի, այլ մի ինչ որ անդամա գերմանական հեղինակի: Մեր աէժմնան զրական պահաճի տեսակէտից, ըստ իս, պ. Վարդաննեանցը շատ լաւ է արել ազգպէս վարւելով. բայց ալս բապէին իմ ասածը ոս է, որ նա մինչ աչմմ փորձ չէր արել իւր թարգմանչական առաջանդի չափը ցոյց տալ վսիմ գրւածքների ճշգրիտ թարգմանութիւնով: Մինչ աչմմ պ. Վարդաննեանցը չէր երեացնել հասարակութեան առջև իւր թարգման բարձր գեղարվեստական գրւածքների, անպէս, ինչպէս սոցա սաեղծել են մեծ բանաստեղծները: Եւ այդ փորձը նա առաջին անգամ անում է աչմմ, լուս ընծակելով Շիլերի «Աւազակներ» ողբերգութեան թարգմանութիւնը:

Մեր առաջին խօսքը այդ մասին՝ չնորհաւորելն է թարգմանչին նորա այդ առաջին քարվի համար: Ինչ վերաբերումէ նախապատրաստութեան պ. Վարդաննեանցը լիսկասար իրաւունքով կարող է մերձենալ ուղղակի կլասիկներին: Նա աճնքան զգուշ է եղել և թարգմանչական

պատիւ հասկացող, որ կլասիկներին նա դիմել է երկար տարիներ վարժեցնելով իւր գրիչը աւելի քիչ պատասխանատու գործքերի վերաբէ: Այդպէս է պահանջում մեթօդիկը: Եւ ահա այդ է, որ գավելին է: Դորանով բաւական է առած, որ Շիլերի «Աւազակների» թարգմանութեան ընդունելի լինելու համար թարգմանչի անունը բաւականին գրաւական է: Բայց նա ընդունելի է միմրան առ հասարա ակ, որովհետեւ այդ թարգմանութիւնը, որպէս շուտով պիտք է անսնենք, խոչոր թերութիւններ ունի: Շիլերի լեզուն ճոխ է, բայց զօրեղ և վերին աստիճանի դրամական: «Աւազակները» լիքն է նաև ժողովրդական խօսքերով ու գարձւածներով: Շիլերը ազդ գրւածքում գուրս է բերում անասուն-մարգուն և դնում նորա դիմաց մարդկան բարձր, արդարատենչ, ամեն արգելք խորտակող, աղասութեան ձգուղ ողին: Սկզբից մինչև վերջ այդ գրւածքը լիքն է ողութակմատեսակ լուզմունքներով: որ Շիլերը արտադարտում է միմիանն ծնւած դրամատուրգներին լատուկ ոյժով և վարդեսութեամբ, չը նայած որ գրւածքը բանաստեղծի առաջին դրամական գրւածքն է, սկսւած հեղինակի 18 տարեկան հասակում և վերջացրած հաղիւ իւր չափահատութեանը հասած ժամանակ: Ճիշդ է, աչմմ մեղ ծանօթ «Աւազակները» դեռ այդ ժամանակաւ գրւածք չէ, սա փափութիւնների ենթարկեց և մշակեց թէ բնմական կողմից և թէ լեզուի կողմից և աւելի ել կատարեցագործեց ու առ միշտ դրականու-

թեան աճման սեպհականութիւն զարձաւ: «Աւաղակներով վերջանում է գերմանական գրականութեան, այսպէս կոչւած, «հանձարի շրջանը» (Gegenperiode) 18-րդ դարում, ամիտովելով իւր մէջ, թէ բովանդակութիւնով և թէ ձեռվակ, հակական գծերով արտաչափուած ժամանակի եռումը և համաշխարհակին պատմութեան մօտադրական քարհուցելի շարժումները, որոնք Արեմտեան Եւրոպակում, մասնաւորապէս Ֆրանսիակում, կատարւեցին 18-րդ դարու վերջերքում: «Աւաղակների» առարկան է ընդհարումը, կօնֆլիկտը օրէնքի և ազատութեան մէջ. իսկ Շիլլերի կեանքի համար նա մասնաւորապէս նշանակութիւն ունի նրանով, որ նա, զինուրական ակադեմիական բանարկուած ժամանակ, նույնպէս ձգուում էր զէպի ազատութիւն, որպէս և իւր ժամանակի ողին, որը ձգուում էր ազատուել արդէն հնացած միջնադարեան օրէնքների կապանքներից: Աւաղակ դառած Կարլին բանաստեղծը լատկացրել է իւր սեպհական իդէալուկան գծերը. Կարլը դոդաւազակ չէ, աչ զուս քաղաքական աւաղակ է, որը ուզում է վրէժինութիր լինել իւր ժամանակւայ անարդարների և կեղծաւորների դէմ: Եւ նորն իսկ ինքը՝ Կարլը անձնատուր է լինում աւաղակութեան լուսատութիւնից կորցնելով իւր հօր ուրը, ան հօր, որ խաբուում է Կարլի եղբակը նենդաւոր Ֆրանցից, Բայց վերջը, երբ իւր եղբօր նենդաւութեան մասին տեղիկանում է, նա ալ ևս չի շարունակում իւր աւաղակութիւնը, և զղջալու հա-

մար նա արհամարհում է անձնասպանութիւնը և գերադասում է իրան լանձնել արդարադասութեան ձեռքը, մտածելով, որ իւր նման երկուուը բարուական աշխարհքը հիմն ի վեր կը տապալեն, եթէ մինչ վերջ շարունակեն իրանց աւաղակալին աղատութիւնը: Այսպիսով օրէնքը չը ճանաչող ազատութիւնը ինքն ևս խորտակուում է:

Ահա ազգպիսի մեծ խնդիրներ է առաջադրել Շիլլերը «Աւաղակների» մէջ և աշխատել իւր դարմանալի բազմականի բնաւորութիւններ կրող հերոսների բերանը գնել մի լողու, որը ստորինից և գարշից ու անասնակինից վերանում է գէպի բարձրագունը՝ ալդ երկու ծակրերի մէջ եղած բոլոր աստիճանաւորութիւններով: Եւ ի հարկէ, այս տեղ, քանի որ Շիլլերի հանձարի հետ գործ ունինք, վերին աստիճանի հետաքրքրական է նորա խօսքերը կատարեալ հաւասարմութեամբ վերարտադրել և ոչ մի տեղ չը հանդիսանալ նորա խօսքերի աղատ թարգմանը, բացի երբ հարկաւոր է մի զարձւած հաւացնել: Դրանով մենք ակսուղ կրկնում ենք մեր արդէն մի անզամ ասածը, եթէ վիշում է ընթերցողը՝ Շեքսպիրի «Համլէտի» Սենեքերիմ Արծրունու թարգմանութեան առիթում՝ «Մուրճ»ի 1889թ.:

Արդ, ալ, Փիլ. Վարդանեանցը իւր թարգմանութեան մէջ շեղում է Շիլլերի լեզուից. նա բաւականաչափ չի գնահատում բնադրին հաւատարիմ մնալու արժանաւորութիւնը. բացի այն, որ թարգմանիչը այսուղ շնչում է իւր ստորութիւնը՝ պարզ

ու հասարակ խօսքերի տեղ խրթին
և գրաբար խօսքեր գործածել, նա
շեղւում էլ է բնագրից՝ աղասի թարդ-

մանութիւնը դնելով բնագրի խօս-
քերի տեղ:

Բայց ակտուալ փաստերը թող
իրանք խօսեն:

Շիլլերը ասում է.

Գոբծ. I. Գեղվ. I.

Ծ. Մ օ օ ր 0'5, իմ լուսերը. իմ ոսկի
երազները:

Ֆրանց... Տեսնամ էք այժմ,
հայր.—կրակոտ ողին զարդացաւ,
ծաւալ ստացաւ, սքանչելի պտուղ-
ներ բերաւ:

...Տեսէք ակս պարզաբուծու-
թիւնը, ինչպէս նա զեղեցիկ կերպով
լրբութեան է փոխւել:

Պ. Վ. արդանեան ցը թարգմա-
նում է.

Եղնուկ լուսերիս, ոսկեհիւս երազ-
ներիս:

Արդ զմազմացէք, հայրիկ:—Բոր-
բոքուն ողին զարդացաւ, զօրացաւ,
սքանչելի պտուղներ բերաւ:

Տեսէք, թէ ինչպէս այդ պարզ
սիրուն առօք փառօք լրբութեան է
տեղի տալիս:

Մի քիչ լետո՞ւ անշահակի ձեռնարկող
գլուխ է նշանակում, թարգմանում է՝ գիմագրաւ գլուխ. Շիլլերը
ասում է՝ և երբ այդ հիմնավի սաղմերը կը մեծանան մինչ հասունութիւն,
իսկ պ. Վարդանեանցը թարգմանում է՝ երբ այդ սիրուն ծիլերը ժամանակով
խոպան լացւին:

Ծ. Մ օ օ ր: Ներիր ինձ, որդիս, մի
րարկանար մի հօր վերաց, որը իւր կանար լուսախաբւած հօրդ վերաց
դիտաւութիւնների մէջ իրան խաբ-
ւած է տեսնում:

Մեղ կ'ասեն, թէ մեր թարգմանչի ասածը աւելի կարճ է և սիրուն:
իսկ մենք կը պատասխանենք, որ Շիլլերի ասածը աւելի ոչ ունի:

....Աստուած, որը կարլոսի ձեռ-
քով ինձ արտասուք է ուղարկում, ինձ արտասուք առաքեց, քո ձեռ-
քեղնով, Ֆրանց, պէտք է այդ արտա-
սուքը սրբէ իմ աչքերից:

Ֆրանց: Ակն, հայրիկ, ձեր աչքե-
րից նա այդ արտասուքը կը սրբէ...

Զեր կեանքը այն պատգամախօսն
է, որին հս ամենից առաջ խորհուր-
դի եմ կանչում, երբ մի անելիք
ունի...

Ակն, հայրիկ, ես պիտի սրբեմ այդ
արտասուքը ձեր աչքերից:

Զեր կեանքն է ինձ համար այն
սուրբ պատգամը, որին միշտ լոր-
մարեցնում եմ իմ գործերս...

Յիւլլերը ասում է.

Ոչ մի պարտաւորութիւն ակնքան սուրբ չէ ինձ համար, որը ևս պատրաստ չը լինեմ կոտրելու, երբ խօսքը ձեր թանկաղին կեանքի մասին է:

Ֆրանց: Դէ հիմա առացէք ինձ, եթէ դուք այդ որդուն ձերը չ'անուանէք, գուք բազգաւոր մարդ կը լինէք,

Ս. Մօօր: Լոիր, լոիր. նրբ տատմալը նորան մօսա բերաւ, ևս նորան բարձրացրի դէպի երկինք և գոչեցի՝ բազգաւոր մարդ չեմ ևս արդեօք:

Ֆրանց: Այդ ասացիք դուք: Դէ, դուք գտաք արդեօք այդ երջանկութիւնը: Դուք նախանձում էք ձեր ամենալավուն գիւղացուն, որ նա սորա հայրը չէ: — Դուք վիշտ կ'ունենաք, քանի որ դուք այդ որդին կ'անենաք: Այդ վիշտը կարլոսի հետ կ'աճի: Այդ վիշտը ձեր կեանքը կը թաղէ:

Ֆրանց: Հենց որ դուք այլ ևս նորան չը սիրեցիք, այդ հրէշը այլ ևս ձեր որդին չէ, թէկուզ նա ձեր մսից կարած լինի. (Liebt ihr ihn nicht mehr, so ist diese Abart auch euer Sohn nicht mehr, und wär' er aus eurem Fleische geschnitten).

Մ. Մօօր: Անքնքուզ զաւակ, ոհ, բաց և բաց և աճապէս զաւակս է, զաւակս (Unzärtliches Kind! ach և ալն):

Ֆրանց: Մի ամենասիրելի, հիանալի զաւակ, որի մշտական մտածմունքն է՝ ոչ մի հացը չ'ունենալ: (Ein allerliebstes, köstliches Kind, dessen ewiges Studium ist, keinen Vater zu haben).

Պ. Վարդանեանց անցը թարգմանում է.

Ոչ մի պարտաւորութիւն ակնքան թանկ չէ ինձ համար, որ չ'ուրանամ, եթէ միան ձեր թանկաղին կեանքի օգուան այդ պահանջէ:

Դէ ուրեմն ասացէք... արդեօք երջանիկ չէքիք լինիլ, եթէ հարկ չ'ունենաւիք ձեր զաւակն անուանելու այդ որդուն:

Լոիր, լոիր: Երբ զավեակը նրան մօսա բերաւ, ևս զէպի երկինք վերցրի նրան և գոչեցի—ոոլ երջանկութիւն....

Այգպէս է, բաց երջանիկի դարձաքեօք: Դուք ձեր ամենալավին ճորտին անդամ նախանձում էք, որ դա նրան նման որդու հակը չէ... դուք երբէք վշտից չէք ազատւիլ, քանի որ ձերը մնաւ այդ որդին: Եւ կարլոսի աճելով այդ վիշտն էլ պիտի զօրանաւ և խորտակէ ձեր կեանքը:

Եթէ այլ ևս չէք սիրում նորան, ասել է թէ այդ պոռնը կորդին այլ ևս ձեր զաւակը չէ, թէն ձեր մսից կաղմած լինէր:

Ա. Նդդուշ զաւակ: Ոհ, բաց և աճապէս զաւակս է, զաւակս:

Ո'հ սիրասուն, ոհ քնքուշ զաւակ, որի մշտնջնաւոր փափադն է՝ ոչ մի հակը չ'ունենալ:

Շիլլերը ասում է.

Պ. Վարդանեանցը թարգմանում է.

Ծ. Մօօր. Արդար է, շատ արդար! Արդար ես, արդար: Տուրու բանին է, իմը բոլոր մեզը (Gerecht! յանքը իմս է, իմս: sehr gerecht!—Mein ist alle Schuld).»

Ծ. Մօօր... Բայց անս, իմ որդուս բուսահատութեան չը հասցնես:

Բայց տես, լուսահատութիւն չը պատճառես իմ որդուն:

Ծ. Մօօր: Ես ասում եմ քեզ՝ իմ որդուն լուսահատութեան չը հասցնես!

...Դարձեալ կ'ասեմ— չը մնի ի՞է որդուն լուսահատութեան հասցնես:

Ակներն է, որ, ինչպէս և բնագրամն է, Ծ. Խօօր'ը երկու անգամ մինենուն խօսքերն է կրկնում, մինչդեռ որ Վարդանեանցը մի և նույն խօսքերը մի տեղ մի տեսակ է թարգմանում, միւս տեղ՝ ուրիշ տեսակ, որով և ոճի ուժը կորցնում է:

Ֆրանց: ...Ձեր որդուն դուք չը պիտի նզումէք: Դուք ինչն էք ձեր որդի անուանում—որին դուք կեանք էք տւել, թէն նա ամեն տեսակ ջանք է զործ գնում ձերը կրծառելու:

...Բնաւ հարկ չը կաչ նզումէլու ձեր որդուն: Որին էք որդի անուանում... Նրան՝ ում կեանք էք պարգել, թէն նա ամեն միջոց որոնէր ձերինի թելերը կարելու:

(Was heisst ihr euren Sohn?—
dem ihr das Leben gegeben habt,
wenn er sich auch alle ersinnliche
Mühe gibt, das ihrige zu verkürzen?).

Զարդարութ բենիւ. Երբորութ սրբութ:

Շիլլերը ասում է.

Ծ. Մօօր: Խարւած, խարւած! Այժմ իմ հոգու վերայ փայլակի նման մի բան է անցնում: Խարերայական հունարներ (Spitzbübische Künste!): Երկինք և զժոլսք! Ոչ դու, հայր! Խարերայական հունարներ! Մարդասպան, աւազակ՝ խարերայական հունարների պատճառով! Խորանով սեայրած! Ակնծում է, բանում իմ նամակին նորա սիրաը լիքը սիրով—օհ, իսկ նորա մի հրեշ՝ մի լիմարի ձեռքով— բական սիրով սիրապատար... Ոհ, իսկ նորա հայրական սիրտը լիքը ինչ ցածութիւն: Հերիք էր, որ նորա

Պ. Վարդանեանցը թարգմանում է.

Խարւած եմ, խարւած: Այժմ հոգուս մէջ փայլակի պէս լուս իջաւ: Գիւալին նենդութիւն: Նրկինք և զժոլսք: Դու չես, հայրիկ... Դիւալին նենդութիւն... Վատթար խարելութիւն և ես սովանիչ, աւազակ: Սեացնում է ինձ նրա առջև, նամակներս բռնում է, կեղծում է... Մինչդեռ նրա սիրտը լիք էր սիրով... Ոհ, իմ ները—նորա սիրաը լիքը սիրով—օհ, հրէշալին վամարութեանս... Նրա հայր մի հրեշ՝ մի լիմարի ձեռքով— բական սիրով սիրապատար... Ոհ, իսկ նորա հայրական սիրտը լիքը ինչ ցածութիւն: Հերիք էր, որ նորա

(Շ ի ւ ւ հ ր)

(Պ. Վ. ա ր դ ա ն ե ա ն ց)

սիրով—օհ! խարդախոռվիւն, խարդախոռվիւն (oh! Schelmorei, Schelmorei!). Հերիք կը լինէր մի անգամ ծունր չոքէի—մի կաթիւ արտասուք թափէի—օհ, որքան ապուշ, ապուշ, ապուշ գիմարն եմ եմ! (Oh! ich blöder, blöder, blöder Thor!). Ես կարող էի երջանիկ լինել—օհ, խարդախոռվիւն (oh! Büberek, Büberek!). Իմ կեանքի բաղզը խարդախոռվիւն (oh! Das Glück meines Lebens bübisch, bübisch hinwegbetrogen).

Մարդասպան, աւաղակ՝ խարեբապական հունարների պատճառով!—Նա չի էլ բարկանում եղել: Նորա սըրտում նղովքի զաղափարն անգամ չի եղել—օհ, չարաղնրծ, անըմբոնելլի, գետնաքարչ, զղելի չարաղործ: (Oh! Bösewicht! unbegreiflicher, schleicher, abscheulicher Bösewicht).

Այս օրինակներով մենք կարծում ենք, թէ բաւականաչափ ապացուցեցինք, որ Փիլիպոս Վարդանեանցը շատ թէ քիչ ազատ կերպով է վարում «Աւաղակների» բնադրի հետ: Մի բան, որ մենք պակասութիւն ենք համարում, քանի որ գրեթէ մեր բոլոր առաջ բերած օրինակներում՝ ուղղակի թարգմանութիւնը նոնքան հայերէն է, որքան և ու. Վարդանեանցը լեզուն, այն զանազանութեամբ միան, որ առաջինի միջոցով կարելի է Ծիլլերի հետ աւելի լաւ ծանօթանալ, քան այ. Վարդանեանցը թարգմանութիւնով:

Եսկ ինչ վերաբերում է մեր այն նկատողութեան, թէ ու. Վարդա-

առջն ծունր չոքէի, մի կաթիւ արտասուք հերիք էր... Եղուկ ինձ, կոյք, կոյք, կոյք վիմարիս: Ես կարող էի երջանիկ լինել... Ախ, ինչ վասթար պատրանք: Կեանքիս բաղլը չարաչար, չարաչար գողցւած: Մարդասպան, աւաղակ... և միան դժոխագին խարեբապութեամ պատճառով: Եսկ նա մինչեւ անգամ չեր բարկացել, անէծքի նշող անգամ չեր ունեցել մտքի մէջ... Ո՞վ ոճրագործ, չարամիտ, գետնաքարչ և անդամ ոճրաղործ:

Նեսնցը բոլորովին ի զուր կերպով գրաբար խօսքեր և դարձւածներ է գործածում, թող զրան ապացուց ծառակէ հնց ալս մի կտորը, 2-րդ արարւածից, տեսիլ Յ-րոդ:

Մ օ օ ր: Մինչեւ այդտեղ շատ ճարտար բարբառեցար: Սական մատչինք բուն խնդրին, ի՞նչ է կամենում գերարգոյ մաղիստրատն ազդանել ինձ ձեր բնելով:

Մի երրորդ տեսակ նկատողութիւն կարելի էր անել այն բառերի նկատմամբ, որոնք հակընում չ'ունին այն չառուկ նշանակութիւնը, ինչ նոքա ունին գերմաներէնում: Յաշտնի է, որ մեր գործ ածական լեզուն դեռ հեռու է այն ճոխու-

թիւնից, որ ունին զբականապէս ամելի լառաջացած աղքերը։ Հէնց օրինակ՝ Schwärmer խօսքը, որին նոյնանշան կարևուի է մեր լեզում գտնել շատ խօսքիր, առանց որ սոցանից մէկը կամ միւսը կարողանալ գերմաներէն խօսքի կատարեալ համապատասխանը համարւել։ Վերջին բառարաններից մէկը (Կովսւեան) թարգմանում է այդ խօսքը ալսպէս՝ լեզուղուկ, սիրահար. զօսասէր, զեղյս, բանդագուշող, ցնորող, դանդաշող. մոլի, հարեւալ (ի...), մոլեւանդ։

Պ. Վարդանեանցը թարգմանում է (Յորդ արարւած, տեսիլ առաջն) Ֆրանցի խօսքերը՝ դարձրած Ամալիալին՝ Schon wieder hier, eigensinnige Schwärmerin? ալսպէս. «Դարձնալ ալստեղ ես, կամակիոր մոլեսք ան չու Բաց սա մի նորանար խօսք է, որը գժւար թէ մէկը. կարողանար գերմաներէն խօսքի մոլով հասկանալ։ Նման շատ օրինակներ կարող ենք բերել ներկայ զրիփից։

Մի նկատողութիւն ես. Հերքուլէսի բնած գործիքը պլ. Վարդանեանցը մկունդ է անուանում. Բաց մկունդի նշանակութիւնը հավերէնում բաւականին ոլոց չէ, միաւն թէ պէտք է ենթագրել, որ մկունդ հին հաւերէնում նշանակում է եղել կարճ նիզակ, մի գործիք, որ Հերքուլէսը չէր բանեցնում։ Ոչ թէ մկունդ, ալլա խտն է եղել առասպելական Հերքուլէսի գործածական գործիքը, իսկ լախտը մի և նոյն է թէ մահակ։

Այս բոլոր նկատողութիւններից լեռ, պարտք ենք համարում լութեան չը տալ այն հանդամանքը, որ Շիլլերի «Աւազակները» ամենաղժուար

թարգմանելու գրւածքներիցն է և պահանջում է թէ զերմաներէնի և թէ հավերէն լեզուի կասարեալ գիտութիւն։ Եւ ապ. Վարդանեանցը գործ է զրել այս զէպքում իւր բոլոր հմտութիւնը. այդ երեսում է զրեթէ ամեն մի առղից։

Ամփոփենք, ուղեմն, մեր բոլոր նկատողութիւնները՝ «Աւազակների» թարգմանութեան մասին։ — Թարգմանութիւնը, ընդհանրապէս, դիւրըմբունելի է և արւած է թէ գերմաներէնի և թէ հավերէնի հմտութիւնով։ Բայց այդ թարգմանութիւնը բաւականաչափ հաւաքառչօք թարգմանութիւն չէ և այդ պատճառով չի հասնում բնագրի լեզուի ճոխութեան և ոչի աստիճանին։ Թարգմանութեան դիւրըմբունելիութիւնը գնաւած է հարազատութեան հաշւի իրը գրական վաստակ, նա գնահատելի նպաստ է ընթացիկ գրականութեան, բայց նա մի գոնչ չէ հայկական գրականութեան համար առհասպակ։

Իբր չհերցանել գիրք՝ խորհուրդ ենք տալիս ամենքին ձեւք բերել նորան և կարդալ, անպատճառ կարդալ։ Սակաւ գրքեր կարող են այնպէս գրավէ կերպով խօսել մարգուս աղնւագոյն զգացումներից, ոգեսրել զէպի վեհը ու արդարը, արթնացնել զղւանք զէպի գարշը, ցածն ու անպիտանը, որքան նիլլերի «Աւազակները»։ Զը նախած որ այն հանգամանքները, որոնք առեղծել են այդ զրաման իւր քարաքտէրներով, այժմ միայն պատմական նշանակութիւն տնին, բայց և անպէս զերմանական երխուասարցութեան սէրը

և հիացմունքը պատկանել են Շիլ-թեան լեզուն, իսկ ամբողջի վերաէլերի «Աւազակներին», այն երիտասարդութեան, որը չափազանցութիւնների մէջ տեսնում է իւր ուժը, թիւնների մէջ տեսնում է իւր ուժը, մեծախօս ֆրազների մէջ՝ ոգեսրու-

թեան լեզուն, իշխող չունչը՝ իւր սեպհական էւստիւմութեան, որը չափազանցութիւնների մէջ տեսնում է իւր ուժը,

Ա. Ա.

ՓԱՓԱԶԵԱՆՅ, Վ. — «Ա.Ա.Օ., թիւրքա-հայերի կեանքից. Թիֆլիս. տպարան «Արօր» Տ. Նազարեանցի: 1890 թ., գորքը քառածալ, 28 երես. գինն է 5 կոպէկ:

Ժողովրդական ընթերցանութեան համար մի շարք հրատարակելիք է-ժամագին գրքերից այս մաքուր հրատարակւած դրագուկը առաջինն է: «Ա.Ա.Լոն» պարզ և հետաքրքրական լեզուով պատմւած մի փոքրիկ պատկեր է թիւրքահայերի կեանքից, Գործողութիւնը կատարում է Վաճ քաղաքում: Թէե բոլոր գործող անձինք՝ հարկանան Սրդոն, Կարապետ աղան և Աւտօն (Լալո) հայեր են, սական աղդ տեսակ բնաւորութիւնների դուրսթիւնը սերտ կապւած է Տաճկաստանում իշխող կարգ ու կանոնների հետ: Ամեն երկրում կան վատ հարկանաններ, անգութ վաշխառուներ և անպաշտպան, հլու հարստահարւածներ, բայց Սրդոներ, Կարապետ աղաններ և Լալոններ կարող են գոյու-

թիւն ունենալ միմիան Տաճկաստանում:

Ժողովրդի ընթերցանութեան համար «Ա.Ա.Լոն» ցանկալի գիրք է, միան պէտք էր, մեր կարծիքով, աւելի չեշտել նորա վերաց որ թիւրքա-հայերի կեանքի աղդ երեսութեանը կը լինին, մինչև որ զուտութիւն ունենան նոցա ստեղծող պալմանները: Փարուներով ոչ Սրդոններ և Կարապետ աղաններ կ'ուղղւեն, ոչ էլ Աւտօններ պատկանեն, մինչև որ Տաճկաստանում կը տեսն ներկայ կարգ ու կանոնները՝ վերջ էլ չի լինի Սրդոնների և Կարապետների պէս հարստահարիչների: Նեխուած ճահիճներում վարդեր չեն բռնում:

Լ. Ա.

ՔԱԼԱՆԹԱՐ, ԱՆՈՒՇԱԽԱՆ. — «ՖԻԼՈԿՍԵՐԱ ԵՒ ՆՈՐԱ ՏԱՐԱԾՄԱՆ ԱՌԱՋՆ ԱՌՆԵԼՈՒ ՄԻՋՈՑԻ»: Արտատպած «Մշակ» լրագրից: Թիֆլիս, տպարան Կովկասի կառավարչապետի կանցելիարի: Փոքր քառածալ, 15 երես, տառ. № 10, գինն է 2 կոպէկ: ¹⁾

Աւս փոքրիկ բրոշիւրը, տպւած 1.200 օրինակով, դրած է չատկապէս հայերէն լեզուով, Փիլոկառա-

լին կօմիտեալ առաջարկութեամբ, որը աշխատում է տեղական աղքաբնակութեան մէջ ճիշդ գաղափար.

¹⁾ Գինը չի յայտարարւած, բայց յայտնւած է «Մուլճ»-ի խմբագրութեան:

Ներ տարածել ֆիլոկսերայի մասին, Եթէ Փիլոկսերայի դէմը չ'առնւի, կարճ միջոցում մի երկրի գրեթէ ամբողջ աղեղործութիւնը, վաղապահութիւնը կը ջնջէի: Բրօշիւրի բառուկ նպատակն է տարածել ժողովրդի մէջ կողկասեան Գիւղատնական Ընկերութեան հետեւալ առաջարկութիւնները՝ 1—Եւրոպայից, Ղրիմից և ազ վարակւած տեղերից, ինչպիսին են Սուվասումի բաժինը և Քութայսի նահանգը, ազ ևս չը բերել մեր կողմերը վաղեր, պատաստներ և զանազան արմտիք: (Մեր կողմերը ասելով, հեղինակը ուզում է ասել՝ Շամախու, Գանձակի, Գեղրենդի, Երիանի և Նախիջևանի կողմերը, ուր ֆիլոկսերա զեռ ևս չի երևացել): 2—Խիստ հետեւ և հսկել սր գաղտնի կերպով չ'անցկացնեն վաղեր և առհասարակ բոլոսեր: 3—Առանձին հոգատարութիւն դարձնել այն աղի-

ների վերայ, որանու Եւրոպակից և ազ վարակւած տեղերից վաղեր կամ բոլոսեր են ստացւած, իսկ այդ տեսակի աղիների մասին Գիւղատնական Ընկերութիւնը բառում է, որ հաղորդին թէ՝ Ի՞ր և ո՞ր տեղերից ի՞նչ տեսակ վաղեր են բերւած և թէ արտեօք այդ աղիներում փափոխութիւն չէ՝ նկատում, կամ եթէ ֆիլոկսերայի վարակման արտաքին նշանները (օրինակ, տերեների գեղնելը) նկատեն՝ խկոյն իմաց տան տեղական գաւառապետին և Գիւղատնական Ընկերութեան, որ դորա դէմ խկոյն միջոցներ ձեռք տոնեն: Եթէ հիւանդութիւնը դեռ նոր է սկսւած և փոքր արածութեան վերապէ է, առաջն առնելը անքան զժւար չէ և տէրութիւնը լանձն է առնում”:

Ա. Ա.

ՆՈՐ ՍՏԱՑԻԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

1) Հայիւ Բագուաէ Հայոց ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ վասն 1889 ամին Բագու, տպ. Ս. Տէր-Յովհաննիսանի, 1890 թ.:

2) Положение о состоящ. подъ покров. Его Имп. Выс. Гос. Наслѣдника Цесаревича, Казанской Научно-Промышленной выставкѣ, 1890 г. произведеній Волжско-Камского края и Востока Россіи, утвержденное г. Министромъ Финансовъ 30-го мая 1889 г. Казань, тип. А. Роданова, 1890 г.

3) Программа историко-этногр. отдѣла Казанской Научно-Промышленной выставки, 1889 г.

4) Программа фабрично-заводского отдѣла Казанской Научно-Промышленной выставки 1880 г. Казань, тип. Казанск. Биржев. Листка, 1890 г.

5) Программа кустарного отдѣла Казанской Научно-Промышленной выставки 1890 г. Казань, 1889 г., типогр. Казанск. Бирж. Листка.

6) Երկամնաց տեղեկագիր Խոմիրի Ազգավան ջնուսական խորհրդի 1887—1889 թ., Խոմիր, 1890 թ., տպարան Մամուրեանի:

7) Բազուաց Հայոց Մարդասիրական Ընկերութեան տարեկան հաշիւը 1889 թ.: Բազու 1890 թ.:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՄՍԻԱՅ ՔՐՕՆԻԿ

Գրիգոր Արծրունու քսանուհինգ ամեակը:—Պատկերազարդ թերթեր:
Ներսիս. Դպրոցի ակտը:—Հայոց ընկերութիւնների ընդհանուր
ժողովները:

«Մուրճ»-ի գոլութեան օրից սկսած անցել է ընդամենը 13 ամիս,
բայց նա ալդ կարձ միջոցում զբաղւեց մի շարք կարևոր անձերով, որոնք
իրանց ժամանակւակ կեանքի և եղելութիւնների վերաէ զրոշմել են մի
որոշ կիրք և կամ ազգել են կեանքի և հասարակաց կարծիքի վերաց:
Անձնաւորութիւնների ազդ երկար շարքում կալին նաև անպիսիներ, որոն-
ցով զբաղւեց ոչ միայն «Մուրճ»-ը, ալև և հասարակութիւնը. Ալդ անձնա-
ւորութիւնները միատեսակ չեն. կալին և անպիսիներ, որոնց անունները
պէտք էր խաւարից գուրս բերել զէպի լուս աշխարհը և հասարակաց ու-
շաղութեանը ներկաւացնելով, նաև ասպագաէ սերտնդների երախտագի-
տութեանը արժանացնել: Ալդպիսի ոմն էր Պետրոս Շանչեանը, որի մասին՝
իրր մարդու և դործիչի՝ «Մուրճ»-ը տասց հետեւեալը.

«Կաէ մի սերունդ, աչժմ ծերունի, որի ներշնչանքը սկիզբն է առ-
նում „Կոռունկ“-ից առաջ, բայց որի արտազատողներից էր „Կոռունկ“-ը
ինքը. և ալդ դպրոցի գլուխն էր հայկական աչն մեծ մարզը, որը ներկայ
(1889) մարտ ամսի 10-ին խւր հրամեշտը տևեց ալս աշխարհին: Դա էր
Պետրոս Շանչեանը, հիմնադիրը կրօնական-բարովական կրթութեան հա-
յրիս մէջ: Յիսնական և վաթոնական թւականներին գործող անձերից
նշանաւորները կոմիտասում—Շանչեանի երկրագուներն են...» („Մուրճ“,
1889 թ., № 4, երես 557):

Ալդ ծանրակշիռ խօսքերը զրւեցին մի մարդու մասին, որի անունը
խաւարի մէջ էր և որը պատռում էր անպիսի շրջաններում, որոնք ու «Մուրճ»-ից
հեռու են, որպէս երկինքը գետնից:

Երբ, գրականութեան մէջ, ալդ մարդու համար պատւանդանը պատրաստեց, սորա վերակ արձան կանգնացնելը գրամական խնդիր էր: Կազմեց մի մոռնաժողակ՝ արդէն վախճանւածի վերևումանի վերակ արձան կանգնացնելու: Եւ նա կը դնւի...

Ազգպիակ մարդկանցից չէր մի ակ մարդ, որով նմանապէս զբաղվեց „Մուրճ“-ը: Յիսնական թւականների մարդ չէ նա, ալ վաթսնական, եօթանասնական, ովթսնական և իննոնական թւականների մարդ է Պերճ Պուօշեանցը, մի շրջանում՝ իւր գաղափարներով, կռւողի ու զործիչի գերով, միւս շրջաններում՝ իւր վիպասանութիւններով, որոնց մէջ նա մնում է մեղանում գետ: և չը գերազանցւած, որպէս գիւղական տիպեր արդիւնաբերող:

Պուօշեանցի չօքէլեանի խնդիրը, որ նոր չէր գնւում, վերստին արթնացաւ, կազմեց մասնախումք՝ նորա չօքէլեանը կատարելու համար: Միաքը չը մնուաւ և ոչ էլ մասնախումքը ցրեց: վերջինս միայն վետաձգեց գործը: Այդ չօքէլեանը կը կատարւի:

Շանչեանի անունը պէտք էր խաւարից հանել, Պուօշեանցին պէտք էր միայն լնդունել: Բայց կային անձնաւորութիւններ, որոնցով զբաղվեց „Մուրճ“-ը, բայց որոնց ոչ խաւարից պէտք էր հանել և ոչ էլ նոցա մասին տեղնկութիւններ հաւորդել: Նոցա անուններն էլ, գործունէութիւնն էլ մեծ հոսանքների մէջ են պատում: Գոցա դիմաց պէտք էր միայն դիրք բռնել:

Ազգպիսի անձնաւորութիւններից էր Գրիգոր Արծրունին, որի հրապարակխոսական գործունէութեան առաջին դնահատութիւնը՝ սկսած „Մշակ“-ի գործութեան օրից՝ պատկանում է նմանապէս „Մուրճ“ ամսպիսն:

Բայց ոչ ոք, ոչ ոք չը գիտէր և չէր զուշակում, թէ Գրիգոր Արծրունու մասին առաջին զբական քննադատութիւնը զուրս գալուց մի տարի և քանի մի ամիս վետոց՝ նորա քսան և հինգ ամեւակը պէտք է տօնէքր: Այն հրաւէրը, որ կարդաց „Աղքիւր“-ը՝ անսպասելի էր ոչ միայն մեղ, ալ և ամենքի համար: Գրիգոր Արծրունու անունը շատ է կապւած „Մշակ“-ի անունի հետ, որպէս զի կարելի վինէր անդ երկուսի չօքէլեանները իրարից բաժանել: Բայց բանից երեսաց, որ Գրիգոր Արծրունին իւր առաջին չօդւածած է եղել նախկին „Մեղու Հալաստանի“ լրագրում, 1865 թւականին, ուրեմն 25 տարի առաջ: Գրիգոր Արծրունին ունի կուսակցութիւն, որի համար բաւական է միայն տօնի օրւակ ընտրութիւնը ար-

դարացնել և իսկոն էլ կը տօնի նա, Բայց կայ և մի աւելի մեծ հասարակութիւն, որը, առանց մոլեուանդ հաւատացողներից լինելու, ուրախութեամբ կ'ընդունի մի ազդպիսի տօն, քաջ զիտենալով, որ դորանով նա մի ցոյց արած կը լինի ի փշատակ այն ուրախ գաղափարական բոպէների, որ բազմիցս ներկալացրել է „Մշակ“-ի անցեալը լաւաշաղէմ կուսակցութեան համար: Ես կարծում եմ, որ տօնի լաջողութեան համար կան բոլոր կարսոր պայմանները: Բայց լաջողութիւն ասելով, ես հասկանում եմ ոչ միան մասնակցողների բաղմութիւնը, այլ և այն միտքը, որ տօնի կաղմողները կը տան այդ տօնին: Տօնել Արձրունուն կարելի է միան գաղափարական մի քանի անցած բոպէների համար, իսկ դոքա աւելի քան փշատակւած են «Մուրճ»-ի վերոիշեալ քննադատական լոգւածում:

Հայ պարբերական հրատարակութիւնները, մերգանում, մինչ վերջին ժամանակներս տարածում էին միմիայն խօսքի ուժով: Աչժմ, քանի մի տարիներից ի վեր, մի քանի խմբագրութիւններ եղել են այն եղբակացութեան, որ, մի հրատարակութիւն ժողովրդի մէջ տարածելու համար, ամենալաւ միջոցն է նորան պատկերապարդ դարձնել. „Աղբիւր“, „Արաքս“, „Տարագ“, „Արձականք“—ահա այն պատկերապարդ հրատարակութիւնները, որ մենք աչժմ ունինք: Իմ խորհրդածութիւնների միջից ես հեշտութեամբ կարող եմ մի կողմ դնել „Աղբիւր“-ը, որը գոյութեան իրաւունք ունի իրբ երեխաների ամսագիր, չը նայած որ նա ունի մի երկրորդ բաժին, որի մասին չ'արտէ խօսելը, այն աստիճան նա ցավմէ եղել է անբովանդակ, անդուն և անհեթեթ: Իսկ երեխաների գրականութիւնը ես թողնում եմ մի կողմ, զբազւելու համար այն պատկերազարդ հրատարակութիւններով, որոնք քիչ թէ շատ ընդհանուր նշանակութիւն ունին:

Դոցա մասին ճիշդ կարծիք կաղմելու համար, նախ ես ինձ ու ինձ մի հարց եմ՝ դնում՝ ինչ կը լինէին այդ հրատարակութիւնները, եթէ նոցանից խլենք պատկերները:

Պատասխան՝ „Արաքս“-ը, առանց պատկերների, կը մնար նոյն „Արաքս“-ը, ինչ որ է նա, ավիմնքն, լաւագոն դէպքում, մի պարբերական ժողովածու լորւածների, նւիրած գլխաւորապէս տաճկահայերի կեանքին:

„Տարագ“-ը, իւր ոչ տարագի, այլ գրական բաժնում, կը լինէր մի իւրատեսակ ամսաթերթ ահա ինչ մտքով վերցնել երկու վէալ հասարակ մեծութեամբ և ապէ երկու վէալը բաժանել 12 կամ 24 մասի, իսկ եթէ շատ մեծ վէպեր են՝ 36 կամ 48 մասի ամեն մինը և ամեն մի մասը հրատարակել ամխաը մի անգամ, մինչև որ նոքա կը վերջանան, հոդ չէ թէ երբ:

„Արձագանք“-ը, առանց պատկերների, կը լինէր նոյն շաբաթաթերթ՝ „Արձագանք“-ը, ինչ էր և առաջ, միայն թէ աւելի նւազ լոգւածներուի:

Ահա ինչ կը լինէին այդ հրատարակութիւնները, եթէ նոցա միջից Խէ-
ինք պատկերները:

Իսկ ահա և մի երկրորդ հարց. ինչ են աւելացնում պատկերները
այդ բովանդակութեամբ թերթերի վերաբ. Պատկերները, „Արաքս“-ում, կեն-
դանացնում են այն, ինչ պատմած է նոցն իսկ ժողովածուի մէջ. ակտուղ
նկարը միան պատկերացնում է պատմածը: „Տարապ“-ի մէջ պատկեր-
ների կամ նկարների մեծագոյն մասը չեն վերաբերում այն բանին,
ինչ նորա գրական արժէքը պիտի կաղմէր: „Արաքս“-ի մէջ մի պատկեր
դնում է, մեծ մասամբ, որովհետեւ մի գրւածք կաց. իսկ „Տարապ“-ի
մէջ, ընդհակառակը, մի բան նկատում է, որովհետեւ պատկերը կաց: „Տա-
րապ“-ում, բուն էութեան վերաբերելին՝ ան մի-մի հատ նկարներն են,
որոնք վերաբերում են տապող վէպերից մէկին: Իսկ միւսները՝ բոլորովին
երկրորդական նկարներ են:

„Արձագանք“-ի մէջ նկարները ոչինչ կապ չ'ունին թերթի բովան-
դակութեան և որ գլխաւործ է՝ ուղղութեան, թերթի ձգտումների հետ:
„Արձագանք“-ը բուն հրապարակախօսական թերթ էր և ուղում է մեալ
ազգպէս: Բայց, գուցէ հակառակ խմբագրութեան դիտաւորութիւններին,
նորա նկարները, ինքն ըստ ինքեան վերցրած, այնքան շքեղ և այնքան
հրապուրիչ են, որ թերթի հրապարակախօսութիւնը իսպան խեղուում է:

„Տարապ“-ի մասին, սակայն, կարելի է և այս նկատել, որ նորա
նկարները, նթէ չեն ել բովանդակութիւնից, բայց աւելի են վերա-
բերում հայ ժողովրդին, հազկական հողին ու կեանքին, քան „Արձագանք“-ի
նկարները: Ընդհանրութիւնը գոնէ այդ տպաւորութիւնն է անում:

Դատողութիւն կաղմնը բոլոր պայմանները նկատած լինելու հա-
մար, պէտք է չը մոռանալ, որ „Արաքս“-ը լուս է տեսնում ընդամենը վեց
տամիաը մի անգամ, սովորական մեծ մասագրի չափով, „Տարապ“-ը ամիսը
մի անգամ, երկու թերթ մեծութեամբ, „Արձագանք“-ը շաբաթը մի ան-
գամ, նմանապէս երկու թերթ մեծութեամբ և որ նոցա զներն են տարե-
կան 3 ր., 3 ր. և 10 բուրփ: Այս համեմատութեան մէջ „Արաքս“-ը, որը
տարին կարող է տալ միմիայն մի տասնեակ նկարներ, գրեթէ կորցնում
է պատկերազարդ հրատարակութիւնների բնաւորութիւնը, անխախտ պահ-
պանելով, սակայն, իւր չատուկ բնաւորութիւնը իրը ժողովածու:

Մնում են „Տարապ“ և „Արձագանք“, որոնք, այսպէս ասած, մրցում
են իրար հետ: Գոնէ ազգպէս է հասարակական կարծիքը:

„Արձագանք“-ը, եթէ կարծում է թէ հրապարակախօսական օրդան է
միացել, սխալում է: Իբր պատկերազարդ թերթ, նա չ'ունի պատկերա-
զարդ թերթերի հեշտ ընթերցանելի բովանդակութիւնը: Եթէ „Արձագանք“-ը
կարծում է թէ իւր գեղեցիկ և գրաւիչ նկարներով նա տարածում է „Ար-
ձագանք“-ի „Պաղափարները“, — նա չարաչար է սխալում: Իւր նկարների
չաջողութեան չնորհիւ „Արձագանք“-ը կարող է նուն իսկ մեծ ընդունելու-

թիւն գոտել մօտիկ և հեռաւոր տեղերում, նորա լամանորդների թիւը կարող է կրինապատկւել և եռապատկւել,—բայց այնպէս ինչպէս նա աշխամ է խմբադրւում, նա անդամ տաղտկալի է, Պատկերազարդ շաբաթաթերթի զլնաւոր նպատակն է լինում՝ շաբաթւաց կեանքը ներկազացնել պատկեր ներով: Դիցուք թէ այդ պահանջը չի կարելի անել մի հայ պատկերազարդ թերթին, որովհետև տեղական լուծող փորագրողներ չը կան, որ կարելի լինէր պատկերները աշխատ կարծ միջոցում պատրաստել տալ: Բայց ընթացիկ կեանքին հաշիւ տալը միանգամացն պարտաւորիչ է մի պատկերազարդ շաբաթաթերթի համար, թէ չէ նոյն իսկ ամենագեղեցիկ պատկերները վերջ ի վերջոց կը կորցնեն իրանց հետաքրքրութիւնը: Պարտաւորիչ չէ, որ բոլոր պատկերները մեր կեանքից լինին, բայց ամեն մի պատկեր պէտք է իւր հրատարակութեան առիթն ունենաց, և այդ առիթը պէտք է ընթերցողը իմանալ:

Դէպի „Տարազը“ մեղմօրէն կը վերաբերէի, եթէ միացն նորա խմբագրութիւնը իւր առաջին լոկ համարում լատարարած չը լինէր, իբր թէ նորա, „Տարազ“-ի, շուշնչն էն հայ առաջնական գրութեւը և Նորոգոյն հարաբերեցներից շարերը!! Դէ այդ բնչ է նշանակում: ամրող տարին տալ երկու հատ վեպիկներ և մի-երկու տասնեակ մանր սուանաւորներ ու զալ խրոխտարար լաւարարել թէ՝ մեր շուրջն են հայ առաջնակարգ գրողները...: Կը գտնէի արդիօք խելքը զլիսին մի հայ մարդ, որը իրան թուլ ապր մի աշխատիսի խօսք, մի այնքան աննշան թերթիկի հրատարակութեան առիթով, ինչպիսին է „Տարազ“-ը, գոնէ այժմնան „Տարազ“-ը...: Աղապիսի խօսքը կեղծ դիրքի մէջ է դնում գոված հրատարակութիւնը և ամօթանք բերում ամրող խմբագրութեան: Դէ խօմ չի կարելի էժանութեան պատճառով ամեն բան արդարացնել. խօմ չի կարելի ասել՝ քանի որ ես մի պատկերազարդ թերթ եմ տալիս հայ աղդին, 2¹/₂ կամ 3 րուբլով միացն, ուրեմն ես իրաւոնք ունիմ նաև ամեն լիմանաթիւն ասել:

Ես ակստեղ իմ ընթերցողներին ուրիշ բան չեմ ասում քան այն, ինչ մասնաւորապէս արդէն բնրանացի լաւսնել եմ „Տարազ“-ի իմբագիր պ. Տիգրան Նաղարեանցին, պլ. Աւետիք Եղեկեանի ներկազութեամբ, „Տարազ“-ի առաջին համարի լուս տեսած օրը, երբ նոքան հետաքրքրութիւն իմանալ իմ կարծիքը „Տարազ“-ի մասին: այնպէս որ եթէ «Մուրճ»-ը չը շատապեց լաւարարել „Տարազ“-ի լուս տեսնելը,—ես կարծում եմ, որ դորանից նեղացողները չը պէտք է լինէին նորա խմբագրողները: „Տարազ“-ի բովանդակութիւնը է և մնալու է անբովանդակի, անհնատաքրպական: Հետաքրքրութիւն ստեղծելու համար նա տոփառած կը լինի դիմել լաւարարած ծրագրից գուրու բաներիու Եւ կամ նա պէտք է դառնայ մի շաբաթաթերթ, որպէս „Արձագանք“-ը, բայց այլ ծրագրով:

Այս վերջին երկու ամիսներում մի առանձին իրարանցում է նկատ-
ւում մի քանի հաստատութիւնների մէջ. Ներսիսեան Դպրոցը ունեցաւ
ակտ, ուր, ի միջի ալլոց, կարգացւեց հոգաբարձական հաշխւը Դպրոցի
ելքի և մուտքի մասին. կարգացւեց տեսչական հաշխւ Դպրոցի ուսումնա-
կան մասին. Ակտը վազուց չը տեսնած մի երեսիթ էր և ի հարկէ ու-
րախալի երևալթներիցն է. Ինչ վերաբնում է ելքի և մուտքի հաշվին,
«Մուրճ»-ը հաստաբակում է ներկայ համարում. Բայց միան մի քանի նկա-
տողութիւններ. ինչու մինչ մօս 60 հազար հիմնուտ ունեցող մի հաստա-
տութիւն սպարաւորութիւն չի համարում մի տպագրած հաշխւ ներ-
կացացնել հասարակութեան. Դա աւելի քան անփոխութիւն է՝ դա մի
արհամարհանք է հասարակութեան դիմաց:

Պաշտօնական թուղթը մնալ չափանում է, թէ որդեգիրներից ա-
մեն մէկը 300 րուբլուց մի բան աւել է նստում. Ես կրկին զարմանում
եմ ազդ քանի վերակ, ազդ ինչպէս է իրաքանչիւրը նստում ազդքան գու-
մար, քանի որ ելքի մէջ ցուց է տրած որդեգիրների վերակ ծախք
3.947 ր. 86 կ. սնունդի և հանգերձեղչնի և այլ պիտոքների համար և
181 ր. 08 կ. լնթերցանսութեան գրքերի համար, ուրեմն միասին 4036 ր.
61 կոպ.։ Եւ որովհետեւ որդեգիրներ ընդամենը 24 հոգի են, ուրեմն նոցա-
նից ամեն մէկը նստում է ոչ թէ 300 րուբլուց աւելի, այլ ինչ որ 170 ր.

Բացի ազդ բոլորից, ժողովուրդի համար հաշվի ազդ տեսակ ձեւ շատ
կարծ է. Ժողովուրդը կ'ուզէ խմանալ մանրամասնութիւններ ահա ինչ կէ-
տերի նկատմամբ՝ չին ու թէ եան և նորագութէ եան կալւածոց
(3.947 ր. 86 կ., ուրեմն գրեթէ 4.000 ր.) և դին մոմոց և այլ ծախուց
ուխտասեղեաց (2.364 ր. 7 կ.): Քանի որ ազդ կէտում լսուկասկէս փշւած
է գին մոմոց, ուրեմն պէտք է ենթագրել, որ ազդ գումարի մէջ մոմերի
գինը մնագում մասն է կազմում. Ինձ համար ազդ ուղղակի անհասկանակի է,

Եւ մի վերջին նկատողութիւն. Պարոն հերթակալ հոգաբարձուն, վեր-
ջացնելով իւր խօսքը կորած 4.000 րուբլու մասին, չափարարեց, թէ երբ
հաշմաները կը վերաստուգեն, ազդ մասին իւր ժամանակ կը զեկուցանսկ
էջմիածնի սինօղին. Բայց ինչու ոչ նաև ժողովրդին. Որ սինօղին պէտք
է զեկուցանւի, զորա մասին ով կարող է կասկած ունենալ. Ժողովուրդը
չի հետաքրքրւում, թէ հոգաբարձութիւնը կը զեկուցանէ սինօ-
ղին, թէ չի զեկուցանիլ, որովհետեւ սինօղը կամ Անափառ Կաթողիկոսը
կարող է նաև ստիպել, որ իրան զեկուցանին ազդ մասին, եթէ հոգաբար-
ձութիւնը կամակորի իւր պարտականութիւնը կատարել. Ոչ, ժողովուրդը
ուզում է, որ հոգաբարձութիւնը պարտք ճանաչէ իրան՝ ժողովրդին զե-
կուցանել ամեն տարի Դպրոցի դործերը, այն ժողովրդին, որը նորան ընտ-
րում է. Ազդ է պահանջում պարզ տրամաբանութիւնը, ազդ է պահանջում
լաւ որպիսի թիւնը, որովհետեւ ազդ են պահանջում ոչ միան ժողովրդական,
այլ և նուն իսկ զպրոցական շահերը:

Հայուհեաց Բարեգործական Ընկերութիւնը, Հայոց Բարեգործական Ընկերութիւնը և Հայերէն Դրվերի Հրատարակութեան Ընկերութիւնը ունեցան լրաց տարեկան ընդհանուր ժողովների նիստերը վմտրւար—մարտ ամիսներում: Պաշտօնակատար անձերի մասնակին փոփոխութիւնները ամենքին ընդհանուր էր, որպէս նաև նախահաշիւնների հաստատումը: Հայուհեաց Բարեգործութեան Ընկերութեան մէջ տիկին Նիդիա Թամամչկան պարզեց իւր մի առաջարկութիւնը, որով Թիֆլիսի բոլոր հայոց օրիորդական դըպրոցների մէջ ձեռագործական դասաւանդումը պէտք է ենթարկւէր այդ ընկերութեան վերահսկողութեան, որը ունի իւր սեպհական արհեստագիտական ուսումնարանը աղջկների համար և որը այդ իսկ պատճառով աւելի ձեռնհաս է ալդ խնդրի մէջ, քան միւս ուսումնարանները: Ժողովը, սական, չընդունեց ալդ առաջարկութիւնը, կարծելով, որ նա դորանով ձգուած կը լինի միջամտել միւս զորոցների վարչութիւնների մէջ՝ այդ քայլի բոլոր անախորժ հետևանքներով:

Հայոց Բարեգործական Ընկերութեան տարեկան ընդհանուր ժողովը, որը նախկին տարիներում վերջացնում էր իւր զործը մի նիստում, այս անգամ երեք նիստ ունեցաւ երեք շաբաթում: Այս անգամ Ընկերութեան ամենավլիմաւոր ստեղծագործութիւնն էր՝ Կենդրոնական Հայոց Դրադարանի հիմնելը: Դրադարանը ալժմեանից համարւում է հիմնւած, բայց ոչ բայւած: Ընկերութիւնը յատկացրեց այդ զործին տարեկան եկամուտի բոլոր մնացորդը, այն է 800 բուբլի, այն մոքով, որ մի քանի տարի ապրաւի շարունակելով, բացի մասնաւոր Ըստիրաւութիւններից, կը գոյանաչ այն գումարը, որով կարելի է բացել գրադարանը և ունենալ ծախքերի համար հարկաւորւած գումարը: Գրադարանը աշխատելու է ունենալ բոլոր հայ գրքերը, թէ ցախմ լուս տեսած և թէ ապագաւում լուս աեսնելի, իսկ օտար լեզուներով գրւածներից այնպիսիք, որոնք վերաբերում են հայոց գրականութեան ու պատմութեան և Արեելքին առհասարակ. իսկ ընդհանուր գրականութեան գրադարանի մասին որոշւեց, որ այդպիսիք ընդունեն գրադարանի մէջ, եթէ նորա նւիրւեն, բայց որ ընկերութիւնը իւր միջոցներով չը պէտք է նոցա ձեռք բնի՛:

Ընդհանուր ժողովի որոշումը այս վերջին կէտի վերաբերմամբ շատ հասկանալի է մի քաղաքի համար, որպիսին է Թիֆլիսը, ուր կան բազմաթիւթէ հասարակաց և թէ մասնաւոր գրադարաններ, ընդհանուր գրականութեան վերաբերեալ գրքերը պարունակող, բայց չը կաչ մի հատը, ուր կարելի լինէր գտնել բոլոր հայերէն գրքերը, Այդ մասին գանգատը շատ և շատ վաղուցւանից է. մինչեւ անգամ ամօթանք էր համարւում, որ մենք չ'ունինք մի հատիկ կարգին հայոց գրադարան, քանի որ Ներսիսեան դպրոցինը թէ անկարգ է, թէ անլիակատար և թէ ընդհանրութեանը ոչ մատչելի: Եւ վերջապէս պարզ է, որ Հայոց Բարեգործական Ընկերութիւնը չէր կարող յաւակնութիւն անգամ ունենալ՝ Թիֆլիսում հիմնել

ամեն պահանջներին բաւականութիւն տւաղ մի զրագարան։ Պէտք էր ուրեմն սահմանափակւել։ Արդ, շատ աւելի խելացի չ'ը արգեօք հարստացնել թիվլիսը մի նոր տեսակի զրագարանով, որի կարիքը զգացւում էր վաղուց, քան թէ, կեզծ կուսապալիսութիւն բանեցնելով, եղածների վերայ մի նմանը աւելացնել։ Դուք տեսնում էք, որ աշոտեղ հասարակ առողջ դատողութեան խնդիր կաէ, որի պարզ լուծման համար պէտք է ճնորհաւորել Հայոց Բարեգործական Ծնկերութեանը, Բայց ոչ, պ. Ախմէօն Համբումնանցը արդ առիթով ռուսաց լրագիրներում ջանաց ընդհանրացնել այս միաքը, թէ հաջերը իրանց շուրջը չինական պատեր են չինում, որպէս վի զրոխ աշխարհը իրանց անմատչելի մնալ!!!

Հայերէն Գրքերի Հրատարակութեան Ծնկերութեան տարեկան ընդհանուր ժողովի նիստին ներկայ էին այս անդամ ոչ մոտ 80, որպէս անցեալ տարի, այլ միայն 40 հոգի։ Անցեալ տարի նոր անդամների նուանը ծագել էր հին վարչութեան զէմ ադիտացիա անելու ցանկութիւնից, իսկ այս անգամ ազգային ցնցող խթան չը կար։ Ալդ ցուց է տալիս, մինեն ժամանակ, որ աչմենան զրագէտ զատակարգը, որի համար լստկանու ալդ ընկերութիւնը մեծ արժէք պէտք է ունենար, գետ ևս մի լուրջ հասարակութիւն չի կազմում։ Եւ ևս չեմ զարմանալ, որ գալ տարի անդամների թիւը աւելի էլ սակաւ լինի, Կենդրոնախոս ուժերի ջանքերին պէտք էր հակադրել մի ըստ սոնենաշնի չարգւած և համակրելի խմբագրական մասնաժողով։ Ես գոնէ կարծում եմ, որ այս անգամնակ մասնաւոր ընտրութիւնները նախկին խմբագրական կազմի վերաբ պլիւս չ'աւելացըրին։ Ծնկերութիւնը ժողովրդականութիւն ստանալ և սիրած լինել կարող է միմիան տառա և ժամանակների պահանջներին համապատասխան գործունէութիւնով։ Իսկ ընտրելով մարդիկ, որոնց անունների հետ չեն կապւած, չեմ ասում ծրագիր, բայց զոնէ լուսիր, —ապէ նշանակում է վաստ ընտրութիւններ կատարել և Ծնկերութեան ողին թուլացնել։ Ալդ բոլորը պարզ ցաց է ասլիս, որ Ծնկերութիւնը վերջնականացէս տարի կանդնեցնելու համար զեւ պէտք է աշխատել, հասարակաց ուշագրութիւնը արթուն պահելով։

Գալով աչմէմ վարչութեան, իբր նորա փոխ-ատենապետ ընտրւեց պ. Յ. Սպենդերեան, որը ազգայինով փոխարինեց նախակին փոխ-ատենապետ քժչ։ Տէր-Գրիգորեանցին (թիվլիզեցի), որի միակ ծառալութիւնը կալացաւ նորանում, որ Ծնկերութիւնը ազտահեց իւր ոչինչ բարին չը խոստացող անդամութիւնից։

Խմբագրական մատնաժողովը ալսուհետ կազմւած կը լինի հետեւալ պարոններից՝ Մ. Տիգրանեան, Ա. Քալանթար, Մ. Սպանդարեան, Գ. Միրզոյեան, Ի. Յարութիւնեան, Մ. Ասիլեան, Մ. Աբեղեան, Իսկ վարչականը կը կազմին՝ պ. պ. Փ. Վարդանեան, Յ. Սպենդերեան, Գիւտ քան։ Աղանեան, Կ. Կաղուբեան, ինժ. Տէր-Գրիգորեան և Մ. Դանագեօց։

ԴԱՒԱՌԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

ՄԵՐ ԿԵԱՆՔԻՑ

IV.

Խ՞նչ է օջախը:

Տեսանելի օջախը տան վառարանն է: Ազդակ ամեն կողմից բաց այրւում է կրակը հասարակ, հովական խարուկի պէս: Նա տաքացնում է տունը, տաքացնում է տան մէջ ապրողներին: Նորա շուրջն են նոտում մարդիկ, մի կոլոր շրջան են կազմում: Կրակը տաքացնում է բոլորին առջևից, իսկ մէջքը գարձրած է լինում զէպի տան պատերը: Ազդակ է եփում ընտանիքի կերակուրը, ալդակ են հաց ուտում, երես լւանում, երեսին խաչ հանում: Դա տան կենդրոնն է, սիրտը. զորա մօտն են աեղի ունենում խորհուրդ ու մտածութիւնը, զորա շուրջն են կատարում ընտանեկան ուրախութիւնը և լացը, սուզը: Ալդակից է վառւում տան ճբաղը, զէպի ացդակն են զնում մանեքը: Ազդակ արտող կրակի վերաց են երդում: Վերջապէս, ազդ օջախն այն իսկ կրակարանն է, որի մօտ է տանում և Ալիշանը իւր Հաջկակին («Յուշիկը Հայրենեաց Հալոց») և այնպիսի քաղցր զրոյցներ անում մեր մոռացւած անցեալից: Դա է, իսկապէս, այն տեղը, ուր կարելի է պատմել «Լարմիր Վարդանի» սրասառուչ պատմութիւնը. որովհետեւ ազդակն նստողները շատ են սիրում կմնանի խօսքը, եթէ ազդ խօսքը մանաւանդ լինում է անցեալի մասին: Օջախատեր հաւքրիստոնեալի համար լաւ և գեղեցիկ խօսքից քաղցր, համել բանքին կարելի է գտնել, և ազդ պատճառով նա հրճւում է երեխակի պէս, զարմանում է, լաց է լինում արաւասունը թափելով, երբ ծերունի նահապեաի պէս մի ճարտար պատմող Հայկակին հասկացնում է թէ ով և ինչ էր Կարմիր Վարդանը: Հայկակի հետ լսում է նաև այն ժողովուրդը, որ երեկոյեան, մթնելուն պէս, հաւաքւում է տուն, նստում է կրակի մօտ: Ամբողջ օրը գործելուց, չարչարւելուց վետով ազդ մարդկանց միակ քաղցրութիւնը այն հանգստութիւնն է, որ վակելում են օջախի շուրջը բոլորած, միմեանց մօտեցած, միմեանց մտիկ տալիս:

Տեսանելի, խոկական օջախն ալս է:

Բայց օջախ ասածդ ուրիշ, աւելի մեծ, վերացական հասկացողութիւն է: Խորաքանչիւր տուն, ինչպէս և մարդկալին խորաքանչիւր գործը, ովախ ունենաց իւր մէջ սրբութիւն, առանց սրբութեան անհնարին է ապրել, կեանք վարելո սրբութիւնը—ալդ այն խոկ նպատակն է, որի համար աշխարհն է կանգնած, մարդկալին աղդն է ապրում: Ընտանիքին համար ալդ սրբութիւնը մաքուր և անարատ կենցաղավարութիւնն է, այն տաք և անշէջ սէրն է, որ ընտանիքի անդամները պիտի տածեն դէպի միմեանց: բարի և մարդախաել կենցաղը պարտաղիր է ամեն մարդու համար: Շատ հին ժամանակներից, զարերի սկզբից մարդկանց սիրով և երկրապագութեամբ սրբագործւած են կանոններ և հասկացողութիւններ, որոնց կատարելով մարդ կարող է ասել թէ ինքն էլ մարդ է, ինքն էլ այն խելացի, բանական էակն է, որին սահմանած է երկրի տէր լինել: Տիրել երկրի մի մասին, գրաւել աշխարհից մի փոքրիկ անկիւն, ուր մարդու փոքրիկ անձնաւորութիւնն է տեղաւորում, կարելի է իրաւունքով աղատ պահանջով, առանց բունութեան, առանց ուրիշին զիպչելու, մարդկալին և հոգենոր կանոններով: Մարդը աղատ և լաւ ապրելու համար իրաւունք պիտի ստանաց իւր սեպհական խզից, այն հասարակութիւնից, որի հասկացողութիւններին, օրէնքներին հպատակելով, ապրում է նա: Ահա ալդ բոլոր բարդ հասկացողութիւնները նահապետական մարդն ըմբռնում է մի օջախ բառը լսելով: Բաւական չէ որ նա ըմբռնում է թէ ինչ հոգի, ինչ իմաստ ունի ալդ բառը, նա նրան միշտ տեսնում է իւր աչքի առաջ, միշտ զգում է որ նա, ալդ աներեսով սրբութիւնը, շօշափում է նրան, պահանջում է, թե է տալիս, խրախուսում, լուսահատութիւն էլ պատճառում: Եւ ալդ նահապետական մարդը բոլորովին անձնատուր է լինում ալդ օջախին, ալդ սրբութեան պահանջներին: Չը կատ մի այնպիսի իշխանութիւն, որ այնքան գրաւելո մարդու սիրուը, այնքան հնազանդ, հլու, միշտ խոնարհ հպատակ գտնէր, որպէս անում է օջախը: Ի՞նչ է կեանքի նպատակը նահապետական մարդու համար, պարզ ասած—ի՞նչ է այն բանը, որին նայելով նա ապրում է, ճանապարհ է ճանաչում, գործունէութեան ալս կամ այն ասպարեզն է ընտրում:—Օջախը:

Ի՞նչ է նշանակում օջախ, հարցրէք ալդ մարդուց և նա կը պատասխանէ այն, ինչ պիտի պատասխանէր—եթէ խօսուն լեզու ունենար—մի թռչուն, որից կը հարցնէին թէ ինչ է բոնը: Մեռած է թռչունը առանց բոնի, մեռած, անհասկանալի բան է նահապետական մարդը առանց օջախի: Նա աչք մարդու պատիւն է, երեսի ամօթխածութիւնն է, նորա սրտի կուռքն է, որին նա երկրապագում է:

Վինելով աղդքան մեծ, բարդ հասկացողութիւն, օջախը մի ընդարձակ պատմութիւն ունի, որ պիտի իմանան բոլորը: Նա ունի բաղմատեսակ ծէսեր, օրէնքներ, ամեն ինչ—հասարակական թէ անհատական հաս-

կացողութիւն, տւանդութիւն, աշխարհահամակցողութիւն՝ նորա վարկը պիճոյ և անունը անազարս, հեղինակաւոր պահելու համար ևն ճգնում։ Ազդ պատճուով էլ նա ամենախն հեշտութեամբ գոհեր է պահանջում։ Օրինակ։ Ցղամարդու սպանել է իւր կնոջը, տեսնելով նրան իւր տանը մի օտար տղամարդի հետ մենակ։ Ազդ մի ոճիր է, չատ անգամ հիմք չունեցող մի չանցանք է։ օրէնքը խառութեամբ պատժում է չանցաւորին։ Բայց հասարակութիւնը ադրպիսի տղամարդին չի դատապարում։ Հասարակական կարծիքը անտարել է մնում նոյն խել ոճիրի մանրամասնութիւնների վերաբերմամբ, քանի որ ազդ ոճիրը ընդհանուր մի գոյն ունի—օջախի պահանջ։ Մի ալ օրինակ։ Խնչու աճքան տանջւում է մի նորահարս, ինչու աճքան արտասունք է թափում, օրեկան հարլւր անդամ Աստուածանից մահ է խնդրում։ Շատ հեշտ կարելի է իմանալ պատճառը։ Նրան այս կամ ան պատճառով տանջում է սկեսուլը կամ թէ ինքը, տղամարդը։ Եւ տեսուք. ալդքան արտասունք, ալդքան տանջանք դին չ'ունի ոչ ոքի համար։ Նրան չեն խղճում, նորա դրութիւնը մտասանջութիւն չի պատճառում։ Միիթարական խօսք եթէ կայ, նորա հետ անխղելի է լինում խոնարհ ու հանդարտ մնալու, համբերելու խրատը։ Ամենքը գիտեն թէ ինչիցն է աղ։ ամենքը ճանաչում և լարդում են այն իշխանութիւնը, որ իրաւունք է տեւ նորահարսին տանջելու. ազդ իշխանութիւնը օջախն է։ Նոյն խել տանջւողի ծնողներն էլ անտարբեր են գտնւում դէպի ազդ տանջանքները։ Նրանք, ճշմարիտ է, պախարակում են վատ մարդին ու սկեսուրին, բայց մինչեւ վերջին ամենաթշւառ ծալը հասնելը խորհուրդ չեն տալ իրանց աղջկանը ընդդիմալրել տանջող իշխանութեամբ, ալ ընդհակառակն՝ կը հասկացնեն նրան ազդ իշխանութեան, ազդ տանջանքի անխուսափելի անհրաժեշտութիւնը և բացարձակ կարողութիւնը։

Առանց տասանման կարող ենք ասել, որ տղամարդի պարտաւորութիւնները դէպի օջախը շատ չեն խխատ չախոնի, շատ չեն բազմակողմանի։ Ցղամարդը պարտաւոր է միան օջախը պահպանելու համար ոչինչ ուժը չը ինաւիք։ Նա պիստի բերէ, պիստի կառավարէ, բայց եթէ չը բերէ եւ չը կամենալ կառավարել, նրան շատ ել չեն չարչարիլ ազդ պատճառով։ Ուրիշ բան է կնոջ պարտաւորութիւնը դէպի օջախը, կարող ենք հասնել աճնեղրակացութեանը, որ օջախ ասած բանը հաստատած է կանանց համար։ Հասկանալով թէ ինչ է օջախը, մենք կը հասկանանք թէ մեր ժողովովի դարսուր կեանքը ինչ է արել կնոջ դրութիւնը հաստատ հիմքի վերակ դնելու համար, կնոջ ամրողը էութիւնը հասկացնելու համար։ Առանց կնոջ օջախ չի լինիլ. կինն է այն մարմինը, որ պատանդան է ընտանեկան սրբարանին և կինն է, որ օջախին տավիս է առատ հարկ։ Նա օջախի ծառան է, նորա խոնարհ սպասաւորն է, որ մի և նոյն ժամանակ իւր կոչումը միացնելով օջախի—ընտանեկան սրբարանի էութեան հետ, պարզում է թէ ինչպիսի մեծ, երեւելի բան է նա տղամարդի համար, ինչքան

բարձր միտք ու նշանակութիւն է արտաքալուռ մարդկապին աղջի մէջ:

Տեսնենք թէ կինը ինչպէս է սկսում խւր սպասաւրութիւնը օջախին: Այդ մոռքալ մենք պէտք է հնտեսենք օտար ընտանիքից եկած և մի ուրիշ օջախի ծառարարութեան մէջ մտցրած կնոջ: Առել է թէ պիտի խմանաք նորահարսի ինչ լինելը:

Աղջիկ ուրիշու համար խնամախօս գնացածները ալսպէս են արտաքալուռ իրանց գալստեան նպատակը. «Ճեր օջախից մի բուռը մոխիր ենք ուզում վերցնելու: Այդ Փրազը մի կազմից ցուց է տալիս թէ որքան ցած նշանակութիւն ունի աղջիկը ամեն մի ընտանիքի համար, քանի որ նա ոչ այլ ինչ է, եթէ ոչ օջախի մոխիր. խակ միւս կողմից պարզում է խնամիտութեան բուռ պատճառը. ուզում են մի բուռը մոխիր վերցնել օջախից, ալսինքն այդ օջախի կրթած ու պահպանած մի անդամն են ուզում աշնել. գրանով լայտնուում է մի վստահութիւն դէպի օջախը, և ոչ միայն վաահութիւն, այլ և օջախի պատասխանաւութիւնը իրանից բաժանուող մի անդամի բարուականի համար: Այդ բուռը մոխիրը պիտի փախադրուի մի անդամի օջախը, պիտի միանալ աչս վերջինիս մոխիրի հետ, պիտի խասնի և աղջապէս ծառապէ: այդ օջախին, ինչպէս ծառալում է եղած մոխիրը: Մոխիրի լատկութիւնը, էութիւնը, ի հարկէ, զրանով չի փոխւում միտն աւելանում է մոխիրի քանակութիւնը, որ և ցանկալի է երկու կողմերի համար: Եւ խկապէս մի բուռը մոխիրը պիտի այն միան իմանալ, որ նա ուրիշի մոխիրի հետ պիտի խառնուի: Ալդպէս էլ լինում է: Նորահարսը եկեղեցուց խւր ամուսնու տունը մտնելուն պէս, դեռ երեսը ծածկած, զեռ ոչ ոքին չը տեսած, ոչ ոքի հետ չը խօսած, մօտենում է օջախին, բազմաթիւ հարուածուների ներկաւութեամբ չոքում է, համբուրում օջախը: Դա առաջին անխօս, բայց հանգիստոր վկալութիւնն է, որ նա անում է՝ թէ նա պիտի ըստ ամենակի հնագանդ լինի այդ օջախին, ալսինքն այդ տան կարգ ու կանոնին, պիտի սիրէ, պիտի լարգէ նրան անգամ խւր ովկից էլ վեր: Դա այդ խոստամը կատարում է մի տոկունութեամբ, որ միանգամացն պատիւ է բերում նրան:

Նորահարսը, լազմի է, տան բալորի սիրելին է. մանաւանդ ուրախ են նրանով վեսապի հալիքն ու մազը, քորերը. նորա երեսին ծիծագում են, նորա համար թագուն համեզ պատառներ են պահում, որպէս զի նորա ընկանը քաղցրացնեն: Նորահարսի կարտառ շարժւածքները, անխոնջ աշխատութիւնը զմազմունք է պատճառում ամենքին: Բայց արդպէս լինելով հանդերձ, նորահարսը մի նահապետական ընտանիքում մի խեղճ արարած է, որ խիստ աննախտնձելի զրութեան մէջ է: Նորա վերադ ամենքն ունին իրաւունք, նրանից ամենքն են հնագանդութիւն, կամակատար խոնարհութիւն պահանջում: Դա գտնւում է մի ծանր իշխանութեան տակ, որ ճընշում է նրան, բոլորովին փոխում է նրան: Աղջիկ ժամանակը նա ուրիշ կենցաղավարութեան էր սովոր. նա գանւում էր մի դրութեան մէջ, որ ակտմեանից շատ բարձր էր. և ալժմ նա պիտի շատ ցած զնալ, շատ

սուրանաց ու նորից, աղքան ցածրութիւնից, պիտի սկսէ ուրիշ կերպ լինելու սպառլել:

Նա մի անլեզու արարած է: Նա կամք չ'ունի, ցանկութիւն, սեպհական հակեացը չի կարող բատնել: Ազդ բաւական չէ. նա իրաւոնք չ'ունի վիրաւորելու, եթէ նորա ճակատին ամեն հայնուանք կպցնեն: «Հարաց հարս կամ մարտ չի ունենալ», քարոզում է ժողովուրդը: Աւտինքն՝ եթէ հարսի հօրն ու մօրն էլ հայնուեն, նա չը պիտի վիրաւորւի, չը պիտի բողոքէ, պատասխան տալ: Ազդակս ազդ խեղճին ամին կողմից, ամեն տեղից ճնշում են. նորա մէջ հեղած ինքնուրունութիւնը, անկախութիւնը խորակում, ոչնչանում է: Եւ այդ սպանող ճմլող պարագանութիւնը աւելի լաւ կատարելու համար, նահապետական օջախը հաստատել է տան մեծի իշխանութիւնը, որ համարեա անսահման է: Եւ մեծի իշխանութիւնը անընդհատ իւր գործն է կատարում: Վերջին վարձկան ծառան անդամ համեմատաբար անկախ է, իրաւոնքի տէր, իսկ նորահարաց զրկւած է ամեն կողմից, նա սեպհական ճաշակ չ'ունի, նա առանց թուլտութիւն ստանալու չի կարող տնալին մի ամենահասարակ կարգադրութիւն անել: Նա մինչև անդամ հիւանդանալու էլ իրաւոնք չ'ունի. նրան յանդիմանում են թէ ինչու շուտ հիւանդանում է. ամեն տեսակ ցաւը չի տավիս նրան իրաւոնք ասելու թէ նա հիւանդ է. իսկ երբ տեսնում են որ ազդակս ասելով բան չի դառնում, հիւանդութիւնը յաղթում է խեղճին, նրան ուղարկում են իւր հօր տունը, որ աշնաեղ առողջանակ և ապա գալ իւր ամուսնու տունը:

Այդ տեսակ սարսափելի բռնութիւն մարդու հոգու և մարմնի վերաց գործադրում է զիխաւորապէս այն պատճառով, որ նորեկ կինը օջախի հարազատ ծառան և սպասաւորը գառնաց: Այդ նպատակին հասնելու համար օջախը ուրիշ միջոց չ'ունի, ուրիշ կերպ կրթել չի կարող, ուրիշ կերպով ազդ գաղափարը հասկացնելու հնար չը զիտէ. մնում է միան բռնութիւնը, ամեն իրաւոնքի տէր իշխանութեան գործիքը, որով պիտի ջախջախսի կնոջ մէջ անձնասիրութիւնը, սեպհական կամքը, այս կամ այն կերպ գործելու ցանկութիւնը: Ազդպիսի մի ջարդւած ու ճնշւած էակ շինելուց վետով է նրան հետզհետէ աղաստում մեծաւորի բռնակալութիւնից, թէս ոչ բոլորովին: Ազդպիսի մի բովի միջով անցնելուց վետով կինը այլ ևս չի կարող այն չը լինել ինչ որ պահանջում էր օջախը: Նա դառնում է մէկը այն հաղարաւորներից ու բիւրաւորներից, որոնք նրանից առաջ ծառակել են իրանց հիմնած օջախին:

Հիմա տեսնենք թէ ինչ է ազդպիսի կինը օջախսի համար:

Ի հարկէ, օջախը բոլոր ազգերի համար ընդհանուր հասկացողութիւն չէ. լինելով ասիական ազգերի համար տան, ընտանիքի որբարանը, պատիւը, օջախը մի և նոյն ժամանակ առանձին բան է հափ տանը և առանձին է թուրքի տանը: Այս ու այն ազգի բնաորոշ գծերը շատ են տարբեր:

ւում. և աղդ չափով էլ տարբերութեն օջախները. Մեր հայ օջախը, լաւոնի է աւենքիս, ուրիշ տեսակ կրթութիւն է տալիս իւր սաներին և աշնակս հետեղաբար, աշնակս մշտառե, անփոխիս մի ուղղութիւն ունի, որ կարող ենք ասել թէ օջախի օրէնքը բազմաթիւ անխարդախ կատարողներ ունի. Եւ իրաւ, կան կատարողներ, մոլեռանդութեան հասած կատարողներ. Դրանք հայ կանագըն են:

Եթէ մենք կարծում ենք թէ հայ կինը միան այն նշանակութիւնն ունի նահապետական ընտանիքում, որ աշխատում է, կատարում է դրսի ու ներսի գործերը զարմանալի դիմացկանութեամբ, մենք, կը նշանակէ, շատ ենք սխալում: Կնոջ կոչումը միան այդ չէ. գուցէ մեր խմացածը դեռ մի աննշան բան է համեմատելով այն նշանակութեան հետ, որ նա ունի իրը մի ընտանիքին հոգի, ուղղութիւն տող մարդ: Իբրև մի անպիսի գործիչ, նորա զերը շատ մեծ է, պատկառելի: Եւ իրաւ, միթէ հայ կինը չէ, որ պահպանում է հայ ընտանիք: Երեականեցէք մի գիւղական մեծ ընտանիք: Նա ոչ զիր զիտէ, ոչ էլ ժամանակ ու կարողութիւն ունի իւր ինչ լինելու մասին մտածելու: Նա միշտ հոգսերի, դարդերի մէջ է, նորա համար գոլութիւն չ'ունի վերացական հասկացողութիւն՝ թէ ո՞լ է ինքը և ինչ է, ինչո՞լ պիտի պահէ իւր առանձնաշատկութիւնը, ազդակին որոշ կերպարանքը: Ազդ գերը կատարում է կինը: Այ մի մոլի աւանդապահ է, շատ անդամ չափ ու սահման անցնող եռանդով է հաւատարին մնում իւր ազդակին սովորութիւններին: Տղամարդը, պէտք է ասել, շուտ գալթակղուղ է. նորա մէջ, ինչպէս ինքն է խոստովանում, «հաւատ, հողի» քիչ է մնացել. եթէ նորա կամքին մնար, նա շատ բան զանց կ'անէր, շատ անգամ կը ծուէր ուղիղ ճանապարհից: Բայց նրան չեն թողնում, նորա մէջ «հաւատ, հողի» են պահում: Եւ ո՞լ է պահողը, եթէ ոչ հայ կինը: Կինն է, որ ամեն անզ իւր մայրենի լեզուով է խօսում, կինն է, որ կատարում է հայրերից ու պապերից մնացած ծէսերն ու արարողութիւնները և կինդանի պատկեր է զառնում, որին նակում է տղէտ, անհանկացող ժողովուրդը և տեսնում, ճանաշում է այն, ինչ որ անհրաժեշտ է հայքրիառնեալի օջախը կազմելու համար: Բայցմաթիւ օրինակներ ունինք, որ հայ կինը անընկծելի հաստատակամութեամբ դիմադրել է տղամարդին անպիսի դէպքերում, երբ պէտք էր ընտրութիւն անել ազդակինի և օտարամոնց նորութիւնների մէջ: Մի օրինակ թող վիճի հաւատափոխութիւնը: Մի որ և է թափառաշրջիկ առաքեալ հեշտութեամբ է կարողանում հաւատացնել մի տղամարդի, որ նա պիտի իւր ետևիցը զնայ երկնքի արքացութեան մէջ տեղը նստելու համար: Բայց հայ կինը հեշտ չէ այդ հաւատացնելը: Հատ անգամ է պատահում, որ նոր առաքեալ դառած մարդը հարկադրում է կնոջը իւր ճանապարհով գնալ, խրատում է, խնդրում է, բարկանում է, բայց կինը ընդդիմանում է: Ակուռամ հն ընտանեկան փոթորիկներ, ծեծ ու կոխ. և եթէ խեղճ կինը գոնէ առերես

հոլատակւում է մարդու պահանջին, պատճառը ուրիշ օրէնքն է, որ օջախն է դարձեալ տալիս: Այդ օրէնքն այն է, որ ամեն զբութիւն կարելի է խախտել, ոտնակոխ անել օջախի սէրի համար: Դա ամենամեծ սրբութիւնն է ընտանիքի համար: Որքան զրկանք, թշւառութիւն ու տառապանք է կրում կինը իւր օջախի սէրի համար: Նորա հասկացածը, նորա ամենից որոշ զաղափարն այն է, որ պէտք է օջախը պայծառ պահել, ալսինքն ընտանիքի հանգստութեան ու բարօրութեան համար զո՞նել ամեն ինչ: Տղամարդը արքեցող է, վատնող է, տունը ալքատ է, կարօտ օրւաչ հացին: Բայց հայ կինը պինդ կը նոտի օջախի մօտ, ինքն իրան կրակին կը զցէ, կ'աշխատէ, որ օջախը չը քանդւի: Նրան կը ծեծեն, բայց օջախի սէրի համար նա կազմել է մի այսպիսի օրէնք: «Կնոջը երբ ծեծում են, նա զէպի գուռը չը պիտի փախչէ, այլ զէպի պուճախը»: Կարծում ենք, որ այս խօսքերից աւելի պերճախօս վկաչ չի կարող լինել կնոջ արարքի, կոչման մասին: Այտեղից պարզ երևում է, որ հայ կինը ամենից շատ ընտանիք կազմելու, ընտանիքի տէր լինելու նշանակութիւնն ունի: կարող է մոռացւել ամուսինը, անձնական երջանկութիւնը, կեանքի քաղցրութիւնը՝ ընտանիք, այն էլ առաքինի, միասին շաղկապւած գեղեցիկ ընտանիք կազմելու համար—Ահա այն մեծ իդէալը, որին նւիրւած է նահապետական ժողովուրդը:

Եւ այդ իդէալը իրադորժւում է օջախի հասկացողութեան շնորհիւ: Մենք տեսանք թէ ինչ է օջախը, հասկացանք թէ ինչի համար է նա: Նա պատրաստում է կնոջը, նա զարգացնում է կնոջ ոժերը, տալիս է նըրան մի բաղմաջարչար նահատակի գրութիւն՝ մեծ զաղափարին ծառալու համար: Քանի որ չը կատ ուրիշ կերպ կրթելու միջոց, քանի որ լայնն է մի ուրիշ ճանապարհ, որով կինը կարող էր հասնել իւր համար որոշած կոչմանը, օջախը անում է այդ բանը բոնութեամբ: Նա ճնշում է, սպանում է կնոջ անձնաւորութիւնը, խլում է նրանից իւր սեպհական անձի համար մտածելու կարտղութիւնը և ալդպիսով ստեղծում է մի էակ, որ հասկացողութիւն, կամք չունի ուրիշ կերպ գործելու, առաջ գնալու: Հէնց աղջ է պատճառը, որ նահապետական կինը ալնքան թուլ անկարող էակ է, ալնքան կաշկանդւած է, բայց մի և նուն ժամանակ ալնքան քաջ է իւր և իւր ընտանիքի պատիւը, անունը բարձր պահելու համար:

**ՆԵՐՍԻՍԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀՈԳԵԽՈՐ ԴՊՐՈՑԻ ԴՐԱՄԱԿԱՆ
ԴՐՈՒԹՅԻՒՆԸ**

Ներկայ 1890 թ. փետրուարի 14-ին, Թիֆլիսի Ներսիսեան Դպրոցում,
կատարւեց ակտ, որի միջոցին, ի միջի ալոց, կարդացւեց Դպրոցի գրա-
մական հաշվերը. Այդ գոկումէնտից մենք քաղում ենք հետևեալ թւերը,
որոնք վերաբերում են Դպրոցի մուտք և ելքին 1889 թւականում:

ՄՈՒՏՔԻ:

	ՐՈՒԲԼԻ	ԿՈՎ.
ՄՆԱԳՈՐԾ գումար առ 1-ն չափարի 1889 թ.	8.861	45
Կապալաղրամ կալւածների (մանրամասնութ. տես ներքեւ, I)	28.072	35
Ապարիկ կալւածների կապալաղրամի.....	2.959	01
Կապալաղրամ մոմավաճառութեան (Թիֆլիսի թեմի)	9.516	—
Ուխտատեղիների արդիւնքներ (մանրամաս. տես ներքեւ, II)	5.335	89
Ապարիկ ուխտատեղիներից	32	52
Թոշակաղրամ թոշակառուների և ալլ կտակւած գումարներից (մանրամ. անս ներքեւ, IV)	2.128	21
Տոկոսիք ըստ ընթացիկ հաշվի.....	111	68
Ալլ և ալլ մանր արդիւնքներ.....	805	86
	57.822	97

ԾԱԽՓԻ:

24 որդեգիրների սնունդի, հազցնելու և դասական պիտուք- ների համար	3.855	53
Ընթերցանութեան գրքերի համար	181	08
Թոշակառուների թոշակաղրամ.....	294	—
Ռոճիկներ տեսչին, ուսուցիչներին և ալլ սրաշտօնատար ան- ձերին.....	24.434	93
Կալւածների շինութեան և նորոգութեան	3.947	86
Ապահովութեան կալւածների և շարժական կալքերի ընդդէմ հրդեհի	1.430	78
Տնահարկ կալւածների	1.153	16
Հողեհանգիստների կատարման Ներսէս V կաթողիկոսի և բա- րերարների	504	—
Ուխտատեղիների շինութեան և նորոգութեան	111	95
Ալահովութեան Թելեթի և Կրծանիսի սենեալիների ընդդէմ հրդեհի	50	40
Ուխտատեղիների համար ծախսւած մոմերի գինը և ալլ ծախքեր	2.364	07
Մանր ծախքեր	640	58

	Ռուբ.	Կոպ.
Վառելափակտի ծախք.....	557	53
Դիւանական պիտուքներ.....	37	90
Կահ-կարսախերի համար	232	13
Դատաստանական ծախքեր.....	2.219	65
Օրագրի.....	6	—
Դպրոցի խմբապետի և երգեցիկ խմբի օժանդակութիւն հնջե- ցեալների լուզարկաւորութեան համար	261	30
Անցեալ տարիների ծախքերի ապառիկներ.....	285	95
Գումարն է... 42.568	80	

Մնում է մնացորդ առ 1-ն լունւարի 1890 թ..... 15.254 17

Բացի գորանից, Դպրոցի հոգաբարձութիւնը ունի մի
գումար՝ Դպրոցի ապագայ նոր շինութեանը լատկացնելու

Դպատակով: Ցածմ ազդ գումարը հասել է 17.521 32

Այդ գումարի կազմելը սկսւած է 1880 թւից: Նորա կազմելուն մաս-
նակցել են թէ առանձին նւիրատուններ և թէ Դպրոցը ինքը, որը ազդ գու-
մարի մէջ իւր դրամական միջոցներով մասնակցել է 12. 997 թ. 81 կոպ.
գումարով: (Մանրամասնութիւնները տես. ներքեւ V): Յիշենք, վերջա-
պէս, որ 1882 և 1883 թւականների Դպրոցի հաշիւնների մէջ մի շփո-
թութիւն է պատահած, որից հոգաբարձութեանը թւում է թէ գանձա-
րանին պակասում է մօտաւորապէս 4.000 ռուբլի: Այդ հաշիւնները քննելու
վերաէ պարապած է մի առանձին հաշւագիտ:

Մուտքի մէջ լիշւած աղբիւնների մանրամասնութիւնները հետեւալ-
ներն են:

I. Կ Ա Լ Ի Ա Ծ Ն Ե Բ:

Պարեկան արգեւնք

Ռուբ. կոպ.

- Հին դպրոցի տունը, կառուցւած Դպրոցի հիմնադիր Ներ-
սէս V կաթողիկոսից..... 6.556 —
- Հին Դպրոցի հանդէպ գտնւած 21 կրպակները, սեպհակա-
նացրած Դպրոցին Ներսէս V-ից..... 6.101 —
- 21 կրպակներ, որոնք գտնաւում են Դպրոցի հրապարակի
վերաէ..... 800 —
- 21 նորակառուց կրպակներ, նոյն հրապարակի վերաէ 2.150 —
(Դոցա գետինը սեպհականացրած է Դպրոցին Մատթէոս
կաթողիկոսից, իսկ շինութիւնը արել է հոգաբարձութիւնը.
տես ներքեւ III):
- Աչմեան դպրոցական տունը, որ գնել է հոգաբարձութիւնը
1856 թ. 1.408 —

բուք. կոպ.

6) Կալւած, ընծալած Աւետիք Փիլօվեանցից.....	12.320 —
7) Կրպակ, ընծալած Գրիգոր Շերդիկեանցից.....	200 —
8) Տուն, ընծալած Ստեփան Գուլմահաշեանցից.....	200 —
9) Կրպակ, ընծալած Օթար Շաղբաթեանցից.....	180 —
10) Կալւած, ընծալած Յարութիւն Զքօւեանցից.....	1.480 —
(Այս կալւածները զտանւում են Թիֆլիս քաղաքի զանա- զան թաղերում):	
11) Ազգի, ընծալած Վրաց իշխան Օթար Ամիլախւարուց, Առղաճ- լումնում.....	150 —
12) Ազգի, ընծալած Ստեփան Ղամբարեանցից, Թէլէթում.....	10 —
13) Կրպակ Թէլէթի ուխտատեղում.....	260 —
Գպրոցին պատկանում են և հետեւալ աները, որոնք զտանւում են Թիֆլիս քաղաքում:	
14) Տուն, ընծալած իշխան Երկանտրաղուկ-Արդութեանցից, որի արդիւնքը տակաւին վակելում է հանգուցեալի եղբակը, համաձայն կտակի՝ յման իւր և որը գնահատւած է հրդե- հից ասպահովութեան համար..... 19.400 ը.	
15) Տուն, ընծալած Յուլիէիմ Տէր-Արքահամեանցից, որի ար- դիւնքը պիտի վակելէ հանգուցեալի ալրին յման իւր, համաձայն կտակի՝ Գնահատւած է 4.000 ը.	

Պ. ՈՒԽՏԱՏԵՂԵՐԻ Ա.ՐԴԻՒԽՆՔՆԵՐԻ

Բացի այս կալւածներից, Գպրոցի հիմնադիրը լառկացրել է Գպրո-
ցին զանաղան ուխտատեղերի արդիւնքները: Այս ուխտատեղերից մի քա-
նիսը կառավարում են հողաբարձութիւնից, իսկ միւսներից նաև միան
արդիւնքներն է վակելում:

Այդ ուխտատեղերը հետմեւալներն են՝

- 1) Թէլէթի, 2) Շանաբաթի, 3) Շաղկէվանքի, 4) Կրծանխի, 5) Կա-
թուղիկէի, 6) Շւնդիսի, 7) Բօշնիսի, 8) Շամշադինի, 9) Ղաղախի, 10) Ելի-
զաւէտրոլի, 11) Լոռու, 12) Շուլաւէրի, 13) Շամշուլզալի, 14) Աօղանդուխի
և 15) Մցլութիւն Դոցա ամենի տարեկան վրաք արդիւնքն է... 3.126 ը.

III. ՀՐԱՊԱՐԱԿԻ ՎԱՆՆՔԻ ՄՕՏ

Ի Տէր հանդ, Մատթէոս կաթողիկոսը, համաձայն հողաբարձու-
թեան խնդրին, որիւ մէջ վշացել էր Գպրոցի համար նոր շինւածք կառու-
ցանելու միաբը, ընծալեց Գպրոցին այն ընդարձակ հրապարակը, որ
զտանւում է վանքի մայր եկեղեցու մօտ. բայց Գպրոցի տան շինութեան
խնդրիրը այն վիճերի պատճառով, որ բացւեցին այն տեղի վերաէ դանաղան
մանր տներ ունեցողների հետ, մնաց մինչև աչժմ անկատար, թէպէտ արդ

տներից մի քանիսը հոգաբարձութիւնը գնել է զանազան ժամանակներում։ Հոգաբարձութիւնը, տեսնելով որ ազդ հրապարակի խսպառ մաքրելը այդ տներից երկարում է, որոշեց կոռուցանել նորա վերակ հրապակներ, որոնք փշատակւած են վերև (տես կալածներ, № 4):

IV. ՆԻՒԹԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐ:

(Կտակներով և ընծակաբերութիւններով, որոնցով գնւած են տոկոսաբեր տոմսեր, պահ տած Արքունական բանկի Թիֆլիսի բաժնում):	
1) Էֆենդեանց Յովսէփ, աստիճանաւոր.....	64.000 ր.
2) Ռօտինեանց Մարկիանոս, բժշկապետ.....	950 —
3) Եղիազարեանց Վարդան, երդւեալ հաւասարմատար	100 —
4) Տէր-Դաւթեանց Եսայի, Գորւաչ քաղաքացի.....	3.845 —
5) Վարդանեանց Սողոմոն, Թիֆլիսեցի	4.100 —
6) Թիֆլիսի հայ հասարակութիւնը, յանուան նախկին առաջնորդի, այժմ վեհ. կաթողիկոսի	4.000 —
7) Սամուէլեանց Միհաս, Ղզլարի ա. կարգի վաճառական	3.200 —
8) Երուսալիմսկի գնդապետի այրի Վարդարէ	5.250 —
9) Շաղբաթեանց Օթար, Թիֆլիսի արհեստաւոր	200 —
10) Աստուածատրեանց Եսայի վարդապետ, Թիֆլիսեցի	5.600 —
11) Մարկոսեանց Յովհաննէս, բժշկապետ, Թիֆլիսեցի	700 —
12) Բայանդուրեանց Գէորգ, Թիֆլ. ա. կարգի վաճառական	1.100 —
13) Շիքեանց Գրիգոր, Թիֆլ. ա. կարգի վաճառական	5.000 —
14) Փողինեանց Մաքիայի, այրի Թիֆլիս. քաղաքացու	850 —
15) Սերեղենկօ Մարիամ, Թիֆլիսեցի հայազգի	833 —
	99.728 —

V. ՇԻՆՈՒԹԵԱՆ ԴՐԱՄԱԳԼՈՒԽ:

Ցիշեալ 17.521 ր. 32 կ. գումարը, որը լատկացրած է Դպրոցի ապագալ նոր շինութեան համար, կազմւած է հետեւեալ կերպով՝	
1) Ծուրինեանց Յարութիւն, գեղատնատէր	83 51
2) Դաւթեանց Գէորգ	100 —
3) Մուրագեանց Մելքիսեդէկ եպիսկոպոս	160 —
4) Թալիրեանց Աղէքսանդր	50 —
5) Սերեղենկեան Գրիգոր	330 —
6) Ալիսանեանց Միքայէլի (դէստու. ստ. սօւետ.) ժառանգներից	1.000 —
7) Զանջուղաղեանց Ալեքսի Թիֆլ. քաղաք., ըստ կտակի	1.500 —
8) Տէր-Դաւթեանց Եղիսաբէթ, այրի աստիճանաւոր Գէորգի	1.000 —
9) Տէր-Արքահամեանց Աւետիս, Թիֆլ. քաղ.	300 —
10) Ներակաւեան Դպրոցը իւր դրամական միջոցներից լատկացրել է այդ նպատակին	12.997 81
	Գումարն է... 17.521 32

ԹՂԹԱՑՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՐՏԱՍԱՅՄԱՆԻՑ

ԱՆԳԼԻԱՅԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՌԻՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԸ

Լոնդոն, 24 վետրարի:

Անգլիակում վերջերքումս մեծ ջանքեր եղան ժողովրդական ուսումնարանները ճրի դարձնելու բայց այժմ այդ խնդիրը վերջնականապէս հեռացւեց օրակարգից:

Այդ առկիթով հարկ ենք համարում Անգլիակի ներկայիս դպրոցական հանդամանքների վերաց մի ակնարկ գցել:

Իսկական ժողովրդական ուսումնարանները նոքա են, որ կոչւում են board schools. Անգլիակում այն ժողովները, որոնք հաւաքւում են դպրոցական գործների համար, կոչւում են school board (շուլ բօարդ—դպրոցական ժողովներ կամ խորհուրդներ), խակ սոցանից հիմնած դպրոցները կոչւում են board schools (բօարդ շուլ—ժողովների կամ խորհուրդների դպրոցներ):

Անգլիակում ընդհանուր պարտադիր ուսումը մտցրած է 20 տարի առաջ: Եւ այդ միայն 1870 թւականիցն է, որ զանազան քաղաքներում և դիւշական համայնքներում կեանքի կոչւեցին այդ շուլ-բօարդները, այսինքն դպրոցական ժողովները, այն էլ՝ հիմնած ընդհանուր ընտրողական սկզբունքի վերաց: Ընտրողական ձայն վաճառում են այն ամննը, որոնք քաղաքակին տուրք են վճարում, մի ևն ոչ նույն է թէ որ սեռին են ծոքա պատկանում, ուրեմն թէ տղամարդիկ և թէ կանաչք: Կանաչքոչ միայն իրաւոնք ունին ընտրելու, այլ և ընտրելու. և այս բոպէին այդ ժողովների կարևորագոն անդամներից մի քանիսը կանաչք են և մինչև անգամ աղջիկներ: Այդ ժողովների կամ խորհուրդների ձեռքումն է ժողովրդական ուսումնարանների board-schools վարչութիւնը, որը սակած գործերը վարում է համապատասխան պարլամենտից ընդունած որոշումների՝ վերաբերեալ դասաւանդման առարկաներին, դասածամերին և այլն: Բայց դորանից նոքա ենթարկւած են կառավարութեան կամ «կրթական խորհուրդի» (Council of Education) վերահսկողութեան, որից նշանակւում են վերահսկող տեսուչներ: Սոքա ներկայ են լինում քննութիւններին և նոցա զեկուցման

համաձայն տէրութիւնը աւս կամ այն դպրոցին միանւագ օժանդակութիւն է տալիս: Պարտադիր առարկաներն են միայն՝ կարդալ, գրել և հաշել, և դորա համար տէրութիւնը վճարում է ամեն մի աշակերտի համար տարեկան 4 շիլլինդ և 6 պենս (1 ր. 50 կոպէկ ոսկի). բայց երբ տեսուչը մի ուսումնարանի համար «գիրազանց» վկանութիւն է տալիս, այդ ուսումնարանը ստանում է տէրութիւնից ևս 3 շիլլինդ (1 ր.) ամեն մի աշակերտի համար, երբ վկանութիւնը էլ լինում «լաւ»—ուսումնարանը ստանում է 2 շիլլինդ, և երբ լինում է «բաւականին լաւ»—ուսումնարանը ստանում է 1 շիլլինդ (33 կոպ. ոսկի) ամեն մի աշակերտի համար:

Բայցի դորանից տրում են առանձին օժանդակութիւններ առանձին առարկաների համար, 1 կամ 2 շիլլինդ աշակերտի վերաց՝ անգլիերէնում, աշխարհազրութեան, պատմութեան, գծագրութեան և աղջիկների դպրոցներում նաև ձևագործի մէջ ցուց տւած զառաջաղինութիւնների համար: Խոկ երբ դպրոցում ուսուցանում են նաև մաթեմատիքա, ֆիզիքա, քիմիա, բուսաբանութիւն, լատիներէն, ֆրանսերէն և աղջիկների դպրոցներում նաև խոհարարութիւն,—այն ժամանակ աւզպիսի ուսումնարանը ամեն մի աշակերտի համար, որը այդ ստարկաներից ստանձին քննութիւն է բռնում, ստանում է տէրութիւնից ամեն մի ստարկանից 4 շիլլինդ:

Որպէս կարելի է տեսնել, տէրութիւնը թողնում է ուսումնարանների վարչութիւններին բաւականին մեծ աղաստութիւն: Այդ դիմաւորապէս նորանից է, որ ինքը գործը դեռ նոր է, որովհետեւ մինչև 20 տարի առաջ ժողովրդական ուսումնարաններում իշխում էր մի անպիսի քառու, որից դժւար էր դուրս գալ: Դորա վերաց պէտք է աւելացնել նաև տեղական հանդամանքները. և որոշ սահմանների մէջ դպրոցական դործի ծաւալումը ծնողների և համացների ձեռքումն է, համապատասխան անգլիական բնաւորութեան իւր հակումով դէպի ինքնավարութիւնը և հակակրութիւնը դէպի կառավարութեան ամենակարողութիւնը: Տէրութիւնը օգնում է, նպաստում է, վարձատրում է, բայց ժողովրդից ընտրւած դպրոցական ժողովները կազմում են վարչութեան զիսաւոր փակտորը, որպէս նաև քաղաքային հարկեր վճարողները, որոնք ընտրում են այդ ժողովները, և գլխաւոր ծախքերն են քաշում: Դոքա, այդ հարկ վճարողները, սպարտաւոր են «դպրոցական հարկ» վճարելու (school rate), որը զանազան տեղերում զանազան է, միջին հաշում՝ բնակարանի վարձի 3—4 տոկոսը¹⁾: Բայց այդ հարկից դուցայած գումարները գործադրում են միմիան ժողովրդական ուսումնարանների վերաց. բոլոր աւելի բարձր ուսումնարան-

¹⁾ Անգլիայում՝ հարկաւուութեան չափը որոշում են բնակարանի վարձով. ով եւ բնակարանին տալիս է տարեկան 100 ր., այս գիպը անգլիական հարկ 3 կամ 4 բուշի, ով 500 բուշիանոց բնակարան ունի, նաև վճարում է 15—20 բուշի և այլն:

ները պահապահուում են աշակերտական թոշակներով, սեպհական եկամուռա-
ներով։ Բացի այդ «զպլոցական հարկից» և տէրութեան օժանդակութիւ-
նից, գժբաղդաբար նորեկումն աւելացաւ նաև մի առանձին թոշակ։ Պար-
լամենտը դպրոցական ժողովներին (շուլքօարդ) տւել է իրաւունք՝ իւրա-
քանչիւր աշակերտից պահանջնել շաբաթական մինչ 9 պենս (մօս 24 կ.
ոսկի)։ Բայց 24 կոպէկ շաբաթական՝ այդ նոյն խոկ Անգլիակում մեծ փող
է, մանաւանդ բազմազաւակ ընտանիքների համար։ Խոկ է, որ իրապէս ոչ
մի տեղ ացղքան չեն պահանջում, այլ պահանջում են ընդհանրապէս միան
1 պեննի, առելի հարուստ տեղերում միան դորանից առելի։ Եւ այդ փո-
ղերը հաւաքում են ուսուցիչները աշակերտներից ամեն երկուշարթի
առաւում։

Այդ կարգ ու կանոնները, որպէս տեսնում էք, կարելի է լաւացնել.
մանաւանդ այդ աշակերտական թոշակը մեծ զայրովթ չարուցեց և ամեն
կողմից սկսեցին պահանջնել այդ թոշակների վերացումը։ Այդ պահանջում
էին ոչ միայն աղատամիանները, այլ նոյն խոկ լորդ Սօլորի իւր՝ մի քանի
ամիս առաջ նօտինդամում արտասանած ճառում։

Բայց ահա ծագում է զմւարութիւն մի ուրիշ տեսակ ժողովրդական
դպրոցների կողմից։ Բանն այն է, որ կան նաև ասպէս կոչւած՝ «կամաւոր
դպրոցներ» (voluntary schools), որոնց զեկավարում է հոգևորականու-
թիւնը, մանաւանդ կաթոլիկ կղերը և բողոքական զանազան աղանդները։
Խոկ այդ դպրոցները պահպանուում են աշակերտական թոշակներով։ Այդ
դպրոցները մասսամբ գոյսութիւն ունեին board schools դպրոցներից առաջ
և սոցա մէջ չը ձուլեցին, որովհետեւ այդ վերջններում առհասարակ ոչ
մի կրօն չի դաս տրում, ուր մնաց թէ կրօնի դասաւանդութիւնը մի որ
և իցէ գաւանութեան տեսակէտից կատարէք։ Կրօնի դասաւատութիւնը,
ժողովրդական դպրոցները չիմնելու ժամանակ, տէրութեան գործը
չէ, այլ եկեղեցու գործը և խոկապէս այդ կատարուում է հոգևորականու-
թիւնից կիրակնօրեակ դպրոցներում։ Բայց զորանով չէին ուզում բաւա-
կանանալ այդ «կամաւոր դպրոցները», աճնպէս որ սոքա շարունակեցին
իրանց գոյսութիւնը՝ «քօարդ-շուլ» դպրոցների կողքին։ Բայց երբ վերջին-
ներս սկսեցին պահանջնել, որ թոշակները վերացւեն և տէրութիւնից օժան-
դակութիւն պահանջնեցին, —հոգեւորականների դպրոցներն էլ սկսեցին պա-
հանջնել նոյն օգնութիւնը տէրութիւնից!—Ղաւ, այդ ձեղ կը տրւի, ասացին
աղատամիանները։ Բայց ում տէրութիւնը օժանդակութիւն է տալիս, նորա
վերայ էլ տարածում է իւր հսկողութիւնը։ Խոկ այդ բանից նոքա լսել ան-
գամ չէին ուզում։ Այն ոգեսորածները, որոնք այդ «կամաւոր դպրոցներին»
մեծամեծ զումարներ են տալիս, վեա կը կանգնեն և առհասարակ այդ
դպրոցները կը խորտակւին։ Ուրեմն կը մնաւ որ տէրութիւնը ինքը իւր
ձեռք առնի այդ դպրոցների պահպանումը։ Արդ, ժողովրդական դպրոց-
ներում եթէ թոշակները վերացւեն, տէրութիւնը, որպէս հաշնում են,

պէտք է տայ տարիեկան 2 միլիոն ֆունտ ստերլինգ (մօտ 20 միլիոն սովոր բուրլի): Իսկ եթէ կամաւոր դպրոցներից էլ հաշւ վերցնի տէրութիւնը, վերջինս պէտք է միանդամից վեր դնի՝ 30—40 միլիոն ֆունտ ստերլինգ (300—400 միլիոն սովոր բուրլի): Իսկ զորանից զարհուրում են պահպանողականները, որոնց կուսակիցն է Սօլոբրի'ի մինիստրութիւնը: Աղասամիխանները գորանից խնդիր են չինում, թէ պահպանողականները առհասարակ չեն ուղում ուսման ձրիութիւնը: Դորանով մեկնում են այն տաք վիճաբանութիւնները, որ նորերում անդի ունեցան անգլիական պարլամենտում, որոնց ելքը այն եղաւ, որ ինդիրը անորոշ ժամանակով վատաձգեց:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ ԿԱՐԻՆԻՑ

ԴՊՐՈՅԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Կարին, 17 փետրվարի 1890 թ.

Քաղաքիս մէջ Ազգակին իշխանութեան ներքև կը գտնւին չորս վարժարան, Մարեան, Տ. Աղարեան երկսեռ ծազկոցներու բատկացւած, Թարգմանչաց վարժարան իգական սեռի համար և Մարդ դպրոցը՝ նկեղեցւոյ կից, որ 500 աշակերտ կը պարունակէ 11 դասակարգի (?) բաժանւած:

Սույն վարժարանի տեսչութիւնը 1889 թ. սեպտեմբերի մէկին Պ. Գ. Զիլինկերեանի բանձնւեցաւ, որ վեց եօթը տարի առաջ բոլորովին անուս Տփխիս դիմեց, մի քանի տարի հոն ուսաւ և վերադառնալով Տաճկաստան՝ Ալաշկերտի Միացեալ ընկերութեանց վարժարանները դասաւու եղաւ, այնուհետև ի Պայտպատ տէրութեան գանձարկեաց ըլլալէ վերջ՝ կարին վերադարձաւ, որովհետեւ 1889 թւի նորակազմ ուսումնական հողաբարձութիւնը անոր չնորհեց տեսչութիւնը, հրաժարեցնելով նախկին տեսուչ Եղիշէ էֆ. Տուրսունեան:

Բայց ոչք են դասաւուներն Մարդ Վարժարանին:

Ահաւասիկ ամենէն կարեոր և կինուական խնդիր մը մեր հայ պատանեց, մեր ուսանողաց համար:

Կաւկասեան հակը, որ կրթական խնդրոց մէջ մեղմէ խիստ եռանդուն են, որ և մեզմէ աւելի լուսամիտ են, չը պիտի զարմանան երբ իրանց լրագրաց էջերուն մէջ կարդան թէ՝ Կարոնոյ ազգակին վարժարանաց դասաւուներուն մնձամասնութիւնը կը բաղկանակ 15 կամ 19 տարեկան թերուս պատանիներէ, որք 50, 60 և 70 զրուշ (աւանքն հինգ կամ վեց բուրլի) ամսականաւ կը դասախուեն:

Մեր վարժարանաց խանգարման պատճառուներէն մի քանին կը փորձեմ հոս թւել, բաց թողնելով աւելի ընդհանուրները, որ կազ ունին երկրիս ներկայ դրութեան հետ 1880 թ. Գեր. Օրմանեան սրբաղան կարնող առաջնորդ ընտրւելով, իւր առաջին հոգի ըրաւ մեր վարժարանները բարեկարգ վիճակի մէջ դնելու, հրաժարեցուց Մարտ վարժարանի տեսուչ Մ. Էֆ. Աղապալեան, (որուն վերաէ քիչ վերջ պիտի խօսեմ), քիչ ժամանակամիջոցի մէջ լաջողեցաւ բոլոր վարժարանները միացնել և իւր տաժանելի պաշտօնավարութեան հետ ի միասին երկուու վարժարանաց թէ ընդհանուր տեսչութիւն ստանձնեց և թէ մի քանի դասախոսութիւնք ընելու լանձնառու եղաւ:

Օրմանեան սրբաղան այնպիսի մի գեղեցիկ և օրինական ծրագրաւ կը կառավարէր վարժարաններն, որ կրնամ ըսել թէ բարուական և թէ ուսման տեսակէտով նախանձելի վիճակ մ'ունէին:

1882-ի շրջանը լաջողապէս և գրեթէ առանց խոչընորուափ անցաւ, փորձառու անձերէ կազմւած ուսումնական հոգաբարձութիւն մը, ընդ նախադահութեամբ Օրմանեան սրբաղանի, ամեն ջանք ի գործ դրաւ նպաստելու թէ բարուապէս և թէ նիւթապէս դպրոցին լառաջաղիմութեան: Զաւակաց հայրերը վճարնցին թոշակներն, աղքատ տղակոց թոշակներն ալ չօժարարար հարուստները տւին:

Բայց 1883-ի շրջանը թերի մնաց. Սանասարեան վարժարանի հաստատումը Աղդապին դպրոցին առաջին և ամենամեծ հարւածը տւաւ: Այս վարժարան ի սկզբանէ թէ գաւառներէն և թէ մեր քաղաքէն որբ և աղքատ մանկտիք հաւաքեց, բայց ընդուուզ ծրագիրը փոխւեցաւ, տակաւ առ տակաւ ձրի առնւած տղաքը հետացուցին, իսկ թոշակառներու թիւը ստուարացուցին. գրեթէ բոլոր հարուստները իրանց տղաքը փոխադրեցին Սանասարեան վարժարան՝ անխնաչարար վճարնով տարեկան 25-ական օսմ. ոսկի՝ մօտ 200 բուրբի. հետեարար Աղդապին վարժարանը նպաստէ զրկւեցաւ, դասատուները հօթը ամսով չափ իրանց ամսականները չը ստանալով՝ հրաժարեցան, և քանդւեցաւ դպրոցը:

Մեր վարժարանաց խանգարման երկրորդ պատճառուր:

Վերը վիշեցինք թէ՝ 80 թվին Մ. Էֆ. Աղապալեան Մարտ վարժարանի տեսուչ էր: Այս պարոնը բոլորովին անկարող և տղէտ ըլլալուն պատճառաւ, Օրմանեան սրբաղան անմիջապէս զինք հրաժարեցուց պաշտօնէն: Ցիշեալ էֆ.-ին հազիւ երկու տարւան ժամանակամիջոցի մէջ իւր մի քանի արբանեակներու միջոցաւ կրցաւ համոզել ընտանեաց հայրեր և 150 չափ տղաք անջատեց Մարտ վարժարանէն, և իւր հաշով մի առանձին դպրոց հաստատեց տան մը մէջ, քիչ մը գրամ և մէկ երկու դասատու ալ,—ահն դասախոսութիւնք ոկսան:

Աղապալեան էֆ.-ին հարկ անհրաժեշտ է ծանօթացնել ձեզ. մի անձնաւորութիւն լնքնուս, բայց իւր մտքին մէջ իբր Փրանսագէտ, փիլիսոփա, իւր շրջանին մէջ պուօֆէսօր և միանդամալն մասնա-

գետ բնագէտ, ինչպէս որ իւր տգէտ արբանեակներն զինք կը կոչեն, ո-
րովհետեւ աւս էֆէնդին հրատարակած է մի բնագիտութեան ժողովածոյ
կամ հաւաքածոյ, որ երբէք չը գործածւիր վարժարանաց մէջ և ընթերցող
մը բնագիտութեան վերայ գաղափար մը չը կրնար կազմել:

Աղապալեան վարժարան, որովհետեւ ոչ կատարեալ ծրագիր և ոչ ալ
դրամ ունի, գանձւած թոշակներն ալ աննշան գումարներ ըլլալով, մէկ
երկու տարիէ ի վեր ելևատացովը բաւական մէծ բաց մը կ'արտադրէր.
Հիմնադիրը պարտուց ներքին ճնշւելով, դիմեց աղդ. իշխանութեան 89 թ.
հոկտեմբերին, հնաղանդութիւն և հալատակութիւն լազանելով և իւր դպրոցին
համար նպաստ մը խնդրեց, լազարարելով որ, եթէ խնդրած նպաստը չը
արւի, պիտի հարկադրի իւր դպրոցը գոցելու:

Աղդ. ժողովը առանց խնդիրը լուրջ խորհրդածութեան և գրեթէ ոչ
ալ ովհաբանութեան առարկաց ընելու, ընդունեց երկու տարի նպաստել
աւդ վարժարանին, նպաստ մը, որ թէ ասօրէն էր և թէ բոլորովին ա-
պարզիւն: Աղդ. ժողովով անդամներէն միան կ. էֆ. Տ. Աղարիան, որ քա-
ղաքիս մէջ նշանաւոր հանդիսացած է իւր տաղանդով և շահած ժո-
ղովրդականութեամբ և միակ է իւր անկողմնակալութեամբ, բոլորեց
աղջու և իրաւացի բանիւք նպաստ լատկացնելու խնդրուն դէմ, առաջար-
կելով ժողովով՝ միացնել Աղապալեան դպրոցը աղդ. վարժարանաց, և եթէ
արժան կը տեսնել՝ Աղապալիան էֆ.-ի ալ պաշտօն մը տալ, Բայց Քա-
ղաքակ. և Աղդ. ժողովոյ ատենապետք համախոն ուսումնական հոդաբար-
ձութեան նորեկ անդամներու հետ, միահամուռ պատասխանեցին թէ եթէ
150 աշակերտ մեր վարժարանաց վերայ բարդուն, մէկ կողմանէ տեղուն
անձկութիւն պիտի պատճառէ, միւս կողմանէ մեծ ծախուց պիտի են-
թարկւի աղջը:

Սուն պատճառարանութիւն երկու կարևոր գաղտնիք կը պարունակէ
իւր մէջ. ա. երբ վերաւի աղդ. վարժարանաց վերայ 150 աշակերտք բարդ-
ւին՝ տեղուն անձկութիւնը վերջին ծայր զգալի պիտի լինի, բնականա-
բար աւս սլարագալին աղջը պիտի պահանջէ իւր դպրոցներուն ամենէն
շքեղը, հոչակապը և ընդարձակը, Հոկիսիմնանց վարժարանը, որ Սանա-
սարեաններու լատկացւած է չնչին տարեգնոյ մը փոխարէն: Բայց մեր
ժողովականաց շատերուն զաւակունք որովհետեւ աչդ Սանասարեան վար-
ժարանը կը լաճախին, չեն ուղեր Սանասարեան տեսչութեան փափուկ
զգացումները վիրաւորմէ: բ. եթէ Աղապալեան էֆ.-ին Աղգավին վար-
ժարանը մուռ գտնէ, թէ նորընտիր տեսչին և թէ ուսումնական ժողովոյ
հաշուն չը զար...

Մեր վարժարանաց խանգարման երրորդ պատճառը—երկրիա ընդ-
հանուր դրութիւնը և մասնաւորապէս նախանձը ու անձնական խնդիրները.
աղդ վերջիններոյ վերայ կանդ առնեմ:

Ատենօք կ. Պոլիս ունէր երևսփոխանութեան անդամ Սահիան էֆ.

Փափազեան անուանի մի անձ, որոյ կենսաղբութիւնը մի քանի տարի չառաջ Արփիարեան էֆ. ըրաւ «Ա. ը և ե լք ի» մէջ. — եռանդուն, գործօն, ուսեալ մի երեսփոխան, երբ Կ. Պօլսոյ մէջ ընկերութիւն մը կը հաստատի եղեր, ամեն ձիգ կը թափէ՝ կարելի եղած միջոցներով նպաստելու. վարժարան մը կը հիմնաի, ըստ ինքնեան լանձնառու. կը լինի ձրի դասախոսութիւնք ընելու ե ազն ե ալն, բայց երբ գործը լառաջադիմելու կը սկսի եղեր, դարձեալ լիքն է, որ ամենամեծ հարւած մը կ'ուտաք եղեր զան տապալելու:

Կարինն ալ բաւական ժամանակէ ի վեր ոնի մի պատուհաս, Յ. էֆ. Տ. Մելքիսէդէկեան անուամբ, այժմ ատենապետ Աղդակին ժողովով Ալս է Փէնդին, որի ազգ. գործերու համար անձնեփրաբար աշխատելը կը տեսնաի, կրթական խնդրոց մէջ կը ջանաչ միշտ առաջին տեղը բռնել. բայց երբ կը տեսնաչ որ գործը լառաջադիմելու վերաէ է, դարձեալ ինքն է որ առաջին հարւածը կ'ուտաք իր երկու ուրիշ արբանիակներու հետ, որ միշտ իրմէ կը ներշնչչին: Ինչպէս որ տեսնած է միշտ, այս մարդ չը փափաքիր, որ կարեռ մէջ ուսումը ծաւալի և բնիկները կամ լարտաքուստ եկող դասասուներն իրմէ աւելի ուսնալ կամ ֆրանսագէտ լինին, որ ինքն ևս արդէն ինքնուս մը լինելով՝ ոչ ֆրանսիական վրականութիւնը սովլած է և ոչ ալ կանոնաւոր խօսակցութիւն մը զիտէ, ոչ ալ ուրիշ ուսումներ. նա քիչ շատ մաշնենի լեզուն ուսումնասիրած է, բայց գրագէտ չէ:

Նախանձը և եսականութիւնը միացեաւ, զինքը դրդուած ևն ազդեցութիւն բանեցնել ան անձանց վերաէ, որք ուսեալ են, բնական է թէ սոքա ևս չը պիտի հանդուրժեն ազգպիտի տղէտ և գոռող անձնաւորութեան մը արարքներուն. և այն վարժապետներն, որ տղէտ ևն՝ կրնան մշտնջնապէս իրանց պաշտօնը վարել ստորնաբար խոնարհելով, ի սէր իրանց հացին:

Եւր ճարտասամնութեամբ աղղաքին պաշտօններու մէջ լաջողած է միշտ տեղ գրաւել և իւր ստացած աղղեցութեան չնորհիւ Տ. Մելքիսէդէկեան էֆ. 1879-ին աքսորեց (բացարձակ սուտ ամբաստանութեամբ) Կարծոյ Ընկերական վարժարանի տեսուչ Յովակիփ էֆ. Գասպարեանը, այժմ տեսուչ Դեհրանի Ընկեր. վարժարանին:

1880-ին դարձեալ մեր Ընկեր. վարժարանի¹⁾ տեսուչ Գրիգոր էֆ.

1) 1872 թւականին հաստատւեցաւ Ընկեր. վարժարանը, ունիքը մի առանձին հոգաբարձութիւն, ըոլորովին անկախ աղղային որ և կցէ եշխանութենէ կամ հոկողութենէ. հոս կ'ընդունէին այն աշակերտք, որք, ըստ կարգի, կը վճարէին տարեկան 3 էն 8 սու. ոսկի, և քանի մը հարցուստներ սան ալ ունին այս հաստատութեան մէջ: Այս գովորցի ամբողջ շըջանը զբեթէ 10 տարի տեսեց, բայց յուսուցած օդուտը չը կըցաւ մատուցանել աղցին, որովհետեւ շնորհիւ Տ. Մելքիսէդէկեան էֆ. և բրած ջանից և ցոյց տւած փոյ թեռանդն ոգւոյն, սոյն հաստատութեան տեսուչներն 9 ամիսը մի անդամ կը հրաժարէին և այսպիս ամեն տեսուչ հազիւթէ իւր ծըագէրը կազմ վիճակի մը մէջ կը դնէ, ահա երկըրդ տեսուչ մը, որ է կիմանց կը

Սանդուլճեանը (քանակագիտ մաթեմատիկոս) ուսումնաւորաց ի Պրիւտէլ և Պարիդի մէջ աշխատած) իւր հրաժարականը տւաւ, Տ. Մելքիսէդէկեան էֆո-ի ըրած անտեղի և անհիմն դիտողութիւններէ զգելով. Միացեալ ընկերութիւնք անմիջապէս զինք Կիլմկիու վարժարանաց տեսուչ կարգեցին,

20 ոսկի ամուսիանաւ:

Մանդալճեանի մելնելէն վերջ, կարին ժամանեց պարոն Պօղոս Դելիկեան (աղա Մանասարեանի սանը). սա ևս քանակագէտ, ի Ստրասբուրգ ուսումնաւորաց:

Մեր քաղաքին մէջ հաղին թէ լսեցինք իւր համբաւը և ճանչցանք զինք Անասարեանի հիմնարկիլիք վարժարանին տեսուչ, երբ ազգ, վարժարանաց հոգաբարձութիւնը դիմեց պ. Դելիկեանի ազաշելով, որ ձրիարար քանակագիտութիւն ուսուցանէ աշակերտաց: Պ. Դելիկեան սիրով ընդունեց այս առաջարկը, և առաջին դասախոսութեան միջոցին, ուր աշակերտաց քանակագիտութեան նախագիտալիքը կը պարզէ պարզ և ժողովրդական լեզուաւ, այդ պահուն Տ. Մելքիսէդէկեան իսկ ուրիշ մի անձի հետ Մայր դպրոցին սրահը կանգնած կը հեղնին պ. Դելիկեան, կը ձգէ անմիջապէս սրահը և այլ ևս ըստ դասախոսեր: Նա Ընկեր. Վարժարանին միայն վեց ամսու չափ դասախոսեց ամսական 7 վիրաց ստանալով:

Պ. Դելիկեան որովհետեւ աղդ. իշխանութեանց հրամանին անսալու պարաւաւոր չէր և որովհետեւ Տ. Մելքիսէդէկեանի բարի քմաց համեմատ չ'ովեց շարժիլ, ասս վերջնը զարացած, «Շւզնոր» ստորագրութեամբ այն չափ իսխատ զրարարիչ հրատարակութիւնք ըրաւ լրագրաց մէջ, որք մինչև բարերարին ականջը հասաւ: Աղա Մանասարեան այդ սուստ հրատարակութեանց հաւատոք ընծայելով, տեսչական պաշտօնէ հրաժարեցուց պ. Դելիկեանը, լանձնելով զայն պ. Յ. Մադաթեանի և սպառնալով միանգամայն զինքը դպրոցէն արտաքսել:

Այս պարագավին, պ. Յ. Մադաթեան ազնւար ար վարւեցաւ իւր ընկերոջ նկատմամբ և ընդհանուր համարձակեցաւ միծ ազդեցութիւնք բանեցնել, կը հրամայէր իբրև տէր իշխող:

Ո՞ր զգալուն սիրու պիտի կրնար տոկալ այս ստորնացման, այն ևս Դելիկեան, որ վեհանձն էր, օժտեալ ազնւական և բարձր ձիրքերով բաց ծափակեղ ժողովրդական:

Ո՞հ. անկարելի էր տոկալ. շատ չը տեսեց և չարաբատիկ օր մը լանկարձամահ եղաւ կաթւածէ:

փոխէ ծրագրին ձեւ և դասախոսութիւնք կը փոփոխէ ըստ հաճոյն. գլեթէ տեսուչ ներէ զատ իւրաքանչիւր տարի չորս կամ հինգ դասաւու և վեց կաւալարիչ կը փոխէ վերջապէս Օքմանեան որը ազնաման տաս վարժարանին բաղդը Տ. Մելքիսէդէկեանի ձիրաններէն հագիւ կրցաւ ազատել, 1883-ին, Ընկերական վարժարաննը միացնելով Ազգա վարժարանաց:

Վերջապէս Տ. Մելքիսէդէկեան էֆ. 1889-ին հրաժարեցուց (Ներշնչելով նորակազմ ուսումնական հոգաբարձութիւնը) Կարնու ազգ. վարժարանաց ընդհանուր տեսուչ Տուրսունեան Եղիշէ էֆ.-ին, որովհետև 1880—1889 թւական այս էֆինդին չը համակերպեցաւ իւր բարձր հրաման. ներուն, մէկ իւսաքով չ'ուղեց սոտրնաբար զինքը շողոքորթել, ուրիշ դասառաց պէս տղիտութեամբ օժտւած չը լինելուն համար. Քանից խեղճ Տուրսունեանը հրաժարեցուցին այս պատճառաւ, բայց ժամանակ մը անցունելով, երբ կը նշարէին թէ՝ այդ անձնաւորութեան պէտքը մի քանի տեսակիտավ զգալի էր, կրկին տեսուչ կը կանգնեցնէին. 1888-ին ալ հրաժարեցուցին, բայց այս անդամ վարժարանին ուսանողը մեծ աղմուկ բարուցին, առ ժամանակեավ ուսումնական հոգաբարձ. Տ. Մելքիսէդէկեան և Մ. Պալլարեան էֆինդիներէ պահանջեցին իրանց տեսուչը, որ տարի մը ևս պաշտօնավարեց. Այս էֆինդիներն չը խեղճացին փոքր ինչ զրպարտել զծուրսունեան. բայց չեմ կրնար զարմանքս չը լաջնել, որ ազգ. վարժարանաց մէջ եօթը-ութը տարիէ ի վեր միքանի դասատուներ կան, որք ի միջի այլ զեղիտութեանց՝ բոնւած են փոփոխական (?) հիւմնդութեամբ և այս կարգի դասաստուներն ծանօթ են իրանց, բայց չեն ուղեր զոչիլ:

Չը մոռնամ ըսել թէ պ. Տուրսունեան Եւրոպիոց մէջ սովորած էր լատիներէն, խտալերէն, Փրանսերէն, այնպէս որ աչժմ մեր քաղաքին մէջ կրնամ ըսել թէ իրմէ աւելի լաւ Փրանսագէտ մը չը զտնւիր. Պ. Տուրսունեան, 10 տարիէ ի վեր, Կարնու կրթական գործերու մէջ միշտ ամենէն բարձր ժէ կարեսոր պաշտօներ վարելէ վերջ, Կ. Պոլլս վերազարձաւ և հոն Խատողիւղի Ներսէսեան երկսեռ վարժարանաց ընդհ. անսուչ կարգեցաւ 12 ոսկի ամսականաւ. Տ. Մելքիսէդէկեանի և նորընտիր ուսումնական հոգաբարձութեան խմաստակ անդամներու արժէք զնահատելու կարող կամ անկարող ըլլալնին ապացուցանելու համար, այս չափ միան ըսեմ, որ անցեալ տարի պ. Տուրսունեանին և ոսկի ամսական չատկացուցած էին, միևնուն անձը այսօր ամսական 12 ոսկի կը ստանայ ի Կ. Պոլլս.

Ասկէ երկու տարի լաւած պ. Միսակ Գալիթաննեան, «Թիկար» ամսաթերթի միջոցաւ, Կ. Պոլսու թէատրոններու մէջ սովորած երգիծաբանական լեզուաւ և ոճով, մի քանի չօգւածներ հրատարակեց, որոց մէջ կը հարւածէր մեր ազգ իշխանութեանց անդամներն թէ՝ սոքա ծով են և չեն գործեր, թէ զպրոցներն հաւասարեցուցած են ախուներու և աղն, և աղն, բայց եթէ զարմանալի սլարագաւ մը ալ կա՞ սա է որ Պ. Մ. Գալիթաննեան ի կարին վերադառնալով, ջանաց ուսումնական հոգաբարձութեան անդամ ընտրւիլ և եղաւ. բայց փոխանակ մեր զպրոցներն աւելի բարեկարգ վիճակի մը մէջ զնելու, իւր «Թիկար» մէջ նկարագրած ախուններն հորթանոցի վերածեց, 70—80 մանկադի փոքր սենեակի մէջ լեցնելով. Պ.

Մ. Գալթանձեանի կը բաւականանամ խորհուրդ տալով, որ գէթ աւսու էստոյ ալ Տ. Մելքիսէդէկեանի օրդանը չը լինի:

Այս բարեկենդանէն լառաջ, երեկոյ մը, տեղիս «ուսեալների» խումբը կը խորհէր թէ կարնու ժողովուրդը ինչ միջոցաւ զարմացնելու է։ Շատ մը վիճաբանութենէ վերջ, որոշեցին ազգասիրաբար մի ներկալացում տալ, դպրոցին աղքատ տղաջոց նպաստելու նպատակաւ, Ուստի դիմեցին կառավարութեան, որ բացարձակապէս մերժեց իրանց առաջարկը, Յետոյ մէկը կ'առաջարկէ այդ խումբին, որ նախ իրանց մէջ հանգանակութիւն մ'ընեն և իւրաքանչիւր անձ այդ խումբէն երկ-երկու ոսկի տալէն վերջ, սկսեն չետոյ դուրսէն ալ հանգանակութիւն ընկը նրբ երկ-երկու ոսկի տալու առաջարկը լսեցաւ, հանգանակութեան խնդիրը ձգեցին և խորհեցան ուրիշ բան, որ դործադրեցին, այն է բարեկենդանի երեկոներն խորովին Տրապիզոնի օղի և Խարբերդի գինի վակելել, փոխանակ աղքատ տղաջոց նպաստելու։ Պ. Մ. Գալթանձեան ազգասիրաբար չել իւր ընկերները զւարձացնելու համար, Յիրաւի, բոլոր կարնեցիք այդ քէֆին համար զարմացան։

Վ. ԱՍՔԱՆԱՋԵԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԽՇԽԱՆ ԲԻՍՏԱՐԿԻ ՀՐԱԺԱՐԱԿԱՆԸ

Քաղաքական ասպարիզից հեռացաւ այն մարդը, որը ներկայ ժամանակների քաղաքականութեան հանգոյցը իւր ձեռքուժն ունէր բռնած, սկսած քսան տարիներից դէս: Խշան Յիամարկը, որի անունի հետ կապւում էր քաղաքական ամեն մի եղելութիւն, այժմ հեռացած է իւր բոլոր պաշտօններից: «Մուրճ»-ի լնթերցողները նորա նշանակութեան հետ արդէն քաջ ծանօթ են. մենք չը սպասեցինք նորա հեռանալուն, որ այդժամանակ արդար դատաստան անենք նորա վերայ: «Մուրճ»-ը իւր լնթերցողներին ծանօթացրեց նորա հետ իբր մեծ հայրենասէրի, մեծ զիպլօմատի, հեռու և լայն ծրագիրների ու բեղմնաւոր մոքերի տէր մարդու, մի մարդու, որը իւր հանճարի ոյժով ամենակարող դառաւ ոչ ամեն ինչ ճնշելու ու մեռյնելու համար, այլ կերպարանափոխելու և ստեղծելու համար: Նա գլուխ բերաւ գերմանական միութիւնը, որը բոլոր մեծ գերմանական հայրենասէրների իզման ու փափազն էր եղած. բայց նա այդ գլուխ բերաւ աւելի փայլուն և հաստատ կերպով, քան որ և է մարդ դորանից առաջ երազել անգամ կարող էր: Նա այդ կատարեց տրաքեցնելով երկու ահեղ պատերազմներ, մեկը՝ Աւստրիայի գլուխն, որի գերիշխանութիւնը գերմանական պետութիւնների վերայ խանգարիչ էր Պրուսիայի ձգտութներին, այն Պրուսիայի, որը միահ կարող էր կոչւած լինել մի առողջ և հաստատուն միութիւն գլուխ բերել, և երկրորդ Ֆրանսիայի գլուխն, որի գերիշխանութիւնը Եւրոպայում խանգարիչ էր առհասարակ գերմանական քաղաքական զարգացման:

Գերմանիայի քաղաքական միութիւնը ստեղծելուց յետ, նա իրան ամբողջապէս նւիրեց իւր ստեղծած պետութեան հաստատութեան, ապահովութեան և զարգացման։ Դորա համար նա աշխատեց ամենից առաջ, որ Գերմանիան շարունակէ մնալ այն զինւորական պետութիւնը, որի ոյժով միայն նա կարողացաւ իւր դէմ կանգնած խոչնդուները հեռացնել։ Միլիոնարիզմը եղաւ դորա հետեանքը։ Մնալով առաջին զինւորական պետութիւն, նա աշխատեց կապել այդ պետութեան քաղաքական շահերը հարեւան մեծ պետութիւնների քաղաքական շահերի հետ։ Նա մօտեցրեց իրան Աւստրիա-Ռւնդարիային և կապեց սորան իւր հետ՝ գրւած դաշնակցութիւնով, որի ամրութիւնը և փոխադարձ շահերի վերաց հիմնած լինելը անուրանալի է։ Նոյն ձեռով կապեց իւր հետ նաև Խոալիային։ Այսպիսով Բիսմարկը Պրուսիայի մէջ ձուլեց Գերմանիան, ստեղծելով գերմանական պետութիւնը, իսկ ապա Գերմանիայի քաղաքական շահերի շրջանի մէջ զցեց Աւստրիա-Ռւնդարիային և Խոալիային, ստեղծելով միջին Եւրոպայի եռապետութիւնը։ Երեք քաղաքական էւլիւցիա կատարեց այդ մարզը։ մէկով գերմանական գործերից հեռացրեց Աւստրիային (1866) և ստեղծեց Հիւսիսային Գերմանական Միութիւնը։ այնուհետեւ զրկեց Ֆրանսիային գերիշխանութիւնից (1870—71) Եւրոպական գործերում և ստեղծեց գերմանական կայսերութիւնը, իսկ ապա (1879 և 1887) մի քաղաքական դաշնադրական զանգւած կազմեց միջին Եւրոպայի երեք մեծ պետութիւններից։ Պատմութեան մէջ անօրինակ մի բան է, որ մի նոր քաղաքական կազմակերպութիւն, անգամ մի նոր պետութիւն, 17 տարում (1871—1887) ստանայ այն հաստատութիւնը, որ այժմ ներկայացնում է Գերմանիան։

Մեր դարում մեծն նապօլէօնը արաւ աւելին, քան ինչ արեց Բիսմարկը. բայց նապօլէօնի գործը խախուտ էր. նորա գործի զիմացկութիւնը կախւած էր նրանից, թէ ո՞րքան երկար պիտի փայլէր նորա պատերազմական հանճարի ասաղը։ նապօլէօնը նւաճող էր՝ բառի բուն նշանակութեամբ. Բիսմարկը նւաճող էր միայն այնքանով, որքան հարկաւոր էր շէնք կառուցանելու և նրան հաստատ ու ապահով կացուցանելու համար։ Բիսմարկը հայրենասէր էր՝ բառիս ընդուրձակ նշանակութեամբ։ նորա ոյժը կը պատէր՝ շատ բան աւել-

բելու համար, բայց նա չէր աւերռում։ Բիսմարկը, իբր գերմանականութեան մարմնացումն, մեծապէս կուլտուրական մարդ ցոյց տւեց իրան, և իբր այդպիսին—նա 19-րդ դարու մեծ զաւակներիցն է։ Բիսմարկը մեծ յառաջդիմական մինիստր էր։ Իշխան Շետտերնիխը 40 տարի շարունակ առնենաազդու մինիստրն էր Աւստրիայի, բայց նա իւր բոլոր հեղինակութիւնը զործ դրեց ամեն կեանք մեռցնելու և ամբողջ աղջեր յետադիմական ուղղութեան ու վնասակար մթնոլորդի մէջ պահելու համար։ Իշխան Բիսմարկի մեծ նախորդը որոնսելու համար պէտք է դիմել 18-րդ դարուն, ուր կը հանդիպենք մէծն Ֆրիդերիկոսի անձնաւորութեանը։

Գերմանական մեծ կանցլերի գործը միմիացն նորա արտաքին քաղաքականութեան մէջը չէր։ Նորա մեծ գործքերից շատերը վերաբերում են ներքին խնդիրներին։ Նա ոչ միայն կարողացաւ քաղաքականապէս կապել գերմանական պետութիւնները, այլ կարողացաւ իւր ձեռքն առնել մի պետութեան առաջնակարգ ներքին խընդիրները՝ իւր ստեղծած տէրութեան տնտեսապէս և սօցիալապէս մեծ զարկ տալու համար։ Տարիներ շարունակ նա մղեց ահեղ պատերազմ կղերականութեան ողու դէմ, աշխատելով հեռացնել գերմանական ողուց հռովմէական—պատական աղջեցութիւնը։ Լիապէս չը տարաւ յաղթութիւն, բայց ժամանակի պահանջը կատարեց։ Տնտեսական կողմից՝ նա ներկայացաւ մեծ հովանաւորող գերմանական շահերի և, հակառակ իշխող կարծիքներին, նա հովանաւորող սիստեմը մոցրեց ոչ սկզբունքով, այլ միացն իբր իւր երկրի և իւր ժամանակի պահանջ։ Գերմանիան, որը համաշխարհային վաճառանցներում գրեթէ հաշւի չէր առնելում, այսօր, շնորհիւ իւր ահազին արդիւնաբերութեան, դասւել է աշխարհի ամենավաճառաշահ երկիրների շարքը։ Նորա արտաքին աւուտուրը այսօրւայ օրս երրորդն է Անգլիայից և Ֆրանսիայից յետոյ. անգամ, որպէս այդ երևաց Ֆրանսիայի պատգամաւորների ժողովի մաքսային մասնաժողովի գեկուցումից, անցեալ փետրւարին կարդացւած՝ 1888 թւականին Գերմանիայի արտաքին առևտուրը, գուցէ միացն ժամանակաւորապէս, գերազանցեց Ֆրանսիայի արտաքին առևտուրից։ Վերջապէս, ներքին խնդիրներից միշենք սօցիալական րեֆօրմները, որոնց սկիզբը դրւեց 1881 թւականի կայսերական պատգամադրութիւնով և

որի հեղինակն էր իշխան Բիսմարկը։ Այդ թւականից դէս տրւեցին նշանաւոր օրէնքներ յօդուտ բանւոր զասակարգի։ և նոյն խակ նորերում Բերլինում կայացած «Աշխատանքի կօնֆերենց» գումարելու միտքը տւողը եղած է նոյն Բիսմարկը։ Վերջապէս Բիսմարկի հայրենասիրական մէծ զործքերից մէկը այն է, որ նա Գերմանիան դարձրեց մի կօլօնիական պետութիւն։ Երբէք Գերմանիան չէր ունեցած և չէր ձգտած ունենալու կօլօնիաներ օտար աշխարհներում։ Այժմ Գերմանիան նաև կօլօնիական պետութիւն է, որը շահեր ունի ոչ միայն իւր առհմանների մէջ, այլ և դրսում, ովկիանոսներում ու մէծ ցամաքներում։

Այս բոլորի համար հարկաւոր էր մեծ կամք, մեծ ոյժ, խորը համոզմունքներ, մեծ առաջդիմական ոգի, որովհետեւ բոլոր այդ խնդիրների համար Բիսմարկը իւր դէմն ունէր հնուց կազմակերպւած կուսակցութիւններ գերմանական պարլամենտում։

Նորհիւ իւր բացառիկ դիրքին պետութեան մէջ, պարլամենտական ընդդիմադրութիւնները չէին կարողանում խախտել նորա զիրքը, նորան տեղահան անել իւր պաշտօնից։ Ոչ հանդուցեալ Վիլհելմ I և ոչ էլ ազգը, իւր ամբողջութեամբ առած, կը ցանկային գերմանական նոր հայրենիք ստեղծողի հեռանալը՝ որ և է պարլամենտական ընդդիմադրութիւնն պատճառով։ Եւ զիսաւորապէս այն պատճառով, որ Բիսմարկի ձեռնարկութիւնների համար հաւատ ունէին։ Խակ Բիսմարկը արդէն իւր անձի մէջ միացնում էր թէ պետական կանցլերի, թէ արտաքին գործերի մինիստրի, թէ պրուսական մինիստրութեան նախագահի և թէ պրուսական առետրական մինիստրի պաշտօնները։ Եւ որքան բացառիկ էր այդ երեսոյթը, նոյնքան էլ բացառիկ էր նորա զիրքը երկրի մէջ՝ նաև պարլամենտի դիմաց, ուր նա գիտէր ամեն անգամ իւր օգտին մեծամասնութիւն կազմել թէ իւր խօսքի ոյժով և թէ երբեմն ազգին թողնելով նոր ընտրութիւններ անել։ Այդ դրութեան մէջ կատարւեց սարնափելի սպառումն անհատների, կուսակցութիւնների և սկզբունքների։ Իրերի ոյժով ստիպւած լինելով Բիսմարկին հպատակւել՝ անհատներ և կուսակցութիւններ իրանց ստիպւած տեսան որ և իցէ կերպով յարմարւել։ Եւ շատ բնական է, որ այդքան ընդհարւելով մարդկային հսկայ ժայռի հետ և այդքան յաղթւելով՝ պարլամենտը Գերմա-

նիայում, Բիսմարկի օրերով, կորցրեց իւր սովորական նշանակութիւնը. բուն պարլամենտականութիւնը, իրեւ քաղաքական մարմին և ոյժ, դնալով սպառւեց և կորցրեց իւր նշանակութիւնը: Իշխան Բիսմարկի ամենակարողութիւնից ամենից շատ վլաստածը՝ պարլամենտն է, պատգամաւորների ժողովը, թէ պրուսականը (պրուսական լանդտադ) և թէ մանսաւանդ գերմանական բէջիստագը:

Ահա՝ թէ ինչու Բիսմարկի հրաժարականի լուրը ընդունեց մեծ սառնութեամբ Պրուսիայի պարլամենտի մէջ: Բիսմարկի օրերով պետական օրգանները շեղւեցին իրանց սովորական ընթացքից՝ նրան յարմարւելու համար. ամեն ինչ նորա օրգաններն էին: Այժմ, երբ նա հեռացաւ ասպարիզից — գերմանական պետական կեանքը նորից պէտք է կազմակերպւի: Եւ ոչ միայն պարլամենտը այժմ ազատւեց իւր վերայ ծանրացած ճնշող ոյժից, այլ և ազգը Բայց չը պէտք է մոռայ ծանրացած ճնշող ոյժից, այլ և ազգը գերադասում էր իւր վերայ կրել մի այդպիսի ծանրութիւն, քան զրկւել նորա անունից, նորա առաջնորդութիւնից: Եւ եթէ Բիսմարկը գնաց, չը պէտք է կարծել, թէ Գերմանիայի պարլամենտը բռնելու է Բիսմարկի տեղը: Ո՞չ. շատ աւելի հաւանական է, որ գործերի ղեկավարութիւնը այժմ կ'անցնի կայսեր ձեռքը և ոչ պարլամենտի վերայ, որը կը շարունակէ իւր առաջւայ դերը: Եւ արդէն այս հանգամանքը, որ ներկայ թւականի ընտրութիւններից Վինդհօրստի կղերական կուսակցութիւնը ամենազօրեղը դուրս եկաւ բոլոր միւս կուսակցութիւններից, արդէն այս հանգամանքը, ասում ենք, մեզ հաստատ կարծել է տալիս, որ նորընտիր պարլամենտը չը պիտի կարողանայ առաջւանից աւելի մեծ պրեսսիժ վայելել:

Ներքին խնդիրների նախաձեռնութիւնը մեծ արձագանք էր գտնում երկրի մէջ: Քաղաքա-տնտեսական նոր, այժմ դրականապէս յազմող ուղղութիւնը նպաստաւոր էր կանցլերի հայեացքներին: Ռօշէր, Շտայն, Շմօլէր, Վագնէր, Շէֆլէ և շատ ուրիշներ, — ահա՝ հեղինակութիւններ, որոնց վերայ վստահ կարող էր յենել Բիսմարկը:

Բայց այն, ինչ մի առանձին հանրաեւրոպական նշանակութիւն էր տալիս Բիսմարկին, այդ նորա արտաքին քաղաքականութիւնն էր: Բիսմարկը, որին «երկաթեալ կանցլերի» անունն են տւել, այն

ոյժն էր, որի վերաց գլխաւորապէս հիմնւում էր խաղաղութիւնը Եւրոպայում։ Դերմանիայի համար նպաստաւոր չէր մի նոր ահեղ պատերազմ։ Յամենայն դէպս, դա կը լինէր մի մեծ ըիսկ, որին նա չէր ուզիլ Ենթարկել մի նորակազմ պետութեան ճակատագիրը։ Բարեկամացնելով իւր հետ Աւստրիա-Ռւնդարիային և Խոալիային, — Բիսմարկը դրեց Գերմանիան ապահով վիճակի մէջ՝ թէ ունեցածը պահպանելու և թէ նոր ձեռնարկութիւններ սկսելու համար։ «Մուրճ»-ում մենք արգէն առիթ ենք ունեցել յայտնելու, որ մենք հաւատում ենք Բիսմարկի խաղաղական քաղաքականութեան։ Երբ մենք այդ ասում էինք, մամուլի մէջ դա մի սովորական կարծիք չէր։ Եւ ահա թէ ինչ էինք ասում մենք «Եռապետեան դաշնակցութեան» մասին, որի ոզին Բիսմարկն էր. «Մենք բոլորովին հաւատացած ենք, որ այդ եռապետական դաշնակցութիւնը, որ խաղաղութեան լիդացի անունն է կրում, իսկ որ պատերազմ չի որոնում. որովհետև, աւելցնում էինք մենք, այդ եռապետեան ոյժով դաշնակիցներից իւրաքանչիւրը կարող է այնպիսի հետեանքների հասնել, որ յաջող պատերազմով անզամ ձեռք բերել դժւարին է»։ (Տե՛ս «Մուրճ», 1889 թ. № 9, երես 1476):

Այս տողերով ամեն բան ասւած է։ Դորանով ասւած է նաև, որ Բիսմարկը խաղաղութիւնը պահպանում էր ոչ թէ պատերազմի վախից, այլ որովհետև նա միջոց գտաւ գործելու նաև առանց պատերազմի։

Այժմ ամբողջ Եւրոպական մամուլը մէկը միւսից ուզում է գերազանցել ներկայացնելով Բիսմարկին, իբր խաղաղութեան ամենամեծ գրաւականը վերջին քսան տարիներում։ Եւ որովհետև խնդիրը պատմական անսովոր դէպէրից մէկի մասին է, ուստի ստորև մենք ներկայացնում ենք «Մուրճ»-ի ընթերցողներին նաև ուրիշների կարծիքները Բիսմարկի հրաժարականի մասին։ Եւ քանի որ այդ խընդրում մեզ ամենից շատ հետաքրքրական թւեցին Փրանսիական և անգլիական կարծիքները, ուստի մենք սահմանափակում ենք մեր ցիտատները միմիայն ֆրանսիական և անգլիական լրագիրներով։

Ֆրանսիական լրագիրներից՝

«Temps» լրագիրը ասում է.

«Գերմանիայի, Եւրոպայի և աշխարհի բիսմարկութեան մի մեծ

գլուխ փակւելու վերայ է իշխան Յոստօ Ֆօն Բիսմարկ՝ Շօնհառուդէն, սրբուական կանցլեր և պրուսական մինիստրների նախագահ, իւր հրաժարականն է տալիս... Գերմանական ազգը չի կարող խորը չը զգացւել, ներկայ լինելով այն պատմական զրամացի վերջնական տեսարանն, որի հանգոցները իւր միութեան վերականգումը և իւր գերիշխանութիւնն են կազմել: Ֆրանսիան, որը զեռ ևս կրում է ապիները այն վերքերի, որ նրան այդ կոշտ ասպետը իւր նիզակով ուրիշ ժամանակներում տւել է, Ֆրանսիան ինքը շատ է բարձրամիտ և շատ անաշառ ոգու տէր, որպէս զի այդ մեծ պետական մարդուն տրւելիք արլար դատապահնի հետ չը միացնէ հայրենասիրական պարզատեսութիւնը, քննադատելով այդ հրաժարականի հետևանքները: Ահա մօտ 28 տարի է (սեպտ. 1882 թ.), որ Պրուսիայի Ախէնելմ թագաւորը, դադրելով անոր էրա բացելու փորձերից և իշխան Հոհենցոլլերնի ու իշխան Հոհենլոէնի մինիստրութիւններով կառավարելուց, վճռեց դիմել պարոն ֆօն Բիսմարկին, աօմերանեան այդ փոքրիկ ազնւականին... Կարիք չը կայ լիշեցնել առանձնապէս այն քաղաքական ասպարէզը, որ անցաւ այդ բուզէրից սկսած այդ մարդը, որը կատարեալ կուրի մէջ պարլամէնտի հետ, ունենալով պատղամաւորների ամբողջ ժողովը իւր դէմ, մի պաշտօն իւր վերայ առաւ, որը աւելի վտանգի քան թէ իշխանութեան պաշտօն էր: Կարծեցին թէ պրուսական Պոլիսեակը կը լինի նա: բայց աւելի կը սագէր Ծիշելիէի անունը: 1866 թւականի պատերազմը (Աւստրիայի գէմ), — այդ պարտիան, ուր պարոն ֆօն Բիսմարկը Պրուսիայի կարողութիւնը և, իւր իսկ մտերմական խոսուովանութեան համաձայն, իւր սեպհական գոյութիւնը խաղի մէջ դրաւ — և Փրանսիական արշաւանքը մինիստրի ժողովքը գականութիւնը և հոչակը հասցըրն իրանց դագաթնակէտին: Այդ ժամանակից սկսած նորա կատարած գործը երկարացիկ մեծացաւ: Դրում կանցլերը ջանաց գերմանական կայսերութեան ապահովութիւնը անխախտելի հիմունքների վերայ զնել: Խւր բոլոր կոմբինացիաները ունէին այս կէտ նպատակը՝ Եւրոպայի կենդրում կազմել մի տեսակ փոխադարձ ապահովութեան միութիւն: Սկզբում Ռուսիայի և Աւստրիայի հետ, որոնք մէկը միւսին չէզոքացնում էին, ապա, Բերլինի կօնդրեսից յետոյց, միմիան Աւստրիայի հետ, բայց կապւելով դաշնակցական կապով: Վերջապէս Խտալիան մէջ քաշելով՝

նա կազմեց պահնորդութիւնը միայնած Գերմանիայի վերայ: Անկառիած է, որ աշխարհիս խաղաղութեան գաղափարը խառնում էր նորա ոգու մէջ գերմանական գերիշխանութիւն գաղափարի հետ. դա էր մի տեսակ քառ germanica (գերմանական խաղաղութիւն), ըստ օրինակի քառ romana (հռովմէական խաղաղութիւն): Բայց և այնպէս ակներև է, որ իշխան Բիսմարկը այն մեծ ոյժերիցն էր, որոնք լնդդիմաղրում են մեր այժմեան՝ մինչ ատամները զինորւած եւրոպայի այն զարհուրելի պատերազմնն, որի համար ամենքը զրահաւորում են և որի ողբերգական կարելիութիւնը ամեն մարդ սարսուերով յետ է մղում: «Թանօ լրագիրը այնուհետև դառնում է զէպի այն պատճառները, որոնք իւր կարծիքով յառաջացրին իշխան Բիսմարկի հրաժարականը և ապա նկատում: «Որոնում են յաջորդ մի պետական մարդու համար, որին ոչ ոք կարող է փօխարինել»:

«Journal des Débats» լրագիրը (պահպանողական-հանրապետական, Լէօն Սէյ'ի օրգանը) առ 23 մարտի գրում է.

«Եւրոպան ականատես է լինում քաղաքական ամենանշանաւոր անցքին, որին նա վկայ է եղած քսան տարուց դէս... Անկարելի է հերքել, որ 18 մարտից դէս՝ Եւրոպայի ապագան և մանաւանդ Եւրոպայի հասարակաց կարծիքի դրութիւնը խորը փոփոխութիւն կրեց: Մինչ այս շաբաթ մարդ զգում էր, որ մի տեղ գոյութիւն ունի մի բաւականաշափ հաստատուն հեղինակութիւն՝ անցքերի վերայ իշխելու համար և նոցա առաջնորդելու, նոցա հետեւելու և մի քաղաքական սիստեմ լնդունել տալու համար: Այդ զգացմունքը անլայտացաւ... Ակներև է, որ Եւրոպական քաղաքականութեան մասին անելիք գուշակութիւնների մէջ այն մասը, որ պէտք է տրւի գէպքին, անցալին և անսպասելիքներին, այսօր աւելի մեծ է, քան այդ երեկ էր»:

«Liberté» լրագիրը գրում է.

«Համարձակութիւն կը լինէր այժմեանից իսկ ասել, թէ ինչ է պատահելու, բայց ակամայ ամեն մարդ ինքն իրան կ'ասի, որ Եւրոպական քաղաքականութեան մեքենայի գըլ-խաւոր լարը պակասելով, եռապետեան գաշնակցութիւնը բնականօրէն պիտի կորցնի իւր մեծ ոյժը, որովհետեւ արտաքին քաղաքականութիւնը չի ունենալ այլ ևս Բիսմարկի հանձարը իրը

յաջողութեան գրաւական։ Ով կարող է ասել, թէ ինչ պատահարների նա անձնատուր կը լինի։ Ի իսմարկը էր ընդհանուր խաղաղութեան գլխաւոր սլաքը։ Պիտի ունենայ արգեօք երիտասարդ կայսրը, առանց Ի իսմարկի խուրհրդի, բաւականաչափ չափաւորութիւն և խելացիութիւն, ոչ մի բան չը խայտառակելու համար։

«République française» (Նախկին օրդան Պամբետայի, օպօրտիւնիստների գլխաւոր օրդանը) ասում է.

«Ոչ մի բան չը պէտք է ազգեցութիւն գործէ մեր ոգու խաղաղ հաստատամութեան վերաց։»

«Paris» լրագիրը յորդորում է ֆրանսիային զգոյշ կենալ։

«Cocarde» (բուլանժականների օրդանը) մտնում է ենթադրութիւնների մջ, թէ Ի իսմարկի հրաժարականը գերմանական զօրքի գլխաւոր շտարի պետ Վալլերզէէի դաւազրութեան հետևանքն է և այն. բացց իւր ընթերցողների ուշադրութիւնն է դարձնում նաև այն հանգամանքի վերաց, որ Ի իսմարկը խաղաղութեան առաջին գրաւականներիցն էր։

«Parti National» լրագիրը ասում է.

«Հրաժարականը իշխան Ի իսմարկի, որի զօրեղ ձեռքերում քսան տարի շարունակ Գերմանիայի ճակատագիրն էր զբացած, առաջնակարգ պատմական անցք է, որի հետևանքները անհաշվելի են մնում։ Այդ մարդու հետ, որը մեր դարու երկու ամենամեծ պատերազմները եւրոպացի վերաց աելացրեց, անյայտանում է նաև խաղաղութեան ամենալուրջ գրաւականներից մէկը։»

«Radical» լրագիրը (արմատականների օրդանը) և «Intransigent» (ծայրայեղ արմատականների, մասնաւորապէս Թօշքօրի օրդանը) անհանդիստ են ապագայի համար, երբ իշխան Ի իսմարկը այլ ևս կայսր Վիլհելմի խորհրդատուն չի լինելու։

«Siècle» լրագիրը պնդելով, որ իշխան Ի իսմարկը 30 տարուց ի վեր ֆրանսիայի աւերման վերաց է մտածում եղել, շարունակում է, սակայն, այսպէս։

«Նա իրաւունք ունի, որ մենք նորա առջև խոնարհւենք և պատկառանքով նորա հրաժարականը շնորհաւորենք, որովհետև նապօլէօնից դէս մեր դարում չի եղած մի աւելի մեծը։ Մենք շարունակելու ենք նորա լիշտակը դարշելով անուանել, նորան-

ատել մեր ամբողջ ֆրանսիական սրտից. բայց մենք նորա վերայ միշտ պէտք է հիանանք, իբր գերմանական հայրենասիրութեան ամենանշանաւոր մարմնացումն։ Ոչ ոք չը կայ Բերլինում, որ կարողանար նորան փոխարինել։ Նա մի հսկայ էր. նորա մօռ՝ Կապրիւի, Վալդերզէ, Միքել, Բենիդուէն՝ թղուկներ են։ Բայց երևում է, որ նորա իսկական յաջորդը ուզում է կայսր Վիլհելմ II ինքը լինել։ Եւ ի՞նչ է պատահելու։ Անյացող ընկած է մեր առջեւ, և Գերմանիան, որը ամենահոչակաւոր պետական մարդուց, ամենակշիռ ունեցող դիպլոմատից, ամենազգաց մինհարդից էր զեկավարւում։ վաղը պէտք է անձնատուր լինի մի անփորձ ձեռքի կամայականութեան։

«Estafette» լրագիրը, որը Փիւլ Ֆէրրի՛ի օրգանն է, դորա հակոակը գրում է.

«Յաճախ կրկնել են, թէ իշխան Բիսմարկի ներկայութիւնը գերմանական քաղաքականութեան ծայրում՝ խաղաղութեան գրաւական է։ Այդ ճիշդ է։ Նա յաղթութեան շոգեպահն էր և քսան տարւայ ընթացքում խաղաղութեան իշխանն էր... Այժմ, երբ նա հեռանում է, բնականօրէն հարց է դրւում, թէ արդեօք նորա ամբողջ քաղաքականութիւնը պիտի կարողանա՞ց շարունակել նոյն հեղինակութեամբ, նոյն հետևողականութեամբ, նոյն զգուշութեամբ... Զը պէտք է հաւատալ, թէ կայսրը արտաքին քաղաքականութեան մասին այլ գաղափարներ ունի, քան պետական կանցկացքը։ Թէև Վիլհելմ II խորամատ զինուրական հակումներ ունի, բայց նորան լաւ ճանաչողները կարծում են, որ նա ամենեին չ'ունի արկածախնդրական միտումներ... Թէ Ֆրանսիայի և թէ Խոալիայի դիմաց գերմանական քաղաքականութիւնը որոշած է և այդ չի փոխւիլ։ Աւստրիայի և մանաւանդ Ռուսիայի կողմէց կարող են անսպասելիքներ պատահել։ Կանցկերի կառավարութեան փոխարինել անձնական կառավարութիւնով՝ կարող է Վիեննայում և Պետերբուրգում—մի անորոշ ապագայում—չը սպասւած հետեանքներ ունենալ։ Ինչ Ռուսիային է վերաբերում, չը պէտք է թագանել, որ իշխան Բիսմարկի հեռանալը կարող է ամեն տեսակ ենթազրութիւնների տեղի տալ։ Կարելի փոփոխութիւնների մասին դժւար է խորհրդածութիւններ անել, բայց այսօրւանից սկսած ոռւսաց կացսեր

և գերմանական կայսեր միջև կանգնած մարդկանցից մէկը պահառեցրած «France» լրագիրը (բուլանժական) ասում է.

«Եւրոպան միմիայն դժւարութեամբ կարող է ուրախ լինել, տեսնելով որ հեռանում է ասպարիզից մի պետական մարդ, որը իւր երկրի համար ձեռք բերած հետեւանքները չ'ուզեց մի նոր պատերազմով վտանգի ենթարկել»:

Անդիական լրագիրներից՝

«Standard» (տօրիների, պահպանողականների, ուրեմն աշխատանկառավարչութեան օրգանը) ասում է.

«Գերմանիան ամեն իրաւունք ունի անհանդիսա լինելու, որ հայրենիքի պահապանը բեմի վրայից հեռանում է: Բայց մենք չենք ճանաչում որ և է ուրիշ ազգ, որը հիմք ունենար դորանից ուրախ լինելու: Պետական կանցլերը այն կենդրոնական և վերահսկող ոյժն է, որը անկազ առօժների միշտ սպառնացող պատերազմը կանգնացնում է: Մենք կամենում ենք յուսալ, որ նորա յետ քաշելուց յետոց ևս խաղաղութիւնը պահպանած կը մնայ. բայց խաղաղութիւնը աւելի դժւար կը լինի պահպանել, երբ սրատես, խաղաղասէր պետական մարդը իւր դէմքը թագանէ, որը դիտէր անկոչներին օրէնք տալ և թուլացնել այն մարդկանց ձեռքերը, որնց թուլութիւնը դէպի յարձակումն էր մզում: Մենք կարող ենք հասկանալ, թէև մենք այդ մասին շատ ցաւում ենք, որ անհաշտելի են այն ձգտումները, որոնք զրկում են գերմանական կայսրին մի այնքան անձնւէր և անգնահատելի ծառայից... Բայց դորա մէջ ներփակւած է մի ուրիշ խնդիր՝ ո՞վ պէտք է լինի Գերմանիայի իսկական առաջնորդողը — իշխան Բիսմարկի թէ կայսրը»:

«Standard», իւր երէկւայ ասածին հակառակ, ասում է իւր 19 մարտի Տեսում:

«Ժխան Բիսմարկը կատարեալ իրաւունքով կարող էր իւր վերայ առնել Լուգովիկոս XIV-ի խօսքը՝ «պետութիւնը — այդ ես եմ»: Միշտ հարց էին տալիս՝ ի՞նչ է մտածում Բիսմարկը այդ մասին: Ի՞նչ է կրում նա իւր դրօշակի՝ վերայ: Երբէ՛ք ոչ ոք այնքան խանդութեամբ չի պահպանել իւր ոյժի և հեղինակութեան մօնուպոլը: Գերմանիայում նա չէր համբերել ոչ մի դիմադրութեան,

և իրանից տարբեր կարծիքներ յայտնելը նա ընդունել է միշտ որպէս պատժի արժանի օրինազանցութիւն։ Այդպիսով նա ամբողջ գերմանական պետական կեանքը կամաց կամաց ոչնչացրել է։ Ամենքը նորա համար միայն մեքենաց էին, որի բանալին իւր ձեռքումն էր պահած։ Մենք վախենում ենք, որ այդ փաստերը նորա մեծ ծառացութիւնները չը նւաստացնեն։

«Times» լրագիրը իւր խորհրդածութիւնները փակում է այսպէս (19 մարտի)։

«Մենք Անդիայում իմանում ենք մեծ մարդու հեռանալու լուրը ցաւակցութեամբ և անհանգատութեամբ։ Երբ իշխան Բիսմարկը այլ եւս գերմանական կամ, աւելի ճիշդ ասած, եւրոպական քաղաքականութեան դեկի մօտ չի նստած, դա մի այնքան հեռու հետեւանքներով լիքը նշանակութիւն ունի, որ ամեն ոք, որը, ինչպէս մենք, նորա անսահման մեծ ծառայութիւնը եւրոպացի խաղաղութեան համար գիտէ, միմիայն ահով կարող է մտածել դորա հետեւանքների մասին։ Նա չի կարող մի իսկական յաջորդ ունենալ։ Կը գտնելո՞ւ արդեօք մի մարդ, որը կարողանաց այն ահագին ու սարսափելի ուժերը սղմած պահել, որնց նա զանազան ժամանակներում հազիւ կարողացաւ սանձահարել։»

«Morning Post» լրագիրը կարծում է, որ ոչ կայսեր նոր քաղաքական ուղղութիւնը և ոչ կառավարչական կուսակցութիւնների նորերումն կրած պարտութիւնը, միասին առած, կարող չէին կանցլերին պաշտօնից հետացնել, եթէ նա ցանկացած լիներ մնալ։ «Մի քանի փոքրիկ զիջումներ, մի աննշան թեքումն—և նա կը մնար։ Բայց նա գերադասում է ուինչ չը զիջել և գնալ, լաւ իմանալով, որ վաղ թէ ուշ, մի երիտասարդ իշխանի քաղաքականութիւնը պէտք է յաղթէ մի 75 տարեկան մինհստրի վերաց։ Պրուսական և գերմանական «փոքրիօգին կրագիանները» ոչ մի հետաքրքրութիւն չեն ներկայացնում միւս ազգերի համար, մինչդեռ Գերմանիայի արտաքին քաղաքականութիւնը վերջին ծայր նշանակութիւն ունի։ Այդ կետում հանգիստ կերպով կարելի է գուշակել, որ իշխան Բիսմարկի իշխող աղղեցութիւնը զեռ երկար պէտք է տեսի, նաև պետական ղեկը ձեռքից թողնելուց յետոյն Դա մի ողորմելի կօմովիմենա կը լիներ գերմանական կայսեր և գերմանական ազգի համար, եթէ կարելի

լինէր ընդունել, թէ իշխան Բիսմարկի հեռանալը նշանակէր գլո-
րումն կամ մի նշանաւոր փոփոխութիւն արտաքին քաղաքականու-
թեան մէջ, թէև պետական կանցլերը գնում է, նորա ծրագրած
կամ անցկացրած քաղաքականութիւնը կը տեի և, ինչպէս Բերլի-
նի «National-Zeitung» լրագիրը ասում է, Գերմանիան նաև ապա-
գայում կը լինի գրաւականը աշխարհիս խաղաղութեան համար»:

«Daily News» լրագիրը (Նէյլի նիւս, անգլիական ազատամիտ
կուսակցութեան, ըստ սմին Գլադստօնի զլիսաւոր օրգանը), որ յա-
ճախ խօսացել է Բիսմարկի ներքին քաղաքականութեան դէմ, իւր
19 մարտի Առում կանգ է ուզում առնել այդ գօրեղ և
ընդաբոյս մարդու անսահման մեծ ընդունակութիւնների վերաց, նա
քան նորա համեմատապէս աննշան պակասութիւնների վերաց: Նա
ասում է.

«Կարող է ճշմարիտ լինել, որ նա պատկանում էր հին կարգ
ու կանոնին, որ նա երբէք չը կարողացաւ հաշտել 1848 թւականի
գաղափարների հետ և որ նա երբէք իրան տանը չէր զգում նոր-
ժամանակեայ Բերլինում: Իաց երբ իշխան Բիսմարկը կը ներկայա-
նայ պատմութեան դատաստանի առջև, իւր հետագաների վերջնական
դատողութիւնը լսելու համար, այն ժամանակ նուրբ ժամանակաւոր
քննադատութիւնները ոչ մի կշիռ չեն ունենալ: Ով կարող է Եւ-
րոպան ճանաչել, երբ սա զրկւած կը լինի Բիսմարկից: Նա կարող
է գերմանական պետութեան ասել այն, ինչ Միրաբօ առաց ազգացին
ժողովի մասին՝ «Այդ ես եմ»: Հաստատ կարելի է ասել, որ ոչ մի
մինիստր այնքան չի զգացւած Բիսմարկի հեռանալու լրւրից, որ
քան լորդ Սոլսբրին (այժմեան անգլիական ղեկավար-մինիստրը): Լորդ
Սոլսբրին չի կարող իւր սեպհական ոտների վերաց կանգնել: Մինչ
1880 թւականը նա յենում էր լորդ Բիկօնսֆիլդի վերաց, 1885-ից
դէսը՝ իշխան Բիսմարկի վերաց: Տարեբաղդաբար վերջինս, չը նայած
որ անգլիական նաւատորմը արևելեան Աֆրիկայի ափերի վերաց իւր
սեպհական օգտին ծառայեցրեց, մեծ մասամբ Անգլիացի համար
բարեկամական միտումներ ունէր»:

«Pall Mall gazette» գրում է.

«Իշխան Բիսմարկի մարգարէական խօսքը իրագործւեց, թէ
կայսր Վիլհելմ II ինքը կը լինի իւր պետական կանցլերը:

Բայց և այնպէս կանցլերի անկումը ամբողջ Եւրոպան պիտի սարսեցնի: Նոր յոցսեր և նոր երկիւղներ կը ծնւեն, և մարդկանց սրտերը կը լցւեն չար գուշակութիւններով մօտիկ ապագայի մասին: Այդ մեծ պետական մարդու զիրքը ոյժերի ներքոյ և աւելի էլ դեռ ազգերի երկարացութեան ոյժի մէջ՝ անզուգական է: Նորա կախարդանքը, գրեթէ սնապաշտական ահը, որ նա ներշնչում է, Եւրոպական քաղաքականութեան զլիաւոր ֆակտորներից մէկն է կազմում: Առաջի անդամից թւում էր թէ նորա հրաժարաւելուց յետոյ՝ ամեն բան պիտի խանգարւի: Բայց դորան ընդդիմադրում են երկու ֆակտորներ. նախ՝ Գերմանիայի խաղաղական քաղաքակութիւնը մի որոշ մեծութիւն է, որի պայմանաւորողն է նորա աշխարհագրական զիրքը, և երկրորդ՝ խաղաղութեան պահպանումը շատ աւելի կախւած է կայսրից նեւայի վերայ (ռուսաց), քան կայսրից նարեկի վերայ (գերմանական): Քանի որ Ալեքսանդր III-ը գահի վերայ է, ամեն ընտանիքի հայր կարող է զիշերը հանդիստ ընել, թէկուզ երկու հիսմարկներ գլորւեն»:

«Saint James gasette» այն կարծիքի է, որ հիսմարկի հրաժարականը ամենամեծ քաղաքական անցքն է ֆրանսիական երկրորդ կայսերութեան անկումից դէս: «Գերմանիայի արտաքին քաղաքականութեան ձգտումները, ի հարկէ, նոյնը կը մնան. բայց թէ նոյնքան յաջողութեամբ նոքա պէտք է առաջ տարւեն մի աւելի նւազ կարող և քնքոյց ձեռքով՝ ահա թէ ի՞նչն է կասկածելի: Այս մէկը հաստատ է, որ ոչ մի լաջորդ նոյն հաւատը չը պիտի կարողանայ ներշնչել: Հրաժարականի հիմունքները հեշտ կարելի է գուշակել. նոքա՝ ներքին քաղաքականութեան մէջն են: Իշխանը մեծ բանի տեղ չի դնում հաշտութեան քաղաքականութիւնը, որին կայսրը հակւած է երկւում և այն:

Որպէս տեսնում է ընթերցողը՝ բոլոր այդ լրագիրների մէջ կրկնում է միևնոյն նօտան, այն է՝ թէ հիսմարկը Եւրոպայի խաղաղութեան դրաւականն էր: Բայց և այնպէս, մեզ թւում է, որ այդ ճշմարտութիւնը ոչ մէկի մօտ այնքան ձիշդ չէ ձեւակերպւած, որքան այդ եղած է Մուրմանի մէջ: Եւ որ զլիաւորն է, միայն քչերը ցիշած լրագիրներից կրկնում են այսօր իրանց երեկւաց պընդագծները:

ՄԻ ԲԱՏԱՏՐՈՒԹԻՒՆ

«Աղբիւր» ամսաթերթի խմբագրութիւնը հարկ է համարել, իւր այս տարւակ Յ-րդ №-ում, «Մուրճ»-ի խմբագրութեանը անաշառութեան և պարտաձանաշութեան մի դաս կարդալ: «Աղբիւր»-ի խմբագրութիւնը հարցնում է մեզ. «ինչ ուշ՝քննադատելով «Աղբիւր»-ի ցարտապատճենը գրագիւր»... որ նրանք «Աղբիւր»-ի ցարտապատճենը...

Մենք կարծում ենք, որ արդէն հասարակութիւնը մեղ բաւականի է ճանաչում, որպէս զի մեր դէմ ուղղած մի այդպիսի հարցմունք անտեղի համարէր: Բայց քանի որ այս դէպքում մենք նշմարում ենք ուրացութիւն կատարւած փաստերի, աւելորդ չենք համարում լաւանել, որ «Աղբիւր»-ի խմբագրութիւնը, մեր դէմ մեղագրանք բարձրացնելով, կուրութեան զո՞ն է հանդիսացել: «Մուրճ» ամսագիրը, իւր գոյութեան օրից, «Աղբիւր»-ի վկաց հրատարակութիւնների մասին դէպք է ունեցել խօսելու կամ լաւարելու: Դոցանից՝

Առաջինը եղել է Ս. Զմշկեանի Օրացուցը, որի մասին ասւած է հրատարակութիւն «Աղբիւր» ամսագրի. («Մուրճ», 1889 թ., № 1, Գրախօսութիւն, երես 171):

Երկրորդն եղել է ինքը «Աղբիւր»-ը, որի համար լիշտած է նորա խմբագիր-հրատարակչի անունը («Մուրճ», 1889 թ., № 4, Գրախօսութիւն, երես 668):

Երրորդը եղած է պ. Կ. Մելիք-Շահնալարեանցի «Բուսական աշխարհից—անմշակ և մշակւած ծառի կեանքը», որի մասին ասւած է՝ հրատարակութիւն «Աղբիւր»-ի («Մուրճ», 1889 թ., № 7, Գրախօսութիւն, եր. 1115):

Չորրորդը եղած է պ. Տէր-Աւետիքեանի «Տեղագրական նամականի, որի մասին ասւած է՝ հրատարակութիւն «Աղբիւր» մանկական ամսագրի («Մուրճ», 1889 թ., № 9, Գրախօսութիւն, երես 1466 և № 12, Գրախօսութիւն, երես 1982):

Հինգերորդը եղած է պ. Փիլիպպոս Վարդանեանի թարգմանութիւնը՝ «Արմենան վիպաշխարհ—Ռուսակմ և Զոհարք», որի մասին ասւած է՝ հրատարակութիւն «Աղբիւր» ամսագրի («Մուրճ», 1889, № 12, Գրախ., եր. 1984) և որի մասին ընդարձակօրէն խօսւած է միայն «Մուրճ»-ի 1890 թ. № 2-ում:

Վեցերորդը, վերջապէս, եղած է Գիւտ քահանակ Աղանեանցի «Օրացուց 1890 թ.», որի մասին ասւած է՝ հրատարակութիւն «Աղբիւր» պատկերագարդ ամսագրի. («Մուրճ», 1890, № 1, Գրախօս., եր. 112):

Եթէ չենք սխալում, սոքա են եղած «Աղբիւր»-ի այն բոլոր զըրքիրը, որ ստացւած են ցազօր «Մուրճ»-ի խմբագրութեան մէջ:

Եւ այս բոլոր իրազութիւնները սփօղելու համար՝ «Աղբիւրի» խմբագրութիւնը իւր նկատողութիւնը խմբագրել է այսպէս. ոինչու, քննադասութով «Աղբիւրից» արտատպած գրքերը, մի բերան չէք չի շում, որ նրանք «Աղբիւրից» են արտատպւած, քանի որ գիտէք, թէ Ֆիրդուսի ին որտեղ ե Երբ է թարգմանւած»:

Նկատեցէք, որ չատկապէս Ֆիրդուսի Ռուսէմ և Զոհրաբի թարգչ մանութեան մասին «Մուրճ»-ի մէջ ոչ թէ արգէն մի անդամ՝ վշտած է, թէ «Աղբիւր»-ի հրատարակութիւնն է, այլ նորա մասին արդէն մի անդամ էլ առած էր «Մուրճ»-ում, թէ «Աղբիւր»-ի մէջ էր տպւում. Եւ ահա թէ ինչ է առել «Մուրճ»-ը այդ գրւածքի մասին զեռ ևս տասն և մէկ ամիս առաջ, «ալ. Փ. Վարդանեանի... Ռուստէմ և Զոհրաբ վեպը այս տարւակ «Աղբիւրի»... ամենալաւ և չաջող արձակ գրւածքն է. Աղպիսի գրւածքներ չափշտակութեամբ կարգացւում են փոքրիկ ընթերցողներից. իսկ դորա նման ճոխ, գեղեցիկ ու կանոնաւոր լեզուն աննկատելի կերպով դրոշմում է մանուկ խելքերում մազենի լեզուի համը և ողին». տես «Մուրճ» 1889, № 4, Գրախօսութիւն, եր. 670—671:

«Աղբիւրի» խմբագրութեան համար այս բոլորը բաւական չէ. Նա պահանջում է մեղնից, երեսի, որ մի 48 թէ որքան երես պարունակող գրքակի համար «Մուրճ»-ը 48 տեղում չալտարարէ, թէ այդ գրքուկը «Աղբիւրի» հրատարակութիւնն է: Ոչ, պարուներ, պարտածանաչութեան և խմբագրական դասեր ունիք տալու որոնեցէք ունկնդիրներ ուրիշ տեղում:

Մեր ընթերցողների ուշադրութիւնն ենք դարձնում այս №-ից տպւող պ. Մելիք-Շահնաղարեանցի վեպիկի վերաբերյալ՝ «Հայ Գիւղացու սև օրը», որը կապ ունի պանդիտութեան խնդրի հետ:

Վերջին ժամանակ հետեւալ գիրքը՝

ՍԱՐԴԱՐԵԱՆՑ Ա.ԴԱՄ. — «ԶԻՍ.ՐՃԱԼԻ ԺԱՄԵՐ»: Ֆողովածու հանելուկների, բառախաղների, խաղերի, խնդիրների, ընթացների, ֆոկուների, կատակների, անեկդոտների և այլն: Մասն առաջին, Թիֆլիս, տպարան Ռոտինեանցի, 1890 թ., գինն է 40 կոպէկ:

Նոյն հեղինակ. — «Բանալի կամ Բացատրութիւններ» Զւարճալի Ժամերի, Մասն երկրորդ, Թիֆլիս, նոյն տպարան, 1890 թ. գինն է 10 կոպ.

ՄՈՒՐՃԱ-Ի ԽՄԲԱԴՐԱՏԱՆ ՄԵԶ ՎԱՃԱՌԻՈՒՄ ԵՆ ՀԵՏԵՒԵԱԼ ԳՐՔԵՐԸ.

Բ. Կ.

- | | |
|---|------|
| «ՄՈՒՐՃԱ» ամսագիր, 1889 թ., երկու հատորով | 12 — |
| ԱՐԱՍԻԱՆԵԱՆՅ ԱԻ. — «Ազգաբնակութիւնը և ազգա-
բլնակչական շարժումները» | 40 — |
| ՆՈՅՆ ՀԵՊԻՆԱԿ. — «Հողատիրութիւնը և հասարա-
կութիւնը» | 40 — |
| ԲՈԿ բժիշկ. — «Ֆիզիքական և մտաւոր զարգացման
մասին» | 30 — |
| ԱՐԱԽԱՆԻԱՆՑ Ա. — „Զակավազская хлѣбная тор-
говля“ | 75 — |
| “ ” — „Закавказские шелкометальные
заводы“ | 80 — |
| ՆԱԻԱՍՍՐԴԵԱՆՅ ՏԻԳՐԱՆ. — «Փողովրդական հեքիաթ-
ներ», 4-րդ գիրք | 50 — |
| “ ” — «Փողովրդական հեքիաթ-
ներ», 5-րդ գիրք | 50 — |
| ԳԻՕՇԵԱՆՅ ՊԵՐՃ. — „ՑԵՅԵՐ“ — (վէպ) | 1 — |
| ՏԵՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՅ ԳՐԻԳՈՐ ԳԱՍՊԱՐԻ (Ղ.ՂԱՐԳԻ)՝ Ման-
կառածութիւն | 50 — |
| ԱՏՐԳԵՏԵԱՆ ՍԱՐԳԻՍ. — «ԽԵՒ-ԿԱՐՍՊԵՏ» — վէպ հայ-կաթօլիկոս-
ի կեանքից | 1 — |
| ԼԵԶ. — «ԿՈՐԱԾՆԵՐ» — (վէպ) | 50 — |
| ՏԵՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՅ ԳՐԻԳՈՐ, բժշկ. (Ղ.ՂԱՐԳԻ)՝ «ՄԱՆՈՒԿՆԵՐԻ
ՄԱՐՍՈՂՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ. ՄԻ ՔԱՆԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԸ» — | 5 |
| Ճանապարհածախաղ խմբադրութեան վերայ է: Դրամի տեղ կա-
րելի է ուղարկել պօստի մարկաներ: | |

TECHNIKUM MITTWEIDE

ՏԵԽՆԻԿՈՒՄ ՄԻՏՎԵԻԴԵ

Սաքոնիայում

ԴԻՐԵԿՏՈՐ՝ ԻՆԺԵՆԵՐ Կ. ՎԵՐՅԵԼ

ՄԵՖԵՆԱՍԵՐԻ-ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ-ԴՊՐՈՑ.-ԱՐՀԵՍՏԱՆՈՅՆԵՐԻ
ՎԱՐՊԵՏՆԵՐԻ ԴՊՐՈՑ

23-ԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Այս գլուխը, որը գտանուում է Միտվազէ քաղաքում, Գերմանիակում, (թագաւորութիւն Սաքսոնիա), տալիս է մի ամբողջացրած կրթութիւն ՄԵՔԵՆԱՆԵՐԻ շինելու և դորա ամենամօտ առարկաների հետ ծանօթացնելու համար. որպիսիք են՝ ելեքտրօ-տեխնիկ և ջրաղացների շինութիւն:

Սիստեմական ուսումով այդ հիմնարկութիւնը պատրաստում է հետեւալ մասնագիտութիւնների համար.

1. Ինժեներներ և կօնսարուկտորներ՝ մեքենաներ շինելու, ելեքտրօտեխնիկի և ջրաղացներ շինելու համար.

2. Ապագայ մեքենաների գործարանների տէրերին, որոնք իրանց ստորագրեալների չափ պէտք է հասկացողութիւն ունենան, այդ դպրոցը տալիս է պատշաճաւոր կրթութիւն:

3. Ամեն ուրիշ տեսակ գործարաններ ունենալու համար, ուր հարկաւորւում է մեքենաների սարք ու կարգ, որպէս՝ թղթի, փայտենիթերի գործարաններ, շոգի և ջրի աղացներ, մանելու, գործելու, ապակու, կրախմալի, շաքարի, ասեղների, պողպատէզրիչների, կահ-կարասիների, ֆիմիական գործարաններ, գաղի, լուցկի գործարաններ և այն և այն:

4. Դիրեկտորներ և կառավարիչներ պատրաստելու համար լիշտած գործարանների համար:

Արհեստանոցների վարպետների դպրոցը պատրաստում է վարպետներ՝ այդ բոլոր տեսակ մեքենաները շինելու համար:

Ընդունելութիւնը լինում է ամեն տարւակ ապրիլի և հոկտեմբերի միջին:

ՏԵԽՆԻԿՈՒՄԻՆԻ ուսման առաջին դպրոցում, նախած աշակերտին ապահովատրաստութիւններին, լինում է $2\frac{1}{2}$ կամ 3 տարի, երկրորդ դըպրոցում $1\frac{1}{2}$ տարի:

ՏԵԽՆԻԿՈՒՄԻՆԻ պէտքի պէտք է լինի 16 տարեկանից ոչ պակաս:

Սուն 18⁸⁹/₉₀ թւականին բոլոր աշակերտողների թիւն է 886, ուրնցից Ռուսաստանից՝ 66 հոգի:

Դպրոցի բոլոր միւս մանրամասնութիւնների համար կարելի է դիմել՝ «ՄՈՒՒԾ» ԱՄՄԱԳԻՐԻ ԽՄԲԱԳԻՐԱՏՈՒՆԻ, ուր ի միջի ակտոց կարելի է իմանալ ծրագրի, ամեն տեսակ ծախքերի և Միտվազէի կեանքի, և դըպրոցի վարչութեան պահանջմունքների մասին:

Ի ՍԿԱԿԱՆ ԿԱՐԵՄԵՔԵՆԱՆԵՐ
„ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԶԻՆԳԵՐԻ“ ՆԻՒ-ԵՕՐԿԱԽՐ

Ա Ր Ժ Ա Ն Ա Յ Ա Շ



աշխարհի մէջ կարևորագունաների բոլոր ցուցահանդէսներում

ԱՄԵՐԻԿԱՐՉՐ ՊԱՐԳԵՒԿԱԲԻ

Կարմոր ընկերներ տան տիկինների և աղջիւ օգնականներ բոլոր արհեստաւորների համար

ԳՏՆԻՌԻՄ ԵՆ ՄԻՄԻԱՅՆ

Թիֆլիսում. Զինգերի ընկերութեան կենդրունական պահեստում. Գովինսկի պրօսպեկտի վեցայ, Միքամանովի տան և նրա բաժանմոնքների մէջ:

Բազւում. Միքայէլեան փողոցում,	Բաթումում. Պոլիցիական փողու
Միջա Աւագեանի տ.	ցում, Թէրզի ովու տ.
Քոթայիսում. Բուլվարի գէմ,	Թէկանում. Մարշ-Մէյզանի
Զեղեկովի տ.	գէմ, բուլվարի վեցայ:

և բանց ճանապարհորդու գործականէք էօդ
Միջիւ նի Հինուսացի եկամունքի ՀԱՄԱՐ ԶԻՆԳԵՐԻ նի Բնակեր.
Գլխանոր ԳՈՐԾՎԱԿԱԼԻ ՄՈՑ


Գ. Ն. Յ Յ Ա Կ Ի Ն Գ Ե Ր

Գնողները կարող են, եթէ կամնում են, դրամը հեռականէ վճարել ոտկաւ քանակութեամբ, այն է չարաթով կամ ամսով և կամ ժամանակամիջոց ստանալ զրաւականով զրամը վճարելու համար:

Յ. Գ. Զինգերի և ընկ. բոլոր պահեստներում գտնուում են մեքենաներին պատկանելի զործիքները, ինչպէս ևն. առեղներ, թել, մնացք և ալ մեքենային պատկանելի իրեղները ստիճանաչափաւոր զներով:




Ա Ր Ժ Ա Ն Ա Յ Ա Շ




卷之三

卷之三

三





„ՄՈՒԴՅ“

ԱՄՍԱԳՐԻ

1890 թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԿՐՈՒԹԻՒՆԻ ՇԱՐՈՒՆԱԿԻՈՒՄ է:

Տարեկան բաժանորդագինը	10 ր.
Կէս տարւանը	6 ր.
Երեք ամսանը	4 ր.
Մի գրքովկը	1 ր. 50 կ.

Ընդունում է բաժանորդագրութիւն նաև մաս-մաս առաջին կիսամետրում ամբողջը վճարելու պայմանով:

Ուսուցիչները, վարժուհիները և բարձրագոյն դպրոցների ուսանողները վայելում են զիջումներ, համեմատ առանձին տպած յայտարարութեան:

«ՄՈՒՐՃ-ի ծաւալը տարեցարի մեծացնելը միանդամայն կախւած է բաժանորդագրութեան յաջողութիւնից: Ծաւալիցն է կախւած նիւթերի հարասութիւնը: Այդ պատճառով մենք յորդորում ենք մեր ներկայ բաժանորդներին՝ իրանց կողմից հարկաւոր ջանքը չը խնայել «Մուրճ»-ը իրանց ծանօթ շրջաններում տարածելու համար:»

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՎՃԱՐՈՒՄ ԵՆ

Ամսական մի երեսի համար.	10 ր.
,, կէս երեսի համար	6 ր.
,, քառորդ երեսի համար	4 ր.

Գրքերի յայտարարութիւնների համար կարելի է վճարել նաև յայտարարած գրքերով՝ սոցա գների համաձայն:

Խմբագրութեան հասցէն՝ Տիֆլիս. Ե՞ Ռեդակցիո յարական ամսագրութիւնների՝ Գանովեան փողոց, Նախկին տուն Յովհաննիսեանի, (Гановская улица, домъ бывш. Иоаннисиан), բոլորովին մօտ երեանեան հրապարակին:

Արտասահմանից՝ Tiflis, Rédaction de la Revue «MOURTCH».